

ԱՎԵՏԻԿ

ԻՍԱՀԱԿՅԱՆ



ԱՐՁԱԿ

ՊԱՏՄԿԱԾՔՆԵՐ



1905-ին էր, հավիտյան անմոռանալի այդ թվականը, երբ անծայրածիր Ռուսաստանի վրա, նրա մի եզրից մինչև մյուսը, հեղափոխության դրոշմ էր ծածանվում, որի տակ հավաքվում էին բոլոր իրավագուրկները, բոլոր տանջվածները, բոլոր ազատասերները:

Այդ գեղեցիկ տարվա մեջ, մայիսյան մի առավոտ, Օսեթիայի մշտադալար հովիտներից մեկում ժողովվել էր գյուղացիների խումն ամբոխը՝ լսելու հեղափոխական քարոզչին:

Քարակուռ բարձունքի վրա կանգնել էր մի կրակոտ երիտասարդ՝ ձախ ձեռքին բարձր բռնած կարմիր դրոշակը, որի վրա փողփողում էին «Ազատություն, եղբայրություն, հավասարություն» նշանաբանները:

Նա հարստահարված ժողովրդի վիճակն էր նկարագրում և իշխանների արյունարբությունը: Բոցաշունչ խոսքերով ժողովրդի իրավունքներն էր պատգամում և հեղափոխական կրոնի նպատակը:

— Ես վերջացրի իմ խոսքը, — ասաց քարոզիչը. — մենք հող և ազատություն ենք պահանջում: Հողը և ազատությունը տերերի և իշխանների ձեռքին են. մենք կովով պիտի տիրանանք մեր իրավունքին՝ արյունով և սրով: Հիմա ձեզնից ո՞վ կկամենա կովել և արյուն թափել հողի և ազատության համար. կամեցողը թո՞ղ գա, կանգնի այս դրոշակի տակ:

— Մենք բոլորս կկովենք, մենք բոլորս պատրաստ ենք մեռնելու, սուրբ է մեզ համար ազատության դրոշակը... — Մի մարդու նման որոտաց ժողովուրդը:

Երբ լռություն տիրեց, նորից խոսեց քարոզիչը:

— Կեցցե՛ ժողովուրդը... Հիմա ձեր միջից ո՞վ կարող է միշտ բարձր պահել այս սուրբ դրոշակը, ո՞վ կարող է դեկա-

հարվածների տակ բերին նրան զինվորական նահանգապետի մոտ:

Երբ ներկայացրին գեներալին, վերջինս հարցրեց.

— Դո՛ւ ես Շաքրո Վալիշվիլին:

— Այո՛, ես ինքս եմ Շաքրո Վալիշվիլին,— հպարտ պատասխանեց նա:

— Դո՛ւ ես այրել, ավերել, սպանել,— թվելով մի շարք անուններ, նորից հարցրեց նահանգապետը:

— Այո՛, ես ինքս եմ այրել, ավերել, սպանել, և շատ լավ եմ արել. այդ դեռ սկիզբն էր:

— Լռի՛ր, անզգամ,— կատաղորեն գոռաց գեներալը,— լեզուդ արմատից կպոկեմ. շո՛ւտ ասա, ովքե՛ր էին քո ընկերները:

— Բոլոր ժողովուրդը և ոչ ոք:

— Ովքե՛ր էին, անուններով ասա, ես քեզ կներեմ, եթե ասես. դու քաջ տղամարդ ես, ախտոս է քեզպես կտրիճին մեռցնելը,— ձայնը քաղցրացնելով, ասաց նահանգապետը:

— Ես կյանք չեմ խնդրում. ես սպանել եմ ժողովրդի թըշ-նամիների՝ ձեր ոհմակից շատերին, դուք էլ սպանեցեք ինձ՝ ժողովրդի բարեկամներից մեկին: Մեր միջև հաշտություն ու գուլթ չի կարող լինել և չպիտի լինի:

— Մենք էլ ժողովրդի բարեկամներն ենք,— նույն քաղցրաձայն ձայնով շարունակեց գեներալը,— քեզ մոլորեցրել են ժողովրդի փողերն ուտող քաղաքացի սրիկաները: Թագավորը մեր հայրն է և բոլորիս լավն է կամենում. մեծ հանցանք է նրա պաշտոնյաների դեմ կոպելը, բայց դու անուս, միամիտ գյուղացի ես, մոլորվել ես: Դու ասա, ովքե՛ր էին քեզ խելքից հանողները՝ կոմիտեի մարդիկը, և քեզ կներե թագավորը:

— Ինձ ոչ ոք խելքից չի հանել. ես ինքս տեսել եմ իշխանավորներիդ անգուլթ արարքները և դուրս եմ եկել վրեժս առնելու: Դուք բոլորդ մեր թշնամին եք, դուք զրկել եք մեզ հողից, հացից, ազատությունից, բոլոր իրավունքներից և դարձրել եք մեզ ճորտեր, անասուններ: Էլ ասելու բան չունեմ. հիմա հերթը ձերն է. ես իմս արի, դուք էլ ձերն արեք:

Այնուհետև գեներալը շատ աշխատեց մի խոսք կորզել նրա

բերանից. սակայն ապարդյուն. Շաքրոն անընդհատ լուում էր. լուում էր քարի պես:

Ենթարկեցին նրան դժնդակ տանջանքների, մեկ-մեկ պոկեցին մազերը, փշրեցին ատամները, սվիցների ծայրով ծակոտեցին մարմինը, սակայն նա մնաց անհողողող և անխոս:

Վերջին անգամ բերին գեներալի առջև:

— Հիմա խելքի եկած կլինես, խոստովանվիր, և քեզ կներեմ անպատճառ, ազնիվ խոսք եմ տալիս:

Շաքրոն լուում էր:

Գեներալը կրկնեց մի քանի անգամ իր «ազնիվ խոսքը», բայց չստանալով ոչ մի պատասխան, հրամայեց ժանդարմներին.

— Կապեցեք ձիու պոչից այս անզգամին և տարեք անտառ, սպանեցե՛ք:

Հրամանի համաձայն, Շաքրոյի ոտքերը կապեցին ձիու ազիից և մացառների ու փշերի վրայով քշեցին անտառ:

Ճանապարհի քարերը ներկվեցին Շաքրոյի արյունով, մեջքի մաշկը պոկվել էր և գլուխը վիրավորվել, սակայն այդ անմեղ հերոսը առանց տրտուճջի, առանց ցավի մի ճիչ արձակելու, հաղթականորեն երգում էր ազատության երգեր:

Ճանապարհին պատահող գյուղացիները պատմում են՝ ինչպես նա, զգզված մարմնով, փոշու մեջ ծածկված, անընդհատ կրկնել է՝ Կեցցե՛ ժողովուրդը, կորչի՛ բոճակալությունը, կեցցե՛ ազատությունը»:

Մյուս օրը գյուղացիները գտնում են անտառում Շաքրոյի մարմինը՝ հրացանի բազմաթիվ գնդակներով խոցոտված: Վերցնում են երկյուղածությունով և տանում, թաղում հայրենի դալարագեղ հովտում, ուր առաջին անգամ անվեհեր և գեղեցիկ Շաքրոն բռնեց ազատության դրոշը:

Եվ հավատում է ժողովուրդը, թե՛ նորից պիտի ծածանվի իրավունք և եղբայրության դրոշակը հայրենիքի այս թախծապատ լեռների և գլխիկոր կաղնիների վրա և պիտի դուրս ելնի գերեզմանից սիրելի և ազնավոր Շաքրոն՝ նորից բռնելու հեղափոխության սրբազան դրոշակը...

Սրանից տարիներ առաջ, Օդեսայում, այն տանը, ուր ես էի ապրում, իմ սենյակի դեմ ու դեմը կենում էր մի իտալացի կոշկակար, իր թուլակազմ, եղնիկի պես վախկոտ, տասը-տասներկու տարեկան աղջիկ-թոռնիկի հետ:

Դրացիները նրան անվանում էին Ջիովաննի:

Ծերունի իտալացին տնից սակավ էր դուրս գալիս: Նըստակյաց, գլխաքարշ, աշխատանքից և կյանքի բեռից կորացած մեջքով՝ նա երբեմն գնում էր շուկա և թևի տակին մի բան դրած վերադառնում տուն: Եվ ապա մինչև երեկո լսվում էր նրա խցից մուրճի թրխկոցը...

Հիշողությանս մեջ կենդանի պատկերանում է նա հիմա.— բարձրահասակ եղած պետք է լիներ. տխուր էր դեմքը և մըտախոհ, բայց ամենագրավիչը նրա աչքերն էին—մի երագուն, մարմանդ կրակով աչքեր, որ միանգամից վստահություն էին ներշնչում հանդիպողին և գուրգուրում:

Բարձր ճակատի տակից բարությանբ ժպտում էին այդ աչքերը ծանոթների դիմաց, իսկ ձայնը սրտագին էր և բարեկամական:

Այդ հոգեթով աչքերը ինձ քաշեցին դեպի իրենց, և ես մի օր ներս մտա նրա մոտ. նա կոացած էր մի հին կոշկի վրա, որ սեղմել էր ծերացած ծնկների մեջ և կրունկին մեխեր էր խփում, և քթի տակ մեղմիկ մրմնջում էր «Մարսելեզի» հաղթական քայլերգը:

Ես բարևեցի նրան. գլուխը բարձրացրեց և սիրալիր ժպտով բարևս առավ. մեք ղուրսն իրար պատահելիս, իբրև հարևաններ, միմյանց միշտ բարևում էինք:

— Հը՛, ի՞նչ կա, հարևան, գալո՞ բարի:

— Դե՛հ, հարևաններ ենք, եկա, որ գրույց անենք, խընդ-

րում եմ, որ դուք էլ մեկ-մեկ գաք ինձ մոտ,—ասացի ես:

Նա ժպտաց և շարունակեց ընդհատված աշխատանքը:

— Հիմա սա կվերջացնեմ, բարեկամս, կսկսենք հանգիստ գրույց անել. դուք սաեք, ի՞նչ նորություններ կան:

Ես ասացի, որ նորություն չունիմ, և սկսեցի զգնել սենյակը.—մի շատ աղքատիկ, անգարդ և նույնչափ էլ մութն ու փոքր սենյակ էր. մի դուռ բացվում էր դեպի մի ուրիշ սենյակ, ուր քնում էին պապ ու թոռ:

Այս անշուք, մերկ սենյակի մեջ աչքի էր ընկնում ոսկեզօծ շրջանակի մեջ Գարիբալդիի մեծադիր պատկերը, որ կախված էր ծերունու գլխի վերևը: Ես մտածում էի.— խեղճ ծերունի, գոյության կովի անողոք ակիքները նրան քշել, գցել են հայրենիքից հեռու այս ափերը՝ աղքատ ու միայնակ, բայց նա չէ մոռացել ազգային հերոսին հետը վերցնել. ինչպե՛ս սիրում են իտալացիք այս մարդուն:

Ծերունին հանեց ինձ մտածմունքից.

— Ինչո՞ւ լուռ ես,— հարցրեց նա:

— Հայր Ջիովաննի, սիրո՞ւմ ես դու Գարիբալդիին:

— Օ՛, ինչե՛ր ես ասում, բարեկամ,— զարմացած հնչեց նրա ձայնը,— մարդ էլ չսիրե՛ Գարիբալդիին. նա հոգի՛ էր, հոգի՛, այդպե՛ս մարդ չի եղել ու չի լինի. ով որ նրան տեսել է, էլ ուրիշ բան չի ուզում տեսնի:

— Բայց դու նրան ինքդ աչքով տեսե՛լ ես,— հարցրի ես:

— Ինչե՛ր ես ասում,— նորից զարմացած՝ լայն-լայն բացեց աչքերը.— ո՞նց թե ես նրան տեսել եմ: Մի՞թե դու չգիտես, որ ես նրա զինվորներից մեկն եմ եղել. ես էլ «Ալպյան որսորդների» բանակի քաջերից մեկն էի, նրա «Հազարյակի» մշտական կամավորներից: Քանի՛-քանի՛ անգամ ինքը՝ Գարիբալդին, անուսն տվել է և ուսիս խփել:

Եվ հանկարծ շտկեց տարիներով կորացած մեջքը, ճակատը սլայծառացավ, և աչքերը հուրհրացին:

— Ջուզե՛պպե Գարիբալդի, Ջուզե՛պպե Գարիբալդի... ահա՛ իմ փառքը, իմ անչափ հարստությունը, ահա՛ իմ բախտը, որով ապրում եմ շատերից երջանիկ. նրա սուրբ հոգին գլխիս վերևն է միշտ սավառնում և ասում է ինձ. «Մի՛ ընկճ-

վիր. դու միշտ քաջ ես եղել և քաջ էլ մնա՛ մինչև մահ. մեռնելուց հետո միշտ ինձ մոտ կլինիս»:

Ուժգին թափով դողանցեց նրա ձայնը. դեմ շարտեց մուր-
ճը և հայացքը բևեռեց վրաս:

Ես թախանձեցի, որ ինձ պատմե Գարիբալդիի մասին իր
տեսածն ու ապրածը:

Նա հարգեց իմ հետաքրքրությունը. բարի աչքերը ձգեց
վրաս, ապա ձեռքը տարավ ճակատին, կոշտ մատներով, ա-
սես, հարթել ուզեց կնճիռները և, մի փոքր մտածելուց հետո,
սկսեց պատմությունը.

— Սրանից մոտ քառասուն տարի առաջ մեր հայրենիքը,
աշխարհների ամենագեղեցիկը, Մայր-Իտալիան օտարազգի
թշնամիների ոտքի տակ հևում էր՝ շղթայակապ և ստրուկ:
Բոլոր լավ, առնասիրտ իտալացիները ամոթահար էին և վրեժ-
խնդիր, բայց ամենից շատ արյունոտվում էր հայրենիքի վշտով
Գարիբալդիի մեծ սիրտը, և նրա վրեժը մեր ծովերից խորն էր
և ուժեղ:

Նա շատ անգամ էր դուրս եկել կովի դաշտ, թե՛ մեր
հայրենիքի և թե՛ ուրիշ ճնշված հայրենիքների համար. և այս
անգամ էլ ձայն տվեց Գարիբալդին և կանչեց հայրենիքի այն
բոլոր քաջերին, որոնք ուրախությամբ կուզեին կովել և մեռ-
նել հայրենիքի համար:

Այն ժամանակ ես մի քսան և հինգ տարեկան երիտասարդ
էի: Երբ լսեցի նրա մարտահրավերը, սիրտս թնդաց, թողեցի
ծնողներին, զինավառվեցի և բազեի պես թռա նրա մոտ. նա
այն ժամանակ Լոմբարդիայի դաշտումն էր, Թուրինոյի մոտ:

Երբ նրան ներկայացա, քաղցրությամբ հարցրեց անունս.
այն ժամանակ մի փոքր այնխառն էր նրա մորուքը: Ո՛հ, ի՛նչ
գեղեցիկ էր նա—իսկական տղամարդ, առույգ և ուժեղ, իսկ
հայրական գթով լի աչքերը փայլում էին հայրենիքի սիրով և
վրեժով:

Նրա գլխի վերև ծփծփում էր սուրբ հայրենիքի դրոշակը.
այդ դրոշակի տակ ես ուխտեցի կովել և անձնագրեմ հայրե-
նիքի համար, ազատության համար, Գարիբալդիի և ընկերնե-
րիս համար:

Մեր «Ալպյան որսորդներին» զինավառ, հայրենասեր վաշ-

տերը ուրախ երգելով անցնում էին Լոմբարդիայի ծաղկոտ
դաշտերով. մենք բոլորս քաջ տղերք էինք, թուած-եկած ժա-
ռոտ կղզիներից, Ապենինյան կատարներից, կապույտ ծովի
ափերից:

Ա՛խ, ինչքան լավ է, վեհ է կովել հայրենիքի համար լավ
ընկերների հետ մեկտեղ, մեռնել հայրենիքի համար լավ ըն-
կերների գրկում...

Ա՛խ, անցած անգին օրե՛ր... գիտե՛ս, մենք ինչպե՛ս էինք
սիրում իրար, զինվորներս. մի տան պես էինք: Քաղց ու ծա-
րավ, ցուրտ ու անձրև, անքուն գիշերներ սիրով էինք տանում
և մեր վերքերով պարծենում էինք:

Ինչպե՛ս էին սիրում մեզ իտալացի գյուղացիները, գրկա-
բաց էին ընդունում մեր հաղթական կտրիճներին:

Էհե՛յ, Գարիբալդի. ինչպիսի՛ սիրտ ունեք. հո հրամայող
չէր, այլ մեր ընկերն էր, մեր հավասարը. մեզ հետ տանում
էր ամեն դժվարություն, և ավելին, նույնիսկ՝ կովի ամենա-
տաք տեղը ինքն էր առաջ նետվում: Ա՛խ, նա որ երևում էր
մեր շարքերում, կրակ էինք կտրում և առյուծ դառնում: Մարդ
զարմանում է, թե ինչպե՛ս նրա բարի, գթոտ աչքերը մեզ
խրախուսում էին փշոել, սպանել, կոտորել թշնամուն:

Եվ մենք միշտ հաղթող էինք: Մեր առաջ միշտ կանգնած
էր լինում ինքը—Գարիբալդին սուրը բռնած. և կովում էինք
գլխապատառ-սրտապատառ. ու մեռնելիս աչքներս ձգած նրա
վրա՝ «Կեցցե՛ Իտալիան, կեցցե՛ Գարիբալդին» գոչելով հանգ-
չում էինք նրա գրկում, նրա ոտների տակ: Եվ նա բոլորի
համար արցունք ուներ:

Քանի-քանի անգամ մենք ճակատ մտանք թշնամու հետ,
որոնց ոչխարների վախկոտ հոտի պես քշում էինք, մաքրում
Լոմբարդիայից: Մենք թվով շատ չէինք, թշնամին մեզնից
տասնապատիկ ավելի էր, բայց թիվս ո՛րն է, մեր մի տղան
հարյուր էր, հազար էր:

Գարիբալդիի հետ մենք արծվի պես մեխվում էինք թշնա-
մու բանակի սրտի մեջ. խփում-ծակում էինք և փոթորկի ուժով
քշում նրանց աշնան տերևների պես—այդ կանոնավոր, թըն-
դանոթավոր, ավստրիական-կայսերական բանակները:

Եվ նրանց քշեցինք մինչև Վենետիկի լագունները. պետք

Է բոլորին ծովը թափեցինք, բայց Ֆրանսիայի կայսրը, չգիտեմ ինչո՞ւ, նամակ գրեց Գարիբալդիին և արգելեց առաջ գնալ. ինքը՝ Գարիբալդին, զայրացած, պատռեց կայսրի նամակը և պատռած կտորները ետ դրկեց նրան, իբրև պատասխան:

Այդ մենք բոլորս տեսանք մեր աչքերով, բայց երբ մեր թագավորը նամակ գրեց Գարիբալդիին, որ դադարեցնի արշավանքը, Գարիբալդին լսեց, և մենք ետ դարձանք սուրբ Մարկոսի քաղաքի մոտերքից:

Այնուհետև մենք քանի-քանի կոիվ ունեցանք Հոռմի մարդագալլի հետ—Պապա Ռոմայի հետ, որը իշխանների և կարդինալների հետ ծծում է գյուղացուն և մոլորեցնում է մարդկանց:

Ես ութ-ինը տարի շարունակ Գարիբալդիի կամավորների բանակումն էի. և ընկերներով մեկտեղ շատ վերքեր ստացանք, որոնցով և լավացավ հայրենիքի մեծ վերքը:

Իմ սիրելի ընկերներից շատերը ընկան կովի սուրբ դաշտում. փա՛ռք նրանց. լուսավորվի նրանց հոգին, ես էլ կուզեի մեռնել նրանց հետ, Գարիբալդիի աչքերի առջև, բայց բախտը ինձ ուրիշ բան էր կամեցել:

Նրա մեծ սրտի իղձը կատարվեց. ազատվեց սիրելի Իտալիան, միացավ, զորեղացավ... Վերջացան մեր կոիվները, բոլորս ցրվեցինք մեր տները՝ գոհ ու երջանիկ, տանելով միասին Գարիբալդիի հետ ապրած փառավոր օրերի հուշերը:

— Ահա՛ այստեղ է ապրում նա—իմ սրտի մեջ,— այս ասելով խփեց նա իր ոսկրացած կրծքին.— և նրա պատկերը կրծքիս վրա՛ է.— և նա դողդոջուն ձեռքով քանդեց բաճկոնի կոճակները և հանեց պարանոցից կախված մի փոքր նկար— Գարիբալդիի գլուխը...— Այս փոքրիկ նկարները դուք կգտնեք ամեն մի աղքատ իտալացու կրծքի վրա— գյուղացիների, հովիվների... ինձնից անբաժան պիտի մնա այս նկարը, և գեթեգմանիս մեջ, հավիտյան...

Այստեղ ծերունին կանգ առավ, նայեց ժամացույցին, ապա և իմ հիացած երեսին:

— Երջանիկ ես դու, հայր Ջիովաննի, որ Գարիբալդիի բազեններից ես և պարտքդ կատարել ես դեպի հայրենիքդ, բայց ների՛ր, մի հարց տամ. ի՞նչը ստիպեց քեզ քո վերքերով

առողջացած այդքան թանկագին Իտալիայից հեռանալ, ընկնել այս օտար աշխարհը, անծանոթ մարդկանց մեջ:

— Էհե՛յ, բարեկա՛մ, բարեկա՛մ,— հառաչեց նա, և մի փոքր առաջ ոգևորված աչքերի թարթիչներից երկու կաթիլ արցունք կախվեցին. մի չլավացած վերք կար ծերունու սրտի մեջ, որին ես անզգուշությամբ դիպա:— Ես ապրեցի երկար ժամանակ իմ հայրենի օջախի տակ և աչքովս տեսա Իտալիայի մեծությունը. հուղարկավորեցի դեպի անմահություն Գարիբալդիի սրբազան աճյունը... Ա՛խ, մարդ չի հասկանում, ինչո՞ւ եմ մեռնում այդպիսի մեծ մարդիկ... բայց ի՞նչ ասեմ... Այնքան թանկ արյուններով՝ դրսի թշնամիներից, օտար տերերից ազատված Իտալիան ընկավ մի նոր տեսակի գերության մեջ— մեր արյունակից տերերի ճանկն ընկավ, հարուստների և կառավարության պաշտոնյաների: Հարուստները ոսկի շղթայով կապեցին-կաշկանդեցին Իտալիան և իրենց ծանր թաթը դրին իտալական չարքաշ ժողովրդի սրտին և ճնշեցին: Աղքատ է շա՛տ մեր գյուղացին ու բանվորը. իմ որդին սպանվեց մեր կառավարության զինվորների ձեռքով, մի բանվորական գործադուլի ժամանակ, իսկ հարսս գործարանի ծանր աշխատանքից թոքախտով մեռավ: Ես զայրացա ապերախտ հայրենակիցներին դեմ, որք թողիս վեր առա, հեռացա այն դաշտերից, որոնց վրայով ես էլ հազարների հետ հաղթական անցել էի մի ժամանակ: Ես չցանկացա ստրուկ լինել մեր ազատած հայրենիքում: Է՛հ, մենք էլ մարդ եմք, հպարտություն ունինք:

Նավ նստեցի և եկա այստեղ. միևնույն է, մի տեղ պետք է գնայի... Եվ ես քանի ողջ եմ, չեմ վերադառնա նորից ստրուկացած հայրենիքս. հիմա ո՛չ Գարիբալդի կա, ո՛չ էլ ուժ ունիմ կովելու... Բայց կուզեցայի գոնե աճյունս թաղվեր իմ հայրենիքում, որ տարիներ հետո, երբ վերջնականապես Իտալիան իր ստրուկ, չարքաշ ժողովրդով ազատվեր հարստահարության լծից— հաղթական ժողովրդի ազատ ձայները լսեի, ինչպես լսեցի երիտասարդ օրերումս...

Բայց ո՞վ է տանելու մի աղքատի աճյունը այդքան հեռո՞ւ... Է՛հ, թող ազատվի Իտալիան, հեռվից էլ կլսեմ...

Ես ապրում եմ հիմա իմ թողիս համար. աստված կյանք

տար ինձ այնքան, մինչև որ թողիս իր սեփական ոտների վրա կանգնեցների, հետո մեռնեի. ուրիշ ոչ մի իղձ չունիմ հիմա. ի՞նչ է լինելու թոռնիկիս վիճակը, եթե ես շուտ մեռնիմ... Բայց Գարիբալդիի մեծ ոգին, որ միշտ գլխիս վերևն է, խրախուսում է ինձ, և արդեն նրա ոգով եմ ես մխիթարվում այս աշխարհում. երբ օրս հասնի, ո՛հ, այն ժամանակ ես Գարիբալդիի մոտը կլինեմ, այնտեղ, երկնքում...

Խզվեց ծերունու ձայնը. աչքերը բարձրացրեց վերև, և ապա կանգ առավ երկար ու երկար Գարիբալդիի նկարի վրա...

Տիրեց մի երկյուղած լռություն...

Ես չուզեցա խանգարել նրա հոգեսլացումը, որ վեհ էր և նվիրական:

Այդ ժամանակ ներս մտավ թոռնիկը և վախվխելով բարևեց ինձ ու մտավ մյուս սենյակը: Ես վեր կացա, համբուրեցի ծերունու կոշտացած, սևացած ձեռքը, գլուխ տվի և հեռացա:

Տարիներ հետո, երբ ոտքս նորից ընկավ Օդեսա, շատ ուրուցեցի ծերունուն, բայց չգտա: Կարոտով նայեցի նրա վաղեմի բնակարանին և մեկ-մեկ վերհիշեցի նրա բոլոր խոսքերն ու շարժումները:

Ո՞վ գիտե, ուր է նա հիմա. արդյո՞ք նորից՝ հոգին շքեղ երազների մեջ՝ գրկել է և ամուր սեղմել մամր ու չնչին մարդկանց կոշիկները իր առնացի, հերոսական սրտի վրա և համբերությամբ կարկատում՝ իր վերջին պարտքը կատարելով թոռնիկի հանդեպ, թե՞ գոյության կովի դաժան ալիքները, որ այնպե՛ս զորեղ են աղքատներին փշրելու, որ այնպե՛ս գռեհիկ են դեպի մեծություններն ու գեղեցկությունները, վերջնականապես խորտակել են այդ շքեղ բեկորը և հողերին հավասարեցրել ու որբուկին թողել ապերախտ հայրենիքից դուրս, նյութապաշտ մարդկանց մեջ՝ խեղճ ու անօգնական...

Ջանգվի ափին խաչածն նստել է մոայլ ու տխրադեմ երևանի բանտը:

Այս վիթխարի խաչի ձախ թևի վրա մեր խցերն էին գրուցվում. ես միայնակ էի իմ խցում բանտված. մի փոքրիկ լուսամուտ նայում էր Արագածին, որի միայն բյուրեղափայլ գազաթն էր հայացքս գուրգուրում:

Դուռս բացվում էր դեպի նեղ և երկայնաձիգ միջանցքը, իսկ իմ դռան հանդեպ կար մի խցի մեծությամբ մի ուրիշը, ուր բանտարկված էին վեց մարդիկ—մի քուրդ՝ Ամո անունով, մի հայ՝ Պողոս անունով և էլի մի հայ, մնացած երեքը՝ թուրքեր:

Դուռս միշտ փակ էր, կողպած, նրա վրա կար մի փոքր անցք-ծակ, որի միջով դիտում էին մեզ պահակները, և որտեղից բանտարկյալներին հաց, ջուր էին տալիս:

Հարևան բանտարկյալներս միմյանց տեսնում և խոսում էինք այդ անցքի միջով, որն այնքան փոքր էր, որ մի երեխայի գլուխ հազիվ տեղավորվեր:

Երբ պահակները հեռանում էին միջանցքից կամ նստած տեղերում մրափում, բանտարկյալներս մոտենում էինք դռներին, անցքերից իրար ձայն տալիս և սկսում էինք խոսել:

Եվ ինչե՛ր չէինք խոսում. մեր միակ մխիթարանքը գրուցքն էր. խոսում էինք մեր անցյալ օրերից, լավ հիշողություններից, պատմում էինք զանազան դեպքեր ու անցքեր, առակներ էինք ասում, երգում ցած ձայնով:

Ամեն օր խոսում էինք, և մեր գրուցներից վերջ չկար. մեկը իր տեսած երազն էր պատմում, մյուսը տնից ստացած տեղեկությունները, և ապա սկսվում էին ավելի համեղ գրուցներ—մեր ճանապարհորդություններից, մանկությունից, սի-

գրուց, արկածներից, և այսպես ամեն օր, ամեն հաշող ժամին...

Միատեսակ բախտը, տանջանքը մեզ բոլորիս միացրել էր. եղբայրացել էինք միևնույն վշտի և տառապանքի մեջ: Քաղաքական հանցավորն ու քրեական հանցավորը, թուրքն ու հայը, քուրդն ու սատրին եղբայրացել էին իրար հետ:

Ամեն ոք աշխատում էր սփոփել մյուսին. երբ դրսից մեկը մի բան էր ստանում՝ ծխախոտ, շաքար, միրգ՝ իսկույն սիրով բաժին էր հանում ուրիշներին:

Երբ հիմա՝ տարիներ անց՝ հիշողությանս մեջ կենդանանում են այդ տառապյալ, գունատ դեմքերը—սիրտս լցվում է մի անհուն սիրով դեպի նրանց:

Մայիսյան մի խաղաղ և թովիչ երեկո էր. քաղաքի հեռավոր տներից ժպտուն աչքերի պես փայլվում էին ճրագները. մեղմ հովը բերում էր իր թևերի վրայով ուրախության ձայներ. սիրո երգեր և բարձր քրքիջ, իսկ մեր բանտը լուռ էր՝ հսկա գերեզմանի պես:

Բանտարկյալները լուռ էին. արդյոք քնե՞լ էին նրանք, թե՞ գարնան գգվող երեկոն նրանց հոգին կախարդական աշխարհն էր տարել, ուր ազատության և երջանկության շքեղ երազները մոռացության են տալիս բանտի մռայլ և ծանր մղձավանջը...

Բանտում ամենքը երազում են գիշեր ու ցերեկ, ցերեկ ու գիշեր և ամեն մի բանտարկյալի աչքերի մեջ երազն է շողում, ազատության չքնաղ երազը...

Երբեմն միայն խոր լռությունը խցում էր մի տխուր երգ, խուլ հառաչանք և շղթաների սրտմաշուք շառաչը...

— Է՛յ, ախպեր ջան,— լսեցի Ամոյի ձայնը, որ ինձ էր կանչում. ես մոտեցա իմ դռանը.— արի՛ մի քիչ խոսենք, սիրտս շա՛տ ելած է, տխուր եմ,— ասաց Ամոն:

— Սիրելի՛ս, տխրելու ի՞նչ կա որ... շատը գնացել է, քիչն է մնացել. այսքանը տարել ես, մի քիչ էլ տար, կվերջանա, ի՞նչ մնաց որ...

— Մնաց երեք ամիս, տասն օր. հոգիս դուրս կգա, մինչև քաշեմ էսքանը. անցած վեց ամիսն աչքիս չերևաց, ամա էս մնացածը չեմ կարող. էն ձմեռ էր, ոչինչ, հա՛ դուրսը, հա՛ ներսը. իսկ հիմա գարո՛ւն է, գարո՛ւն է,— հառաչեց Ամոն:

Մի երիտասարդ, առույգ և սիրուն մարդ էր Ամոն. մեկին վիրավորելու պատճառով ինն ամիս բանտ էին վճռել, նոր էր նշանված:

— Ամո ջան, դիմացի՛ր, բա ես ի՞նչ անեմ, որ մի տարի նստել եմ ու դեռ չգիտեմ, թե որքա՞ն էլ պիտի նստեմ:

— Քու բանն ուրիշ է. մեկ՝ որ դու քաղքցի ես, միշտ տանն եք, սարի սովոր չեք. մեկ էլ որ՝ նշանված չես, աչքդ մուրազի չէ:

— Դե՛հ, ավելի լավ, որ դուրս գաս՝ հիմի սարն աչքիդ ավելի անուշ կերևա, նշանածո՞՛ ավելի սիրուն:

Թեթև ժպտաց նա:

— Թե որ ազատվիմ, գիտես, ախպեր ջան, ինչքա՞ն ուրախություն պիտի անեմ. քեզ չեմ մոռանա իսկի: Էսօր սիրտս շատ ելավ.— հեռվից տեսա մեր սարերը... Է՛յ, սարեր, ջա՛ն սարեր... սիրտս թռավ Էնտեղ. հիմա քոչը սարն է ելնում, գառն ու ոչխար անուշ-անուշ մայելով, կաթնոտ խոտը արածելով բարձրանում են հով ու սիրուն սարեր. մե՞նակ խեղճ Ամոն է էս կրակի մեջ տապակվում. հիմա սիրուն հարս ու աղջիկ զնգզնգալով, փոփոալո՛ւ սարն են ելնում ու ջահել տղերանց սիրտը աչքով այրում. ամա մե՞նակ խեղճ Ամոն սարից կարոտ էս քամբախում տանջվում է...

Հորդ արտասուքները խեղդեցին Ամոյի ձայնը...

— Ամո՞թ է, ամո՞թ, Ամո, մե՞նակ հո դու չե՛ս, չե՛ որ ամեն մարդ էլ սիրտ ունի, սեր ունի. բայց ի՞նչ, պիտի դիմանանք, քաշենք, ցավը մարդը պիտի քաշե, հո քարը քաշելու չէ, տղամարդ չե՛ս, դիմացի՛ր...— խրտուական շեշտով բարկացա ես, բայց սիրտս կտոր-կտոր էր լինում այդ բնական մարդու անմիջական տանջանքի վրա:

— Ա՛խ, չեմ կարող դիմանալ, կուզեմ չտանջվեմ, գիտեմ, որ քիչ է մնացել. ուրիշներին տեսնում եմ, որ տարիներ նստել են ու ախ չեն քաշում, ամա սիրտս խոսք չի հասկանում... Գիտե՛ս, հիմի սարերն ինչքա՞ն սիրուն են, որ բարով դուրս

գաս, արի ինձ մոտ հյուր, կե՛ր, խմի՛ր, քե՛ֆ արա, որսի գնանք... Ջա՛ն Աղմաղանու սարեր. ծովից հովը փչում է անո՛ւշ ու բարա՛կ, ջրերը գլզլան, ծաղիկները զառ-վառան, նշխուն, հավքերի ձեները հո պատմել չի լինի. հիմի իրիկվան՝ երգ, պար, ձիերի խրխնջոցը իրար հետ խառնված, վրանների ծուխը... հիմա նշանածս յարաբ ի՞նչ է անում, յարաբ մեկ իմանայի: Ա՛խ, Ամո, Ամո, երբ պիտի սարերի հողը կոխես...

Ես որքան ջանացի գրույցի նյութը փոխել, որ Ամոյի ուշքը տանելի ուրիշ կողմ, հնար չեղավ. նա շարունակ իր վշտի ու կարոտի մասին էր խոսում, սարերի գովքն էր անում, ծաղիկների տեսակների անուններն էր թվում, ձորերի ու քարափների կամ զանազան աղբյուրների ջրերի մասին էր պատմում, մարալների ու կաքավների կամ ձիերի ու ոչխարների մասին էր խոսում. սիրո քնքուշ խոսքեր էր ուղարկում նշանածին կամ թե չէ անտեղի խանդից հայհոյում էր նրան...

Ջարմանայի մարդ էր Ամոն. ճիշտ և ճիշտ բնության որդի, հեռուն չէր մտածում և զգացմունքի գերի. այնպես էր հուսահատվում, կարծես կախաղան էին վճռել նրան. երբեմն թվում էր նրան, թե այլևս բանտից դուրս չի գալու. նայում էր պայծառ երկնքով թռչող աղավնուն՝ լալիս էր և բարևներ ուղարկում. դուրսը դողացող ավելուկին երանի էր տալիս...

Երբեմն անհամբեր՝ սրտի զայրույթից ոտքը խփում էր պատերին, դռանը, և գազանացած պահակների բարկությունն ու հայհոյանքի տարափը բերում:

Ճշմարիտ ասած՝ ես ձանձրացել էի նրա ամենօրյա միատեսակ գանգատներից և խնդրեցի, վերջ տալու համար այդ տաղտուկին, մի երգ ասել. նա անուշ ձայն ուներ և սրտանց էր երգում:

Նա նայեց բակի աջ ու ձախ կողմը և, տեսնելով ոչ ոք չի երևում, սկսեց քաղցր ու մեղմ ձայնով.

Յա՛ր, աչքերդ աստղ ու զուլալ,
Հանց աղբյուրներն Աղմաղանու.
Կը թովուսս, հանց որ մարա՛լ
Ծաղկունանց մեջ Աղմաղանու:

Յա՛ր, կը մեռնեմ քու կարոտով,—
Երազ դառի՛ր, արի՛ ինձ տես.
Դու սարի վա՛րդ անուշ հոտով,
Ալ թերթերդ շա՛ղ տուր վրես:

Կուրծքդ՝ շարմա՛ղ, կուրծքդ՝ ներմա՛կ,
Հանց որ ձյունը Աղմաղանու,
Ծո՛ւփ-ծո՛ւփ կուտան մագերդ արձակ,
Հանց որ հովերն Աղմաղանու:

Երգը դեռ չէր ավարտել Ամոն, երբ դռնապահը խոշոր և արագ քայլերով եկավ դեպի մեզ.— «Ի՞նչ ես ունում»,— փրփրած հայհոյեց նա Ամոյին և իշխանական աչքերը սևեռեց վրաս. ապա հրամայեց, որ լռենք և անպատճառ քնենք:

Անցավ մայիսը, և Ամոյին մնաց 85 օր միայն. բայց այս վերջին օրերում խեղճը սարսափելի տանջվում էր, ամեն րոպե օրերն էր համրում, բայց բանտում օրերը տարիներ են, դարեր են, երբեմն հավերժություն են:

Վերջին օրերս նա շա՛տ էր ընկել, նհարել. հաց չէր ուտում, անքուն էր և շա՛տ էր ծխում. նրա մխիթարանքը ես էի միայն. ինձ թվում էր, որ նա միակողմանի զգալուց և մտածելուց ծայրահեղորեն սրել էր իր կարոտի-վշտի զգացմունքը և հիվանդագին դրության հասցրել: Հանգիստ չուներ իր խցում. մեկ թոնում էր մահճակալի վրա և լուսամուտից նայում հայրենի սարերին, աչքերից արցունք քամում, մեկ գալիս էր դռան մոտ, ինձ դուրս կանչում.— «Շունչ չկա, ախպե՛ր ջան, սիրտս պատռվում է. սարերի հովն էլ չի գալիս, որ մի ծծեմ, ութսուն և հինգ հատ օր մնաց, է՛լ հոգի չմնաց մեջս...»:

Եվ նորից թոնում էր լուսամուտը, սարերին երկա՛ր ու երկա՛ր նայում... Նա նման էր վանդակում փակված վայրի կատվին, որ շարունակ չանգոտում է վանդակի ձողերը և վերուվար թռչկոտում, զարկվում դեսուդեն, հազար անգամ փորձում ձողերը և ազատության ելք որոնում...

Սիրտս կտոր-կտոր էր լինում՝ տեսնելով Ամոյի հսկայական, թեև անտեղի տանջանքը. սրտանց ուզում էի, որ նրա երեք ամիսն էլ ես քաշեի, միայն թե նա հենց հիմա դուրս գար քանտից...

Հունիսի կեսին, առավոտ շա՛տ վաղ, Ամոյի խցից ինձ գիլ ձայն տվեցին. ես վեր թռա վախեցած. սովորաբար ես զարթնում էի, երբ բանտարկյալները զարթնում էին, և շղթաների սոսկալի շառաչը խոր քնած տեղս նույնիսկ խոցում էր ոսկի երազներս և ինձ վեր կացնում:

Ես մոտեցա դռանը. Պողոսը՝ գունատ ու այլայլված՝ ինձ հայտնեց, որ Ամոն լուսամուտից իր գոտիկով կախվել է, մեռել է արդեն... Ես քարացա, ես շվարեցի. ծնկներս դողացին, և ատամներս զնգրր-զնգրր իրար խփեցին...

— Մենք քնած էինք, չէինք իմացել,— ասաց Պողոսը,— երբ աչքներս բացիմք, տեսանք Ամոն լուսամուտից նայում էր հեռու սարերին, ասացինք՝ քուրդը առավոտ կանուխ իրենց սարերի կարտն է առնում. մեկ էլ տեսանք՝ ի՞նչ կարոտ—սև կարոտ. խեղճի ոտները գետնից վեր են. մոտեցանք. բանը բանից անց էր. աչքերը բաց—մեռած, հենց իմանաս սարերին էր նայում անթա՛րթ—անկո՛ւշտ...

Այդ միջոցին երկու ճնճղուկ ուրախ ծվլալով թռան-նստան լուսամուտիս երկաթե ձողերի վրա. մեքենայաբար նայում էի նրանց. կտուց-կտուցի տված՝ զվարթագին ճվլում էին նրանք:

Օրը անգթորեն գեղեցիկ էր, թարմ, և երկինքը պայծա՛ն՝ կյանքի պես՝ անուշ ու շքեղ...

— Խեղճ Ամո, իմ խեղճ Ամո,— փղձկացի ես և ընկա անկողնուս վրա:

1907

Խոսքն այն օրերի մասին է, երբ Սուլթան Համիդը գինեց ու քաց թողեց քրդերին, որ կողոպտեն ու սպանեն հայ շինակահին:

Մեր գյուղի և հարևան հայ գյուղերի լեռները լցվել էին այդ արյունարբու խմբերով: Մի բուռ հայ անձնվեր կտրիճներ, ճակատ-ճակատի կովում էին նրանց դեմ. քրդերը մեր քաջերի դիակների վրայով միայն պիտի կարողանային մոտենալ հայ գյուղերին:

Կռիվը օրեր տևեց: Վաղ առավոտից միջև ուշ երեկո անընդհատ լսում էինք հրացանների ճարճատյունը. երբ պիտի վերջանար այս կռիվը. ո՞վ գիտե: Քրդերի վրա ավելանում էին նոր խմբեր. թեև մեր կտրիճների թիվն էլ էր աճում, բայց թշնամու հետ համեմատած շա՛տ չնչին էր:

Գյուղերում մնացել էին միայն ծերերը, պատավորները և երեխաները. երիտասարդ կիները թեև չէին կովում, բայց օր ու գիշեր, անքուն, ոտքի վրա՝ հաց էին տանում կովողներին, վիրավորներին խնամում, զենքերը սրբում:

Խեղճ ծերունիները եկեղեցու պատի տակ նստած՝ աղոթք էին մրմնջում, և գլուխները կախ՝ խորհում, խորհում, իսկ պատավորները ցամաքած աչքերը քամելով՝ տան հոգսը քաշում:

Երեխաներս էլ շա՛տ տխուր էինք. սեսեք, լավ չէինք հասկանում, թե ի՞նչ է կատարվում և ի՞նչ է սպասում մեզ. սակայն գյուղի խորին տխրությունը մեզ էլ էր համակել. մենք երդիկների վրա լուռ նստած՝ դիտում էինք կռիվը, և կամ կռիվ էինք խաղում, բաժանվելով երկու խմբի՝ հայ և քուրդ. հայ խումբը միշտ հաղթող էր դուրս գալիս:

Իճճ մի բան միայն շատ զարմանք էր պատճառում. եղբայրներս կովի վայրումն էին. մայրս ամբողջ օրը արցունք էր թափում, իսկ հայրս մեր հին գութանը հանել էր դուրս և մի անվերջանալի, միօրինակ երգ շրթունքից կախ՝ սուր ուրագով տաշում-տաշտում էր գութանը, հին փայտերը հանում, նորը դնում, միայն երբեմն-երբեմն, երբ ավելի էր ուժեղանում հրացանների ճարճատյունը, գլուխը վեր էր բարձրացնում, ավը աչքերին հովանի արած՝ նայում էր լեռը, կովի վայրերը, և ապա քրտինքը սրբելով և նույն երգը կցելով, շարունակում էր աշխատանքը:

Մի անգամ մայրս, սրտնեղած, ասաց հորս.

— Ա՛յ մարդ, ի՞նչ քար սիրտ ունիս, տղերքդ լեռը՝ մահի բերան. ողջ գլուղը սփ մեջ, ընկերների հավաքվել գլուղի մասին եմ մտածում,— դու ելել գութանն ես շինում ու դեռ սիրտ էլ ունես՝ երգում ես. ո՛ւմ համար ես շինում, հարցնող լինի. վաղը վայրենի քուրդը կուգա, քեզ էլ կսպանի, մեզ էլ, ու գութանը կտանի:

— Է՛հ, կնիկ, ի՞նչ ես ասում. մեզ կսպանեն, հո՛ գութանն էլ չե՛ն սպանի. ես կշինեմ, հո չեմ քանդում. աշխարհը գութանի վրա է հիմնված. ողջ մնացինք՝ գութանը մեզ հարկավոր է ու հարկավոր, մեռանք՝ ով որ տանի, կարելի է արդար աշխատանքի սեր զարթնի մեջը, իճճ էլ ողորմիս տա. ի՞նչ իմանաս աշխարհիս բանը...

Մայրս գլուխը շարժեց և հեռացավ:

1912

...Աշնան մի պայծառ առավոտ էր. Արարատյան դաշտի հրաշագեղ աշունը. փոշոտ ցանկերի միջից փայլվում էին խաղողի ոսկեղեն ողկույզները, նուռն ու խնձորները, ասես՝ հրեղեն գնդակներ լինեին. հուլիսի այգիներից լիության անուշ բուրմունքն էր խնկում. վերև, բացկապույտում, հավքերի շղթան էր ձգվում, ներքև, ցողաթուրմ արահետներով հայ գեղջուկի սալերն ու ձիերն էին անցնում՝ բարձած աշնան հագար ու մեկ բերքերով:

Երկու ընկերով գնում էինք հինավուրց Արմավիրի բլրի տակով. մեր գլխի վրա ծփում էր մեհենական սոսիների խորհրդավոր սոսափը. երկուսս էլ լուռ էինք, տարված մեր տեսիլներով:

Մեր ցուպերը՝ հովիվների պես, մեջքներիս լայնքով դրած արմունկներիս մեջ քայլում էինք Երասխի հին հունով դեպի մի գլուղ՝ Երասխի ձախ ափին:

Սքանչելիք է Արարատյան դաշտը:

Մասիսը ուղղակի դիմացներս էր. այնպե՛ս պարզ ու վճիտ էր, որ նրա ոտքերից մինչև գագաթը մեկ-մեկ կարելի էր դիտել: Մի հսկա սպիտակաբաշ առյուծի է նման նա, նստած հետի ոտքերի վրա, ալևոր գլուխը անհունի մեջ, հանգիստ և անվրդով:

Աշնան քաղցր ու մեղմ արևը Մասիսի վերից վար, և Արարատյան երկրի լայնքին ու երկայնքին իր տարածուն ծիրանին էր փռել:

Մտանք մեր նպատակադրված գլուղը:

Հաջորդ օրը մեկնելուց առաջ գնացինք գյուղական գաղտնի դպրոցը այցի. ուսուցչի հետ արդեն երեկոյան ծանոթացել էինք. նա նույն գյուղից մի կրակոտ երիտասարդ էր:

Ճարական կառավարությունը փակել էր հայկական դըպրոցները՝ քաղաքների և գյուղերի, գրավել էր դպրոցների պատկան շենքերն ու եկամուտ բերող կալվածքները: Հայ ժողովուրդը զրկվել էր ազգային կրթություն ստանալու միջոցներից և հնարավորություններից: Հայ ժողովրդի զգայուն մասը գիտակցում էր հայությանը հասած ծանր հարվածը, և հայրենասեր անհատներ ինքնաբերաբար մտածում էին կարելի չափով հակազդել պետական այլասերող քաղաքականությանը: Հայկական գավառներում տեղ-տեղ, տակավին սակավաթիվ գյուղերում, սկսեցին գործել գաղտնի դպրոցներ, համետ միջոցներով:

Նախկին դպրոցների ուսուցիչներից ոմանք մնացին իրենց գյուղերում՝ նվիրվելով մանուկ սերնդի ազգային կրթությանը: Նրանք սովորեցնում էին գրել-կարդալ և հասարակ թվաբանություն: Հետագայում այդ տարրական դպրոցների քանակը շատացավ:

Այդպիսի դպրոցներից մեկին էր, որ մենք այցելեցինք: Արաքսի ափին հաստաբուն ընկուզենու տակ խումբ-խումբ, հասարակ նստարանների վրա, տեղավորվել էին բավական մեծ թվով մանուկներ և պատանիներ:

Օրը կիրակի էր. գյուղը հանգստանում էր դաշտային աշխատանքներից, և այդ պատճառով դպրոցը լիքն էր աշակերտներով, ինչպես բացատրեց մեզ ուսուցիչը: Դպրոցը միայն մի ուսուցիչ ուներ, բայց ուսուցչի եռանդը հասնում էր ամեն տեղ: Մի խումբ «այբուբեն» էր սովորում, մյուս խմբում՝ «Մայրենի լեզու» էին կարդում, երրորդ խմբում՝ Պալասանյանի «Հայոց պատմությունից» էին դաս պատասխանում, մի ուրիշ խմբում՝ «Դավիթ-Քել» էին կարդում:

Երբ դասաժամը վերջացավ ու աշակերտները պիտի ցրվեին, ընկերս, որ շատ երգ սիրող էր, խնդրեց ուսուցչից, որ աշակերտները մի երգ ասեն: Ուսուցիչը պատասխանեց, թե ինքը, դժբախտաբար, «բաղաձայն» է, և դրա համար երգ չի սորվեցրել. սակայն, ավելացրեց, որ աշակերտների միջից

երգողներ կան, և առաջարկեց նրանց, թե՛ ով կարող է, թող երգե: Փոքրերը սիրտ չարին, մեծերն էլ բաշվեցին...

— Բայց լավ կլինի բոլորը գոնե մի ընդհանուր ազգային երգ գիտենան. օրինակ, «Մայր Արաքսին», որ շատ տեղիմ է, հենց նրա ափին եք,— ասաց ընկերս:

Ուսուցիչը թեթև կարմրեց, ապա մի պահ մտածելուց հետո, գլուխը եռանդուն թափահարելով, դարձավ աշակերտներին.

— Հապա՛, սիրելիներս, ամենքդ մեկ շարվեցեք այստեղ,— և հետո մեզ,— ինչպե՛ս չէ, գիտեն և լավը գիտեն:

Ու ձեռքի բանակը թափով վեր բարձրացնելով, գոչեց.

— Բոլորդ միասին ինձ հետ երգեցեք «այբ-բեն-գիմ»: Չէ՛ որ բոլորիդ անգիր սովորեցրել եմ, և միասին ձայնով ասել եմք: Դե՛հ այսպես:

Եվ քանակի հավասար բախումներին ներդաշնակ՝ բոլորը, հետևելով ուսուցչին, սկսեցին միասին բարձր և եղանակավոր ձայնով հեգել.

Այբ. բեն, գիմ,

Դա՛, եչ, զա,

Է, ըթ, թօ...

Այսպե՛ս մինչև վերջը, քառասուն-հիսուն կրծքից բխած այս հուժկու, բազմահնչուն և միահամուռ ձայնը, որ ինքնին հայոց լեզուն է, Երասխի շտառչի հետ փոփելով Արարատյան աշխարհի վրա՝ թվում էր, սլանում է ազատ—Մասիսն ի վեր:

Ամենքի երեսին պայծառ ժպիտ կար. ուսուցիչը շատ ոգևորված էր:

— Ահա՛ ձեզ մի ընդհանուր ազգային երգ, որ ամեն հայ անպատճառ պետք է գիտենա. ահա՛ չորս-հինգ տարի է ես այդ երգն եմ սորվեցրել, ուրիշ երգ չեմ ճանաչում...— Բոցավառ շրթունքներով շնչասպառ ասաց ուսուցիչը և սրբեց քրտնած ճակատը:

— Շատ ճիշտ եք ասում և կեցցե՛ք, իսկապես որ անմահ էր,— ոչ նվազ ոգևորությամբ պատասխանեցինք մենք:

Ապա մեր շնորհակալությունը հայտնելով, ամուր սեղմե-

ցինք սրամիտ ուսուցչի ձեռքը և ուրախ ու թեթև շարունակեցինք մեր ուղին:

Մի պահ գտնվում էինք այդ տարօրինակ երգի ազդեցության տակ. ընկերս խզեց լուռությունը.

— Համաձայն չե՞ս, որ քանի հայր կապրի, հայոց «այր-բեն»-ը չի՛ մեռնի:

— Այո՛, — ասացի ես, — բայց ես հակառակին ավելի համաձայն եմ. այն որ՝ քանի հայոց «այր-բեն»-ը կապրի, հայր չի՛ մեռնի...

— Դրան նույնպես համաձայն եմ, — թերևս ավելի շատ, — արտաբուխ ձայնով պատասխանեց սիրելի ընկերս:

1913.

Սուլթան Մեհմեդ կեսօրից հետո նստել էր Սերայի մեծ դահլիճում գահի վրա, վեհափառ սարըքը գլխին:

Ձախ ափի մեջ բռնել էր մորուքը և ցուցամատը դրել էր բարակ, երկարուն, սուր քթի վրա: Խորագնին հայացքով նայում էր իր ոտների ներքև, Սպահանի թանկարժեք գորգերի վրա ծունր դրած մեծ վեզիրին, սերասքլարին, դեֆտերտարին և Մյունեհիմ-բաշուն:

Մեծ վեզիր Մահմուդ փաշայի խորագետ հայացքը կարդում էր Սուլթանի դեմքը, որ միշտ անթափանցելի կերպով ծածկում էր նրա հոգեկան կացությունը: Սուլթանը հոգում հուզված էր վեզիրի հաղորդած լուրերի պատճառով:

«Փուլթ չէ, — մտածում էր Սուլթանը, — ես կարող եմ, եթե ուզեմս, գլավուր վեճետիկցիներին հանել խոզ ճենովացիների դեմ. սակայն հիմա բարեկամ պիտի երևալ, որպեսզի հետո, հարմար ժամանակին լավ հարվածել նրանց: Այսպե՛ս»: — Եվ դիմեց պետական գանձապետին:

— Դո՛ւ, դեֆտերտար, ամենաընտիր նվերներ ուղարկիր շուտով, իմ անուցից, Վեճետիկի և Ճենովայի իշխանապետներին, իբրև նշան բարեկամության:

Դեֆտերտարը խորին գլուխ տվեց մինչև գետին:

— Դո՛ւ, սադրագամ, — հարցրեց Սուլթանը մեծ վեզիրին, — ուրիշ ի՞նչ լուրեր ունիս:

— Բոյո՛ւկ Սուլթան, մաջար Հունիագին Բելգրադի մեջ ահագին թվով ասքյար է հավաքել, իսկ առնավուտների Խուկեճեդեր բեկը հարձակվել է քո պետության սահմանների վրա և քո հավատարիմ ծառաներից շատերին չարաչար սպանել, շատերին էլ գերի վարել... — պատասխանեց վեզիրը վախվռյալ:

Սուլթանի երեսի վրա ոչ մի մկան չշարժվեց:

— Աշխարհաստան մեծ փառիշահ, Իսլամի վահան, քո քաջ բանակները վրեժի կրակով բռնկված՝ քո մեկ հրամանին են սպասում կովի դաշտ թռչելու՝ մեռցնելու և մեռնելու քո փառքի համար...— սիրտ առած բերան բացեց զինվորական նախարարը՝ սեր-ասքյարը:

Սուլթանի դեմքի վրա նորից ոչ մի մկան չչարժվեց:

— Ալլահի սիրելի, ճակատագրի ընտրյալ, հավիտյանս Ֆաթիհ Սուլթան,— կարճատև լուսությունը խզեց պալատական աստղագետ՝ Մյունեթիմ-բաշին,— երկնքի աստղերը քո ձեռնարկի համար շատ բարեբաստ ելք են գուշակում: Ժամանակն է անհաղթ սուրդ մերկացնելու:

Մեծ վեզիրը, սեր-ասքյարը, Մյունեթիմ-բաշին խոսք մեկ էին արած Սուլթանին համոզելու, որ գյավուրների դեմ պատերազմ հռչակե:

Սուլթանը մի կարճ հայացք նետեց վեզիրի վրա: Սա վայրկյանը հարմար համարեց նորից խոսելու:

— Ի՞նչ է մտածում մեր հոգու և մեր մարմնի Տերը, Կրակների, Շահին Շահերի, Սուլթանների Սուլթանը: Ի՞նչ է մտածում քո իմաստուն հանճարը պատերազմ հայտարարելու մասին, դո՛ւ, նոր ժամանակների մեծ Սողոմոն արքա...

— Ե՛ս... Ես ի՞նչ եմ մտածում— այդ միմիայն ես գիտեմ: Եթե սեփական մորուքիս մազն անգամ գիտե՞նա իմ մտքերը, արմատից կպոկեն այն...— տիրաբար ասաց Սուլթանը և լռեց:

Լռեց և վեզիրը՝ տեսնելով, որ այլևս անհնար է Սուլթանի դիտավորությունը իմանալ՝ թե արդյոք ուզո՞ւմ է պատերազմ, թե՛ ոչ: Նա գիտեր, որ Սուլթանի գաղտնապահությունը անսահման է, հիշելով, որ Սուլթանը մի անգամ ասաց, թե՛ հաջողության հոգին գաղտնիք պահելն է և մի վճիռ լավ խորհելուց հետո կայծակի պես արագ գործ դնելը:

Ասկայն սեր-ասքյարը փորձ արեց գրգռել նրա զայրույթը:

— Մեծ Ղազի փառիշահ, դու, որ մինչև այժմ տասը թագավորության ես տիրել և հարյուր յոթանասուն քաղաք գրավել՝ հիմա հանդգնում է վոյեվոդ Դրակուլը, այդ գյավուր վախճ, աններելի, անհանդուրժելի լրբություն գործել քո հավատարիմ ծառաների դեմ: Քո ուղարկած պատգամավոր-

ներին, որոնք մեր սրբազան օրենքի համաձայն չեն հանել նրա առաջ իրենց սարքները, պահանջել է գլուխները բանան, իսկ երբ մերոնք մերժել են, այդ ժամանակ այդ շունը ասել է.— Լավ, թո՛ղ այդպես լինի,— հրամայելով դահիճներին, որ բևեռեն սարքները մերոնց գլուխների վրա: Եվ դահիճները ահագին գամեր են խփել ծառաներիդ գանգերի մեջ և այդպիսով սոսկալի տանջանքների մեջ նահատակել մերոնց...

— Անհանդուրժելի՛ է այս, անհանդուրժելի՛,— միաբերան վրա բերին վեզիրն ու դեֆտերտարը:

Սուլթանը այս սարսափելի դեպքի վրա բարձր և ուրախ ծիծաղեց և նորից ծիծաղեց: Նրան շա՛տ զվարճալի և սրամիտ թվաց Դրակուլի այս եղեմական արարքը: Այա ծիծաղից հանգստանալով ասաց սեներկապետին, որ իր առջև բերեն մյուս սենյակում սպասող բանաստեղծներին և Ջեմտիլ Բելլինին, վեներտիկցի այս նշանավոր նկարչին, որ վաղուց հետե Պոլսումն էր ապրում Սուլթանի հրավերի համաձայն՝ նկարելու համար, թե՛ գեղարվեստասեր փառիշահին և թե՛ այլ պատկերներ:

Ներս մտան և խոնարհ գլուխ տալով՝ ծնկի եկան բանաստեղծ-փիլիսոփա Սինանը, որ Սուլթանի գրադարանատեսն էր, բանաստեղծ Համդին և բանաստեղծ Շեհդին, որը չորս հազար ոտանավոր տունի մեջ երգել էր Ֆաթիհի հաղթանակները և փառահեղ գործերը: Նրանց հետ էր և նկարիչ Բելլինին:

Սուլթանը սիրալիք ողջունեց նրանց: Նա իր արքայական հովանավորությունը տարածում էր բանաստեղծների և փիլիսոփաների վրա և սիրում էր նրանց հետ խոսել բարձրագույն նյութերի մասին: Ինքը ևս գրում էր պարսկերեն լեզվով գազելներ՝ Ավոհ կեղծ անունով:

Սուլթանը զահի բարձի տակից հանեց մի գիրք, որ զարդարված էր պարսկական մանրանկարներով:

— Համդի,— ասաց նա,— կարդացի իմ սիրելի Ջամիի «Յուսուֆ և Ջուլեյկան»: Ծատ գեղեցիկ գործ է: Ուզում եմ, որ այն ևս թարգմանես մեր ժողովրդի համար, և այնպես կատարյալ, ինչպես թարգմանեցիր Նիզամիի «Լեյլի-Մեջնունը»:

Համդին անսահման ուրախությամբ ճակատը հպեց գոր-
գին՝ իր հոժարությունը հայտնելով:

— Դո՛ւ, դեֆտերտար, ուղարկեցի՞ր Քերաթ սիրելի Ջա-
միլին իմ տարեկան Եվեր ոսկին:

Դեֆտերտարը մինչև գետին գլուխ տվեց:

— Սիճան,— դիմեց Սուլթանը Երան,— սիրո՛ւմ ես Ջա-
միլին:

— Աստվածընտիր փառիշահ, քո սիրած բանաստեղծին
ինչպե՛ս կարելի է, որ ես չսիրեմ: Նա պարսիկների լոթը
մեծերից մեկն է:

— Այո. բայց ես ամենից շա՛տ հիացած եմ Ջելալեդդին
Ռումիով: Նրա իմաստությունը անհուն է: Ուռումների Ապլա-
տուն փիլիսոփան Երա չափ խորագետ չէ:

— Իրավ եք, մեծ փառիշահ, իսկական աստվածայինը Ջե-
լալեդդին Ռումին է, քան թե Ապլատունը: Չէ՞ որ Ռումիի
իմաստության համաձայն՝ մարդկային գոյության, Երա հոգու
նպատակն է, որ վերջը լուծվի իր նախադյուրի մեջ,—աստծու
մեջ ու այն ծովի մեջ, որից երբեմն դուրս է հոսել: Նա հետև-
ողական աստիճաններով պիտի դառնա հող, բույս, անասուն,
մարդ, ապա հրեշտակ և վերջը աստծուն հասնի:

— Դո՛ւ, Շեհդի,—Սուլթանը դարձավ Շեհդիին,— երեկ
ստացա Ջելներ խանումի դիվանը, որ ինձ է նվիրել: Սիրուն
գազելներ կան, բայց ես ավելի սիրում եմ Միհրի խանումի
գազելները: Ինչպիսի՞ քաղցրությամբ գովում է նա իր սիրա-
ծին, Երա գեղեցկությունը աստվածության է հասցնում: Դեֆ-
տերտար, վաղը իմ անունից նվերներ ուղարկիր շեյիր խա-
նումների, Դերլիի, Բադդադի դիպակներ, մյունլեներ ու սա-
վայիներ, ինչ որ հաճելի է կանանց:

— Շա՛տ ճշմարիտ է նկատել աշխարհի աչքը՝ արև-Սուլ-
թանը,—ասաց Շեհդին,— երբ կարդում ես Միհրի խանումի
գազելները, թվում է թե Նեզհմի դերվիշն է երգողը, որ
պաշտում էր գեղեցիկը. և իր սիրածի մեջ աստվածությունն էր
անձնավորված տեսնում:

— Մի՞թե... Վաղը թող Սիճանը ինձ բերի Նեզհմի դի-
վանը. իսկ այսօր քեզ կտամ մի քանի գազելներ, որ նոր եմ
գրել: Մյուս օրը կխոսենք դրանց մասին:

Ապա հայացքը ուղղելով վեճետիկցի նկարչին, ասաց.

— Ի՞նչ նոր բան ունես նկարած, իմ սիրելիս...

Հռչակավոր վարպետը ցույց տվեց մի պաստառ, որի վրա
նկարած ուներ Հովհաննես Մկրտչի կտրած գլուխը: Սուլ-
թանը հիացած՝ գովեց նկարի գույների ներդաշնակությունը,
ապա հարևանցի ասաց.

— Սակայն պարանոցի այս կտոր միայն, որ դեռ նկատվում
է կտրած գլխի վրա, իրականին չի համապատասխանում:

Նկարիչը զարմացած նայում էր Սուլթանին:

— Այո՛,— շարունակեց Սուլթանը,— երբ մեկը գլխատվում
է, պարանոցը իսկույն ոչնչանում է, որովհետև Երա մկանները
մորթու, ջղերի և երակների հետ անմիջապես քաշվում,
կծկվում են գլխի և իրանի մեջ:

Եվ նկատելով նկարչի կասկածանքը՝ հրամայեց պալա-
տական զինավառ դոճապան-պահակին, որ մի ստրուկ բերե:
Ստրուկին դահլիճ բերին: Սուլթանի ակնարկի վրա՝ պահակը
սրի մի հարվածով թոցրեց ստրուկի գլուխը՝ ներկաների սար-
սափած աչքերի առաջ: Հետո Սուլթանը հրավիրեց նկարչի
ուշադրությունը կտրած գլխի վրա.

— Ճշմարիտ չէ՞ ասածս, սիրելի Բելլինի:

— Այո՛, իսկ և իսկ, իմաստուն արքա,— կարկամած ասաց
նկարիչը:

Մինչ այդ՝ Սերայի միճարեից հնչեց մյուեզինի երեկոյան
աղոթքը: Սուլթանը վեր կացավ, քայլերն ուղղեց դեպի Սերա-
յի մյուս հարկաբաժինները ապղետի և նամազի համար:

Սուլթանի աչքին՝ սողալով երևաց Ղզարաղասին, մեծ ներ-
քինապետը: Սուլթանը խորհրդավոր ձայնով շշմեաց Երան, և
ներքինապետը աչքերին քսեց Սուլթանի ջուլպայի քղանցքը
գոհունակ ժպիտով և ետ-ետ քաշվեց:

Բոլոր ներկաները ստվերների պես իրար հետևից երերուն
քայլերով՝ դուրս ելան իմաստության և ոճրի դահլիճից...

1921, Կեճետիկ

ԱՆՊԱՐՏԵԼԻ ՈԳԻՆ
(Ականատեսի պատմած)

Եփրատից այնքան հեռու, որ հազիվ լսվում էր նույնիսկ լուռ գիշերին նրա խոր շառաչը՝ անապատում կային իրար մոտ մի քանի խղճուկ տաղավարներ:

Հայրենի հավերժ ողբալի սպանդից գերծած՝ մի քանի տասնյակ հայեր էին ծվարել նրանց ներքև—ծերեր, կանայք և մանուկներ:

Յնցոտիներով էր ծածկված նրանց ոսկրացած մերկությունը, և նրանց հայացքների մեջ մշտական սարսափն էր սառած, ինչպես կախաղանի տակից հրաշքով ազատված մահապարտների աչքերն են լինում:

Ժպիտ և ուրախություն սպանված էին նրանց աչքերի մեջ. միայն անմեռանելի հույսի մի կայծ կար, որ տակավին կյանքի մշույլ էր. տալիս նրանց բիբերին:

Ցերեկները վայրի բեդվիներն էին գալիս գաղտագողի՝ հաձում և հոտվտում տաղավարների շուրջը, առևանգելու համար վայրագ թուրքերի աչքից ճողոպրած գեղեցիկ աղջիկները, իսկ գիշերները անապատի մեռելային լուռության մեջ բորենիներն էին ոռնում արյան և դիակի անհագ ծարավից:

Եվ մարդ ու գազան միասին նորանոր սոսկումներով հոշոտում էին ցավագին բեկորները մի գոհված ժողովրդի:

Գիշերները՝ մետաքսյա սև վիրակապերի պես փառաքշող ու քնքուշ՝ թեև անդորրում էին այդ թշվառների հուր ու զարհուրանք տեսած աչքերը, սակայն հաճախ բրբրում էին նրանց հոգիները կարմիր, անավոր տեսիլներով...

Երկնքից հրաշեկ արևը կրակ էր մաղում, և առավոտը կիզող էր, ինչպես միջօրեին:

Հեռու՝ դեղնավուն, ծավալուն հողերի վրա հորիզոններն էին իջնում պղնձե պատերի պես:

Ծերերն ու պառավները՝ հիվանդ ու դալուկ՝ կուչ էին գալիս տաղավարների մի անկյունում, գոց աչքերով՝ իրենց երդիկների անդորր ծուխն ու պարտեզների ծաղկած ծառերը վերապրելով: Եվ քանդվում էր ու հատնում նրանց չարչարված հոգին...

Առավոտ էր: Վաղահաս պառաված կանայք ստվերի մեջ մտած՝ չորացած մատներով կար էին անում շրջակա արարներից հազար խնդրանքով ձեռք բերած աշխատանքներ, որոնցով իրենց հարազատների չոր հացն էին վաստակում:

Անխո՛նջ, անդո՛ւլ կարում էին նրանք, իրենց ճմլված սրտերի մեջ սև արցունք թափելով:

Տաղավարների առջև, մանուկները՝ պստիկ աղջիկներ ու մանչեր, մանկության երազով տարված՝ մոռացալով իրենց խղճալի օրը, խաղ էին անում, նույնիսկ երբեմն ուրախ ճիչ արձակելով:

— Տղա՛ք, դասի՛ եկեք,— հնչեց տաղավարներից մայրերի ձայնը:

Եվ երեխաները ցրվեցին տաղավարները: Երկու երեխա՝ եղբայրներ՝ ձեռք-ձեռքի բռնած, մտան տաղավարներից մեկի մեջ: Մեծը տասներկու տարեկան կլիներ, փոքրը՝ յոթ-ութ: Երկուսով էլ վազ տվին, ընկան մայրական գիրկը:

Չարաբախտ կինը նահատակության ճանապարհի վրա կորցրել էր իր ամուսինը և երկու զավակ. ամուսնուն և պատանի որդուն շատերի հետ միասին, անդարձ տարել էին թուրք ոստիկանները, իսկ ծաղկափթիթ աղջկան հափշտակել էին քուրդերը:

Մայրը գորովագին համբուրելով երեխաներին, ասաց կրտսերին.

— Աղվո՛ր գառնուկս, հիմա ես կգրեմ, դուն պիտի կարդաս. տեսնեմ՝ գիրերը լավ մը կճանչընա՞ս. վերջն ալ ասոր ճման պիտի գրես. եթե լավ կարդաս, քեզի արմավ կուտամ: Եվ մայրը ցուցամատով գրեց ավագի վրա.

«Աստված պահե հայրիկս, քույրիկս, աղբերիկս»:

Երեխան հեգեղով կարդաց գրածը:

— Ապրի՛ս, աչքիս լուսիկը:— Մայրը նորից համբուրելով փոքրիկին, մի քանի չորացած արմավ տվավ:

— Հիմակ ալ դուն նստե գրե:

Երեխան արմավը ուտելով, սկսեց փոքրիկ մատով գծեր քաշել ավազի մեջ:

Մայրը դիմելով մեծ որդուն, ասաց.

— Իմ սիրունիկ Վազգենս, տեսնիմ ինչ գրեր ես:

Մանուկը մի քանի բան էր գրել ավազի վրա. մայրը աչքերը լարելով, կարդաց.

«Այլազգը տարավ հայրիկս, քույրիկս, աղբարիկս, կըսեն, որ սպանած են. ես չեմ հավատար. երբ տուն դառնամք, անոնք հոն ողջ-առողջ պիտի գտնենք»:

— Հարկա՛վ, սիրելիս, հարկա՛վ...

Եվ արցունքը զսպելով համբուրեց երեխային և չկարողանալով դասը շարունակել, երկուսին արմավի հետ մի կտոր սև հաց տալով, ասաց.

— Հիմա գացեք, դուրսը խաղեք. իրիկունը, Վազգենիկս, քեզի Ավետարանեն դաս պիտի տամ. անանկ լավ պիտի սովորիս, որ ընկերներդ զարմանան, ու երբ տուն երթանք, հայրիկդ պիտի տեսնե, որ պարսպ չես անցուցած հոս ատենդ. շա՛տ պիտի ուրախանա:

Երեխաները զվարթ դուրս թռան:

Մայրը նրանց հետևից փղձկաց դառնազից. ապա արցունքները սրբելով, լացակունած մրմջաց.

«Այո՛, երբ մեր ազատված հայրենիքը դառնամք, անոնք բոլոր ուրիշներու հետ, ամենքն ալ հարություն առած հոն պիտի գտնենք, անշո՛ւշտ»:

Ականատեսը ավելացրեց.

— Խեղճ հայ մայրերից մի քանին հետները միմիայն Ավետարան ունեին. թղթի ո՛չ մի կտոր: Անապատի ավազները հաճախ դարձան հայ մարտիրոսված մանուկների համար գիրք ու տետրակ, և ավելի հաճախ՝ պատանք ու գերեզման, անխաչ: և հավիտյան կորած ու անհայտ...

1922

Մանկական խաղերի շրջանից մի ընկեր ունեի—Մտերի՛մ, մտերի՛մ ընկեր: Մեր սերը տարեցտարի անելով պատանեկան զեղուն հասակում այնպիսի լրման հասավ, որ նմանը չկար մեր մյուս խաղի կամ դասընկերների միջև:

Անմեկին էինք, խոսքիս բուն իմաստով: Առավոտից մինչև ուշ երեկո միասին էինք: Երբեմն նա էր մեր տանը գիշերում, երբեմն ես՝ նրանց տանը: Միասին կարդում էինք, միասին զբոսնում, և անհավատալի պիտի չլինի, եթե ասեմ, որ գրեթե միասին էինք խորհում ու զգում, միևնույն ձևով, միևնույն բանը:

Եվ համոզված էինք, թե աշխարհի մեջ ո՛չ մի ուժ չկա՝ ներսից կամ դրսից, հոգեկան կամ Շյուբալկան, որ կարող լիներ երբևէ սառեցներ մեր սերո: Եվ ինչո՞ւ պիտի համոզված չլինեինք, քանի որ տարիների ընթացքին բնավ մի վայրկյան իսկ չեղավ, որ մեր հոգիները իրարուց դժգոհ լինեին. երբեք չեղավ, որ մի չնչին խոսքով կամ մի աննշան արարքով իրար վիրավորած լինեինք:

Այսպիսով մի լրիվ անսպառ հոգեկցություն:

Ես ու Երվանդը նոր էինք ավարտել դպրոցական շրջանը և, որոշել էինք Մոսկվայի համալսարանը գնալ ուսանելու:

Հունիսի մեջն էր, ամառային արձակուրդը նոր սկսած: Եվ երկուսս էլ, մի օր, ուսանողական համազգեստն առաջին անգամ հագած, փողոց դուրս եկանք՝ թև-թևի տված, երջանիկ, ամենատեղանիկ: Գնացինք քաղաքի պարտեզը, որ մեր բոլոր դասընկերների ժամադրավայրն էր: Այնտեղ իրար

«գլխի հավաքված խոսում էինք ու վրձում մինչև ճաշ, ապա դառնում էինք տուն:

Ամեն օրվա պես այսօր էլ պարտեզ գնացինք. արդեն միացել էինք մեր ընկերներին, նրանց վեճերին ու կատակներին, երբ մոտեցավ մեր դասընկերներից մեկը մի շա՛տ գեղեցիկ օրհորդի հետ, որ իր մորաքրոջ աղջիկն էր՝ ուրիշ քաղաքից հյուր եկած մեր քաղաքը:

Բոլորս ծանոթացանք օրհորդի հետ: Առաջին տպավորությունը, որ կրեց հոգիս՝ ազդու էր և տիպական: Չափազանց բաժ գուցե թվի, եթե ասեմ, որ այդպիսի մի գեղեցկուհի ո՛չ տեսել էի, ո՛չ երագել:

Նա նայեց բոլորիս, նայեց և ինձ մի խորունկ հայացքով՝ հեզ ու անուշ, մի ստորերկրյա, ներաշխարհային հայացքով: Այդ դեռատի աղջիկը, որ կանգնած էր մեր մեջ իր նուրբ ու նետավող հասակի բոլոր շնորհներով, իր պատանեկան անմեղությամբ՝ չուներ ու չգիտեր կանացիական իմաստությունից դեռ ոչինչ, ո՛չ մի բան, այնքան մանկունակ էր ու վճիտ:

Մի փոքր անց՝ հասարակական մի խնդրի շուրջ վեճ բարձրացավ, ուր ամենքս, խթանված օրհորդի ներկայությամբ, մրցում էինք իրար հետ մեր պերճախոսությամբ և ունեցած տեղեկություններին ցուցադրությամբ:

Ա՛խ, պատանեկան անուշ տարիներ և ոսկեղեն սնափառություն, ինչքան սիրելի ես...

Երբ ճաշի ժամ եղավ, և խումբը ցրվեց, ես գնացի ընկերիս տունը ճաշի: Ճանապարհին Երվանդը նայեց աչքերիս մեջ և ժպտալով, ասաց.

— Ի՛նչ սիրելի աղջիկ էր, չէ՛:

— Ծա՛տ սիրելի և շա՛տ սիրուն, — ասացի ես:

Տուն չմտած՝ ընկերս նորից ասաց.

— Երեկոյան, երևի, կրկին պարտեզ կգա նա, բախտ կու՛նենանք նորից տեսնելու:

— Երանի՛ նա մնար մինչև մեր մեկնիլը. բայց տեսա՛ր, ի՛նչ աչքեր ուներ — անո՛ւշ ու տանջո՛ղ:

— Այո՛, անո՛ւշ ու տանջո՛ղ, — հաստատեց ընկերս:

Ճաշից հետո ընկերիս սենյակում պառկել էինք կողք-կողքի, թախտի վրա ծխում էինք ու խոսում՝ նույն ոգևորությունը, ամեն օր հյուսելով մեր երագները և ամեն օր նորից: Նոր գծելով մեր ապագա հասարակական գործի ուղին, առանց ձանձրանալու: Ապա փոխեփոխ կարդում էինք նոր լույս տեսած մի վեպ, և ընթերցումը ընդհատելով, վիճում էինք կարդացածի մասին:

Երբ հովն ընկավ, շտապեցինք դեպի պարտեզ:

— Եթե այն անաստված աղջիկն այնտեղ չլինի, բաններս բուրդ է, — ասաց Երվանդը. — դու ի՛նչ ես մտածում:

— Ի՛նչ պիտի մտածեմ, — պատասխանեցի ես տխրությամբ:

— Լա՛վ, քիթդ մի՛ կախիր, կերթանք ուղղակի Ալեքսանդրի տունը և նրանց գրոսնելու կհրավիրենք: Ի՛նչ ամոթ բան կա որ:

Եվ բնագործ մեր քայլերն ուղղվեցին Ալեքսանդրի տան կողմով: Մեր բախտից Ալեքսանդրին և օրհորդին՝ Անահիտին, հանդիպեցինք փողոցում: Նրանք ևս պարտեզ էին գնում: Բարևեցինք և հետները շարունակեցինք ձանապարհը. Երվանդը անցավ օրհորդի աջ կողմը, ես Ալեքսանդրի ձախ կողմը մնացի: Երվանդը օրհորդին ավելի մոտիկ լինելով, սկսել էր նրա հետ մի հարց ու պատասխան մեր քաղաքի մասին: Ես ականջըս լարած լսում էի նրանց:

— Ե՛րբ պիտի գնաք Մոսկվա, — հարցրեց Ալեքսանդրն ինձ:

— Օգոստոսի միջին, — ասացի ես մեքենաբար, — իսկ դո՛ւ:

— Ես Մոսկվա չեմ գնալու, ես ուզում եմ Օդեսա գնալ. կլիման լավ է, և բացի այդ, գիտես, որ քեռիս էլ այնտեղ է ապրում, հարմար է:

Ես լսում էի նրան և չէի լսում:

— Այո՛, անշուշտ, բայց հայրիկս չի համաձայնի, որ ես ուսանելու գնամ. հին մարդ է, կանանց բարձրագույն կրթության դեմ է. — օրհորդ Անահիտն էր, որ պատասխանում էր Երվանդին:

— Ներողություն, օրհորդ, — միջամտեցի ես, — պետք է կռվել հայրերի դեմ: Հայրերը միշտ հակառակն են որդիներ-

րին: Հիշեցե՛ք «Հայրերը և որդիները» (Տուրգենևի վեպի անունը):

— Դեռ նահապետական շրջանի մեջ ենք: Դուք, հայ տղամարդիկդ, շատ կասկածոտ եք կանանց հանդեպ, լինի բույր, լինի աղջիկ, միևնույն է,— հանդիմանական հայացք նետելով բոլորիս վրա, ասաց օրիորդ Անահիտը:

Մենք պարտեզ մտանք, և այնպես եղավ, որ այս անգամ ես էի քայլում նրա հետ, այն էլ մե՛նակ: Երվանդն ու Ալեքսանդրը ետ էին մնացել:

Վարդենու մի թուփի առջև կանգ առավ Անահիտը և հիացքով նայում էր վարդերին: Ես, մոտը կանգնած, դիտում էի նրան, անվստահությամբ նայելով նրա աչքերին, որոնք անծայրանում էին մի արտասովորոր ուրախությամբ... Եվ հայացքըս հաղթված ու պարտված՝ սահելով նրա ուսերով ու կողերով՝ իջավ, իջավ մինչև ոտները, և ոտների ներքև աչքերս գոցվեցին: Գոցված աչքերով հոգուս մեջ նորից տեսա նրան իր բոլոր շքեղությամբ, թարմ ու գարնանաբույր, իր քնարական ձևերի անուշությամբ, մազերի չքնաղ պսակով, իր քրճաքուշ, փխրուն կազմվածքով:

Եվ զգացի մի հորձանք՝ բռնկված բոլոր արյունիս մեջ՝ բարձրացավ մինչև հոգուս մակերեսը: Ինձ թվում էր, որ ես վառվում եմ բոցի պես, և մարդիկ տեսնում են իմ այրվիւ: Ու՛ժ արեցի, աչքերս բացի և նայեցի Անահիտին: Անդորր էր նա և անդորր նայում էր ինձ՝ ոչինչ չկտահած: Ուզեցի մի խոսք ասել, բայց դեռ չէի գտնում. մի վայրկյան անց, կարողացա նրան ասել.

— Ի՞նչ եք կարդում հիմա, օրիորդ:

— Հետս մի-երկու գիրք եմ բերել, բայց ժամանակ չունիմ կարդալու: Միշտ հյուրեր կան մորքուրանցս տանը, և մենք էլ միշտ հյուր ենք գնում:

Խոսքիս պաշարը վերջացավ: Մենք հասել էինք պարտեզի կենտրոնական ծառուղին, ուր խմբված էին մեր ընկեր-ընկերուհիները. Երվանդն ու Ալեքսանդրն էլ արևոտ էին:

Տեղ բացին Անահիտի համար: Ես նստեցի հեռու, ստվերի մեջ, անուշադիր ընկերներիս զրույցին: Անգիտակից խաղում

էի ձեռնափայտովս ավազների հետ: Մտքերս շփոթ էին ու ցրված: Մի երագուն թախիժ պարուրել էր ինձ: Ուզում էի հեռանալ, ավելի հեռանալ և լինել մե՛նակ, մե՛նակ: Պահեր էին լինում, որ ոչինչ չէի լսում. սակայն Անահիտի ձայնը, որ երբեմն հնչում էր, ինձ ուշքի էր բերում՝ դարձնելով իրականին ու ներկային:

Ավելի քան մի ժամ անցել էր, երևի, այս վիճակում, երբ Անահիտն ու Ալեքսանդրը մնաս բարև ասացին ու գնացին:

Մի ընկեր տղա, որ միշտ կատակաբան էր և արտահայտությունների մեջ անզուսպ՝ օրիորդի հետևից հառաչելով, ասաց.

«Հազար թուման պարտքս լինի,

Մարդամիջի յարս լինի»:

Զվարթ ծիծաղ բարձրացավ նրա այս խոսքերի վրա: Մի երկուսը բամփեցին նրա գլխին, իսկ ես ուզում էի խեղդել նրան: Ինչո՞ւ, ինչո՞ւ այս վայրագությունը: Չկարողացա այդ ժամին ինձ պարզել: Հետո միայն հասկացա:

Ես սիրում էի օրիորդ Անահիտին:

Ուշ գիշեր տուն էինք դառնում. լուռ էինք երկուսս էլ:

— Աղջիկը տխրեցնում է ինձ,— ասացի ես:

— Այո՛, չասես էլ՝ երևում է դեմքիցդ... Ինձ էլ է տխրեցնում,— պատասխանեց Երվանդը:

Մտտեցանք Ալեքսանդրի տանը: Մեր քայլերը գրեթե կանգ առան նրանց պատուհանների առջև: Անշուշտ մեկնումեկը Անահիտի ննջասենյակը կլիներ:

— Մարդու սիրտը չի ուզում այստեղից գնալ:

— Իմ սիրտն էլ չի ուզում,— կրկնեցի ես:

— Արդեն մենք միշտ միևնույնն ենք զգում, Լևո՛ն ջան:

— Արի, մինչև առավոտ լուսացնենք այստեղ,— անկեղծ փափագով ասացի ես:

— Է՛հ, ավելի գեշ,— և ուժով քարշ տվեց ինձ, տարավ:

Մեր դռան առջև բաժանվելիս, ես չկարողանալով ինձ սանձել, ասացի.

— Երվանդ, կարծես, սիրում եմ այս աղջկան...

— Ի՞նչ մի արտասովոր բան կլիներ որ: Տեսնում եմ՝ մեր բոլոր տղաներն էլ անտարբեր չեն դեպի նա: Բայց խեղճ աղջիկը քանի՞ կտոր լինի,— ապա դառնությամբ ավելացրեց,— ե՞րբ պիտի նա կորչի երթա մեր քաղաքից, որ մենք էլ հանգիստ երթանք մեր գործին:

Ես արձագանք չտվի:

Ամեն օր Երվանդի հետ անցնում էինք Ալեքսանդրենց տան առջևով, ամեն օր մի կամ երկու անգամ հանդիպում էինք օրիորդ Անահիտին, և այսպիսով ավելի մոտենում, մտերմանում էինք նրան:

Ես սիրում էի նրան. դա արդեն պարզ էր ինձ համար: Եվ տեսնում էի, որ Երվանդն էլ է սիրում... Սակայն ի՞նչ չափով, ի՞նչ խորությամբ,— ինչպե՞ս գիտեցայի: Արտաքին կողմով՝ նա զուսպ էր: Եվ, թեև մենք իրարից մինչև օրս գաղտնիք չունեինք, բայց վերջերս զգալի կերպով նա լուսկյաց էր դարձել, խուսափում էր խոսել իր զգացումների մասին, որ բռնկվել էին նրա հոգում: Բայց, որովհետև բարոյապես ճնշվում էր ինձ հաշիվ չտալու համար,— մի բան, որ մենք տարիների մեջ ունեինք իրար հանդեպ՝ խոստովանել, դրսևորել մեր հոգին իրար առաջ, ուստի երբեմն լուրջ ու կատակով ասում էր ինձ.

— Չոր մարխի պես վառվեցինք այս աղջկա առաջ, Լևո՛ն: Արի միասին սիրենք Անահիտին, մի սրտով, մի հոգով. ի՞նչ կասես:

Մի անգամ էլ, երբ այս խոսքերով դիմեց ինձ, ես պատասխանեցի.

— Համաձայն եմ, եթե ո՛չ, վախենում եմ՝ կովենք:

— Կոի՛վ... ի՞նչ ես ասում, մտքովս իսկ չի անցնում. կարելի՞ բան է. ինչպե՞ս պիտի կովենք. Լևոնն ու Երվանդը կոված են իրար հետ. լսողը պիտի չհավատա:

— Ես էլ չեմ հավատում,— ավելացրի ես:

— Եվ վերջապես, ինչո՞ւ կովել: Ասենք թե Անահիտը քեզ է սիրում, ես պիտի ուրախ լինիմ. քանի որ քեզ է սիրում, իմ ընկերիս: Եվ հակառակը. ինձ սիրած՝ քեզ սիրած, քեզ սիրած՝ ինձ սիրած. միևնույնը չէ՞. մի՞թե դու այդպես չես զգում:

Լռիկ համաձայնություն տվի:

Այս օրերում քաղաքի ամառային կլուքի մեջ, որ պարտեզումն էր գտնվում, երեկույթ-պարահանդես կար: Երվանդի հետ մտանք նոյն լուսավորված պարասրահը, և միաժամանակ հայացքներս պտտեցրիք Անահիտին գտնելու համար: Եստե՛ս էր նա մի խումբ օրիորդների հետ, հավերժահարսի պես, կրծքին մի ահագին վարդ կանաչ տերևով, և նույնպես մազերի մեջ: Մեր հայացքը զամված մնաց նրա վրա: Մեկ էլ հանկարծ նա դեմքն ուղղեց մեր կողմը և նկատեց մեզ: Պայծա՛ռ, անո՛ւշ ժպիտը փայլեց նրա աչքերի մեջ. շա՛տ սրտագին ողջունեց մեզ, և երկար ժամանակ նայում էր մեզ ու ծղպտում: Ուղղակի երանության վայրերում հրճվում էր հոգիս. ա՛խ, այդ ի՞նչ ժպիտ էր՝ արևարքայություն: Իմ ողջ էությունս, հայացքիս հետ, ուղիղ նրա մոտ էր, այնպե՛ս մոտիկ, որ զգում էի նրա կրծքի թարմ վարդի բույրը և տեսնում էի այն փոքրիկ նուրբ փոսիկը, որ ժպտից գոյացել էր նրա լուսեղեն այտերի վրա:

Նշանը տրվեց. հնչեց երաժշտությունը, բարձր ու ներդաշնակ՝ նվագելով մի վալս: Մի հին ուսանող, որ հայտնի պարող էր, նետվեց իբրև պարի կառավարիչ: Եվ ապա ամեն դոներից ու անկյուններից դահլիճի սրահը վազեցին տիկիներ, օրիորդներ ու երիտասարդներ:

Անահիտը պարում էր Ալեքսանդրի հետ: Ես չմասնակցեցի պարին: Մինչդեռ Երվանդը պարում էր մի օրիորդի հետ: Հայացքս անմեկին թափառում էր Անահիտի հետ և պարի կշռավոր իրարանցումի մեջ իսկ մի վայրկյան չհեռացավ ու չկորցրեց նրան: Բոլոր պարողների միջից աչքի էր ընկնում նրա նետվող հասակը և Ալեքսանդրի ուսի վրա ծալվող հովանի թևի հիասքանչ ձևը:

Սիրտս թրթռում էր, նվազը գրգռել էր ջղերս, ուզում էի փոթորկի պես նետվել պարի մեջ, խլել Ալեքսանդրի ձեռքից Անահիտին և պարել նրա հետ, պարել, մինչև աշխարհի վերջը պարել:

Վերջացավ այս պարը. և մի քիչ դադարից հետո նորից հնչեց նվազը, մի ուրիշ վալս: Երվանդը մոտս էր կանգնած և սրբում էր ճակատի քրտիները: Անահիտը ժպտալով նայեց մեզ, առաջ՝ Երվանդին, ապա՝ ինձ, հետո՝ նորից Երվանդին, և գլխով թեթև նշան արեց նրան: Երվանդը թոավ դեպի նա, և սուզվեցին հորձանքի մեջ: Կարծես մեկը լախտով զարկեց ծնկներին: Ես երեքսի և հենվեցի սյունին: Մի ճնշիչ, մռայլ զգացում սեղմեց սիրտս անգո՛ւթ, անգո՛ւթ: Մի պահ զգացի ինձ մենակ, լքված, երեսի վրա ընկած հեռավոր մի անպատում: Ճիգ արի՝ հավաքելով ուժերս, և գտա նրանց:

Իրար գրկած ժպտում էին նրանք՝ իրար աչքերի մեջ նայելով: Չարության և ատելության մի այնպիսի հզոր կիրք զգացի Երվանդի հանդեպ, միայն Երվանդի: Եվ, ներքին ամոթից սիրտս կարմրած, չկարողացա այլևս նրանց նայել: Արագ քայլերով մտա բուֆետը և, առանց ինձ հաշիվ տալու, իրար վրա մի-երկու օղի խմեցի. ու քաշված մի անկյուն՝ ծխում էի ու ծխում, ջանալով ո՛չ լսել նվազը, ո՛չ դիտել պարը և ո՛չ էլ վճռականություն ունենալով հեռանալ կյուրից:

Պարը վերջացավ: Եվ մեկ էլ տեսա՝ Երվանդը Անահիտի հետ միասին անցան բուֆետի առջևի միջանցքով ու մտան պարտեզ, ինչպես և ուրիշ զույգեր՝ զովանալու համար:

Բայց մտածել, սառը դատել անկարող էի այդ պահին. բարկություն, նախանձ, կատաղություն—այդ ուժերն էին սիրտը տակնուվրա անում: Կյանքիս մեջ առաջին անգամն էի զգում այս անսանձ, վայրագ զգացումները: Մարդ, անշուշտ, այսպիսի վայրկյանի մեջ է ոճիր գործում...

Ուզում էի դուրս թռչել, ընկնել նրանց մեջ, բաժանել իրարուց, շարտել Երվանդին հեռո՛ւ, կյանքից դուրս, աշխարհից դուրս, և Անահիտին առնել, տանել, տանել բոլորի աչքերից հեռու, որ միայն իմ աչքերս տեսնեին նրան, միայն իմ աչքերս լցվեին նրանով...

Թե ինչպես զսպեցի ինձ, չգիտեմ: Եվ ավելի զարմանալի

էր, որ նույնիսկ նստած տեղիցս չէի շարժվել: Տեսնողը երևի ինձ մի սև օձի տեղ պիտի դներ՝ կուշ եկած իր վրա, թույնը ատամի ծայրն հանած:

Ի՞նչ ծալքեր ունի մարդկային հոգին: Խեղճ է մարդը, թշվառ, բայց նորից ատում եմ մարդու հոգին: Եվ այդ վայրկյանին ես ինձ ավելի էի ատում, քան Երվանդին: Այլևս դադարել էի ինձ ճանաչելուց. ես՝ ես չէի, և հոգիս՝ խլակահան սև անդունդ...

Հակառակ այս ինքնակեղեքման՝ ես նորից հայացքս չէի հեռացնում դոնից.— ե՞րբ պիտի ետ դառնան նրանք պարտեզից, Անահիտն ու Երվանդը. ի՞նչ շատ մնացին: Ինձ թվում էր, թե նրանք, միշտ, աշխարհի սկզբից միասին պարտեզումն էին, իրար կողք-կողքի, թև-թևի, իրար շունչի մեջ, և պիտի մնային այսպես երջանիկ, մինչև աստղերի և արևների վերջը:

Ապա զգացի իմ այստեղ լինելը, նույնիսկ իմ գոյությունն ավելորդ, բոլորովին ավելորդ: Ինչո՞ւ մնալ, ո՞ւմ համար մնալ:

Եվ, գլխարկս առնելով, դուրս ետևովեցի կյուրից: Ելա պարտեզից շտապ, արագ քայլերով. անցա փողոցե-փողոց. նորոգվող պարի նվազը հալածում էր. ուզում էի փախչել հեռո՛ւ, ավելի հեռո՛ւ:

Երկար, աննպատակ թափառելուց հետո, ջարդված հաստուն, և հագուստներս չհանած՝ ընկա անկողնուս վրա: Սկզբեց մի հորդառատ արցունք, որ թափվում էր ուղղակի սրտիցս... Լացը հանգստացրեց ինձ, և նույնիսկ քնեցի:

Երբ զարթնեցի, տեսա, որ սովորական օրերից ավելի երկար էի քնել:

Նախաճաշից հետո ես քաշվել էի սենյակս: Մի գիրք ձեռքըս առած նստել էի պատուհանի առջև, բայց չէի կարող կենտրոնանալ ընթերցումիս վրա: Միևնույն էջը մի քանի անգամ էի կարդում՝ նորից առանց ոչինչ հասկանալու: Եվ հաճախ, ինչպես մի գողի, բռնում էի ինձ միշտ միևնույն երգանքի մեջ սուզված՝ անգիտակից և հակառակ իմ կամքիս...

Իմ սերը մերժել է Անահիտը: Ես հեռացել եմ հայրենիքի երկրից վիրավոր սրտով, բայց լցված ու բռնկված այդ սիրով: Անցել եմ տարիներ, լույս եմ ընծայել բանաստեղծությունների մի գիրք, որ հրաշքի ու կախարդանքի մի շրջան է բացել գրականության մեջ: Գիրքս թարգմանվել է հայտնի լեզուներով, և ամենուրեք հիացած են իմ հանճարով: Վերադառնում եմ հայրենիք, իմ պատվի համար կազմված մի երեկոյթում, ուր ընդունում են ինձ ծաղիկներով ու կեցցեներով, տեսնում եմ բազմության միջից Անահիտին, նայում եմ աչքերին, ուր զղջման արցունք կա և անսահման սեր: Ժպտում եմ նրան, բարևում եմ... Ապա նստում եմ նրա մոտ, մոտիկ, հոգիս հոգու մեջ: Եվ խոսում եմք անվերջ, անվերջ, անվերջ...

Եվ նորից սկսում է նույն երազանքն՝ ավելի մանրամասնելով ամենաչնչին իրերը և ավելի բանաստեղծական գույն ու բույր ստանալով:

Մերս մտավ Երվանդը, ավելի ուրախ, քան երբևէ, և առանց բարևելու, հարձակվեց վրաս:

— Տո՛, անպիտան, ո՛ւր մնացիր. այնքա՛ն որոնեցի քեզ ո՛ւր էիր կորել: Խեղճ Անահիտը այնպես տխրեց, շա՛տ էր ուզում քեզ հետ պարել և սաստիկ վիրավորվել էր, որ առանց մնաս բարևի գնացել ես:

— Ի՞նչ անեի. գլուխս սարսափելի ցավեց հանկարծ, երևի դահլիճի օդից էր, — ստեցի ես:

Առաջին անգամն էր, որ ես Երվանդի առաջ սուտ էի խոսում: Ե՛վ ամոթ զգացի, և՛ ցավ: Ինձ թվաց, որ մի բան կըտրվեց մեջս: Ավա՛ղ, ընկերական հիմ և սերտ կապն էր, որ կտրվեց:

— Հո հիվանդ չե՞ս, — սրտագին ձայնով ասաց նա և մոտենալով ուշադիր նայեց աչքերիս. — գուցե՞ նույնն է, բայց աչքերդ շա՛տ տխուր են: Դու ավելի ոռմանտիկ տղա ես, քան ես. իրավ որ բանաստեղծ ես եղել, — և ձայնից խորհուրդ տալով հարեց: — Է՛, նոր բան ունի՞ս գրած, ավուր պատշաճի տեսնեմ:

Այս վերաբերմունքն ինձ ծաղր թվաց: Ես համոզված էի, թե նա գիտեր տխրությանս պատճառը, որ այսպես կամ այնպես ինքն էր ստեղծել Անահիտի հետ միասին:

«Չէ՛, մտածում էի ես, էլ ընկերակցություն չկա. մենք խաբում ենք իրար. առաջ ես առանց այլևայլի ասում էի սրբտիս ցավը կամ ինքն էր ասում, ինչ որ նկատել էր, հիմա գիտե և չգիտենալ է ձևանում»:

— Ոչի՛նչ, կանցնի, ուրիշ բանի մասին խոսենք:

Նա տարակույսով նայեց ինձ և ապա սկսեց խոսել զանազան բաների մասին, որոնք ո՛չ մի կապ չունեին մեզ տիրող էակի հետ: Ես ուշադրություն էի ցույց տալիս. սակայն ուղեղս զբաղված էր միայն Անահիտի խոսքերով:

Ուրեմն նա անտարբեր չէ դեպի ինձ, — մտածում էի ես, — բանի որ վշտացել է իմ մեկնումով. ես եմ մեղավոր, միայն ես, որ հանդուգն չեմ. քաշվում եմ մի կողմ և այսպիսով վաճում եմ նրան ինձնից հեռու: Այսուհետև ուրիշ կերպ պիտի վարվեմ՝ վատահ, վճռական:

Հոգեկան այս փոփոխությամբ կազդուրված, դարձա երվանդին:

— Ի՞նչ լավ արիր եկար. տխրությունս փարատեցիր. շա՛տ մեծակ էի: Մինչև երեկո մոտս կաց, միասին դուրս կերթանք:

Ճաշից հետո նորից իմ սենյակումն էինք: Թախտի վրա կողք-կողքի պառկած, նախկին օրերի պես, ծխում էինք ու խոսում: Երվանդը ծիծաղաշարժ առակներ էր պատմում. ես բոլորովին թեթևացած էի և երեկվան քենս մոռացած:

Երեկոյան պարտեզ գնացինք: Մեր ընկերները խոսում էին անցած գիշերվա պարի մասին, հանույթով վերհիշելով զանազան միջադեպեր: Աչքս Անահիտի ճամփին էր, բայց ժամեր էին անցնում, նա չերևաց: Մինչև գիշերվա կեսը մնացինք, երբ գրեթե ամայացավ ամեն ծառուղի, մենք էլ ստիպված եղանք տուն դառնալ:

Անահիտը չկար այս երեկո: Երևի պարից հոգնած լինելով՝ հանգիստ է առնում: Այսպես էի մտածում, թերևս նույնը և Երվանդը: Սակայն ո՛չ ինքը, ո՛չ ես Անահիտի մասին մի բառ չխոսեցինք:

Մյուս օրը ճաշից առաջ, սովորականի պես, պարտեզ գընացի, սակայն ո՛չ Անահիտը երևաց, ո՛չ Ալեքսանդրը, որ մի բան իմանալի նրա բացակայության մասին: Երեկոյան հյուրեր կալիմ մեր տանը, հետաքրքիր մարդիկ, և հոժարությամբ մնացի. սակայն երբ նրանք մեկնեցին, ես ինձ փողոց նետեցի, ուղղակի ընկերիս տան կողմը: Նրանց դուռն մոտ էի, երբ անկյունից մի սովեր առաջացավ. Երվանդն էր:

— Լևոն, դո՛ւ ես, ո՞ւր կերթաս այսպես ուշ:

— Պարտեզ. ուրիշ ո՞ւր. դու ի՞նչ ես անում այստեղ:

— Տուն եմ դառնում: Սակայն չմոռանամ ասել, որ օրիորդ Անահիտը մի-երկու օրով մոտակա մամուռնոցն է գնացել իր բարեկամ ընտանիքին այցելելու. այս երեկո պարտեզում ասացին տղաները:

Նրա ձայնը դողում էր:

— Վաղը ճաշից հետո վերադառնալու է,— ավելացրեց նա և լռեց:

Ես էլ լուռ էի: Թեև մուրթ արգելում էր, որ մենք իրար հայացքի մեջ կարդայինք մեր հոգիները, բայց նորից հասկացանք իրար և լռեցինք:

Եվ միասին մի քիչ քայլելուց հետո, հանկարծ բաժանվեցինք, ճիշտ այնպես, ինչպես մի ձգված թել փրթում է մեկեն:

Գիշերը մինչև քնելս և մյուս օրը մինչև երեկոյան պարտեզ գնալը՝ ուղեղս լարված գործում էր: Սենյակս կորած էր ծխախոտի ամպի մեջ: Ես մտածում էի, մտածում, առանց մի վճռական ելքի հասնելու: Ես տեսնում էի, որ իմ սիրոս անուղղելի կերպով բռնված է, գերված Անահիտի սիրով: Այդ սերը ճակատագրի պես է ինձ համար. առանց նրան՝ ես անիվը կտորած սալլ եմ: Բոլոր էություններ մի բան եմ տեսնում,— որ Անահիտը միայն ինձ սիրե, միայն ինձ պատկանի, որքան էլ այս վերջին բառը գեղեկիկ և նյութական իմաստ ունենա: Ուրեմն ստիպված եմ նրան հայտնելու իմ սերն իր բոլոր տարողությամբ... Հայտնե՛մ արդյոք, իսկ եթե մերժե՛ց: Ի՞նչ անեմ

իմ կտորած սալլովս, ի՞նչ անեմ: Մեռնե՛լ, բայց մեռնել չեմ ուզում. ինչպես և չեմ ուզում ապրել առանց Անահիտի: Ո՛չ մեռնել, ո՛չ ապրել. ի՞նչ դրություն կա այլևս կյանքից ու մահից դուրս:

Այսպիսի վարանքների մեջ տանջվում էի, երբ հանկարծ կամք գոյացավ մեջս: Արյունս ջերմագին աղբյուրի պես թինդ առավ, ջերմությամբ ողողվեց հոգիս ու մարմինս բովանդակ: Ես վճռեցի առաջին իսկ առիթին բացատրվել Անահիտի հետ և ձեռքը խնդրել, ինչպես ասում են քաղթենի լեզվով:

Սրտապնդված և վճիռովս արիացած՝ երեկոյան գնացի պարտեզ: Ուրախ-ուրախ բարևեցի խմբված ընկերներին ու ընկերուհիներին: Անահիտից ներողություն խնդրեցի առանց մնաս բարևի հեռանալուս համար: Վպա զվարթ տրամադրությամբ մասնակցեցի ընդհանուրի խոսքին ու կատակին:

Մի քանիսը մեր ընկերներից առաջարկեցին, որ քաղաքից դուրս «անտառում» մի հանդես-խնջույք կազմենք. մի երևույթ, որպիսին ամառը մի երկու անգամ երիտասարդությունը ձեռնարկում էր: Որոտընդոստ ծափերով ընդունվեց առաջարկը, և օրը որոշվեց.— երկու օր հետո դերերը բաժանվեցին փորձվածների: միջև՝ խնջույքը կազմակերպելու համար:

30—35 հոգուց բաղկացած օրիորդների և պատանիների խումբը ճաշից առաջ հավաքվել էր «անտառում»: Մի քանիսը սեղանի պատրաստությամբ էին զբաղված, մնացածներից մի խումբ երգում էր ու պարում, մյուսները խաղում էին ու վազվըզում, բոլորս էլ ծաղիկներով զարդարված:

Ես՝ աչքերս որսի շան պես լարած՝ սպասում էի մի հարմար վայրկյանի, որ Անահիտին գտնեմ առանձին և բացատրեմ:

Եկավ բախտորոշ վայրկյանը: Տեսա Անահիտին, որ կանգնել էր մեռակ ավազանի առջև և դիտում էր լողացող բադերին: Ես էլ գնացի հանդիպակաց ափը և նայում էի իրեն: Անահիտը գլուխը բարձրացրեց, նայեց ինձ և ժպտաց:

Այդ ժպիտը իրական շրջապատս իսկույն փոխեց մի դյու-
թիչ հեքիաթի.— թռչունները ճյուղերին թառած երգում էին
այդ հեքիաթի միջից, և մի ուրիշ տեսակ արև էր շողում եր-
կընքում. և Անահիտը ամեն օրերից գեղեցիկ էր այսօր, խեց-
թացուցիչ գեղեցիկ. վարդագույն շունչ կար նրա շուրջը. նրա
այտերի վրա, նրա ժպիտի մեջ. և ավելի գեղեցիկ էր իր բարձ-
րասլաց հասակով՝ նման այն մատաղ բարդիներին, որոնք վեր
էին նետվում նրա մոտիկը և նրա գլխի վերև շնչում էին
կանաչ լեզվով, գարունքվա խոստումնալից անուշ լեզվով:

Ավելի շուտ թռա, քան թե վազեցի նրա մոտ: Չգիտեմ՝ նա
ի՞նչ խոսեց, չգիտեմ՝ ի՞նչ պատասխանեցի, բայց հանկարծ
առանց առաջուց մի նշան տալու կտրեցի նրա խոսքը և ասա-
ցի, թեև ձայնս դողում էր, բայց զգալի էր վճռակամությունս:

— Օրիորդ Անահիտ, մի բան եմ ուզում ձեզ ասել: Գիտե՞ք,
սրտիս խորքից: Ներողություն, թերևս դուք արդեն նախա-
զգույն եք, օրիորդ: Խնդրում եմ, մի՛ մերժեք ինձ, բարի եղեք
ինձ հետ. ես ձեզ պաշտում եմ, միայն ձեզ. ես շահ թշվառ
եմ...

Այլևս չկարողացա շարունակել:

Անահիտը՝ աչքերը հառած գետին, լսում էր, դողում էր
նրա կուրծքը, և գունատ էր ճակատը:

— Լսո՞ւն ջան,— թրթռուն ձայնով ասաց նա,— ես քեզ
շահ եմ սիրում, բայց ների՛ր, հոգիս, ես, ես երվանդինն եմ:
Այդպես եղավ, բախտ է, ի՞նչ է, չգիտեմ: Բայց իմ տան դուր
միշտ բաց է քո առաջ: Չէ՞ որ դու և երվանդը լավ ընկերներ
եք. մի՛ վշտանար, մի՛ անհիծիր ինձ...

Եվ արցունքները խեղդեցին նրա ձայնը: Չեղքս բռնեց, ու-
զում էր տանել շրթունքներին, բայց ես ուժով քաշեցի իրեն
ձեռքը և համբուրեցի:

Ի՞նչո՞ւ, ի՞նչո՞ւ էր այս համբույրը նրա կամ իմ կողմից,—
չեմ կարող բացատրել. սիրտն էլ իր հաշիվն ու տրամաբանու-
թյունը ունի:

Անահիտը մեկ էլ արագ խույս տվեց ինձնից, գնաց երվան-
դի մոտ և նրան մի կողմ քաշեց: Ես սառած դիտում էի նրանց,
դիտում էի բոլորովին անտարբեր, կարծես, ինձ չէր վերա-
բերում բնավ, այլ որպես թե թատերաբեմի վրա էր կատար-

վում—կյանքի մի վերարտադրած տեսարան: Եվ նայում էի՝
իրև հանդիսատես. Երվանդն ուղղակի քարշ տալով տարավ
նրան. Անահիտը ողջ մարմնով ընկած էր նրա վրա. ելան
քաղաք տանող ճանապարհի վրա, կառք նստան ու գնացին:

Եվ հիմա միայն ես իրականի մեջ ընկա. ու դաշույնի պես,
որ խրվում է մարդու սրտի մեջ, մի սուր ցավ հոգուս խորքը
մղկտացրեց՝ կտրտելով ինձ: Հավիտյան գնաց Անահիտն ինձ-
նից, ամեն բան տանելով իր հետ,— տասը տարվա մտերիմ
ընկերությունը և արշալույսվող կյանքիս բոլոր հմայքն ու հրա-
պույրը, իմ սերը, առաջին սերը:

Հենվում եմ ծառին և մտածում եմ, եթե կարելի է մտածել
այս պահին,— այս ցավագին լքման, որբացման պահին: Ի՞նչ
անել. հետևե՛լ նրանց, վազե՛լ նրանց հետևից, կառչե՛լ անիվ-
ներից, չթողնել, որ Անահիտը հեռանա... Եվ քայլ եմ անում
դեպի նրանց գնացած ուղղությամբ, բայց արդեն գնացել եմ,
գնացել եմ արդեն:

Կանգ եմ առնում. մարդու հոգին բյուրավոր բջիջներ ունի
անակնկալ ուժերի: Ինքնասիրության, հպարտության մի զո-
րություն խորքիցս բարձրացավ դեպի դուրս, դեպի գլուխս ու
մկաններս...

Ես ուղղվեցի, տրորեցի աչքերս, գլխարկս շտկեցի և հաս-
տատուն քայլերով մոտեցա ընկերներիս, սեղան նստեցի և
իրար վրա մի-երկու բաժակ գինի խմեցի:

— Ո՛ւր եմ օրիորդ Անահիտն ու Երվանդը,— նկատեց ըն-
կերներիցս մեկը:

— Ո՛ւր եմ, ո՛ւր եմ,— ձայնեցին ուրիշները:

— Հիմա կգան, անթոնան կգան,— վրա բերին մի երկուսը:

— Երվանդը record-ը տարավ,— ցած ձայնով ասաց
մեկը:

Ես անտարբեր կերպով գինի լցրի բաժակս, սակայն սըր-
տիցս արյուն էր գնում: Ինձ թվում էր, թե վերջինս հատուկ
ինձ է ուղղել իր կծու խոսքը՝ մի բան կռահելով: Ինձ չմատ-
նելու համար, կողքիս նստած ընկերիս ականջին շնչացի.

— Ե՛կ այսօր այնպես հարբենք, որ մեզ գրկած տուն տա-
ցին. խոստանո՞ւմ ես:

Ընկերս խոստացավ, չգիտեմ, կատարե՞ց. բայց ես խոս-

տունս կատարեցի. այնքան խմեցի, այնպես կատաղի քե՛ք
արի, որ բոլորը զարմանքով հարցնում էին.

— Տո՛, ի՞նչ պատահեց. Լևոնը խելոել է. քեզ այսպես
չէինք տեսել. ի՞նչ թաքուն շնորհքների տեր ես եղել:

Խնջուկը վերջացավ. ուշ երեկո էր, ընկերներս դրին ինձ
կառքի մեջ և տարան տուն: Երբ մենակ մնացի սենյակումս,
բոլորովին զգաստացա, լարված ու պրկված ջղերս մեկեմ թու-
լացան. այնպիսի մի խավար ծածկեց հույսիս բոլոր ճանա-
պարհները, այնպիսի անպատմելի տխրություն իջավ վրաս,
որ ընդունակ եմ զգալու միայն թարմ, անվարժ սրտերը:

Մյուս օրը տանից դուրս չեկա, հաջորդ օրը և երրորդ
օրը—նույնպես. ո՛ր գնայի, ո՛ւմ տեսնեի: Եվ ցավալին այն
էր, որ երեք օրվա ընթացքին Երվանդը բնավ չերևաց, մինչ-
դեռ առաջ օր չէր անցնում առանց իրար տեսնելու:

Չորրորդ օրը լսեցի, որ Անահիտն իր քաղաքն է դարձել:
Լսելուս պես զգացի, թե այլևս օդ չկա մեր քաղաքում: Անա-
հիտը տարավ իր հետ օդը. ճնշվում էր, խեղդվում էր հոգիս:
Ի՞նչ տարօրինակ է մարդը շինված. հույս ունի դեռ, երբ
բնավ էլ հուսալու տեղիք չկա: Իսկապես ծաղրի արժանի էի
ես, որ տակավին հույս էի տածում Անահիտի փոխադարձ սի-
րո վրա: Այլապես ինչո՞ւ այս նոր լքումը. ո՛վ գիտե, գուցե
մի խորհուրդ կա այս զգացումի մեջ: Բայց փաստը մնում էր
իր ուժի մեջ: Եվ հիմա ավելի էի տանջվում, ավելի անողոք,
քան մի չորս օր առաջ:

Խեղճ մայրս, որ տեսնում էր տխրությունս ու չէր հասկա-
նում պատճառը, հոռի տրամադրությունս ցրվելու համար ինձ
ուժով ամառանոց ուղարկեց ամուսնացած քրոջս մոտ: Մի
շաբաթ մնալուց հետո քաղաք վերադարձա:

Առաջին լուրը, որ լսեցի մեր տունը՝ դարձիս, այն էր, թե
Երվանդը երկու օր առաջ ճանվել է Անահիտի հետ և պիտի
պսակվին ու գնան միասին ուսանելու:

Այդ լուրը, որ էապես հայտնի էր ինձ, ուղղակի երկու

կտոր արավ ինձ.— սիրտ և ուղեղ: Ողջ էությունս դարձավ
պատերազմի մի իսկական դաշտ: Սիրտս՝ լցված ու բորբոք-
ված՝ մեղադրում էի Երվանդին, համարելով նրան դավաճան,
ստոր, կեղծավոր, խաբեբա, չարագործ, և ուխտում էի վրեժ
առնել նրանից. այնպես բուռն ատելություն ունեի՝ անզուսպ,
վայրագ, նախկին հզոր սիրո փոխարեն, որ ունեի դեպի Եր-
վանդը, հիմա սիրտս եփվում էր նախանձով ու ատելությամբ
նույնչափ հզոր, ավելի հզոր: Սակայն ուղեղս, սառն ու դա-
տող,— պատվով շեշտում եմ այս,— ուղեղս արդարացնում էր
նրան, սառնորեն ասելով, թե իրավացի էր նա, այնքան իրա-
վունք ուներ նա Անահիտի հանդեպ, որքան ես: Եվ մի՞թե
նույնը պիտի չանեի ես, եթե Երվանդի տեղը լինեի, այսինքն՝
եթե Անահիտը ինձ սիրեր: Անշուշտ: Բայց արի տես, որ սիրտս
բնավ խոսք չէր հասկանում, անվերջ կրկնում էի, թե Երվանդն
անարժան էր Անահիտին, ոչնչով բարձր ինձնից, ո՛չ խելքով,
ո՛չ զարգացումով և ո՛չ հոգեկան ու նյութական այլ կողմե-
րով. կույր բախտը միայն ժպտաց նրան, կույր բախտը...

Կարճ.— իմ էության երկու կտորն էլ հավասարաչափ զո-
րեղ էին. և մեկը մյուսին տեղի չէին տալիս... Վերջապես՝ ներ-
քին պայքարից ուժասպառ՝ գտա միջին մի ճամփա.— խու-
սափել նրանից, երբեք չհաշտվել ու երբեք չներել Երվանդին:
Իսկ Անահիտի՞ն... Ա՛խ, նրա անուցն անգամ թրատում էր ինձ,
սիրտս և ուղեղս, հոգիս ու մարմինս միաժամանակ:

Եվ որպեսզի նրանց չհանդիպեմ, վճռեցի Գերմանիա գնալ
ուսանելու:

Երկու տարի մնացի Գերմանիայում: Նոր երկիրն ու պա-
րապմունքները մի փոքր հանգստացրին ինձ: Եվ սիրտս, որ
պոռնկե-պոռնկ լցված էր Անահիտի սիրով՝ տուն տվավ մի
շաբթ նոր ոտանավորների և մանր պատմվածքների: Վշտի
մեջ այն մխիթարանքը ունեի, որ իմ ոտանավորները, այսին-
քն՝ իմ անձը պիտի հալածե նրանց, և իմ ստվերը միշտ մի

ան պիտի ձգե նրանց միջև: Վրեժը քաղցր բան է. թո՛ղ բարոյախոսները ինչ ուզում են՝ ասեն:

Գրածս՝ թանաքը չչորացած ուղարկում էի մի ամսագրի, որին նույնպես աշխատակցում էր Երվանդը տնտեսական-հասարակական հոդվածներով: Այս ամսագիրն ընտրեցի հատկապես նրա համար, գիտե՞նալով, որ Անահիտն ու Երվանդը պիտի կարդան, մանավանդ Անահիտը, որովհետև նրա համար էի գրում, միմիայն Անահիտի համար: Թո՛ղ ոչ մի հայ չկարդա, հոգ չէ, միայն թե նա կարդա, իսկ եթե նա պիտի չկարդա, իմաստից զուրկ է գրելս:

1 —————

Երկու տարուց հետո վերադարձա հայրենիք: Անահիտին տեսնելու կարոտս օրեօր աճելով, անպատմելի քաղցի ուժ էր ստացել հոգուս մեջ: Սակայն իմ բախտից՝ Անահիտը չեղևացավ: Նրանք մնացել էին Ռուսիա: Աշնանը նորից դարձա Գերմանիա, սրտակոտոր և չհագեցած կարոտով: Վերջապես երկու տարի անց կրկին վերադարձա հայրենիք, այս անգամ ավելի երկար մնալու, որովհետև հայրս մեռել էր, և պիտի մնայի մորս մխիթարելու համար:

Մի քանի օր հետո, հենց նույն պարտեզը տանող փողոցի վրա հանդիպեցա Անահիտին և Երվանդին: Սիրտս այնպե՛ս տրոփեց կրծքիս տակ, ծնկներս դող առան, և կոկորդս վայրկենապես չորացավ: Նախկին սիրուց մի ավելի կորովի և հզոր սեր բռնկվեց մեջս: Ուզում էի գնալ ու փռվել Անահիտի ոտների տակ և լալ, հավիտյան լալ...

Հայացքս դիպավ նրա հայացքին, և հոգիս կարոտով սուզվեց նրա հայացքի մեջ, նրա անուշ աչքերի մեջ, որոնք տրխրությամբ ավելի խորացել էին ու քնքշացել: Ա՛խ, ի՛նչ հեզությամբ ու բարությանբ նայեց ինձ, ի՛նչ հեզությամբ ու բարությանբ, հաղորդակից՝ իմ ապրած վշտին ու կարոտին: Ապա նայեցի Երվանդին. մեր հայացքները տեգերի պես իրար դիպան՝ ծայր-ծայրի, կայծ տվին ու մի պահ սառած մնացին իրար հանդեպ: Երվանդը հաղթվածի պես թարթիչները վար

քերեց և, անցնելով Անահիտի թևը, շփոթ քայլերով անցանգնացից:

Ես ետ դարձա նայեցի նրանց. կորացած էին նրանց մեջքերը, անտեսանելի ծանր բեռի տակ կորացած:

Ա՛խ, ինչքա՛ն էր փոխվել Անահիտը: Նրա ձևերի վաղեմի շնորհն ու անուշությունը չքացել էին. գունատ էր նա ու վտիտ, թուլ և հիվանդկախ. հյուսիսի ցուրտ կլիման չէր եկել խեղճ աղջկան, ծանրապես հիվանդացել էր և դեռ բուրդովին չէր ապաքինվել: Սիրտս կսկծաց իրեն խորին խորթով, և այս հանդիպումից հետո իջավ ու մարեց իմ քենն ու վրեժը: Անշո՛ւշտ, թշվառ են նրանք: Թշվառ է, անշո՛ւշտ, Երվանդը: Բայց ավելի թշվառ են ես, որովհետև երազս ու կյանքիս խթանը բացորոշ վտանգված է: Դժբախտաբար, երևակայություն չէր զգացածս, այլ ծանր ու դառն նախատեսություն. որովհետև, ավա՛ղ, իրականություն դարձավ այս ահավոր նախազգացումը:

Այս հանդիպումից հետո այլևս չտեսա Անահիտին: Աշնան սկզբներին նա պաղ առավ և թոքերի խիստ բորբոքումով հիվանդ պատկեց, ու մի շաբաթ հետո վախճանվեցավ...

Սրտաբեկ ու կիսամեռ հետևում էի հուղարկավորությանը՝ սիրածս էակի դագաղից հեռու, որի հետևից, խորտակված, քայլում էր Երվանդը: Հեռվից էի հետևում՝ վախենալով Երվանդի աչքին ընկնեմ. թերևս վիրավորվեր խեղճը. ի՛նչ իմանաս մարդու հոգին:

Հողի տակ դրին իմ սիրած աղջկան, և ես չկարողացա վերջին անգամ տեսնել նրան, որ լացով ու համբույրով մի բուռ հող նետեի նրա անուշ, հավերժ չքացող դեմքի վրա: Արցունքներս խեղդում էի կոկորդիս մեջ, որ մարդիկ չտեսնեին լացս, և սիրտս ատամներիս տակ ծամելով, վերջին բարևն էի մղկտում հեռվից այն պաշտելի էակին, որին այնպե՛ս, այնպե՛ս մոտիկ էի՝ կասված ամեն վայրկյան, ամեն ժամ՝ երազով, թե խոհերով...

Բուրդից առաջ տուն դարձա, և անհուն կսկիծի մի գիշեր անցնելով՝ առանց աչք փակելու, առավոտ վաղ մի կառք առա և գնացի գերեզմանատուն, որ գոնե միմակս համբուրեմ նրա հողը: Մոտեցա աշնան ցողով թրջված թաց հողակույտին, փուլ էկա գլխի վերևը, երեսս դրի հողին, և լալիս էի ու լալիս,

ծնրադիր, մինչև որ արցունքներս ցամաքեցան: Սառած ու ապշած նայում էի դաժան իրականությանը ու բան չէի հասկանում...

Երբ մեքենաբար վեր կացա և չուզող քայլերով բաժանվում էի թանկագին գերեզմանից, հանկարծ տեսա Երվանդին, որ ակներև պատկառանքով գլխահակ կանգնած մեկուսի դիտում էր ինձ: Ես էլ, անգիտակից, մի վայրկյան կյանք առա. մի վայրկյան նայեցի՞նք իրար մեր լացած ու անհույս աչքերով, և մե՛կ էլ, իրար գիրկ ընկանք, և գլուխներս իրար ուսերի վրա, լալիս էինք մենք ու հեկեկում, ինչպես երկու հարագատ եղբայրներ, որ կորցրել են իրեն սիրած, պաշտած միհատիկ քրոջը...

1922, Վեներտիկ

Առավոտ վաղ լուր տարածվեց Էջմիածնի վանքի միաբանության մեջ, թե հանկարծակի վախճանվել է ծերունի Հակոբ վարդապետը: Միաբանները բոլորը խոր վիշտ զգացին նրա մահվան առիթով. իրենցից հավիտյան հեռացավ ամենից բարի, ամենից սրբակրոն ու պարզասիրտ եղբայրը, որ իր երկար կյանքի ընթացքին ամենաչնչին մի մեղքով չաղարտեց իր սրբազան ուխտը:

Տարօրինակ մարդ էր Հակոբ վարդապետը. խորունկ և միաժամանակ պարզ հոգով. հավատում էր ամեն մարդու խոսքերին, ինչքան էլ անհեթեթ լինեին, և ներում էր մարդկանց ամեն տեսակի զեղծումները, ինչքան էլ մեղանշական լինեին, սակայն խստագին քննում էր իր ասածներն ու մտածածները և երբեք չէր ներում երևակայության մեջ նույնիսկ գործած իր փոքրիկ շեղումները:

Անսահման բարություն ուներ. հոգին զեղուն էր սիրով բոլորի հանդեպ, բառի ընդարձակ իմաստով՝ բոլոր արարածների. չարության և ատելության բջիջ չկար նրա հոգու մեջ:

Հագուստը ամենից հասարակն էր. կերուխումը ճգնավորի պես. հանդիսավոր օրերին թաքչում էր անկյունները: Դրամ, եթե ձեռքն էր ընկնում, պահում էր միայն աղքատներին տալու համար. իրեն համար ոչինչ չէր գնում:

Վանքից դուրս ժողովրդի տները երբեք հյուր չէր գնում. ոչ մեկից բան չէր խնդրում, համարելով տալը գերազանցորեն հաճելի, քան առնելը:

Երեսուն տարեկան հասակից ի վեր նրա առօրյա կյանքը բոլորի աչքի առջևն էր: Առավոտ շատ վաղ էր վեր կենում, մաքրում իր անշուք խուցը, մի պահ կարդում. ապա գնում տաճար, ժամհարից առաջ, ջահերն ու մոմերը վառում, և

կանգնում աղոթքի: Այնպես ջերմեռանդ էր աղոթում, կարծես թե գիշերը մի ծանր հանցանք գործած լիներ, որը բուխ սըրտով քավում էր հիմա:

Հասարակ նախանաշից հետո ընկնում էր վանքի զանազան շենքերն ու անկյունները, այս բանը շինում, այն բանը փոխում, կամ պարտեզներում ջրում էր ծառերն ու ծաղիկները, կամ հավերից կուտ տալիս, հավկիթները հավաքում, գնում էր օգնում այս ծառային աշխատանքի մեջ, մյուսին՝ խրատում:

Մեկ-մեկ այցելում էր հիվանդ միաբաններին, հիվանդ հյուրերին ու աղքատներին՝ վանքի հյուրատան մեջ պատսպարված, սրտով ծառայում էր ամեն մեկին, և միշտ հեգույթյամբ ու քաղցրությամբ, սիրով ու ժպիտով: Եվ հանգստյան ժամերին, պարապ չմնալու համար, կարդում էր ի՛նչ գիրք որ ձեռքըն էր ընկնում, անխտիր՝ հին-նոր, կրոնական, աշխարհական:

Այդպես էր նրա ամենօրյա կյանքը քառասուն տարի շարունակ. շրջուն, անդուլ մի անիվ՝ վանքի ամեն կողմ գլորուն:

Հակոբ վարդապետը տարին մի անգամ էր բացակայում վանքից: Անփոփոխ սովորություն ուներ, ամառվա վերջերին մի ամսով գնում էր լեռները, հովիվների մոտ, և ամեն տարի բարձրանում էր մեծ Մասիսը, մինչև ձյունները. մի քանի անգամ բարձրացել էր փոքր Մասիսի գլուխը, և մի անգամ հովիվներին հետն առած, Աստվածածնա տոնի օրը անարատ գինիով պատարագ էր մատուցել լեռան կատարին, և երկնքի մեջ մխրճված այդ բարձր սեղանից խաչակնքել էր աշխարհի չորս կողմը սիրո և խաղաղության նշանով: Հետագայում ծեր հասակը արգելք եղավ լեռները բարձրանալուն, որով նա սահմանափակեց իր բացակայությունը մոտիկ վանքերով ու վայրերով:

Վանքի ծառաները և Վաղարշապատի բնակիչները սրբի տեղ էին դնում նրան. միաբանները, առանց նախանձի, հա-

մարում էին նրան հին, մաքրակրոն դարերի մի տեսիլ իրենց մեջ: «Հայր Հակոբը այս աշխարհից չէ, բայց նվիրված է այս աշխարհի մարդկանց բարիքի համար. հոգեղեն է հողեղեններիս մեջ. սուրբ մարդ է խորհրդով ու գործով. և գաղտնիք չունի մարդկանց առաջ, որովհետև արդար է»,— այսպես էին ասում նրանք: Սակայն հայր Հակոբը ուներ իր գաղտնիքը, որ հայտնի էր խոստովանահայր քահանային և աստծուն՝ միայն:

Մանուկ հասակում բերին նրան ծնողները և նվիրեցին Էջմիածնի վանքին. այդպիսի երդում ունեին նրանք:

Մանուկ Սարգիսը անեց վանքի հովանու տակ և աշակերտեց ժառանգավորաց դպրոցում. ջանասիրությամբ սովորում էր ինչ որ ուսուցանում էին, և իր քաղցր բնության համար ուսուցիչների և դասընկերների սիրելին եղավ: Դպրոցը պատրաստում էր սաներին հոգևորական կոչման համար, ներշնչելով երեք անհրաժեշտ պայմաններ— «աղքատություն, հնազանդություն, ողջախոհություն»: Պատանի Սարգիսը իրեն ճկում էր, հարմարեցնում, կրթում այդ պայմանների համար, որոնք նրա աչքին երեք կաղապարների նման էին, որոնց մեջ պիտի ձուլվեր, ձևեր իր հոգին ու մարմինը:

Դժվար էին գալիս նրան այդ անժխտելի պայմանները, որովհետև կեղծել չէր ուզում և չէր կարող:

Խաբել ուրիշին թերևս դյուրին է, բայց իրեն խաբել՝ անհնար է. այսպես էր խորհում նա, և բարեխղճորեն քննելով՝ իրեն պատրաստում էր կուսագրվելու:

Ժամանակի մեջ տեսավ, որ աղքատությունն ու հնազանդությունը դյուրին կարող է յուրացնել, արդեն սակավապես էր իր հակումներով, աչք չուներ երբեք փողի և ընչի. հնազանդ էր նույնպես, կամակատար, լիներ այդ հրաման թե խնդիր ուսուցչի կամ ընկերոջ կողմից՝ անսում էր անտրտունջ: Բայց ողջախոհությունը, որ նեղ իմաստով հասկանում էր նա հրաժարումն կնոջական սիրուց, ծանր և հաճախ անխորհուրդ էր թվում նրան:

Չեռքն էր ընկել աշխարհիկ գրքեր, և նրանց միջով տեսել էր դրսի աշխարհի բազմապատկեր հրապույրները, և համեմատում էր վանքի խստակրոն անապատի հետ:

Սակայն անքննելի սերը դեպի աստված և ինքնագրկումով երկնքի արքայությունը ձեռք բերելու համոզումը տիրական գորություն ունենն նրա հոգու վրա՝ լոեցնելու համար վաղանցուկ մտահուզումները:

Մինչ այդ ավարտեց նա դպրոցը և ներկայացավ կուսակրոնի կարգը ընդունելու լուրջ առաջարկությունը:

Իր ընկերներից մի քանիսը հեռացան վանքից ամուսնացած քահանա դառնալու համար, իսկ մյուսները դյուրին կերպով համաձայնեցան կուսակրոն լինել, սակայն Սարգիսը ժամանակ խնդրեց խորհելու՝ անբեկանելի վճիռ ստեղծելու համար:

Կուսակրոն կոչման մասին նա վսեմ պատկերացում ուներ. սուրբ հայրերի կյանքն ու գործն էր նրա տիպարը: Գիտակցում էր, որ պետք է հոգով ու մարմնով նվիրվել՝ անպակաս, անզրոջալի. և զգում էր իրեն տհաս այդ նվիրման համար:

«Ներքնապես կուսագրվել, էությանմբ, և ո՛չ երևույթով, արտաքին աշխարհի համար. նախ և առաջ ինքն իրեն ձեռնադրել, ապա ուրեմն կարգ առնել եպիսկոպոսից», — այսպես էր խորհում նա:

Գիշերները իր անդորր խուցի մեջ՝ գլուխը հենած երկաթագիր հին Հայսմավուրքի վրա, սուրբ տեսիլներ էր ունենում. տեսնում էր իրեն մի առապարի մեջ, մեկուսի, ձորձ հագած, հաղթանակած չարին ու փորձությանը, բուրրանվեր սպասավոր Քրիստոսի ուխտին, ծառա ամեն մարդու, հոգացող ամեն տանջվողի և վիրավորի՝ արդարի և մեղավորի. և հանկարծ հեռվից ականջին էին հասնում սրինգի անուշ ձայներ, որ սեր էին մրմնջում:

Եվ սերը հզոր մի բազուկի պես ուղղակի բռնում էր նրա ականջից, դուրս քաշում հայեցողության միջից և տանում դնում մի ճանապարհի վրա, որ վարդերով ու ծաղիկներով էր եզերված:

Եվ տեսնում էր՝ այդ ճանապարհը ձգվում է ցորենի արտերի և խաղողի այգիների միջով, ծայրին մի սպիտակ տնակ,

բակում, խնձորենու տակ կանգնած մի սիրուն, նորահարս կին, իսկ ծառի վրա երկու հրեշտակի պես մանուկներ, որ ժպտալով թաթիկները մեկնում էին նրան, թոթովելով՝ «Հայրի՛կ, տո՛ւն արի»:

Սարգիսը ձեռքով ուժգին վանում էր աչքերի առջևից այդ քաղցր ու տանջող տեսիլը և միտքը քարին դեմ առածի պես՝ նայում էր ապուշ, ինքնակորույս:

Այս տեսիլների խորհուրդը համարում էր նա այն անզիջելի պայքարը, որ տեղի է ունենում հոգու և մարմնի միջև:

Եվ բացորոշ տեսնում էր հոգու հոժարությունը և մարմնի տկարությունը. սակայն, մի տկարություն, որ քիչ էր մնում բեկաներ հոգու արիական հոժարությունը:

Մի գիշեր, երբ նույն տարակույսների և պայքարի մեջ ծըփում էր նրա հոգին, հիշեց կուսակրոնության հակառակ մի գրքից հետևյալ մտքերը:

...Կուսակրոնները կեղծավորներ են, եթե նրանք բնությունից հաշմանդամ, հիվանդ չեն ծնված. մարդկորեն հնարավոր չէ հաղթել բնությանը, որ միահեծան է:

Կարելի չէ զսպել զգայարանների պահանջին. արարածները, որ արյուն ունին և ավիշ, անպատճառ ենթակա են բնության ստեղծագործ ուժին, սեռի իշխանությանը, որ բնագոյ է կոչվում. եթե բնության ստիպումները հզոր չլինեն, կյանքը կվերջանար՝ կենդանական, բուսական կյանքը հողի վրա, քրի և օդի մեջ:

Օրենք է այս. երկաթե օրենք, որից թերևս բացառել են մի քանի հանճարներ, որոնց հոգեկան և մարմնական ուժերը սպառվել են հզոր, ամենակույ խոկումների մեջ, և նրանց ցանկության բջիջները հյուծվել, վատնվել են այդ սպառման մեջ. թերևս միայն հանճարները չեն ցանկանում, իսկ հանճարը բնության իրականությունից դուրս է, հիվանդագին վրիպում:

Այդ օրենքից ձգտում էին խուսափել դարերի ճգնավորները. փախչում էին անապատ, ամայության մեջ չտեսնելու համար զգայացունց պատկերներ, և չարքաշ ու հոգնաբեկ աշխատանքների մեջ, ծոմ ու պահքով հյուծում էին իրենց մարմինը. մխրճված աղոթքների մեջ, նկրտում էին մեռցնել

բնութիւնը, բայց չէր հաջողվում. կի՞նը հալածում էր նրանց արթմնի և քնի տեսիլների մեջ: Եվ հուզիչ են այդ փորձու- թյան պատմութիւնները:

Մեծաստաններում վարդապետները սկսեցին պաշտել Մա- րիամ Աստվածածնի՞ն՝ կնոջ հմայիչ ձևերը մարմարյա ար- ձանների մեջ, իսկ միանձնուհիները՝ Քրիստոսի առնական մերկութիւնը պղնձյա մարմին հագած: Սեռը միշտ իրեն իրա- վունքը դնում է և հաղթանակում. ձևը փոխվում է, ոգին՝ մնում: Եթե Սեկունդուսի ասելով, իրավ, որ ամեն կի՞ն պոռնիկ է, ևս առավել ամեն այր-մարդ. և որովհետև ամեն մարդ մարդ է, նաև կուսակրոնները. ուրեմն...

Եվ Սարգիս սկսեց լարված ուղեղով խորհել ու քննել այս մտքերը:

Անգութ, անխիղճ կերպով քրքրում էր իր հոգին, որի ան- հուն ծովում ծփում էին երկու կարգի հակամարտ զգացում- ներ, որոնց նա հոգեկան ու մարմնական անունն էր տալիս. մի կողմից՝ ինքնակեղեքման, ինքնառոշնջության զգացումներ, մյուս կողմից՝ անզուսպ պահանջներ, ըմբոստ տենչեր, որոնք բնավ տեղի չէին տալիս առաջիններին:

Բոլորովին մերկ, մերկանդամ փոված էր նրա ներքին տե- սության առջև իր էութիւնը, որ գերազանցապես մարդկային էր—առողջ, բնական, հրով ու հյութով լի:

Եվ իր քննութիւնների մեջ հաճախ հասնում էր դաժան եզրակացութիւնների, որոնք սարսափեցնում էին նրան...

Ի՞նչ էր ուսանել նա, ի՞նչ էին քարոզել նրա ուսուցիչ հայրերը և ի՞նչ էր տեսնում նա:

Նրա ուսուցիչները ասում էին, թե՛ դև կա, փորձիչ սատա- նա, որ հազար ձևերով ջանում է գայթակղեցնել մարդուն. և կի՞նը սատանայի աղջիկն է, դևերի ուղկանը, որսում է հա- յեցողության նվիրված հոգիները՝ կորուստ տանելու համար: Պետք է ճգնութեամբ, կամքով, բարեպաշտութեամբ հաղթել սատանային, զգետնել նրան, ինչպես արավ շատերից մեկը, օրինակ, սուրբ Ալեքսիանոսը:

Եվ սուրբի պատկերը կանգնեց նրա տեսության առջև: Գե- ղեցիկ էր նա, Ալեքսիանոսը, քաջառողջ, երիտասարդ, սա- կայն, ուխտել էր նվիրվել հայեցողութեան, Քրիստոսի սիրուն:

Ուճեճալով մարմնական հաճույքի բոլոր հնարավորութիւն- ները, սակայն, փախավ հարսանեկան առագաստից, թագա- վորագն, չքնաղ հարսի գրկից. մխրճվեց աղքատութեան և ան- հայտութեան մեջ՝ ծառայելու համար աստվածային պատվիրան- ներին:

Մի՞թե առասպել է այս. մի՞թե հոգեբանական ճշմարտու- թիւն չկա այս գրույցի մեջ, մի՞թե անկարելի է փախչել գե- ղեցիկ կնոջ գրկից...

Եվ օրերով իրեն տանջող տարակուսների միջից հան- կարծ լույս ծագեց նրա հոգում.— այո՛, ճշմարիտ են այս գրույցները, «վարք սրբոցն» ամբողջ. բոլորովին ճշմարիտ են ուսուցիչներիս քարոզները.— և ես այսպես եմ հասկանում.— Սատանան մեր մեջն է և ոչ թե դուրսը. սատանան մեր ցանկու- թիւնն է, որ ծնվում է հակառակ մեր կամքին ու բանականու- թյանը. մեր էութեանց տարրից. մենք չենք կարող ու չպիտի մեռցնենք ա՛յդ տարրը, ա՛յդ նյութը. բայց մենք կարող ենք և պետք ենք սանձելու նրան և շղթայի զարկելու մեր կամքի ուժով և մեր բանականութեամբ:

Թուլամորթութիւն է և աստծուն անհաճո ներքինի դարձ- նել մեզ, ինչպես արել են շատերը չարիքից արմատապես ազատվելու համար:

Ծնված ներքինի մի՞թե կարող է սուրբ համարվել, երբ նա չգիտե դևի գործութիւնը և չի պայքարել, նույնպես և ար- վեստապես ձեռք բերված հաշտութիւնը:

Սուրբը նա է, որ զգում է գիշերային մեղքը, բայց կամքի բարոյական ուժով հաղթում է, ընկճում այն: Սուրբ չէ նա, որ ծնվել է անիղձ, անփափագ, կամ արտաքին ուժով դառնում է անիղձ, անփափագ:

Մենք պատասխանատու չենք մեր մեջ արթնացած զգա- ցումի, տենչի համար, բայց մենք պատասխանատու ենք այն կատար անելու, իրականացնելու մեջ:

Զգալ և ցանկանալ, որովհետև մեզնից անկախ է. անհնար է չզգալ ու չցանկալ, բայց երբեք չգործել, չիրականացնել մեղքը, և գիտակից կամքով ի դերև հանել սատանայի դըր- դումն ու գրգռումները, միաժամանակ անդուլ աշխատանքներն ու զբաղումները սատար կոչելով բարոյական կամքին:

Եվ ամփոփեց նա իր խոհերը այսպես.— Եթե մեղքը չլիներ, ինչպե՞ս կարող էր առաքինությունը լինել. եթե փորձության դեմ կուլելը չլիներ, որտեղի՞ց կլիներ սրբությունը.— սուրբերը մարդիկ էին և ո՛չ հաշմեր, անդամալուծներ:

Քրիստոսի պատվերը—մի՛ ցանկանար, պետք է հասկանալ—մի՛ գործեր:

Եվ ո՞վ է կարողացել տեսնել սրբերի հոգեկան անտեսանելի աշխարհը, ուր, բնականաբար, եռում են տարերային կրքերը, բայց մենք տեսնում ենք միայն նրանց արարքների տեսանելի աշխարհը, ուր նրանք մեղք չեն գործում:

Բայց առաքինությունն ու սրբությունը տենչալու և պայքարի մեջն է, և սուրբ հաղթանակողն է:

Այսպիսի վերջնական ելքի հասավ դպիր Սարգիսը և գտեպնդված իր հզոր վճիռով՝ ներկայացավ եպիսկոպոսին իր խոնարհ հաճությունը հայտնելու:

Եպիսկոպոսը հաստատեց, նրա մտքերը՝ խրախուսելով նրան.

— Այո՛, որդիս, աստծու շնորհով լի է հոգիդ, և ճշմարիտ են քո խոհերը. նույն ինքն սուրբ Թովմաս Ակվինացին ասել է, թե սիրո ցանկությունը տիեզերական օրենք է, բայց սրբությունը պայքարի մեջն է:

Առողջ մարմնով ու հոգով զգալ դեռ իր մեջ, բնությունը՝ հզոր ու բռնակալ. նյութը իր պահանջով, բայց կամքը սանձող ու հաղթանակող: Սուրբ լինելը քաջություն է:

Եվ կուսագրվեց Սարգիսը՝ Հակոբ անունը ընդունելով, խորհրդանիշ ունենալով Մծբնա Հակոբ հայրապետին, որ առանց հուսահատելու ճգնում էր ավագ Մասիսը բարձրանալ Լոյի տապանը տեսնելու համար. և ամեն գիշեր քուն մտած հայրապետին աստծո հրեշտակը ճանապարհի կեսից ետ էր բերում մինչև լեռան ստորոտը, և անխոնջ, անկույն հայրապետը ամեն օր վերստին մագլցում էր անհաղթելի բարձունքը, մինչև որ աստված գթաց և հրեշտակի ձեռքով տապանից մի տախտակ նվիրեց համառ հայրապետին:

Այսպե՛ս ծերունի հայրապետը պայքարեց և հաղթանակեց:

Հակոբ վարդապետը դարձավ ժառանգավորաց դպրոցի դասատու, և մինևույն ատեն դպրոցի հաշվապահ, որովհետև թվաբանության մեջ հմուտ էր: Տարիներ պաշտոնավարեց այնպես անձնվեր ու բարեխիղճ կերպով, որ վանքի վարչությունը վճռեց ուղարկել նրան Քիշինև, վերահսկիչ եպիսկոպոսին օգնելու վանքի մեծ ու հարուստ կալվածքները կառավարելու մեջ:

Երիտասարդ վարդապետը երեսուն տարեկան էր այդ ատեն:

Օդեսայում կանգ առավ՝ քաղաքը դիտելու: Երկրորդ օրը անցնում էր քովնտի մի փողոցով, երբ հանդիպեց մի երիտասարդ, գեղեցիկ կնոջ. երկուսի հայացքները առան իրար. գեղեցկուհին ժպտաց խորհրդով ու խոստումով, և կամացուկ անցավ, ստեպ-ստեպ գլուխը ետ շրջելով՝ հայացքի կախարհանքը պահելով միշտ վարդապետի վրա, որ մի պահ բևեռված մինևույն տեղում, դիտում էր նրան մտացրիվ, տարված: Աղջիկը մտավ պարտեզ և ծառերի միջից ձեռքով կանչեց վարդապետին. վայրկյանի մեջ նրա ողջ էությունը, հոգի ու մարմին, բռնկվեց մի բռնակալ ցանկությամբ—երթալ՝ գրկել, փաթաթվել այդ կնոջը ու քայքայվել, չէանալ նրա մեջ. այլևս նա բնագոյի տիրապետության ներքո էր. ոտքի ելած տարերային կրքերը սանձակոտոր նժույզների պես վար տապալելով կառապանին—բարոյական կամքը—տանում էին խլարշավ անդեկ կառքը՝ Հակոբ վարդապետին՝ անդունդե-անդունդ, քարե-քար զարնելով...

Վճիռ, պայքար, Թովմաս Ակվինացի—ամենքը թռել-փախել էին վախեցած թռչունների պես երիտասարդ կուսակրոնի հոգու վանդակից... և վարդապետը շփոթ քայլերով հետևեց աղջկան, առանց նայելու շուրջն ու առջևը, անցուդարձող մարդկանց... Նա տեսնում էր միայն հրապուրիչ, անպարտելի կնոջը, միայն նրան, որ ծառի տակ կանգնած փռել էր իր դիվական հմայքների ուռկանը, որի ցանցը չկարողացավ պատռել, անցնել մոլեգնացած վարդապետը:

Մտնեցավ աղջկան և չկարողացավ ոչինչ ասել, որովհետև կոկորդը այրող շնչից չորացել էր և սիրտը թրթռում էր սաստիկ, և ակոսները իրար էին տալիս ցանկության դողից:

Աղջիկը, դյուրօրէն ժպիտը շրթունքին, փաղաքուշ ձայնով ասաց.

— Դու ուզո՞ւմ ես ինձ, այո՞, որտե՞ղ ես ապրում. գնա՛, ես կուգամ...

Նա հազիվ արտաբերեց հյուրանոցի անունը, և աղոտ գիտակցութեան վերջին մնացորդ նշույլով ըմբռնեց աղջկան և շտապով գնաց հյուրանոց:

Սենյակը մտնելուն պէս, մի բաժակ ջուր առավ այրվող շրթունքներով և ընկավ բազմոցի վրա. վայրկյանները անցնում էին ծանր, դանդաղ. ժամանակը կանգ էր առել, քարացել: Բնագրով միայն խորհում էր նա, և ականջն ու աչքը դռանը հառած՝ սպասում էր աղջկա գալուն:

Երկու զգացում կովում էին նրա հոգում. ուզում էր, որ աղջիկը գա, իսկ մյուսն ուզում էր, որ չգա, մի բան պատահի և չգա: Վարդապետի համակրանքը թեև վերջինի կողմն էր, բայց իր կողմից չէր ուզում արգելք ստեղծել նրա գալուն. օրինակ՝ փախչել հյուրանոցից կամ դուռը գոցել, չբանար...

Սակայն դուռը բախեցին, կայծակի արագութեամբ մի միտք անցավ նրա պղտոր գլխով. — «Մի անգամ միայն մեղանչել, այս անգամ տեսնել արգելված պտուղի համը և ապա մինչև մահ քավել մեղքը»:

Աղջիկը թիկնոցը նետեց, գլխարկը հանեց, և հոլանի կրծքով ու թևերով կանգնեց վարդապետի առջև. այնպէ՛ս գեղեցիկ ու ժպտուն, նազանքի ամենահրապուրիչ ձևեր հագած, այնպէս ուրախ և այնպէ՛ս խորհրդավոր:

Մի անուշ բույր էր բխում, անուշ ու անծանոթ՝ աղջկա թարմ մարմնից և զգլխիչ ձևերից. մի ուրիշ տեսակ վարդի բույր, որ ծավալվում էր լոռի սենյակում, ստեղծելով մի կախարդ մթնոլորտ: Եվ վարդապետը այդ կախարդ մթնոլորտում, անճարակ ու շփոթ նայում էր նրան, և սակայն ո՛չ մի արտահայտություն չտալով տարիների մեջ զսպված ու հավաքված և հիմա շղթայագերծ եղած բուռն ցանկութեամբ:

Աղջիկը մի ոստումով նստավ նրա ծնկների վրա և քրքր-շուքայամբ շոյեց նրա դեմքը, մորուքը: Ամոթխած ու խոտվահույզ վանականը գաղտագողի, վախվիտելով սկսեց փախչալել աղջկա դեղին մազերը, ճերմակ ուները:

— Համբուրի՛ր ինձ,— ասաց աղջիկը,— մի՛ վախեցիր, հիվանդ չեմ...

Եվ ինքը առաջինը համբուրեց նրան. և նա էլ սիրտ առած համբուրեց աղջկա ճերմակ ուները, հոլանի թևերը...

— Ի՞նչ սիրուն, լավ երիտասարդ ես, առողջ, մաքուր... ափսո՛ս, ինչո՞ւ ես վարդապետ դարձել. խեղճ չե՛ս. գոնե ծերանայիր, հետո դառնայիր, ա՛խ, ափսոս չէի՛ր...

Եվ անկեղծ գորովով համբուրեց վարդապետի շրթունքները, ապա մորուքի հետ խաղալով, հյուսելով ու նորից քանդելով, շշմշում, փսփոսում էր նրա ականջին խոսքեր, որոնք կրակի կտորների պէս էին, որ այրում ու դողացնում էին երիտասարդ կուսակրոնի հոգին ու ոսկորները...

— Ես քեզ շա՛տ սիրեցի,— խոսեց նորից աղջիկը.— եթե այստեղ մնաս, ես քու սիրունիկն կլինեմ. մնացի՛ր, ես քոնը կլինեմ, մի՛շտ քոնը, մի՛շտ հավատարիմ...

Եվ ձեռքերը փաթաթելով վարդապետի պարանոցով, երկար ու կսկունձ համբուրեց նրա բերանը, և անուշաբույր մազերը արձակելով փոեց նրա կրծքի վրա:

Մի պահ լռություն իջավ. և վարդապետը մեքենաբար՝ մի խոսք ասելու համար, կամ իբրև պատասխան աղջկա տված հարցին՝ ասաց.

— Սիրունիկս, իսկ դու ինչո՞ւ չես ամուսնացել:

— Ինձ ո՞վ կառներ որ, ես աղքատ աղջիկ էի...

— Բեզ նման աղջկան միշտ կառնեին, մի՞թե աղքատները չեն ամուսնանում, ընդհակառակը, ավելի, քան հարուստները:

— Ճշմարիտ է թերևս... բայց, է՛հ, թողնենք, ի՞նչ խոսելու ժամ է, համբուրի՛ր ինձ, սեղմի՛ր ամուր, մի՛ ամաչիր, հանի՛ր այդ սև, հաստ հագուստդ...— և ականքը խորհրդով՝ նետեց մահճակալի վրա... Վարդապետի հարցասիրությունը վառվել էր. ստիպում էր, որ աղջիկը պատասխանե:

— Հետո՛, հետո՛, հիմա սեր անենք, հետո,— ասաց աղջիկը:

— Այո՛, ո՛չ. բայց դու ասա, ինչո՛ւ չամուսնացար, այդ-
քան գեղեցիկ. ափսոս չէի՛ր, երեխաներ կուճենայիր...

— Շատ լավ ես ասում, բայց... եթե ամուսնանայի, իմ աղ-
քատ ամուսինն հազիվ կարողանար պիտի պահել մեզ և մեր
երեխաները, հապա՛...

Եվ կտրեց ձայնը, հայացքը հատակին գամելով:

— Հապա ի՞նչ, ի՞նչ:

Աղջիկը դժկամ հարեց.

— Պատավ հիվանդ մայրս, այրի քույրս, որք երեխաները...
չէ՞ որ նրանք քաղցած կմեռնեին...

Վայրկյանի մեջ, կարծես, մի հզոր ձեռք խաղացրեց վար-
դապետի ցանկության հուզված ալիքները, սանձեց ու շղթայի
զարկեց ներքին դևը,— աղջկան հրեց մի կողմ, կանգնեց ու-
թի, ուղղելով հագուստն ու մազերը, դարձավ աղջկան.

— Ասա՛, ճշմարիտն ասա, իրա՛վ որ դու պահում ես քո
ընտանիքը:

Աղջիկը զարմացած և ոչինչ չհասկանալով վարդապետի
վարմունքից, վիրավորված ձայնով ասաց.

— Ուրեմն դու ինձ չե՛ս ուզում, չսիրեցի՛ր ինձ. շա՛տ լավ.
արձակիր գնամ...

— Ո՛չ, նստիր, խոսենք. ես քեզ շատ սիրեցի, միայն.
խնդրեմ, պատմի՛ր քո կյանքը:

Սեր և զույթ կար նրա խոսքերի ամեն հնչյունի մեջ. և իր
սիրով ու գթով լցված սրտին ելք տալու համար՝ մոտեցավ
աղջկան, գրկեց իսկույն, համբուրեց ճակատն ու աչքերը:

— Ես քեզ պես այր մարդ չեմ տեսել մինչև օրս. չէ՞ որ
հոգևորականներն էլ մարդիկ են, ճանաչում են շատերին, բայց
դու ուրիշ տեսակ ես:

Եվ սկսեց Աճճան, աղջիկը, ընդհատվող ճախադասու-
թյուններով խոստովանել իր կյանքը.— ծերունի, հիվանդ
մայր, աղքատ, անօգնական ընտանիք, առանց աշխատող այր
մարդու. քրոջ ամուսինը, գործավոր ծխախոտի գործարանում,

մեռավ թոքախտից. այրի քույրը երկու երեխա աղջիկներով
իրենց մոտն է, ինքն է պահում բոլորին, հինգ տարուց ի վեր.
Ինքը հիմա 24 տարեկան է, կարել գիտե, բայց կարը լավ չի
վարձատրվում. ինքն ասել է մորն ու քրոջը, որ ծառայում
է մի հարուստ սրճարան-ճաշարանում, ուր իրոք կանայք են
ծառայում. իբրև թե հյուրերը առատ «բարի ձեռք» են տալիս
(pour boire), և նա ճաշում և ընթրում է այնտեղ. բայց իրա-
կանի մեջ նա ծառայություն չունի այնտեղ, այլ ամեն օր, կես-
օրից սկսած, հաճախում է այնտեղ այրեր գտնելու համար,
որոնց հետ ճաշում է և վաճառում իրեն. իսկ եթե այնտեղ ծա-
ռայեր, չնչին վաստակ կունենար, իսկ այսպես ազատ է ամե-
նուրեք գնալու, մարդիկ որսալու, և այսպիսով այնքան լավ է
շահում, որ թե լավ է հագնվում, թե տունը լավ է պահում և թե
քրոջ երեխաներին ուսման է տալիս, որ վերջը իրեն պես
չփչանան. այո՛, գիտե, որ լավ բան չի անում, աստծուն հա-
կատակ է, հաճելի չէ այս արհեստը, որովհետև հաճախ շատ
վայրենի մարդկանց սեր պիտի ցույց տալ, բավարարելով նրանց
զգվելի կրքերը, բայց ի՞նչ անե, ուրիշ հնար չկա. ուրիշ բան
է, եթե ինքը մեծակ լիներ, ինքնագլուխ...

Եվ Աճճան իր հանցանքի վրա անգիտակից կերպով, իբրև
պարտականության վրա էր նայում, բայց երբեք զոհաբերու-
թյան իր կողմից, այլ բնական մի պարտք հանդեպ յուրային-
ներին, որ բխում է նույնպիսի բնական սիրուց և կարեկցու-
մից դեպի յուրայինները:

Լցվեցին արտասուքով վարդապետի աչքերը և սրբելով
արտասուքները, աղոթքի ձայնով ասաց.

— Օրհնյա՛լ լինես դու, քույր Աճճա, որովհետև բարի ես
գործում դու. առանց ցույց տալու աշխարհին, առանց սնա-
փառության. ծածկում ես ձերոնցից քո հանցանքը՝ նրանց ա-
վելի չդժբախտացնելու համար. բոլոր մարդկանց աչքին երե-
վում ես անբարո, վաճառվող, ստոր, բայց բարձր ես դու բո-
լորից, որովհետև սեր ունիս, զույթ ունիս, և զոհում ես քեզ
առանց գիտեցալու, ինչպես մեր տեր Հիսուսն է ասում՝ աջ
ձեռքը պիտի չիմանա ձախի գործը...

Եվ ձեռքը դրեց Աճճայի գլխի վրա, խաչակնքեց երեք ան-
գամ, ապա եղբայրական սիրով համբուրեց նրա ճակատը:

Անճային տարօրինակ թվաց նրա վարմունքը. պարզ հոգին չհասկացավ նրա խոսքերի իմաստը, միայն զգաց, որ գործ ունի մի ազնիվ մարդու հետ, աստծու մարդու հետ, և զսպելով ու թաքցնելով իր հրապույրները, գլուխը կախ ու խոնարհ՝ մրմնջաց համեստ ձայնով.

— Ուրեմն դու չես ասում ինձ, ներում ու խղճում ես ինձ... սուրբ մարդ ես դու, խնդրում եմ, աղոթի՛ր աստծուն, որ նա էլ ներե ու խղճա ինձ...

Եվ լալով համբուրեց նրա աջը:

Վարդապետը հուզված էր բոլոր սրտով և ուզում էր մեծակ լինել իր խոհերի հետ:

— Աղջի՛կս,— ասաց նա,— ես հարուստ և ազատ մարդ չեմ դժբախտաբար, որ կարողանայի ուզածիս չափ քեզ օգնել, հանել այդ ճանապարհից, թող աստված հասնի քեզ, մի դուռ բանա, իսկ այս փոքր դրամը վերցրու և երեխաների համար բաներ առ:

Եվ Անճայի բուռը դրեց մի հարյուր ռուբլիանոց թղթադրամ:

Անճան մերժեց ընդունել, բայց վերջը զիջեց նրա թախանձանքներին:

— Ես կուզեմայի տեսնել ձերոնց. բայց ինչպե՞ս. կարծեմ, անհարմար է:

Անճան աչքերը կենտրոնացրեց մի կետի. մտածում էր նա:

— Այո՛, հարմար չէ, բայց կարելի է. այսպես, դու եկ մեր տուն, իբրև սխալ հասցեով, մի մարդու անուն տալով. ես քեզ ներս կհրավիրեմ... լավ չմտածեցի՞. այսպես հարմար է. վաղը եկ. ե՛րբ կգաս...

Եվ տվեց իրենց հասցեն, սակայն վարդապետը ավելորդ գտավ այցելությունը:

— Եղբա՛յր, սիրելի՛ս, իսկ դու մինչև ե՛րբ ես այստեղ:

— Վաղը միայն, մյուս օրը մեկնում եմ անպատճառ:

Երբ Անճան, համբուրելով վարդապետի ձեռքը, ուզում էր բաժանվել, հանկարծ անզուսպ զգացումով ընկավ վարդապետի կրծքին և հեկեկաց. ապա նորից շրթները միացան անջատման երկար ու սրտագին համբույրով:

Երբ մեծակ մնաց Հակոբ վարդապետը, ընկավ բազմոցի վրա, գլուխն առավ երկու ավերի մեջ... Վանքի պատերից դուրս ինչե՛ր կան աշխարհում, ինչքա՛ն վիշտ ու կարիք, ինչքա՛ն ակամա մեղք ու չարիք— և բոլորը հացի համար. հանապազօրյա հացի համար ի՛նչ երկար գողգոթա, հանապազօրյա անպատիվ գողգոթա... և վայրագ արուներ փողի ուժով ավերում են մատաղ, սուրբ հոգիներ. զգվելի է. աշխարհը՝ անգույթ, չար և անիրավ. և կեղծավոր է աշխարհը և սուտ. և ամեն բան վաճառքի հանված. մի՞թե զուր հոսեց Քրիստոսի արյունը մարդկանց փրկության համար. նույն հին, հեթանոս աշխարհ— գերիներ, ստրուկներ, ողջակեզներ կոպիտ ուժի, կրքի, նյութի, ոսկու դիվական իշխանության ներքո. և ի՛նչ ենք մենք աղոթում, ինչո՞ւ համար, ո՛ւմ համար... Ու ընդոստ ոտքի կանգնեց, ապա ծնկի վրա ընկավ գետին և հայացքը ուղղելով հեռուն, տարածության մեջ, աղոթեց լալագին ու ջերմագին, ինչպես մինչև օրս չէր աղոթել.— նոր բառերով, ո՛չ նման եկեղեցում ձևած ու կազմված հինավուրց աղոթքներին:

— Աստված ամենակարող, ամենագետ, դո՛ւ ես ստեղծել այս աշխարհը իր մեղքերով, դո՛ւ ես ստեղծել իշխանին ու ծառային, բախտավորին ու զոհին, և դո՛ւ միայն գիտես, թե ինչո՛ւ ես ստեղծել. սակայն աղաչում եմ ես քեզ, սիրի՛ր, ների՛ր և արժանացրու այս աղջկան քո արքայությանը, բոլոր սրբերի դասի մեջ, որովհետև սա կատարում է քո պատվերը— սիրել ուրիշին, զոհվել, ողջակիզվել մերձավորի համար:

Արդար զոհ է սա, այս մեղավոր աշխարհի հանցանքները իր վրա բեռնցնելով. նա ընկնում է, որ ուրիշը բարձրանա, նա փրկում է ուրիշների կյանքն ու հոգին, իրենը աղտի մեջ մխրճելով:

Նա բարձր է բոլոր հարուստ կանանցից, որ ամեն դյուրություններ ունեն առաքինի լինելու: Նա բարձր է պաշտված սրբերից, որոնք եսական նպատակ ունեին ջանալով իրենց սուրբ պահել. և ների՛ր ինձ, և ո՛ւժ տուր այսուհետև չսայթել քո ճանապարհից...

Աղոթքից հետո մի քիչ հանգստացած ընթրիք ուզեց և վաղ անկողին մտավ. և մութի մեջ խորհում էր այս նշանակալից օրվա մասին, խորհրդով լի մի ապրում, որի շնորհիվ հնար ունեցավ տեսնել ուրիշի հոգին, և աշխարհի իսկական պատկերը:

Կամ պետք է օգնել, փրկել ոտքերի տակ ընկած մարդկանց, կամ, եթե անգոր ես այդ անելու, գնա՛, քաշվիր վանքը, որ գոնե դու ևս անգիտությամբ ոտքի տակ չառնես թշվառ, զոհված արարածները:

Եվ վանքի պարիսպները թվացին նրան ամուր ամբարտակներ աշխարհի պղտոր հորձանքների առջև:

Եվ տենչում էր վանքը վերադառնալ, որքան կարելի է շուտով:

Կեսօրվա ճաշից առաջ Աճճան հյուրանոց եկավ՝ ձեռքին ծաղիկների մի փուռը. նվիրելով փուռը վարդապետին և համբուրելով նրա ձեռքը, ասաց.

— Ների՛ր, որ եկա, չէի կարող չգալ. ընդունի՛ր, խնդրեմ, այս ծաղիկները, որիշ ավելի լավ բան չունեի նվիրելու:

Վարդապետը շնորհակալությամբ ընդունեց ծաղիկները:

— Սիրելի եղբայրս, գիշերս բոլորովին չքնեցի, լալիս էի շարունակ... մտածում էի իմ մասին. մեծ մեղք եմ գործում, բոլորովին կորած մեկն եմ ես. մտածում էի նաև քո մասին. սիրում եմ քեզ, ո՛չ, պաշտում եմ քեզ. փրկի՛ր ինձ, ես աղբանոցի մեջ եմ ընկած, հանի՛ր ինձ այնտեղից, այս ճահճից...

— Բայց դո՛ւ այս ծաղիկների նման ես, աղջիկս, և մանավանդ այն շքեղ ծաղիկների նման, որ բուսում են աղբի ու ճահճի մեջ, և որոնց մաքրությանն ու սրբությանը չի հասնում գարշանքը. քո հոգին բարձր է, գեղեցիկ ու անուշաբույր, և այս աշխարհի աղբը չի հասել քեզ և չի հասնի:

— Ո՛չ, եղբայր, այդ գեղեցիկ խոսքեր են, խնդրում եմ՝ փրկի՛ր ինձ:

— Ինչպե՛ս, աղջիկս, ասա, ինչպե՛ս կարող եմ քեզ փրկել. ես աշխարհի գործերը լավ չեմ հասկանում:

Աճճան աչքերը խոնարհեց, չէր վստահում իր խորհուրդը հայտնել. ակներև տագնապի մեջ էր:

— Ասա՛, սիրելիս, ասա՛, եթե մի բան գիտես:

— Ես այսպես եմ մտածել, սիրելի եղբայրս, եթե ունենամ մոտ 400 ուրբի միանգամից, մի երկու կարի մեքենա կառնեմ, արհեստանոց կբանամ, քրոջս և ուրիշների հետ կաշխատեմ և անպատճառ կշահեմ, հետո պարտքս կվերադարձնեմ, երկվում եմ...

Վարդապետը մի պահ մտածելուց հետո ասաց.

— Ծա՛տ լավ, ես քեզ կհասցնեմ այդ գումարը Քիշինևից, հիմա անկարող եմ:

Ապա այդ միտքը շա՛տ ոգևորեց նրան, և մի քանի անգամ հաստատեց իր խոստումը:

Աճճային ճաշի պահեց իր մոտ, հետո եղբոր պես համբուրելով, նրան ճանապարհ դրեց, և ինքը առավոտ վաղ մեկնեց:

Կարճ ժամանակից հետո՝ ձեռք բերելով այդ գումարը, ուղարկեց Աճճային:

Աղջիկը բացեց արհեստանոցը և սկսեց աշխատել. շարունակ տեղեկություն էր տալիս իր գործի մասին և միշտ խնդրում էր նրան, որ աղոթքներում չմոռանա մեղավոր Աճճային:

Հակոբ վարդապետը անպատճառ փափագում էր վանք դառնալ. վանքը գիշեց նրա խնդիրքին:

Մոտ մի տարի նա Քիշինևում էր. Աճճան արդեն կարողանում էր կար անելով ընտանիքը պահել. նա շա՛տ էր ուրախանում այդ հաջողության մասին Աճճայից լուրեր առնելով. և միանգամայն իր վայրկեական սայթաքումն էլ քաված էր համարում, որովհետև պարզ տեսնում էր նախախնամության մատը այս դիպվածի մեջ՝ մի հոգի փրկելու համար:

Էջմիածին վերադարձին այցելեց Աճճային, նրանից նվեր ստացավ մի ասեղնագործ բարձ. և հրաժարվեց տված փողը

ետ առնել՝ խնդրելով, որ ծախսե հիվանդ մոր և երեխաների համար:

Վերադարձավ վանքը և սկսեց իր բազմազբաղ կյանքը, որ տևեց մինչև մահվան օրը: Աճառայի Եվհիրած բարձը գլխի տակից երբեք չհեռացրեց, և այդ բարձի վրա, երազին, տեսնում էր գեղեցիկ աղջկան, որ մի օր տակնուվրա արավ նրա բարոյական կամքը, միևնույն ժամանակ թե՛ կոելով նրան և թե՛ բանալով մի լուսամուտ իրական աշխարհի վրա:

Միաբան եղբայրների հետաքրքիր հարցերին բարձի ծագման մասին, նա տալիս էր խուսափուկ պատասխան՝ թաքցնելով բոլորից իր միակ գաղտնիքը:

Եվ սակայն մինչև իր կյանքի վերջը, ամեն աղոթքի մեջ հիշատակում էր Աճառայի անունը և աղերսում աստծուց, որ ներե նրա հին մեղքերը և բոլոր անճանների կամա-ակամա գործած մեղքերը, որ այս հոռի աշխարհը հարկադրում է նրանց՝ ուրիշների փրկության և հաճույքի, իսկ իրենց կորստի և տառապանքի համար:

1923

Ա

Մենք ընկերական մի սերտ խմբակ էինք, տասնմեկ պատանիներ. հասակակից, 18—19—20 տարեկան:

Մեզանից մի քանիսը սիրահարված էին, բռնկված՝ մարխիպես: Մնացածներից մի քանիսն էլ կարծում էին, թե՛ սիրահարված էին, որոնց մեջն էի և ես: Այնքան լցված էր մեր սիրտը երազով ու զգացմունքով, որ սիրո որոշ առարկա չունենալով իսկ, սիրահարված էինք համարում մեզ:

Այսպես պարզվեց մի օր այդ ինքնապատրանքը:

Մեր ընկերական, պարբերաբար կրկնվող «քեֆերից» մեկը տեղի ունեցավ Աղեքսանդրապոլից մոտիկ Մարմարաշեն գյուղի ձորում, Ախուրյանի ափին:

Հուլիսի սկզբներին, ֆուրգոնով, պաշարեղեններով, և դավուլ-գուռնայով վաղ առավոտից, գնացինք Պահլավունի իշխանների գյուղը:

Գետի ափին, օջախներ վառած՝ խորոված էինք շինում, ձուկ խաշում, հավ տապակում:

Դղրդում էր դավուլ-գուռնան, և ձորը պոռնկե-պոռնկ լցված էր հուժկու արձագանքներով:

Ուտում էինք ու խմում, երգում էինք ու գոգոռում, պարում էինք առանձին ու խմբով:

Իրար անվերջ գրկում էինք ու համբուրում, իրար անվախճան ու ընկերական սեր ու անձնագոհություն ուխտում:

Մեր թամադան էր մեզանից ամենաերեցը, Գասոյենց Մարտինը, Գասոն, որ մի անուշ տղա էր:

Գասոն առաջարկեց առաջին կենացը: Առաջին կենացը Հայաստանի ազատության համար էր, հեղափոխության համար...

Ախ, այդ անգին ընկերներից քանիսը, հետո ապագայում,

իրենց գլուխը դրին այդ ճանապարհի վրա: Ո՛ր են հանգչում հիմա նրանք. ո՞ր քարի տակ, ո՞ր ձորում—անգերեզման, անհիշատակ...

Ծնկաչոք խմեցինք հայրենիքի ազատության կենացը. խմեցինք աղաղակներով, ձորը թնդացնելով ատրճանակների հարվածներով:

Վառված սրտերից թափվեցին վառվռուն ճառեր:

Ընկերներից մեկը վերջացրեց իր ճառը այս բառերով.

«Հայրենիքի համար զոհվելը երկնառաք երջանկություն է»:

— Երկնառա՛ք, երկնառա՛ք... Տո՛, որտեղի՞ց ես սովորել էդ խրթին գրաբարը...

— Տո, երկնառաք, հավի քուռակ, մարդավարի խոսեիր, չեղճեիր խայտառակ...

Ամեն կողմից ծաղր ու ծիծալով թափվեցինք խեղճի վրա:

— Դեհ լավ, դեհ լավ, հերիք վրա կախեք,— միջամտեց թամադան:

— Տո՛, այ օղուկներ, Ռաֆֆի չե՞ք կարդացել... Գարին ձեր առաջից ինչո՞ւ իմ առաջը կոնեք...

Թեև արդարացավ իմ ընկերը, բայց մինչև վերջը իր մականունը մնաց «երկնառաք». վերջը ինքն էլ ստիպված եղավ այդ ընդունել, և հեղափոխական նամակների տակ միշտ ստորագրում էր «Երկնառաք»:

Երկրորդ կենացը մեր «իդեալների» համար էր: «Իդեալ» ասելով հասկանում էինք մեր սիրած աղջիկներին:

Կենաց առաջարկողը պահանջեց, որ ով ունի իր «իդեալի» լուսանկարը, հանե դնե սեղանի վրա, որ ամենքս էլ «նրանց» ուխտեինք ասպետական սեր և անձնվիրում, և հոգով երկըր-պագեինք «նրանց»:

Մի քանիսը ունեին լուսանկարներ, մյուսներս չուներինք:

— Ո՛ր են ձեր «իդեալների» պատկերները:

— Չուներնք:

— Տո՛, հիմարներ,— ձայնեց քաղցրությամբ և հանդիմանաբար մեր ընկերը,— էդ ինչպե՞ս սիրահարված եք, որ մի պատկեր էլ չեք կարողացել ձեռք բերել, վա՛յ, ամոթ ձեր տղամարդությանը...

Մենք մնացինք անպատասխան:

— Դե՛հ, անուցներն ասացեք:

Անուցներ...

Վրա տվինք բազմաթիվ անուցներ:

— Էդ չեղավ, չեղավ. ամեն մեկը թող իր սիրածի անուցը տա:

Պարզվեց, որ չուներինք միակը, միահատիկ, մեր սևեռածը:

Պարզվեց, որ մեր սերը տակավին թափառական է, անկեղրոն հաժում է օդի մեջ...

— Մյուս անգամին,— միջամտեց Գասոն,— առանց հաստատ, որոշ սիրահարված լինելու, էլ քեֆի չգաք: Աստված վկա, ամոթ է, երիտասարդ լինել և չուներնալ ոգևորության աղբյուր, իդեալ, բևեռային դեկավար աստղ և սրբություն սրբոց ..

Հանդիսավոր կերպով ասաց նա, և մենք, մեր գինովի գլուխները կախած, լսում էինք մեծ ընկերոջ վեր խրատին:

Սկսեցինք խմել մեկ-մեկ մեր ընկերների «իդեալների» կենացը և երդվել նրանց ստվերին ու անուցին:

Այս անգամ աղմկահույզ զուռնաների փոխարեն նվագում էին մեղամաղձիկ փողերը՝ թունդ սիրահարվածներից գլուխները քովը նստած ընկերների կրծքին և ուսին դրած՝ երեխայի պես հեկեկում էին...

— Իմ «իդեալս», հոգուն մեռնեմ, տղերք ջան, մի տեսեք, տեսեք, արևի պես կփայլե...—Օլիկն էր ձայնողը, մեր միջից ամենից խենթը,— խոսք տվեք, որ ինձ պես սիրեք նրան սրբությամբ, մեռնելու չափ...

Եվ պատկերը շրթներին տարավ, բայց չդիպցրեց, բայց չհամբուրեց, չհանդգնեց համբուրել: Լավ էի ճանաչում նրան, թե մտերիմ ընկեր էի և թե ազգական: Գիտեի, որ սրբապաշտություն է համարում համբուրելը... Համբուրել նյութական է, մարմնական է, նա հոգևին էր սիրում, պլատոնական, գաղափարով, վերացական: Պաշտամունք, կրոն, երկյուղածություն, աղոթք—ահա նրա սիրո էությունը:

Օլիկը պաշտածի պատկերը սեղմեց սրտին, ապա բռնեց աչքերի առջև և երեք բաժակ գինի, առանձին, խմեց նրա կենացը:

Հետո փաթաթեց պատկերը թղթերի մեջ և դրեց ծոցը, սրտի վրա:

Սիրահարվածները ցույց տվին, որ իսկապես սիրահարված էին: Ինչ ձևեր ասես, որ չարավ նրանց զգացումների զեղումը... գրկում էին մեզ, զուռնաչիներին, համբուրում էին ոչ միայն զուռնաչիներին, այլև զուռնաներն ու փողերը:

Մենք, չսիրահարվածներս, նախանձում էինք նրանց «գերբնական» վիճակին:

Բայց Օլիկը, հավատարիմ իր անզուսպ բնույթին, ամենից բուռն ու գլուխ կորցրածը եղավ մյուսների միջից:

Զգացումների հորդույթունից տարված՝ հանգիստ ու հոգ-նույթուն չուներ: Վազում էր, ցատկում էր, երգում էր, գոռում էր, ձեռքն ընկած ամեն իր համբուրում էր, ճառում էր, գառանցում էր, — և նորից չէր սպառում նրա ոչ հոգեկան, ոչ նյութական ուժը: Ոչ հոգին, ոչ մարմինը:

— Օլիկը կխելովի (խելագարվել), գլուխը ջո՛րը կոխեք, — հրամայեց Գասոն, փորձված թամաղան:

Գրկեցինք Օլիկին և գլուխը մի քանի անգամ մխրճեցինք Ախուրյանի պաղ ջրերի մեջ:

Երբ քաղաք վերադարձանք, ես և մի ուրիշ ընկեր Օլիկի թևն անցած՝ ուզեցինք տուն տանել, որովհետև շատ հարբած էր: Բայց չուզեց տուն գնալ:

Մի քանի անգամ, մթնոթյան մեջ, անցանք նրա սիրածի տան առջևով:

Օլիկը շքնջում էր երկյուղածորեն.

— Ահա՛, նրա լուսամուտն է, սուրբ խորանը...

Եվ գնաց համբուրեց պատը:

Ապա հանկարծ մեզնից պոկ գալով՝ բակի բաց դռանը բռունցքով հարվածեց. մի փոքրիկ շուն հաչելով վազեց դեպի դուռը: Օլիկը գրկեց շանը և փախավ:

Հետևից ընկանք և բռնեցինք նրան:

Տեսնելու բան էր, թե ինչպիսի գորովով համբուրում էր վնգստացող շան դունչն ու մոուրթը:

Մի կերպ Օլիկի գրկից ազատեցինք շունը և դռնից ներս ձգեցինք:

Վերջապես, մինչև ուշ գիշեր, գինետունից գինետուն թափառելուց հետո, նորից եկանք նրա սիրածի տան առջևը: Գերաններ կային հանդիսակաց տան պատերի տակ երկարած:

Գրեթե մինչև լույս անցրինք այդ գերանների վրա, կեսքուն, կես-արթուն, հսկելով Օլիկի վրա, որ մի անհեթեթ բան չանե:

Բոլորս գիտեինք Օլիկի սերը, բայց ես ավելին գիտեի: Գիտեի, որ այդ սերը մի տեսակ անիվ էր պարապի մեջ դարձող: Օրիորդը անգիտակ էր նրա սիրուն:

Ստեպ-ստեպ օրիորդի պատուհանի տակից անցուդարձով, կամ փողոցում պատահելիս սիրազեղ ու վշտոտ ակնարկներ ցետելով՝ Օլիկը չէր կարողացել միամիտ օրիորդին իր սիրտը թափանցել տալ:

Անկարելի էր նամակ ուղարկել օրիորդին. նահապետական հոր ձեռքը պիտի հանձներ թղթատարը ամեն նամակ, անպատճառ:

Այդպես էր այն ժամանակ մեր քաղաքի բարքը:

Մնում էր, որ մի ընկերուհու միջոցով հաղորդեինք պարագան, սակայն, այդպիսին դեռ չէինք գտել:

Օլիկը լուսանկարը ձեռք էր բերել լուսանկարչի խանութից: Գնե՛լ էր արդյոք, ազգականի անվան տակ այդ նկարը, թե՛ «թոցրել» (գողացել) — չեմ հիշում, որովհետև մեծ մասով այդպես էին ձեռք բերվում թանկագին նկարները, և կամ երբեմն մի ազգականի այրոմից ծածուկ հանելով...

Իհարկե, կային սակավաթիվ բախտավորներ, որ իրենից հենց օրիորդի ձեռքից ստացել էին:

Օլիկը այդ բախտավորներից չէր, և այսպես, չարաչար, կրակված ու խեղճացած, տանջվում էր խեղդը:

Մեր այս քեֆից հետո՝ Օլիկին այլևս չտեսանք մեր մրջտական ժողովատեղում: Լսեցինք, որ նա ուրիշ մի խումբ է գտել, քաղաքի հասարակ դասի քեֆ անող տղաներ, և նրանց հետ կատաղի քեֆեր է անում օր ու գիշեր:

Մի երկու օր էլ անց՝ առավոտյան քաղաքում բոթ ընկավ, թե Օլիկը իրեն սպանել է, հին գերեզմանատանը, քաղաքային պարտեզի վերևը, այնտեղ, ուր հաճախ հավաքվում էինք:

Սարսափած ու ապշած՝ վազեցի գերեզմանատունը:

Հեովից տեսա մարդկանց մի սև բազմություն. նրանց մեջ որոնեցի ընկերներին:

Աչքերին առջև պարզվեց մի զարհուրելի պատկեր...

Օլիկը փոված էր գետնին, մեջքի վրա, գլուխը գառիվայր կախված, ձեռները տարածված, սարսափելի ատրճանակը աջ կողքին, արյունը հոսել էր ճակատից և լերդացել գետնի վրա: Գլուխը սև-կապուտակել էր, ամբողջապես:

Երբ աչքերս վեր առա զարհուրելի տեսիլից, նայեցի շուրջս—սև կապույտ էր դարձել շուրջս:

Եկավ ծերունի հայրը երկու մյուս որդիների հետ:

Սարսափելի է վերհիշելը և անկարելի պատմել այն, ինչ որ տեսա:

Հայրը եկավ, աչքերը արյունով լի, խենթացած: Աճհնար էր նրան ճանաչելը:

Եղբայրները անզուսպ լաց էին լինում, երկու ձեռքով գլուխներին հարվածելով:

Մարդկային ուժերից վեր էր ականատես լինել այս թշվառությանը:

Հայրը արյունոտ աչքերով նայեց, նայեց որդուն, և բերանը բացեց.

— Լավ եղավ, օ՛խ, լավ եղավ, մեռա՛ր, անհիծվես դու. էդպես, մեռի՛ր, քեզ պես որդին հեշ չունենայի, անունդ կտրվի, ինչպես որ կտրվավ...

Ընկերներով գրկեցինք վշտից խելագար հորը, կառք դրինք, տարանք տուն:

Մյուս օրը, ես թշվառ հոր և փեսայի հետ մինևույն կառքում նստած հետևում էի Օլիկի հուղարկավորությանը:

Ընդհանրապես լուռ էր նա և գլուխը կրծքին հենած՝ ծանր շունչ էր քաշում— ծանր-ծանր, ամբողջ մարմնով, միայն եր-

բեմն աչքը հատելով որդու դագաղին՝ չորացած շրթներով, գրեթե անլսելի անհիծում էր նրան ու հայհույում...

Հասանք գերեզմանատուն:

Հայրը կանգնել էր երկու որդու միջև, աչքերը առանց թարթելու բևեռած ողբալի որդու վրա:

Թվում էր, որ բախտից դառնապես հարվածված ծերունին չէր ըմբռնում ահավոր իրականությունը:

Փեսան շշտալով ասում էր ինձ.

— Դու Օլիկի ընկերն ես, կգիտե՞նաս նրա հիմարության պատճառը... Ախր, ինչո՞ւ էր անաստվածությունը գործեց... Խեղճ հայրը կխելագարվի, չի դիմանա: Դու նրա հայրությանը- ներին ու անեծքներին ուշք մի դարձրու. դա սրտի ցավից է...

— Չգիտեմ,— ասացի ես,— ինձ համար էլ անհայտ է: Մի քանի օր առաջ իրար հետ քեֆ էինք անում. այնպես ուրախ էր... Աճհասկանալի է: Գաղտնիքը հետը տարավ:

Ես չուզեցի ասել, թե գուցե անպատասխան, անհույս սիրո հետևանք էր, կամ խենթ, բուռն սիրո:

Չգիտեմ ինչո՞ւ չուզեցի ասել:

— Ա՛խ, այդ քեֆերը... Վերջերս չորս օր տուն չեկավ, օր ու գիշեր: Խեղճ հայրը տեղն իմանալով գնաց, բարկացավ վրան, ուզեց տուն բերել, չեկավ... Խեղճ ծերունին էլ անհիծեց, հեռացավ: Կարելի է այդ է պատճառը... Բայց մի՞թե դա է պատճառը: Բնական է, որ հայրը պիտի խրատե որդուն... Լոթիների հետ քեֆ, օր ու գիշեր. քաղաքի հայտնի տան տղա...

Թաղման կարգը կատարվեց, վերջացավ և Օլիկի վրա դիզվեց հողաթումբը...

Հուղարկավորները մեկ-մեկ եկան հորը «Դուն ապրեսի և հոգով մխիթարվեսի» և քայլ առան դեպի քաղաք:

Մնացինք մոտիկներս:

Հայրը նստել էր մի շիրմաքարի վրա, գունատ, հուսահատ, կորած, մոլորված:

Տեսնողի սիրտը կտրտվում էր: Լուռ էր նա, լուռ էինք բոլորս: Այսպես անցավ մոտ մի կես ժամ:

Ծերունին նայեց, որ ժողովուրդը հեռացել է, և մնացածներս էլ սպասում ենք իրեն ոտքի կանգնելուն...

Եվ հանկարծ ձեռքով ամուր զարկեց գլխին...

— Ա՛խ, ա՛խ, ի՞նչպես տուն երթամ ես...

Փորձեց ոտքի կանգնել, բայց ծնկները դողացին, և ընկավ քարի վրա: Որդիները լալով գրկեցին հորը և մտան նրա անութների տակ: Ծերունին մի երկար և հոգեքաղ հայացք ձգելով որդու գերեզմանին, մեռածի պես փուլ եկավ որդիների վրա...

Մեք հետիոտն ճանապարհ ընկանք դեպի քաղաք:

— Է՛հ, ինչ եղավ, մեռնողին եղավ, որ ծաղիկ հասակը սև հողերին հանձնեց... Ո՛ւմ ինչ. վաղը անուճը տվող չի լինի,— ասաց մեկը մեր միջից:

— Չէ՛, ինչ եղավ, հորն եղավ,— պատասխանեց մի ուրիշը,— մեռնողը մեռավ, գնաց... ճշմարիտ է, ընկեր, բարեկամ, նույնիսկ եղբայր, կմոռանան, բայց հա՛յրը... Աստված հասնի նրան:

Գիշերը խեղճ ծերունին կաթվածահար եղավ:

Իսկ Օլիկի թաղման յոթնակին թշվառ հորը թաղեցինք չանիծված, բայց անհունորեն սիրած որդու կողքին...

Երևանի բանտում, իմ խցի պատուհանի տակ, ընդարձակ պարսպած բակի մեջ, օրը երկու անգամ պտույտի էին հանում հանցավորներին:

Նրանք ադրբեջանցիներ էին, մեծ մասով երիտասարդ տարիքի, գլխավորապես գյուղացիներ:

Նրանց միջից աչքի էին ընկնում ոտները շղթա զարկած հանցավորները— առողջ, ուրախ-զվարթ տղամարդիկ:

Նրանք ծիծաղով, բարձր խոսելով, խումբ-խումբ, անցուդարձ էին անում և մի առանձին պարծանքով թափահարում էին ծանր շղթաները, որ ավելի ուժով շտապեցն:

Սա իրենց փառքն էր ու մեծությունը— շտապող շղթան:

Քանիսները վիրավորված բողոքել էին բանտի վարչությանը, երբ սա հապաղել էր շղթային արժանացնել նրանց: Ամոթ է, չէ՛: Ինչո՞վ են պակաս իրենք մյուս իգիթներից: Չէ՛ որ սա արհամարհանք է, անպատվություն է իրենց քաջագործությունների հանդեպ: Հայրենի գյուղում եթե լսեն, ի՞նչ պիտի ասեն... Մի՞թե հավի գողեր են նրանք, ի՞նչ է: Եվ կոր գլուխները բարձրացրել են հպարտությամբ, երբ ծանր երկաթները կախվել են հաղթ ազդրերից:

Ի՞նչ մեծ հաճույք է շղթաների այս առնական շտապը: Նրանց երևակայությամբ՝ այս պանծալի շտապը հասնում է մինչև իրենց հայրենի բարձր սարերը և մթին անտառները, իրենց սխրալի գործերի վայրերը, և լցնում դուռ ու երդիկ, ձոր ու արահետ՝ իրենց քաջագործությունների գովքով ու համբավով:

Թափառաշրջիկ աշուղները հանդեսների մեջ երգում են խանդավառ՝ իրենց շղթայակապ քաջերին: Նրանց հայրերն ու մայրերը պարծենում են իրենց կտրիճ որդիներով: Պատանիները ոգևորվում են նրանց անունով: Աղջիկները երագների

մեջ լսում են այս շառաչը, որպես իրենց տենչացած իգիթ-
ների հաղթանակի երգը:

Անվանի ավազակներ էին նրանք՝ քարավան կտրած, պե-
տական փոստը կողոպտած:

Բեկերի և աղալարների դեմ հողի ու ջրի համար վրեժ-
խընդիր իրավատերեր էին, իրենց իսկ ձեռքով դատաստան
արած:

Միրո հերոսներ էին նրանք, սիրած կանանց համար ար-
յուն թափած:

Բայց այդ տղամարդկանց մեջ մեկը կար, որ ամենից շատ
գրավել էր իմ ուշն ու զգացմունքը:

Մոտ երեսուն տարեկան մի երիտասարդ էր նա, բարձրա-
հասակ՝ անտառում բուսած եղևնու նման և եղևնու նման
ճկուն: Եվ խոր ու մթին աչքերով քարանձավների խորությամբ
և մթության նման:

Բայրամ Ալին:

Միշտ մեռակ, միշտ մոայլ, միշտ ինքնամփոփ, շրջում
էր նա, անտարբեր ընդհանուր եռուզեռից, անտարբեր շղթա-
ների բարբարոս կշռույթին (ոխիմիմ):

Ո՞վ էր նա, ի՞նչ ուներ նա այս ինքնագոհ ոճրագործների
մեջ: Մի բացառություն,— քանի որ բնավ նման չէր մյուսնե-
րին:

Բացառություն...

Անվերջ դիտում էի նրան և շատ էի փափագում իմանալ
նրա կյանքի վեպը:

Իմ բանտարգելության մասը բաժանված էր քրեական
ժանր հանցավորների մասից: Ես իրավունք չուների հարաբե-
րություններ ունենալ ուրիշների հետ, բացի այն հասարակ
բանտարկյալներից, որոնք ծառայություն էին անում բանտում
և ազատ ելումուտ ունեին ընդարձակ բանտի ամեն կողմերը:

Սրանք թեթև հանցանքներ գործած տղաներ էին, որ մի
երկու ամիս բանտում դեգերելուց հետո լույս աշխարհ էին
ելում, մի երկու ամիս հետո նորից վերադառնալու համար,
նորից չնչին հանցանքներով: Սրանց մի ոտը դուրսն էր, մյու-
սը՝ բանտում:

Այս տղաներն էին ինձ հաց, ջուր, թեյ բերողները, և սրանց

միջոցով էին տեղի ունենում հարաբերությունները իմ և շղթա-
յակապների միջև, որոնք ինձ շատ էին հարգում իբրև կար-
դացվոր մարդու, իբրև «իրան, թագավորի դեմ կովող ջահել
իգիթի» և դրսից ստացած իրենց ուտեստներից ինձ մաս էին
ուղարկում այդ տղաների միջոցով:

Այդ տղաներից կարողացա իմանալ նրա անունը և դա-
տավճիռը՝ ենթարկված տաժանակիր աշխատանքի:

Մի անգամ մի նոր թուրք ծառայող ունեցա, մի աչքաբաց,
շատախոս տղա:

— Բյարիմ ջան, կարո՞ղ ես ինձ Բայրամ Ալու մասին տե-
ղեկություններ հավաքել. ո՞վ է նա, ի՞նչ է արել,— խնդրեցի
նրան մի ափ ծխախոտ ցվիրելով:

— Աղմաղանցի Բայրամ Ալի՞ն, ո՞վ չի ճանաչում իգիթ
Բայրամ Ալուն: Ափսո՛ս տղամարդ, կնկա փորձանքի ընկավ:
Ես քեզի, ախպեր ջան, կպատմեմ իրիկունը, երբ ոտը ու ձեռը
կտրվի, բանտը քուն մտնի:

Անհամբեր սպասում էի մութն իջնելուն:

Երբ բանտը քուն մտավ, հանդարտվեց ամեն կողմ, թուրք
պատանին եկավ մոտս: Ականջս դրեցի խցիս այն դոնակին,
որտեղից կերակուր էի ստանում, և պատանին ականջիս մեջ
շշնջում էր Բայրամ Ալու կյանքի վեպը:

— Բայրամ Ալին, ախպերս որ դուն ես, մեր Աղմաղանու
սարերիցն է, կտրի՞ն տղա, քաջ որսկան: Եղավ, որ աչք քցեց
իրանց գեղի հարուստ Մեհդի բեկի մեկ հատիկ, սիրուն աղջը-
կա վրա՝ Մահնուր խանումի, աղջիկն էլ՝ Բայրամ Ալու վրա:

Բեկը չուզեց աղջիկը նրան տալ:

Բեկը հարուստ էր, անհաշիվ ոչխարի, տավարի, ձիու տեր,
Քայրամ Ալին՝ աղքատ, սարի որսկան, «Բիր տաշ, բիր բաշ»
(մի քար, մի գլուխ):

Բայրամ Ալին խոսք մեկ արավ աղջկա հետ ու մեկ գիշեր
էլ աղջկան փախցրեց, տարավ սարը: Մեհդի բեկը առավոտ
կանուխ ախպոր տղաներին ու խոլամներին առավ, ինքը տղա
չուներ, ընկավ Բայրամ Ալու հետևից, ուխտ կապելով, որ
Ալուն կտոր-կտոր անե, աղջիկը ետ բերե:

Աղմաղանու սարերի վրա կովի բռնվեցին, Բայրամ Ալին
աղջիկը պահեց քարերի հետևը ու ձեռեց.— Գնացեք տներդ,

ա՛յ ախպերներ, ա՛յ մուսուլմաններ, զուր ինչի՞ն՝ արուն թափենք-
աղջիկն իմս է, ես՝ աղջկանը, սեր ունեցի՞նք իրար վրա:

Բեկը չլսեց: Կրակ բաց արին:

Բայրամ Ալին երեք հեղ էդ խոսքն ասավ, նորից լսող
չեղավ: Էն ժամանակ Բայրամ Ալին ասավ.— Մեղքը ձեր վի-
զը, պարտական մնաք ալլահի և փեյղամբարի առաջ:

Բայրամ Ալին երևելի նշան բռնող էր. խնձորները ծառի
վրայից մեկ-մեկ կթոցներ, մթանը ճրագը վառեիր, դնեիր քա-
րի վրա, գլուխը կուտար, կմարեր ճրագի բոցը, ճրագամանը
մագի չափ տեղից շշարժելով: Էդպես հնարքով մարդ:

Նշան առավ ասելով. թե՛ կթոցենմ բեկի փափախը ու
թոցրեց փափախը: Խրատ չեղավ: Կրակ էր, որ թափեցին, կրակ
էր, որ թափեցին Ալու վրա: Ճարը կտրած իգիթ Ալին զարկեց,
վիրավորեց խուլաններից մեկին: Էլի խրատ չեղավ: Արունը
կոխել էր բեկի աչքերը: Էլի կրակ բացին, Բայրամ Ալին էս
հեղին տվեց սպանեց բեկի ախպոր տղին... Բեկը տեսավ, որ
բանը բուրդ է, խուլանների հետ պուկ եկավ, փախավ: Փա-
խավ, իրան քցեց ոռու դազախների քովը: Դազախները եկան
կովի տեղը: Հիմի արի տես, որ Բայրամ Ալու ոտքին էլ գլուխ
էր առել, ոսկորը փշովել. չէր կրցել իգիթը փախնել: Դազախ-
ներն Ալուն բռնեցին ծեծելով, ծեծելով տարան քաղաք, տվին
իշխանության ձեռքը:

Ալին բռնվելուց ասավ աղջկան.— «Այ Մահնուր խանում,
իմ աչքի լույս, ինձի գնջիլ պիտի զարկեմ, Սիբիլ պիտի քշեն:
Ալլահի, փեյղամբարի անունով երդում կուտամ ու երդում կառ-
նեմ՝ հավատարիմ մնաս ինձի ու քու սերին, մարդու չերթաս:
Ես գինջիլներ կկտորեմ, ուրտեղ էլ որ ըլնիմ, ուշ թե կանուխ՝
թոնիմ, կուգամ»:

Աղջիկն ալլահի ու փեյղամբարի անունով երդում կերավ:
Ռուսները դիվան ցատան ու Բայրամ Ալու ձեռքն ու ոտքը
զնջիլ զարկեցին, քշեցին Սիբիլ:

Աշըղները խաղ կապեցին Ալու վրա,— ու ամեն մարդ կա-
սեր էդ խաղը: Ես էլ ասեմ, լսե, ախպեր ջան:

Ե՛վ Քյարիմը ցած ձայնով երգեց.

Սարի ամպը գոռու-գոռու կը գռա,
Բայրամ Ալին սարին թառած կը գռա:
Էլ, Մեհդի բեկ, մուրագս մի՛ ափրե,
Որձ ոչխարը դանակից չի վախենա:
Ջան Մահնուր խանում, ջեննաթի փերի,
Քու մով աչքերին գերի եմ, գերի:

Մեկ ձեռս՝ թվանք, մեկել ձեռս երկնքին,

Քեզ աստծու հրամանով խոսք ունիմ.
Էլ, Մեհդի բեկ, սերը գուլում մի՛ դարձու,
Թողում չկա սիրտը սրտից զատողին:
Ջան Մահնուր խանում, ջեննաթի փերի,
Քու շեկ մագերին գերի եմ, գերի:

Բայրամ Ալի, իգիթ Բայրամ Ալի, քու կերած կաթը քեզի
հալալ է: Կրճա՛ր Բայրամ Ալին Սիբիլ մնար, երբ իր սիրած
աղջկա աչքն իրան ճամփին է: Իսկի՛: Բայրամ Ալին կտորեց
զնջիլը, փախավ, եկավ վաթանը, Աղմաղանու սարերը, դառավ
դաշաղ:

Գիտե՛ս, ախպեր ջան, ինչ անուշ բան է դաշաղություն-
ըր—թվանքն առնիս, շահին հավքի (բազե) պես թոնիս սա-
րերը, ազատ, լավ ընկեր տղոց հետ, ճամփեքը վախի մեջ պա-
հես, անունդ աշխարհք ձեռն տա, թագավորի զորքը հետևեդ
ընկնի... մեկ օր էլ զարկվիս տղամարդու պես, ընկնիս չղերի
մեջ, ակոսներդ բաց՝ արևի դեմ ծիծաղես: Մարդ մեկ օր
ծնվել է. մեկ օր էլ պիտի մեռնի, բանը իգիթի անուն թողնելն
է: Էդ կմնա, ախպեր ջան, մեռակ է՛դ, է՛դ... Հա՛, էն էի
ասում, որ Բայրամ Ալին դառավ դաշաղ: Ու էդ ժամանակը
իմաց է տալիս Մահնուր խանումին, թե եկել եմ, պատրաստ
ըլնես, փախնենք, երթանք շահի հողը: Էստեղ իմանում է, թե
աղջիկը մարդու է գնացել: Չի հավատում: Սխալեր ջան, դուն
ըլնեիր Ալու տեղը, կհավատայի՛ր. չէ՛, չէիր հավատա, տղա-
մարդը չի հավատա, չէ՛ որ ուխտ կա, երդում կա: Էսպես,
իգիթ Ալին չի հավատում, կուզե իրեն աչքով տեսնել բանը:
Գիշերանց, գողտուկ մտնում է գեղը, ելնում է Մահնուր խա-
նումի մարդու տան երդիկը. իրան առաջուց ասել էին, թե ում
է մարդու գնացել էդ հում կաթնակեր կնիկը: Ելնում է երդի-
կը, նայում է երդիկից ներս, տեսնում է ծամը կտրած Մահ-
նուրը ուրիշի գրկին...

Բայրամ Ալու ծնկները ծալ են ընկնում... Էն կրնար երկուսին էլ գյուլլախորով անել, չի անում: Իգիթը կնկա վրա գյուլլա չի քցի, կրնար մեծակ Մանուրի մարդուն զարկել: Էդ էլի՞ չի անում: Բայրամ Ալին է՛լ սիրտ չուներ արուն թափելու:

Սիրտը կոտրած՝ ոտները քարջ տալով բռնում է Իրիվանի ճամփեն, շիտակ դիվանխանի դուռը, թե՛ ես Բայրամ Ալին եմ, փախել եմ Սիրիլից:

— Ջնջիլը երդում կոտրող, խային կնկանից լավ է. ի՞նչ ասիր, ախպեր ջան...— դարձավ Քյարիմը ինձ և վերջացրեց պատմությունը, հառաչելով.— Ափսո՛ս իգիթ, ափո՛ս Բայրամ Ալի:

1924, Վենետիկ

Շոգեկառքը գնում էր Բաքվից Թիֆլիզ: Ամառ էր, միջօրե: Անտանելի տաք էր, խեղդող շոգ: Գնում էինք գրեթե անապատի միջով: Վագոնի երկու կողմից բացել էինք լուսամուտները, որպեսզի հով խաղար, սակայն նույն անշարժ օդն էր թե՛ ներսը, թե՛ դուրսը: Պիտի կարծեիր, թե ժամանակ ու տարածություն գոյություն չունեին, եթե չտեսնեիր կամ չլսեիր նրանց շառաչուն արագոտն անցումը, որի մարմնացումն էր շոգեկառքը:

Ուղևորները թմրած, թուլացած՝ կիսազգայուն վիճակումն էին: Արևելյան շատախոսությունը հաղթահարված էր. ոչ ոք տրամադիր չէր խոսելու և լսելու:

Ես հոգնել էի ընթերցումից, ծխելուց, հոգնել էի մտածելուց: Անտարբեր նայում էի պատուհանից դուրս, անապատը հեռվից հեռու վազում էր դեպի շոգեկառքը, պտտվում էր հսկա աղորիքի պես և խույս տալիս, անհետանում: Սակայն նույն միապաղաղ դեղինն էր, որ հոսում էր՝ առանց նոր ձևի ու նոր պատկերի: Նույն դեղինն էր՝ դեղին, տաղտկալի:

Մեր վագոնը ներս մտավ մի թուրք՝ միջին տարիքի, երեկոյթով մանր առևտրական: Աջ ոտքից խիստ կաղալով, ձախ ձեռքով հենված մի հաստ գավազանի:

— Ալլա՛հ սաղլասան, ալլա՛հ սաղլասան,— բարևեց աջ ու ձախ և նայելով աջ ու ձախ՝ վստահ նստեց մի դավանակցի մոտ: Փափախը դրեց կողքին, գրպանից հանեց դեղին նախշերով կարմիր մեծ թաշկինակը, սրբեց քրտնած ճակատը, սափրած գլուխը, վիզը...

— Է՛ս գառբի արևը հոգիներս առավ, համա բամբակին հոգի տվավ: Եվ մուգ-կապույտ արխալուղի գրպանից հանեց ծխատուփը, մի հաստ սիգարեթ փաթաթեց և ծարավ մարդու

պես՝ ակորժակով ծծեց հաճելի ծուխը: Մի պահ հետո ծոցից լույս աշխարհ հանեց մի գզգզված պորտոմոնե՝ միջին թուղթ փող՝ 1, 5, 10, 3-անոցներ՝ տեղ-տեղ պատռված, իրար վրա անկարգ դարսված համրեց 200 ուրբի: Նորից դրեց ծոցը և ուժով զարկեց դավանակցի ծնկին:

— Լսիր, դարտաշ ջան, քեզ բան եմ ասում. 500 մանեթ էր, 200-ը մնաց: Բոլորը քեֆի մեջ ուղտ շինեցի. բոլորը, համա ի՛նչ քեֆ... Ինձ Սատր՛ղ եմ ասում, Միրզա Սատր՛ղ: Բալաջարում բաղնիք ունիմ, չայխանա ունիմ, Բալաջարի գալուդ՝ դոնադ արի բոփս: Միրզա Սատրղի չայխանան սաղ Բալաջարին գիտե...

Միրզա Սատրղը աշխուժություն արժարծեց թմրած վագոնի մեջ. ուղևորները կենդանացան, շարժվեցին, շիտկվեցին և ականջները սրեցին:

— Մեկ լավ բարեկամ ունիմ Դերբենտ, աֆիցեր է, աղագատե: Ինձ թեզ հեռագիր զարկեց թե՛ Սատրղ, արի մի լազաթին քեֆ անենք: Ձեռաց 500 մանեթ դրի ծոցս, վագոն նստա, յալլա բաբամ, դեպի Դերբենտ: Վագալում՝ մաշինից ոտքս դուրս չդրի՞, մեկ էլ գրկեցին ինձ ջահել աֆիցեր տղերք, վար իջեցրին, դրին ֆայտոն, շիտակ գնացինք աֆիցերների կլուբը: Ի՛նչ սիրուն, տնկոզ, հուրի-փերի ուտուս աղջիկներ կային: Ես քեզ մատաղ, ինչ որ երագիդ մեջ չէիր տեսել, հիմի աչքիդ առաջը. Է՛նպես բարիշնեք, որ սա՛ղ կավկազի աղջիկները՝ գյուրջի, էրմենի, թե մուսուլման, դրանց առաջ պիտի չադրա գցեն երեսներին, մարդու դեմ չելնին:

Սեղան նստանք. սազանդարը չալում էր, մոմերը, լամպերը վառած: Պար էինք գալիս, ես ո՛նց էի պարում, մեկ հյուրի-մալաք, ձյունի պես ճերմակ աղջիկ դռնիս կայցրած: Տղամա՛րդ պետք էր, որ դիմանար:

Կոտլիտ բերին, պորցին 10 մանեթ, մի գլուխ հանի տվի, ջարկո բերին, պորցին 10 մանեթ: Ես չթողի՛ նրանք տային, բոլորը ես տվի: Լիմոնատ բերին, բուտիլեկն 15 մանեթ, ծխախոտ բերին, պաչկեն 5 մանեթ:

Տվողը ո՛վ էր—Միրզա Սատր՛ղը: Ջարջու եմիշ (սեխ) բերին, հատը 20 մանեթ, ցնժա՛ Սատրղ, քսակիդ բերանը բացել ես մեկ հեղ: Քե՛ֆ արա, աշխարք մեռնիլ կա, էսօր կաս, էգուց

չկաս. բեշ տա բեշ, էն բեշ տա բեշ, դունյայան մալը դունյայա գալար...

Իգիտ քեֆ արինք. մեկ օր մեկ գիշեր: Սազանդարների ճակատին տասնոց էի շաբաշ կպցնում... Վերջը հաշիվը տվին 500 մանեթ, պակաս 200 մանեթ: Վնաս չունի, մտածեցի, դուրբան լինի աղբոր-տղոցս, ընկերներիս: Մարդու դատածը ընկեր տղեն պիտի ուտե, հո դուշմանը ուտելու չէ: Տո՞, բա ո՞ր օրվա համար կաշխատի մարդ, բա ո՛ւմ համար կաշխատի մարդ—ընկերոջ համար: Հեշ խոսք չի վերցնի:

Մեկ օր ազիզ ընկերների հետ քեֆ արա, հարյուր տարի քար քաշիր: Մեկ օրվա թագավորությունն էլ թագավորություն է, ինչպես ասում է Աթթալեար-սոգին:

Էսպես քեֆով ու պատվով մեկել օրը ինձ ճամփա դրին: Ես էլ էնտեղից եմ գալիս, գնում եմ Լաքի. էնտեղ բամբակի արտեր ունիմ...

Այդ խոսքի վրա շոգեկառքը կանգ առավ: Դրսից բղավում էին.—Ա՛յ շիրին սնեյվա՛գ (սեխ), սնեյվա՛գ, շաքեար քիրի...

Միրզա Սատրղը գավազանին հենվելով ոտքի ելավ. մոտեցավ լուսամուտին, գլուխը դուրս հանեց, մի խոշոր սնեյվազ աչքով ջոկեց, մատով ցույց տվեց և ձեռքը մեկնեց: Սնեյվազը բռնել էր երկու ձեռքով, տնտղում էր, հոտ էր քաշում ամեն կողմից:

Ծախող թուրքը կանչում էր.—

— Թեզ արա, հիմի փովեզդը գնում է:

— Ի՛նչ արժե հատը,— հարցրեց Սատրղը:

— Հինգ շահի (25 կոպեկ):

Սատրղը դեռ զննում էր:

— Ա՛յ իշի, թեզ տա, փովեզդ գետտի...

Սատրղը դանդաղում էր. կամաց-կամաց քրքրում էր գրպանը, մանր փող էր որոնում: Այդ միջոցին շոգեկառքը շարժվեց: Ծախողը վազում էր շոգեկառքի հետ՝ փափախը ափում բռնած:

Սատրղը 20 կոպեկ նետեց փափախի մեջ:

— Յոռխ, ջա՛նմ, դետիմ բեշ շահի,—կանչում էր ծախողը շոգեկառքին հետապնդելով:

— Գեչ տա, բու նա՞ խաբար—բեշ շահի: Ո՞վ է տեսել սնելվազը 5 շահի, լսա՞ծ բան է, խո՞ թոխլի (խոյ) չես ծախում, բի աբասի, բաստա դա՞... բարկացած ձայնում էր Միրզա Սատրղը և ապա հևալով դարձավ դեպի իր ունկնդիրները:

— Հի՛նգ շահի, թալան է, ի՞նչ է, էն գյադեն գիտե՞ թե փող աշխատելը հեշտ բան է: Սա փո՞ղ է— հոգու ունդած տաջեղ է, խո թոնայ չայի բերածը չէ, որ դասսին՝ տաս, դու ասին՝ տաս...

1920-ական թվ.:

Առավոտուն, ընտանիքով տակավին նոր էինք նախաճաշի նստել, երբ մեծ եղբայրս գունատ դեմքով, այլայլած աչքերով հևհև ներս ընկավ, գլխարկը մի կողմ ձգեց և ուզում էր խոսել, չէր կարողանում, շրթները դողում էին:

Մայրս ծնկները բռնած փուլ եկավ բազմոցի վրա, և հագիվ շրթները իրար եկան այս կցկտուր խոսքերը արտաբերելու:

— Տղա՛, ի՞նչ կա, ի՞նչ կա, աստծու սիրուն:

— Էլ ի՞նչ պիտի լինի. մեր Հակոբը, Հակոբ ախպերը, կախել է իրեն... մեռել է...

Եվ եղբորս երկու ձեռքերն էլ դողում էին՝ ուներից սկսած մինչև մատների ծայրերը:

— Անաստվածը կախվել է. վա՛խ, ափսո՛ս տղամարդ, էդքան էլ անգթություն իրեն դեմ...

Եղբայրս էր խոսողը:

Մայրս հենվեց բազմոցի մեջքին և քարացավ. ամենքս էլ սառել-մնացել էինք:

«Կախվել է, մեռել է»... սուր և պաղ գամի պես այս մտածումը ճեղքում էր, տեղ էր բանում իրեն համար ուղեղիս մեջ. ետ էր մերժում ուղեղս, չէր ընդունում, բայց գամը մխրճվում էր ներս. և հոգիս անհնարին ճիգ էր թափում հասկանալու այս անհավատալի իրողությունը, ընտելանալու այս սարսափելի ճշմարտությանը:

Լուռ էինք. իսկ եղբայրս շարունակում էր խոսել:

— Լուսադեմին, իրեն հետևի բակի պատուհանի երկայթից թոկը ձգել ու կախվել է...

Իրիկունը հետն էի. միասին էինք տուն դառնում, բան գլխի չընկա իսկի. սովորականի պես էր, հանգիստ, ծանր... Տո՛, իմ մոտը թոկը գնեց, իրեն գնած թոկով է կախվել... անպատճառ... սարսափելի, սարսափելի բան... իրեն գնած թոկով, ի՛րեն գնած թոկով...

Եղբայրս լուեց. ես հարցրի.

— Ինչո՞ւ համար, ինչո՞ւ համար, պատճառն ի՞նչ էր, այն-բան խելոք, պաղարյուն, հասուն մարդ, և այս ահավոր վճիռը...

— Պատճա՛ռը... հոգնած էր, շա՛տ էր հոգնած, գործից հոգնած. շա՛տ զբաղմունք ուներ, ցիրուցան գործեր, ամեն տեղ ձեռնարկներ. ձանձրացել էր, միշտ ասում էր ինձ. «Ռուբեն, ա՛խ, հնար լիներ, գործերիս վերջ տայի, երթայի մի ամայի, խաղաղ տեղ, հող մշակեի, ապրեի հանգի՛ստ, հանգի՛ստ...»:

Խե՛ղճ մարդ, աշխատեց, աշխատեց, անուն, դիրք շինեց և չկարողացավ վայելել. զգվել էր փողից ու գործից, իր կալվածքների երեսը չէր ուզում նայել. հաճախ գնում էր քաղաքից դուրս, նստում էր առվակի ափին և ժամերով ջրի ձայնին ականջ դնելով, կորչում էր մտքերի մեջ, քշվում, պաղում նստած տեղը: Է՛լ փուչ աշխա՛րհ. ի՞նչ մարդ էր, ի՞նչ մարդ էր. խելոք, տեղոց տեղ խելք...

Սարսափի սրությունը անցել էր և մեր հոգիների մեջ տեղի էր տվել ցավի ու կարեկցանքի. ծերունի մորս հանգած աչքերի մեջ արցունք էր երևում. իսկ քույրս բուռն լալիս էր:

Ես մոտիկ չէի մեր այս մերձավոր ազգականին. ինձնից շա՛տ տարեց էր նա: Այն ժամանակ կլիներ 49—50 տարեկան. ծանրախոհ, սակավախոս, լուրջ ու զուսպ մարդ էր. դժվար էր մտերմանում մարդկանց հետ. իսկ ես տղա էի նրա աչքում, անփորձ և խանդավառ. թեև հարգում էր ինձ, և երբեմն երկարորեն խոսում էր հետս հասարակական-ազգային գործերի մասին:

Բոլորովին հակառակ էր իմ կարծիքներից, բայց չէր վիճում, մի-երկու կտրուկ, մտածված խոսքեր էր ասում և շըրթունքների անկյունում մեղմ ժպիտ էր հավաքում, հեզնա՛նք,

թե՛ իր երիտասարդ հասակի նման զգացումները հիշելով՝ ուրախանում էր. դժվար էր հասկանալ:

Նա հայկական ազատագրական շարժման առաջին օրերի ոգևորվողներից մեկն էր եղած. նպաստել էր Սարգիս Կուկունյանի խմբի կազմվելուն, իսկ երբ խումբը թրքաց Հայաստանի սահմանը չանցած ձերբակալվեց ոռուների կողմից և չարաչար պատժվեց, հիասթափվեց նա, և առհասարակ այս ձախորդությունը ընդմիշտ հեռացրեց նրան ազատագրական ձեռնարկներից... և հաճախ ասում էր ինձ. «...Թրքահայերի համար փրկություն չկա. առանց ոռուի բան չի լինի. Եվրոպան հեռու է...»:

Այնուհետև տարվելով իր անձնական գործերով, և լինելով ձեռներեց մարդ, շուտով հարստացավ. եղավ և քաղաքագլխի օգնական, և միշտ քաղաքի պատվավոր ներկայացուցիչ. և՛ ձայն ունեցող մարդ:

Եղբայրս ինձ դիմեց ասելով, որ պատրաստվեմ գնալու միասին Հակոբ ախպոր տունը՝ դժբախտացած ընտանիքը մխիթարելու:

Փողոցում եղբայրս ինձ պատմեց երեկ երեկոյան իր վերջին տեսակցությունը հանգուցյալի հետ:

— Գրասենյակս կողպելուց հետո սովորաբար գնում էի Հակոբ ախպոր մոտ և նրա հետ խոսակցելով դառնում էինք տուն: Գնացի. նրա գրասենյակը լիքն էր ամեն տեսակի մարդկանցով. Հակոբ ախպերը շա՛տ զբաղված էր:

Այդ ջղայնացած մարդը երբեք իր գրգոված վիճակը ցույց չէր տալիս. իր մշտական ծանրությամբ հանդարտ խոսում էր յուրաքանչյուրի հետ. և հաշիվները մաքրում էր կոպեկ-կոպեկի վրա. մեկին դրամ էր տալիս՝ զգուշությամբ համբերով. մյուսից դրամ էր առնում նույն ուշադրությամբ համբերով. ստուգում էր բոլոր հաշիվներն ինքն անձամբ. սխալված դեպքում՝ նորից քննում, կարծես թե հավիտյան պիտի ապրեր:

Ինձ տեսնելով՝ գլխով նշան արավ, որ նստեմ, և սիգարետք առաջարկեց:

— Հակոբ ախպեր,— ասացի ես,— ի՞նչ կա, եղպես թըն-
ճուկի մեջ ես. վաղը ոչ կիրակի է, ոչ ամսագլուխ. ինչո՞ւ ես
գլխիդ ժողովել էսքան մարդ:

— Ռուբեն ջան,— պատասխանեց նա,— մի քանի օրով
ուզում եմ գրասենյակիցս հեռու լինել, գործ չտեսնել. ուզում
եմ հեռանալ քաղաքից, հանգստանալու համար. հաշիվներ
ունիմ երեսի վրա ընկած, հաշվապահս չի կարող միջից ել-
նել. տղաս էլ ուրիշ գործով է գբաղված. ախպերս էլ Կարս է,
գիտե՛ս, է՛հ, շատերին էլ փող է պետք, չեն կարող սպասել
իմ դարձին. էս է, կվերջացնեմ, կերթանք միասին:

Ես դիտում էի նրան. ամենքի հետ խոսում էր հանգիստ,
առանց շտապելու և առանց մի ավելորդ խոսք ասելու.
Կես ժամ հետո վերջացավ հաշվետեսությունը. մնացինք ինքն
ու ես. մի քառորդ ժամ էլ նա թղթերը հանդարտությամբ ծա-
լում էր և դարսում գգրոցների մեջ. մատյանները մեկ-մեկ
նայելով գետեղում էր իր պատշաճ տեղերը: Եվ հետո վեր
կացավ. գրասենյակի բոլոր կողմերն ու անկյունները աչք ա-
ծելով՝ գոցեց դուռը, բանալիները գրպանը դրեց, հրեց, քաշեց
դուռը՝ տեսնելու համար, թե գոցված է արդյոք, և քալլ
առանք:

Ես ճանապարհին խոսում էի զանազան բաների մասին.
քաղաքի նորությունները, շուկայի գները ապրանքների, այս
ու այն վաճառականի վրա: Նա իր սովորական լրջությամբ
լսում էր, գլխով հաստատում կամ բացասում, և միշտ ուշա-
դիր. երբեմն էլ աչքի պոչով նայում էր՝ մի-երկու խոսք ուղ-
ղելով ինձ:

Դանդաղ քայլում էինք. շուկայից տուն էին դառնում մար-
դիկ. սրան-նրան բարև տալով-առնելով, անցանք այն հյուրա-
նոցի առջևով, որ մեր երիտասարդ տարիների խնջույքների
կենտրոնն էր եղած. իհարկե, թեև ես մի 3—4 տարով փոքր
էի Հակոբ ախպերից, բայց դարձյալ հասակակիցներ էինք
հաշվվում. ի՞նչ խոսք, որ ես նրան իբրև մեծ եղբոր վրա էի
նայում ու միշտ պատիվ տալիս:

Մի վայրկյան Հակոբ ախպերը նայեց հյուրանոցի լուսա-
վորված պատուհաններին և ասաց ինձ, առանց ավստանքի,

մի ձայնով, որ բնական է, չէ՞ որ, երբ մարդ հիշում է իր
քաղցր անցյալը:

— Ռուբեն, հիշո՞ւմ ես մեր քեֆերը. լավ օրեր էին, իսկ
Նիկոլը, Ալեքսանը, ի՞նչ տղերք էին...

Ես խորունկ «ա՛խ» քաշեցի, մտաբերելով անցած անգի՜ն
տարիները և մեր վաղամեծ ընկերներին. որ անմահ, գվարթ
տղերք էին:

Հակոբ ախպերը կանգ առավ մի մանրավաճառի խա-
նութի առջև:

— Մի կտոր թոկ պիտի գնեմ. պետքս է,— ասաց ինձ:

Ներս մտանք:

— Մի ամուր թոկ տուր, մի վեց արշին, փտած չլինի.
մի պատիկ, բայց ծանր բան պիտի կապեմ. երկար ճամփա
պիտի երթա:

Թոկը ցույց տվին. տնտղեց, քաշեց երկու ձեռքով, ստու-
գեց ամրությունը, հավանեց, վճարեց և կապույտ թղթի մեջ
փաթաթված թոկը դրեց գրպանը:

Անպատճառ այս թոկով մահացրեց իրեն. խելքս թոցնում
եմ, երբ աչքիս առջև եմ բերում, թե ինչպիսի հանդարտու-
թյամբ, պաղարյուն, դահիճի պես, քաշում էր թոկը՝ գիտե-
նալով, որ իր կյանքը կտրող գործիքն է իր ձեռքում. տո՛, դա
մարդ էր, կնկա բերած, թե՛ հոգին դարբինն էր շինել:

Վերջապես կողք-կողքի գնում էինք, խոսելով, երբ անե-
րոջս որդին պատահեցավ. ինձ ընթրիքի տարավ, որ հետո
խոսեինք պիտի մեր գործի մասին: Ներողություն խնդրեցի՝
Հակոբ ախպորից իրեն թողնելուս համար:

— Մնաս բարև, Ռուբեն,— ասաց նա, առանց ձեռք տալու:

— Ցտեսություն,— ասացի ես, գլխարկս հանելով,— վաղը
կտեսնվինք. ինչպես միշտ:

Նա մի քայլ առավ, հետո դարձավ ետ, նայեց ինձ մի եր-
կար, թափանցող հայացքով. ժպտաց, գլխով արավ ու զնաց:
Մի պահ նայում էի նրա հետևից. դանդաղ, չափված քայլով
գնում էր, գլուխը՝ կախ. առաջին անգամ նկատեցի, որ նրա
մեջքը ծովել էր. «Խեղճ մարդ,— ասացի աներորդուս,— գործի
տակ ճմլվել է, տղան բանի պետք չի գալիս այնքան, եղբայրն
էլ միշտ դուրսն է, գործերն էլ ընդարձակ»:

Մի անգամ էլ նայեցի. ծովեց փողոցի անկյունից ու էլ չե-
րնաց...

Տեսնես, ի՞նչ էր մտածում նա, երբ ես խոսում էի հետը,
միամիտ, միամիտ. ի՞նչ մտքերով էր քայլերը փոխում, և
ինչպե՞ս էր իր վշտերով, հուսահատությամբ լիքը, ծանր մար-
մինը տանում դեպի տուն, տո՛, սարսափելի՛ մարդ, գոնե կառք
նստեիր...

Ի՞նչ եմ ասում, ես էլ չգիտեմ: Հիմա, որ այս դժբախտու-
թյունը եղավ, հասկանում եմ, որ նրա բոլոր վերջին խոս-
քերը խորհրդավոր էին, ամեն բան մտածված. վայ, անաստ-
ված, անխիղճ մարդ. ի՞նչ սոսկալի բան բերիր գլխիդ, սառը
վճռելով, կշռելով... Նայեմ պիտի անպատճառ, թե իր, գնած
թոկով է խեղդվել, բայց անկասկած է... իր գնած թոկով...

Եվ եղբայրս այս խոսքերը անհագ կրկնում էր. նրա հա-
մար ամենից անհասկանալին ու ահավորը դա էր.

— Նախամտածված կերպով՝ գործերը կարգի դնել, թոկն
առնել և դիմել մահվան:

Հասանք հանգուցյալի տունը:

Դուռն ու երդիկ լիքն էին մարդկանցով:

Նրա կնոջ ու քույրերի աղիողորմ լացն ու կոծը հոգի էին
քաղում. մտանք դահլիճը. դագաղի մեջ պառկած էր նա, մի
քիչ կարմրակապույտ դեմքով, բայց հանգիստ. պարանոցը
ոռած էր:

Սարսափելի էր տեսնել. ես աչքերս գոցեցի և դուրս ելա
բակը: Մի պահ հետո եղբայրս մոտեցավ ինձ և շշուշոս՝ ահա-
բեկված հոգով.

— Տեսա, անաստվածը իր իսկ գնած թոկով է խեղդվել,
կապույտ թուղթը կախված տեղը ընկած է գետնին: Սարսա-
փելի՛ մարդ. ծնկներս դողում եմ սոսկումից. ի՛ր գնած թոկով,
ի՛ր, ի՛ր գնած թոկով:

1924

— Քանի որ խոսք բացվեց, ես քեզ ասեմ, որ փողի համը
ուրիշ համերի պես առաջին անգամն է քիմքիդ ամուր գար-
կում, դրանից հետո փող հավաքելը մոլություն է դառնում,
թե՛ անհամ, թե՛ շատ անգամ տանջող:

Էս սիգարն առ, էս գինուց կամաց-կամաց խմիր, ես քեզ
պատմեմ առաջին անգամ փողի համն առնելս:

Այսպես ասաց խոսակիցս և լցրեց գավաթս ընտիր գինուց:
Նա մոտ 70 տարեկան մի առույգ ծերունի էր և հարուստ
մարդու համբավ ուներ:

— Ես դեռ տղա,— այսպես սկսեց նա,— մեր գեղից տրե-
խով, հացի պարկն ուսիս, եկա մեր գավառի քաղաքը մարդ
դառնալու համար: Էս ու էն խանութայանի մոտ աշկերտ լի-
նելով, աչք ու երեսս բավական բացվեց. մի քիչ էլ ոռուերեն
սորվեցա, թիվ և համրանք ճանաչեցի: Տեսա, որ էստեղ մնա-
լով ուղտի պոչը չի երկննա, մի օր էլ վեր կացա, հավաքածս
մի քանի ոռութիւն ծոցս դրի և ինձ գցեցի Մոսկվա, ասելով
ինձ ու ինձ, թե՛ մեծ ձուկը մեծ ջրում կգորանա:

Մոսկվա՛, ի՞նչ քաղաք, հազար ու հազար փողոց, մարդիկ
իրար վրա թափած, դե՛հ արի ու,— մտածում էի ես,— էս
մարդկանց ձեռքից հաց խլիր: Սիրտս մի պահ վախ առավ էդ
մարդակով քաղաքը տեսնելով: Մեկ էլ երիտասարդ արյունս
մարխի պես բոց տվավ, կանգնեցի մի մեծ փողոցի վրա, ձեռ-
քըս կանթեցի մեջքիս ու լսելի ձայնով ասացի ինձ.— Դո՛ւ
երկաթի պես կտրիճ տղամարդ ես, քարը կկոտրես, միջից
հաց կհանես. վախս ո՞րն է...

Մի-երկու օր հետո, արդեն, մի հարուստ հայի առևտրական
տան ծառայող էի, ապրանք էի կապում, տանում կայարան,
ուղարկում զանազան կողմեր, և ուրիշ շատ բաներ էի կա-

տարում խանութի ներսն ու դուրսը: Կարճ կտրեմ խոսքս. բերանս բանալու տեղ, աչքս բացի, տեսա, հասկացա առևտուրի գաղտնի հոգին: Մի քանի ժամանակ հետո, ես ոտքի վրա, իմ հաշվիս վաճառական էի. հին ու նոր հագուստ էի ծախում, հազար ու մի տեսակ մանր-մունր բաներ, նայելով եղանակին ու պահանջին: Խանութից խանութ մտնում, գործեր էի սարքում, հաճախորդներ էի գտնում, խանութները տանում, տուկոս առնում.— և այսպիսով հայ, ռուս, գերմանացի վաճառականների մոտ բավական վարկ էի ձեռք բերել: Ժիր մարդուն աստված էլ կօգնե, մարդն էլ:

Գիշերը քուն չունեի, ցերեկը՝ հանգիստ. լի ու կիրակի իրար խառնած՝ միշտ գործի վրա էի: Կոպեկ կոպեկի, ռուբլի ռուբլիի վրա դնելով, էսպես, մի քանի տարի անցած, մի օր էլ տեսա, որ 10.000 ռուբլի իրար մոտ եմ բերել: Տո՛, տունդ չքանդվի, 10.000 հատ ռուբլի, լոբու հատիկ չհասկանաս. զնգզնգան, հնչուն, փայլուն ոսկի, կամ նույն բանն է—կանաչ, կարմիր, կապույտ շխլշխկան թուղթեր, մեջը մետաքսի թելերով, վրան՝ Պետրոս Մեծ կամ Եկատերինա Մեծ, երկվախանի արծիվ, որով փող ունեցող մարդը աշխարհի վրա, թռչող արծիվ է դառնում: Բայց արի տես, որ մի օր էլ իսկի էդ 10.000 ռուբլին մեկ անգամից ծոցս չեմ ունեցել, որովհետև մաս-մաս վաստակելով, էս ու էն վաճառականի մոտ էի պահ դրել, մի երեք հազար էլ բանկն էի դրել: Էդպես արել էի վարկ ու վստահություն ձեռք բերելու համար. քանի որ էս աշխարհն էնպես է շինված, որ ինչքան փող ունես, էնքան էլ հավատ ու պատիվ:

Մի գիշեր էլ վճռեցի, որ առավոտ էդ փողերս բոլորը հավաքեմ, բարի աչքերովս տեսնեմ, շոշափեմ, մեկ վայելեմ փողի համը: Վաղը վեր կացա, գնացի բանկը, 3000-ը ետ առա, դրի ծոցս: Գնացի բարեկամ վաճառականի մոտ, բարև տվի, ասացի.— Ախպեր, ներո՛ղ եղիր, քովդ ինչքա՞ն փող ունեմ: Ասաց—2000 ռուբլի: Ասացի.— Խնդրեմ մի օրով տուր ինձ, վաղը նորից ետ կբերեմ. էսօր պետքս է:— Ի՞նչ պիտի ասեր մարդը. իմ փողս էր, տվեց:

Էսպես երկրորդի, երրորդի մոտ, վերջապես փողերս հավաքեցի:

Աշուն էր, մշուշոտ մի օր. ժամը 4-ը չեղած մութն էր. դե՛հ, գիտես Մոսկվան, աշնան օրը մի բրդուն բան է:

Արագ-արագ մի շիշ կոնյակ գնեցի, նույնպես հաց, ձուկ, երշիկ, սիգարեթ: Կառք նստեցի և հրամայեցի, որ թոցնե: Տունս հասա: Ես մի պառավ ռուսի մոտ մի սենյակ ունեի վարձած: Դուրը չբացած, գոչեցի.— Է՛յ, Մաշա, սամովա՛ր, շո՛ւտ-շո՛ւտ, սամովարը բեր:

Սենյակս նոր էի մտել, լամպը վառել, երբ աղախինը, շեկլիկ Մաշան, սամովարը բերեց, եփ-եռան, թեյի սարք ու կարգով: Հայտնի է, որ սամովարը ռուսի տան մեջ նոր հարսի պես միշտ զուգված, պատրաստ կանգնած ու փեսայի է սպասում. էս էլ, ճիշտ էդ օրվա փեսան էի, նոր ածիված, կարմիր, ուրախերես: Մաշային մի 50 կոպեկ ընծայեցի և ուղղակի սենյակից դուրս քեցի նրան: Էնքան անհամբեր էր սիրտս, որ ասել չի լինում, ուզում էի վայրկյան առաջ մեճակ մնայի:

Դուրը փակեցի, բանալիքի ծակը թուղթ խրեցի, որ չծկլատեն, թե էս ի՞նչ է անում Հակոբ Նիկիտիչը, քանի որ երբեք էսպես տարածամ տուն չէի եկած:

Փողերը հանեցի, փռեցի սեղանի վրա ու նայեցի վրաները, ոնց որ սիրահարված տղան նայում է սիրած աղջկա երեսին. նայում էի ու չէի կշտանում:

Մի-երկու կոնյակ խմեցի, մի քիչ բան կերա ու սկսեցի փողերս համրել. փայփայում, պաչում էի կարմիր-կանաչ-կապույտ շխլշխկան թղթերը: Բերանովս չէի պաչում, սխալ չհասկանաս, այլ մատներովս, որ հոգուս պտուկներն էին դարձել:

Էդ կարմիր-կանաչ փողերը հարսնորի աղջիկների մետաքսե հագուստների պես փայլում էին ու խշխշում: Ի՞նչ անուշ խշշոց, դրախտի աղբյուրի ձայնի պես անուշ: Համրեցի 100, 200, 500, 1000, 5000, վերջապես 10000. ձայնս համրանքիս հետ բարձրանալով, կրակում էր ու որոտում, սիրտս ու հոգիս էլ համրանքիս հետ շատանալով ու բարձրանալով բազմապատկվում էր, հազարապատկվում... Պա՛հ, հեր օրհնած, հանա՞ք բան է—10000 ռուբլի իրար հետ, իրար վրա ու էդ ամենքը քոնն են: Էդ փողը էս ժամին ի՞նչ ասես կարող է դառնալ—սիրուն աղջիկ, ոսկի ժամացույց, հագուստ ու

գարդ, և ուրիշ ի՛նչ որ ուզեցան: Տո՛, մարդն ի՛նչ է առանց փողի—ծառը առանց ջրի, որ կչորնա ոտների վրա. մյուս բաները վրա՛ս գրե:

Նորից մի կոնյակ խմեցի, նորից մի քիչ կերա, մի բաժակ թեյ խմեցի ու նորից սկսեցի համրել. մատներս փողերիս վրա շոյելով էնպիսի համ էի առնում. որ մմանը չունի: Մեկ էլ խենթի պես սկսեցի փողերս ճմուռել, տրորել: Ճմուռում էի ու չէի կշտանում. ճմուռում էի կրթով... Ինչքա՛ն ժամանակ տևեց՝ չեմ հիշում: Իրար վրա սիգարետե՞ էի վառում ու անդադար սենյակիս մեջ անցուդարձ անում, կարծես համով բանը որո՞նալու համար, ամենահամով բանը...

Ես քեզ հավատացնում եմ, եղ. օրվա կրածս համը մինչև էս օրս էլ քիմքիս վրա է, թեև մոտ 40 տարի է անցել, բայց համը չի անցել, միայն եղ առաջին անգամվա անուշ, անըման համը:

Հա՛, էն էի ասում, էսպես, սենյակումս ման էի գալիս ուրախ ու հպարտ, աչքս չհեռացնելով փողիս դեզից, հանկարծ կանգնեցի, ձեռքս զարկեցի ճակատիս՝ բարձր գոչելով.— Կեցցե՛ս, Հակոբ, տղամա՛րդ. ես, տղամա՛րդ. էս բոլորը դու ես վաստակել, ոչինչ տեղից, ապրե՛ս: Դե՛հ, քեզ տեսնեմ, հիմի ո՛ւժ արա, 10000 ռուբլին շինե 20000, 30000, 100000, միլիոն, թշնամիներիդ ու բարեկամներիդ աչքը հանե:

Ժամը 12-ը զարկեց: 5—6 ժամ ոգևորված վիճակումն էի, տաքությունս սակայն դեռ չէր անցել... Վերջապես, փողերս հավաքեցի, դրի բարձիս տակ ու քնեցի:

— Նրանից հետո,— ավելացրեց բարեկամս ձայնը մեղմելով,— նրանից հետո շա՛տ փող վաստակեցի, միլիոնների հետ խաղացի. վաստակելիս չուրախացա, կորցնելիս չտխրեցի, բայց էլ երբեք առաջին անգամվա համը չառա: Միլիոն շինած օրս մեծ խնջույք տվի, բայց սիրտս անմասն էր ուրախությամբ, որ ունեին իմ հարազատները: Միայն էն 10000-ն էր աչքիս անթիվ, անհամար երևում, իսկ նրանից հետո եկածները— ոչի՛նչ, ոչի՛նչ, ողորմելի գումարներ, միայն զրոներ իրար հետևից քաշքշվող...

Երկաթուղին ոլորվում էր Շիրակի ծաղկած դաշտերում: Վագոնի լուսամուտից նայում էի այնքան սիրելի հողի կտորին, ուր խաղաց ու անցավ իմ բախտավոր մանկությունը:

Ահա՛ և Օհան-ամու ջաղացը: Այստեղ էր մի ժամանակ չխկչխկում Օհան-ամու ջաղացը: Առուն չորացել է հիմա, ջաղացը ավերվել է վաղուց, միայն երեք ուտի և մի բարդի է մնացել այն փոքր ծառուտից, որ տնկել էր Օհան-ամին ջաղացի շուրջը:

Ինչքա՛ն անգամ ենք նստել այս ծառերի տակ Օհան-ամու հետ և զրույց արել:

Այն օրվանից շատ բան է կույ գնացել ժամանակի անհունության մեջ՝ անկրկնելի և անվերադարձ.— և Օհան-ամին էլ չկա, վաղուց մեռել է նա և թաղված է այս ծառերի տակ, իր սրտի ուզածի համաձայն:

Եվ հիշում եմ քո իմաստուն խոսքը, Օհան-ամի.

«Մարդը կերթա, աշխարհը կմնա»:

Մեր ջաղացից կես ժամ հեռու, Ախուրյանի զանդիթափի վրա էր գտնվում Օհան-ամու փոքրիկ ջաղացը մի աղորիքով, որ դառնում էր Ախուրյանի մեջ թափվող մի կարկաչուն առվակի ջրով: Իր ձեռքով էր շինել Օհան-ամին ջաղացը և նրան կիպ տնակը, և իր ձեռքով էլ մշակում էր ոչ մեծ բոստանը, որ փոված էր ջաղացի շուրջը մինչև գետի եզերքը:

Երբ մեր ջաղացն էի լինում՝ հաճախ այցի էի գնում Օհան-ամուն: Թեյ ու շաքար էի նվեր տանում նրան, որ միասին թեյ խմեինք և լսեի նրա զրույցները:

Շահտ վաղուց էր այդ: Շահտ տարիներ առաջ, այն պարզասիրտ և միամիտ ժամանակները, երբ Օհան-ամու ծերունի ընկերները, գյուղից գյուղ, ցուպերը շափիղների քարերին ծեծկելով, քթերի տակ մի հին բան թոնթոնալով, կորամեջք ու տնկտնկալով գալիս էին ջաղացը հատկապես Օհան-ամու ընտիր թյուրյունից մի չիբուխ քաշելու և հնուրյունից մի երկու խոսք իրար հետ սրտանց խոսելու համար, և նորից տնկտնկալով վերադառնում էին իրենց գյուղերը:

Պատանի երևակայության համար երևում էր լուրջ, մեծակյաց Օհան-ամին, իբրև նահապետական դարերի մի իմաստուն, որ վաթսուն տարիների գագաթից նայում է աշխարհին, միտք է անում աշխարհի բանը՝ ծխելով իր «համբերանքի չիբուխը»:

Իմ թարմ զգայության վրա խորհրդավոր տպավորություն էր թողնում նրա անցրած ու ապրած կյանքը և իր ապրումներից գումարած մտքերը:

Մինչև քառասուն տարին Օհան-ամին ապրել էր իրեն պապերի գյուղում, աշխատել էր օր ու գիշեր, ցանել ու հնձել, Կողբ ու արանները քիրա-քլարվանի գնացել, ծնողներին խնամել ու պատվով թաղել, քույրերին ամուսնացրել, ինքն էլ ամուսնացել և որդիներ հասցրել:

Քառասուն տարեկան հասակում գյուղում հողաբաժին եղավ: Հարուստներն իրենց մեջ բաժանեցին բերրի հողերը և ստերջ հողերը տվին թուլերին, խեղճերին:

Օհանը զայրացավ: Վառեց ու բորբոքեց հողագործների արդար վրեժը: Գյուղի զրկված մասը ըմբոստացավ: Հարձակվեցին, ծեծեցին ռեսին ու մի քանի հարուստների:

Գանգատը հասավ քաղաք: Եկավ կաշառված պրիստավը մի քանի յասավուներով (նստիկան)՝ հավաքեց ըմբոստներից, բարկացավ, ոտները գետին զարկեց ու քաշեց նրանց մտրակի տակ:

Արյունը կոխեց Օհանի աչքը. ձեռքը ձգեց պատահած քարին և նետեց պրիստավի կրծքին: Ծեծվողները թև առան, հարձակվեցին յասավուների վրա, զինաթափեցին նրանց, քարհալած արին պրիստավին ու նստիկաններին և գյուղից քշեցին:

Երրորդ օրը, երբ կազակները եկան նրանց ձեռքակալելու՝ նրանք գյուղից փախել էին արդեն, ելել էին սարերը, «ղաշաղ» էին ընկել:

Կարճ ժամանակի ընթացքում փախստական գյուղացիները մեկ-մեկ իջան գյուղը, ընկան հարուստների ոտները, ներում խնդրեցին և ներվեցին:

Օհանը մնաց չորս ընկերով փախստական: Մի ժամանակ հետո, չորս ընկերն էլ եկան, վզները դրին հարուստների շեմին, ներում ստացան: Բայց Օհանը մնաց մենակ և անասան: Նա չզիջեց: Մերժեց հարուստների պատգամը, որ ուղարկել էին նրանք—հանձնվել, զոջալ և թողություն ստանալ:

Մի օր էլ, մատուցյալմբ, մի գյուղում բռնվեց նա: Ձեռները կապեցին հետևը, տարան Գյումրի քաղաքը, դատեցին և չորս տարվա բանտարկություն վճռեցին:

Երբ Օհանը բանտից ազատվեց, գյուղն եկավ, որդիները հասել էին արդեն, ուժովցել և հարստացել, բայց իրեն մեծակ զգաց գյուղում, չուզեց տեսնել իր դավաճան, փոքրոգի ընկերների երեսն անգամ: Չուզեց մնալ գյուղում, որպեսզի ստիպված չլինի պատահելու իր թշնամի հարուստներին:

Արդեն բանտում երազել էր մեկուսանալ—«աշխարհաթող» լինել: Եվ հիմա, բանտից ելնելով՝ վճռեց և վերջնականապես տեղափոխվեց ջաղացը: Եվ միայն շատ անհրաժեշտ դեպքերում էր գյուղ գնում:

Անգոր եղան կնոջ և որդիների թախանձանքները՝ բեկանելու փայփայած նրա իղձը:

«Քանի ողջ եմ,— այսպես ասաց ու այսպես կտակեց իր որդիներին,— էստեղ կաշխատեմ կապրեմ. երբ մեռա, էստեղ թաղեցեք ինձի՝ իմ ծառներիս տակը»:

Եվ այսպես «աշխարհաթող» եղավ Օհան-ամին:

* * *

Այսօրվա պես հիշում եմ իմ այցելած օրերից մեկը:

Ամառ էր. Ախուրյանում լողանալուց հետո գնացի Օհան-ամու մոտ գրույց անելու:

Օհան-ամին թիկն էր տվել ծառերի տակ: Մի փոքրիկ

արախճին մասնակի ծածկում էր նրա գլխի նոսր, ճերմակ մազերը: Ճակատը շատ կնճոռոտված էր երևում: Ահագին ձյունափայլ մորուքը խառնվել էր բաց կրծքի ալեխառն մազերին: Ինքնամփոփ ծխում էր չիբուխը: Ոտների տակ մրափում էր Ասլանը, Օհան-ամու հավատարիմ, հսկա գամփոը:

Բարև տվի և թեյ-շաքարը դրի կողքին: Խորշումների մեջ կորած խոհուն աչքերով նայեց ինձ:

— Գալո՛ բարի, աղախաորս տղա,— այսպես էր նա միշտ կոչում ինձ:

Միջօրեի ճպուռներն արևաբորբոք ճոռում էին, կարծես արևի ձայնն էր այդ, կամ ուղղակի, արևի ճառագայթներն էին ճոռում այսպես բարկ ու բորբոք:

Ջաղացը ծուլորեն չխկչխկում էր: Ջաղացի դռանը կապած կար մի խղճուկ էջ, որ եռանդով քսում էր մեջքը պատի անկյունին: Հավերժ քջուջ էին անում այս ու այն կողմ:

Ինձ տեսնելով, մոտեցավ Օհան-ամու պառավը, որ եկել էր ամուսնուն այցի:

— Ես՝ չէ, թող աղեն ըսե,— դիմեց ինձ,— հայը էսօր քե՛ֆ չունի, կըսե՛ մեջքս կցավի: Էս չլուրմ հերիք մնա, ինչի՞ համար: Թող տուն գա, առոք-փառոք ապրի. ջարդվելիք հարսներն ինչի՞ համար են, թող շահեն: Էս օր-ծերությանը դադար չունի. մեկ գլուխ կդատի ու կաշխատի: Ի՞նչ պիտի տանի աշխարհքն:

— Կնի՛կ, հերիք փնթփնթաս. քանի հազար անգամ ասել եմ քեզ—ես աշխարհաթող եմ եղել. ես էլ գեղն եկողը չեմ: Խոսքս խոսք է: Աշխատե՛լ: Քանի ձեռքս բերանս կհասնի, պտի աշխատեմ: Հո հարստության համար չե՛մ դատում. իմ աչքս կուշտ է: Տղերքս իրանց համար, ես ինձ համար: Իմ հացս իմ քրտինքովս պիտի ուտեմ: Ես քեզնից լավ գիտեմ, որ աշխարհից բան տանող չի եղել, բայց մեծակ թե՛ մարդս էս աշխարհն եկել է աշխատանքի համար: Ձեռքս՝ բան, ոտքս՝ գերեզման: Պրծա՛նք:

Դե՛հ, էս չայ-շաքարն առ, սեղան բաց, չայդանն էլ դիր, աղախաորս տղի հետ հաց ուտենք, չայ խմենք:

Երբ պառավը գնաց, ես հարցրի.

— Օհան-ամի, հիվանդ ես:

— Չէ՛, ջանքն, մեջքիս ցավը հո նոր չէ՛. հին բան է, բանտից եմ հետս բերել: Հիմի հո դպա ջահելություն չե՛նք երթա. տվողը ինչ որ տվել է, հիմի քիչ-քիչ ետ կառնի: Էդպես է աշխարհիս բանը: Ես էլ կամաց-կամաց ճամփա կիստկեմ դպա հորս քովը:

Ու չիբուխը խրելով գոտկի ծալքը՝ թեթև շարժումով ոտքի ելավ:

— Էրթանք բոստանը, մեկ քիչ տխ, թարխուն քաղենք: Էսօր կնիկս ինձի համար գառով փլավ է բերել, ուտենք իրար հետ:

Մարգերի նեղ արահետով քայլում էր Օհան-ամին՝ առանց գավազանի. նա տակավին գավազան չէր գործածում: Ասլանը կրնկակոխ՝ լեզուն դուրս ձգած՝ հետևում էր նրան:

Ես գնում էի նրանց հետևից:

Օհան-ամին կորաքամակ էր արդեն, գլուխը բավական թաղվել էր ուսերի մեջ. հաստ, բայց կարճ ոտները դեռ տուկուն էին ու ամուր:

Ասլանը՝ կասպավուն մազերով ածղահա գամփոը, իր տրեմի երրորդն էր, որ ապրում էր այստեղ: Նրա եղբայրներն ու քույրերն ապրում էին գյուղում, Օհան-ամու տանը:

Այս Ասլանից առաջ երկու Ասլան ապրել էին այստեղ՝ իրար հաջորդելով և նրանց թաղել էր Օհան-ամին բոստանի ծայրում ու վրաները քար ձգել:

Օհան-ամին թարմ կսկիծով մեկ-մեկ հիշատակում էր նախորդ ասլանների բարեմասնությունները, նրանց հետ կասկած ղեպքերը. նրանց անձնագործ քաջությունները:

Ասլանը Օհան-ամուց մի վայրկյան չէր բաժանվում. երբ իրար չէին տեսնում՝ անհանգիստ ու ջղայնացած որոնում էին իրար:

Իրար հետ սեղան էին նստում. Օհան-ամին ուտում էր իր ճաշը, Ասլանը՝ իր լափը:

Չմոռան երեկոները, Օհան-ամին բուխարիկի կողքին նըստած՝ լուռ, իր չիբուխն էր ծխում, Ասլանը նրա ոտների տակ, գլուխը թաթերի վրա դրած, լուռ, չիբուխի ծուխի պատրույզներին էր հետևում:

Երբ մեկը Ասլանի մոտ «Օհան-ամի» արտասաներ, նա

աչքերը կբանար լայնորեն, ականջները կտրեր, պոչը կշար-
ժեր: Օհան-ամու անունը թինդ էր հանում Ասլանի հոգին:

Վա՛յ թե մեկը Օհան-ամու բացակայության ժամանակ ձեռք
դիպցներ նրա որևէ իրին՝ Ասլանի գայրույթին չափ չէր լի-
նում, կհաչեր ու կգազազեր մինչև տերը գար. սակայն ինքը
սիրում էր խաղալ Օհան-ամու իրերի հետ: Հաճախ այսպիսի
հանաքներ էր անում: Թաքցնում էր Օհան-ամու թյուրյունի
քսակը կամ թաշկինակը, և սուտ-քուն մտած, ներքին հրճվան-
քով նայում էր, թե ինչպես իր տերը քրքրում է ամեն մի
անկյուն՝ կորցրածը գտնելու, և հետո, ինքը քնած տեղից ել-
նում էր, որոնում, գտնում իրը և ուրախ-ուրախ բերում հանձ-
նում Օհան-ամուն:

Մի օր եղբորս երեխաներն Ասլանին բռնել էին դաշտում,
ուժով տարել էին մեր տուն, փակել մի սենյակում, առատ միս
դրել առաջը, որպեսզի այս կերպով սովորեցնեին մեր տան
վրա: Բայց երկու օր Ասլանը գրեթե ոչինչ չէր կերել, անընդ-
հատ ոռնացել էր՝ մինչև որ մայրս արձակել էր նրան:

Եվ Ասլանն իսկույն, խելակորույս, սլացել էր Օհան-ամու
մոտ:

Երբ ես մի օր Օհան-ամուն պատմեցի Ասլանի կրած տան-
ջանքը մեր տանը, նա հանգիստ սրտով ասաց.

— Թագավորի պալատն էլ տանես ու ամեն օր հավ ու լոբ
տաս, էլի պտի պրծնի, գա:

Եվ ավելացրեց.

— Էս շուն է. հալա մեկ ասա՝ շուն՝ն: Էս մարդ արարած
չէ: Էս կնիկարմատ չէ: Էս շուն է—հավատարմություն: Մար-
դու բնույթն իսկի չի կրնա հասկանա շան բնույթը: Մարդը
սուտ է, հավատարմությունը մարդու համար անհասկանալի
բան է:

* * *

Լստեցինք ծառերի սովերում: Ասլանը սեղանակից էր մեզ՝
մի փոքր հեռու պազած: Մենք գառի ոսկորները նետում էինք
նրան, նա էլ ճարակորեն այնպես էր դիրքավորում գլուխը.

որ ոսկորներն ուղղակի ընկնում էին երախի մեջ և մի ակըն-
թարթում հզոր առամներով փշրում էր ոսկորները:

Օհան-ամին մի բաժակ օղի խմեց, մի բաժակ էլ ինձ մա-
տուցեց.

— Խմե՛, աղախաորս տղա, խմե, որ ուրախանանք: Էս
աշխարքում գլխավոր բանը ուրախասիրտ ըլնելն է: Ուրա-
խությունը բախտավորության կեսն է: Ինչ որ ըլնելու է՝ պի-
տի ըլնի, էս գլխեն ի՞նչ տալացուք ունենք տխուր ըլնելու: Էս
սհաթն է մեր ձեռքը. քանի էս սհաթը մեր ձեռքն է՝ ուրախ
ըլնենք, մեկ էլ սհաթի տերը մենք չենք, կարելի է կանք, կա-
րելի է չկանք:

Օհան-ամին բաժակը կրկնեց:

— Ես չար բան սիրող չեմ, կոիվ ուզող էլ մարդ չեմ. ու
վիճակիցս էլ շա՛տ գոհ եմ: Էս ջաղացը, էս կտոր հողը շա՛տ
է ինձ համար: Աշխարքը որ բաժնեն, կարելի է էսքանն էլ ին-
ձի չհասնի: Էնքան մարդիկ կան—անտուն, անհող, ետնյալ
աղքատ...

— Է՛յ, գիտի, Միրզա Մեհդի, ականջդ կանչե՛ թե որ ողջ
ես. թե էն է պառկել էս հողի տակ, տղերքդ ողջ ըլնեն: Էս-
պես մեկ տաղ կերգեր բանտի մեջ, երկու տարի միալար: Էդ
տաղի խոսքերը մտքիս մեջ տավել են: Քսան տարի է՝ ամեն
օր կրեսմ ինձ ու ինձ.

Կանաչ դաշտի պարզ հովիվը

Շահի ոսկե քլոշքից լավ է:

Քրտինքովդ կերած հացը

Սուլթանների ճաշից լավ է:

Շահիրների մուղամներից

Քամու ազատ շունչը լավ է:

Հարուստ, հպարտ ախպորիցդ

Սրտամոտ օտարը լավ է:

— Լավ խոսքեր են,— ասացի ես,— բայց ո՞վ էր Միրզա
Մեհդին:

— Էն աճամ էր: Իմ տարիքիս մարդ էր: Կեղծ փող էին
գտել քովը, բերել կոխել էին բանտը: Երկու տարի իրար հետ
շա՛տ սիրով ապրանք, կողք-կողքի, մեկ ամանից էինք ու-

պիտի կանգնի, որ գերան կոտրի: Հիմի՛ իմ ձեռքս առանց ուրիշի բերնից հասց փախցնելու՝ իմ բերնիս հացը կվաստակե, և ես արդար հացս միշտ կիսել եմ ուրիշի հետ, ծանոթ-անծանոթի հետ:

Ուրախ աղմուկով թևերը թափ տալով, եկավ խելառ Մխոն:

— Մխո ջան,— ասաց Օհան-ամին,— նստի հաց կեր:

— Մխոն էնքան ուրախասիրտ է,— դարձավ Օհան-ամին ինձ,— գիտես թե ո՛չ պատավանալ կա, ո՛չ մեռնել: Աշխարքը իրան վրա ծախես, մեկ կոպեկի չի առնի: Ամենն հարուստ մարդն է, ինչու որ ամենն գոհ ու կուշտ մարդն է: Ամեն բանի հաղթել է:

Մխոն Օհան-ամու քրոջ որդին էր՝ մանուկ հասակից որբացած: Մեծացել էր քեռու տանը, իբրև նրա որդիներից մեկը: Մոտ երեսուն տարեկան կլիներ, նեղ ճակատով, մեծ քթով և բարձրահասակ:

«Խելառշունչի մեկն է», գյուղացիները այսպես էին բնորոշել նրան: Խելառ-խելոք: Խոսում էր անկապ, տակից-վրայից, սարից-ծորից: Սակայն մշտական զվարթ տրամադրության մեջ էր այդ մարդը: Թվում էր, թե՛ երբեք տխրություն զգացած չէր կարող լինել նա: Աշխարհի չար իրերը նրան բարի դեմքով էին երևում: Ամեն բան ծիծաղի առիթ էր նրա համար— մահն էլ, մահի բոլոր տարրերն էլ— ցավ, հիվանդություն, ծերություն:

Մխոն ապրում էր Օհան-ամու հետ, թեև նրա մի ոտը ջաղացումն էր, մյուս ոտը՝ գյուղում: Միասին վարում էին իրենց փոքր տնտեսությունը՝ բաղկացած մի-երկու տասնյակ հավերից ու բադերից և կթան կովից: Միասին կռանում էին ջաղացքարը և սարքի գցում:

Մխոն անչափ նվիրված էր Օհան-քեռուն, նրա խոսքին՝ հլու-հնազանդ: Եվ միայն Օհան-քեռու հարցերին էր լուրջ պատասխանում:

Մխոն գոհակ չէր դնում, գարուն-ձմեռ: Մազերը թաղիքի պես կպել էին գլխի մաշկին: Միայն սաստիկ ցրտերին բաշտուղ էր փաթաթում գլխին:

Երբ գոհակ էին տալիս՝ նա մի կողմ էր նետում, ասելով.—

«Ի՛ն փափախս գտեք, տվեք՝ դնեմ. ուրիշը չեմ ուզե: Իմ փափախս վեցը հատ արասի արժեք»:

Գյուղի երիտասարդները, յուրաքանչյուր անգամ նրան տեսնելիս՝ հարցնում էին.

— Մխո՛ ջան, փափախդ ո՞ւր է:

Եվ Մխոն ամեն անգամ, օրական հարյուր անգամ իսկ, միննույն պատասխանն էր տալիս.

— Ի՞նչը:

— Փափախդ ո՞ւր է:

— Ո՞ւմ:

— Քու փափախդ ո՞ւր է:

— Փափախս, հա՛: Քամին տարավ փափախս: Չգիտեմ, խլելոի տարին էր, թե քեռուս ձիու կորած տարին, մեկ սատանի քամի ելավ, աշխարք առավ մեջ, ջաղացի քարի պես պտտցուց, ֆոռացրեց: Ես մե մենձ քարի տակ մտա, քարը բռնի, տափ եղա: Մենակ փափախս տարավ, էդ տանելն է, որ տարավ: Հիմի վո՞վ գիտե փափախս ո՞ր սարի գլուխն է դրել, ո՞ր ծովերու վրեն կտմբտմբա:

Ի՛նչ փափախ, ի՛նչ փափախ, վեցը հատ արասի արժեք:

Մխոն սեղանի ափին ծուկնի եկած՝ ձեռքն ընկածը խոթում էր բերանը և խնդումբերես նայում Օհան-ամուն:

— Մխո, գե՛ղն էիր,— հարցրեց Օհան-ամին:

— Վո՞վ:

— Դու գե՛ղն էիր:

— Չէ, քեռի ջան, գնացել ճամփու վրեն կայնել էի Էկող-Էրթացողի հետ մե-քիչ խորաթա էնելու:

— Քեռի ջան,— բարձր ծիծաղով ավելացրեց,— ըսին թե՛ հոռոմցի Բաթո աղեն մեռել է, հա՛, հա՛, հա՛, մեռել է:

Եվ ծիծաղից դողում էր ողջ մարմնով:

Օհան-ամին աչքերը մի պահ գոցեց, ձախ ձեռքով տրոբեց ճակատը և ապա աչքերը վրաս հատելով՝ ասաց.

— Գող-գուփողի մեկն էր, աղքատի շապիկը վրայից հանող: Տեղովը որ արև-արեգակ ըլներ էդ Բաթո աղեն, էլի մեկ մարդու չէր կրնա տաքացնե:

Ողորմի՛ կողքի մեռելներից...

Եվ մի երկու ումպ թելից հետո՝ շարունակեց.

— Լավ կճանչնայի, ինչքան որ ազահ էր, էնքան էլ կծծի էր: Աշխարքը իրան տայիր՝ աչքը էլի մրջյունի տարած մեկ գարու հատիկի վրա կըլներ: Ազահ մարդու փորը կրճա կուշտ ըլնի, բայց աչքը միշտ անոթի կըլնի:

Էս մարդը բան էլ չէր ուտում, միալար կդիզեր ու կդիզեր: Տղա զավակ էլ չուներ. դիզածը մնաց փեսաներին: Էդպես է աշխարքիս բանը՝ կծծի մարդու վիզը ոջիւը կուտե, փողը՝ ուրիշը:

— Մարդը գնացական է,— ամփոփեց իր մտքերը Օհանամին,— նրա լավ գործը՝ մնացական. ըսել է՝ ինքն է մնացական: Ա՛յ, խոսքի օրինակ, էս շաքարը գցեցիր չայի մեջ, հալավ, կորավ, չկա. բայց չայն անուշցավ: Էնպես էլ լավ մարդը կմեռնի, բայց նրա լավ գործը աշխարքը կանուշցնե: Թե չէ առանց լավ մարդու աշխարք շա՛տ դառն է՝ օձի լեղի...

— Վո՛վ,— հարցրեց Մխոն:

— Բարթո աղի վրա է խոսքս, Մխո ջան:

— Որ մի բրդուն հաց տար ուրիշին, ի՞նչը կծովեր,— ասաց Մխոն քրքջալով:

— Ղուրբան եմ եղել էդ ճակատիդ, Մխո՛ ջան,— խրախուսեց Օհան-քեռին մի մեծ կտոր շաքար Մխոյին տալով, որը դոթ-դոթ աղմուկով մանրեց ատամների տակ:

Քայլ առ քայլ երեկոյանում էր: Լեռները ծփում էին մանուշակի գույների մեջ. արևածաղիկները ոսկե գլուխները կախում էին: Դաշտերից ու արտերից դանդաղ-դանդաղ տուն էին դառնում շինականները:

Ես վեր կացա գնալու: Օհան-ամին ուղեկցեց ինձ մինչև բոստանի ծայրը՝ ճանապարհին մի քանի մատղաշ վարունգներ քաղելով ինձ համար:

Բոստանի ծայրին կանգնեցինք: Օհան-ամին ծանրությամբ նայեց շուրջը— դաշտերին ու գետի փայլփլուն ոլորներին, դաշտերի մեջ ձգվող շավիղներին, նայեց հեռավոր լեռներին, որոնց նայել է տասնյակ տարիների ընթացքում, և մայր մըտնող արևին նայեց, ու չիբուխը վառելով ներս տարավ մի ումպ ծուխ, և ապա ծուխ ու հոգոց իրար խառնելով, ասաց.

— Է՛է՛հ, ծերացա՛նք, ըսել է՝ եկանք հասանք ծերին: Ամեն ինչի ծերին, կյանքի ծերին, աշխարքի ծերին... Վնաս չունի:

Մեկ խնդրանք ունիմ— քանի ողջ եմ, ոտ ու ձեռով մնամ, գետնին գերի չըլնիմ, աշխատեմ, ու Էստեղ, ջաղացիս դուռը նրստած, համբերանքի չիբուխս քաշեմ ու ամեն օր լսեմ բարի, ուրախ լուրեր աշխարքիս չորս դիերից, ամեն կողմերից: Էլ ուրիշ բան չեմ ուզի...

* * *

Իմ սիրելի՛ Օհան-ամի:

Շա՛տ և շա՛տ տարիներ եմ անցել այն օրերից, շա՛տ բան է խավարել իմ հիշողության մեջ, սակայն անջնջելի է մնացել քո նահապետական պատկերը իմ հոգում:

Եվ հիշում եմ միշտ քո անմոռաց գրույցները, և քո համբերանքի չիբուխի խաղաղ ծուխը աչքիս առջևն է դեռ, և քո հանգիստ, հնամենի ձայնը ականջումս է տակավին...

1928, Երևան:

Ավանդաբար կիրառվող մի սովորույթ կար Շիրակում, որ մեր քուրդ հովիվներն արածացնում էին մեր հոտերը մինչև աստվածածնա պասի երկուշաբթին, այսինքն՝ մինչև օգոստոսի սկիզբները: Ապա ոչխարները հանձնելով տերերին, հովիվները, վարձերն առած, ծանրաբերձ էշերն առջևները ձգած՝ վերադառնում էին իրենց դշլաղները՝ Երասխաձորի, Կողբի և Ղարաբաղի ձորամիջի քարանձավները:

Հովիվների չուխց հետո՝ ոչխարները հովվում էին գյուղի պատահիները մինչև ուշ աշուն, մինչև ձյունը դնելը: Սակավաթիվ ոչխար ունեցողները հանձնում էին իրենց ոչխարները շատ ունեցողներին:

Երկու տարի ես հովվություն եմ արել բացարձակապես միայն «արվեստի սիրուց»: Մինչև որ քաղաքում դպրոցները կբացվեին, և կսկսվեին դասերը: Այն ժամանակ ես դժկամությամբ թողնում էի գյուղն ու հոտը՝ սիրելի ոչխարներս հանձնելով ուրիշին, և գյուղացիացած ու խարկված դեմքով գնում էի քաղաք, բանտարկվում դպրոցի ճնշող պատերի մեջ, ձեռք առնում ձանձրալի գրքերը և գերի դառնում վարժապետների խստապահանջ իշխանությանը:

Ես պիտի պատմեմ իմ հովվական օրերից մի օր, մի գիշերվա կյանք: Անհուն քաղցրությամբ ապրած մի գիշեր՝ բնավ չկրկնվող: Անխառն ու անթերի մի գեղեցկություն:

Քսան-քսանմեկ պատահի ընկերներով հովվում էինք մեր սովոր հոտը: Ես 15—16 տարեկան էի, մեր ավագ ընկերը՝ Սումբատը, որին անդիմադարձ հպատակվում էինք, կլիներ 23 տարեկան: Ընկերներից մի քանիսը զինված էին հրացաններով: Օգոստոսի վերջին գիշերներից մեկն էր. լուսինը դեռ ծայր չէր տվել: Հոտը մակաղել էր. մի-երկու ընկեր հերթով

պահակ էին կանգնել: Գամփոնները թափառում էին հոտի շուրջը:

Մենք հավաքվել էինք հոտին մոտիկ, ձորակի լանջից բըխող աղբյուրի բլուրը: Գավերով կաթը դրել էինք ջրի մեջ, որ սառչի: Տավարի չոր աղբից խարույկ էինք վառել և վրան դրել մեծ կաթսան ջրով լի՝ թեյի համար: Գետնախնձորներ էինք թաղել պեծացած մոխիրների մեջ՝ խորովելու համար:

Ընկերներից ոմանք պառկել էին յափունջիների կամ թաղիքների վրա, ոմանք փովել էին գետնին՝ կողքի կամ մեջքի վրա, կամ բերանքսիվայր:

Սումբատը՝ հասակի և փորձի բերումով մեր հովվապետը, թիկն էր տվել մի մեծ քարի, ծխում էր հաստ թղթով փաթաթած, խոշոր, կոպիտ գլանակը, որից մեծաքանակ կծու ծուխ էր ելնում, և հրամաններ արձակում՝ ահագին դաշույնը շարունակ ձախ կշտից առաջ մղելով: Երկու գամփո, Սումբատի ոտների տակ, թաթերի վրա գլուխները դրած՝ խորունկ մրափում էին:

Բարակ հովը մեղմիկ սվսվում էր խոզանների վրայով, ծղրիդները՝ մոտիկ ու հեռու, հիթմիկ ծղրտում էին, անտեսանելի հավքերը հնձած արտերի մեջ անուշ ճթճթում էին, և ոչխարները մնում էին անհուն բարությամբ:

Հովը բերում էր գյուղերից ու ճանապարհներից շների ընդհատվող հաչերը, բեռնամբարձ սայլերի ճոխչները, և անորոշ ձայների բեկորներ...

Այս բոլոր ձայներն ու ձայնի հյուլները ձուլվել էին մի անհատական լուռության մեջ, որ ինքնին մի ներդաշնակություն էր: Մի հազարամյա լուռություն, որ սկիզբ ու վախճան չունի, ծորում էր հոգուս մեջ ու տարածվում մարմնիս բոլոր կետերում և, ինձնից դուրս, տարրացած ծավալվում էր մինչև անեզրության ասփերը:

Եվ այս տարերային լուռությունը երգ էր դարձել իմ հոգում: Ես պառկել էի մեջքիս՝ գլուխս ձեռներիս վրա դրած. և նայում էի երկնքին: Մուգ թավշյա մի խորունկ երկինք, ուր, կարծես, հենց գլխիս վրա հավաքված էին բոլոր երկինքների բոլոր աստղերը: Եվ կարդում էի ասպագայիս ոսկետառ գիրքը, որ էջ առ էջ բացվում էր հիացմունքով վառված աչքերիս

առաջ: Ապագա՛—չքնաղ սպասելիքների, ադամանդյա հույսերի անծայր Ծիր-կաթին:

Կյանքը՝ իրականապես, թվում էր ինձ մի կախարդական ճանապարհ, որի դռանը վրձնում էր ոսկեսանձ Գոլգոթա, դոփում էր գետիցը և ինձ էր սպասում: Եվ ինձ էր սպասում ճանապարհին կոիվ և պայքար, սեր և երազած աղջիկ. անկում և բարձրացում, հաղթանակ և միշտ հաղթանակ—ու բնավ մահ: Որովհետև կյանքը անմահություն էր նշանակում, և մահ չկարճակատիս գրած:

Մի հոյակապ տրամադրություն, այսպիսի մի գերագույն ինքնագզացում:

Լսում էի հոգուս ներքին երգին, և արյունս ցնձագին կարկաչում էր երակներիս մեջ՝ ողջ էությունս ողողելով մի անպատմելի, տարերային երջանկությամբ:

Սիրտս պտունկ-պտունկ լցված էր մի հզոր, ամենատարած սիրով, որ հեղեղանման գեղում էր դեպի բոլոր արարածները և դեպի բոլոր իրերը: Ուզում էի գրկել և համբուրել և՛ ընկերներիս, և՛ բոլոր մարդկանց, և՛ ոչխարներին, և՛ քարերն ու սարերը: Եվ տիեզերքի բոլոր աստղերը համբուրել էի ուզում:

Եվ գգում էի ինձ բոլոր արարածների և բոլոր իրերի մեջ՝ անմեկին և անբաժան—և՛ թփի ու քարի մեջ, և՛ ջրի ու հողմի մեջ, և՛ ամպի ու աստղի մեջ... հյուսեացած ու տիեզերացած...

Երազանքից հանեց ինձ ընկերներիս խոսակցությունը:

— Ա՛խ, մարդ էս աշխարքի մեջ կամ Քյորթլի պտի ծնվի, տղամարդ գա ու տղամարդ էրթա, կամ իսկի չծնվի: Քյորթլի էղնես, սիրածդ աղջկան առնես ու թոնես էս սարից էն սարը. դեմդ էլնողին թրի բերան տաս...— ասում էր մի ընկեր:

— Դրո՛ւստ է, մարդ էս աշխարքի վրա թե որ շուն էլ ծնվի, մեր Քյալաշի պես գեղ-խեղողող շուն ծնվի,—վրա բերեց մի ուրիշը:

— Դո՛ւ ի՞նչ կմտքես,— դարձավ ինձ առաջին խոսողը:

— Հա՛, Սողոմոն ջան, առնես ու թոնես էս սարից էն սարը... էս սարից էն սարը...

Եվ արդեն մեր պատանեկան սրտերը ամենից շատ երկու բան էր թինդ հանում—սերն ու քաջությունը: Բոլորս էլ երա-

զում էինք՝ մեր սիրած աղջկան առնել ու դաչաղ լինել. ավագակ դառնալ, անուն հանել, աշխարհ սասանեցնել...

Վերադարձավ մեր ընկերներից մեկը, Հովակը, որ գնացել էր Սեմոյի հետ գյուղի բոստաններից մի բան «թոցնելու»: Պետք է ասել, որ գողությունը, և ավելացնել՝ հասարակ տեսակի գողությունը, հանցանք չէր մեր աչքում, այլ քաջություն ու շնորհք, ճարակություն ու պարծանք: Հովակյան կենցաղում սերունդից սերունդ քայլող մի գովված սովորություն:

Մեր ընկերները, բացառությամբ հովակյետի, հերթով գնում էին գյուղից հավ ու հավկիթ, բոստաններից վարունգ, գազար, գետնախնձոր թոցնելու: Երբ հերթն ինձ հասավ, ես, չհանդգնելով ուրիշի հավաբույնը մտնել, մորս հավերից չորս հատ թոցրի:

— Տո՛, ընչի՞ ուշացար,— գահավեժ շտապեց Լազարեթը, մինչդեռ մենք լարված հետաքրքիր նայում էինք, թե Հովակը ի՞նչ բարիք պիտի թափեր մեր առաջը:

— Հորդ մեռելի գլխուն վառվող մոմը շինող մեղրաճանճին կփնտրեի: Էդոր համար ուշացա:

— Գտա՛ր,— ծաղրելով հարցրեց մի ուրիշը:

— Մամիդ հոգու հացի թթխմորի ջրի մեջն էր ընկել,— հանգստությամբ պատասխանեց Հովակը:

Բոլորս Հովակի սրախոսության վրա ծափ տվինք ու գվարթ ծիծաղեցինք, ոմանք հրճվանքից ոտները օդի մեջ ճռճելով:

— Բա Սեմոն ո՞ւր մնաց,— հարցրեց հովակյետը:

— Հերը հիվանդ էր, մնաց տանը,— ասաց Հովակը և յափունջին դեն ձգեց ու գրպաններից ու ծոցից գետին թափեց մատղաշ վարունգներ, որոնց վրա միանգամից խուժեցին տասնյակ ձեռքեր:

— Տո՛ ինչքան քիչ էս բերել, մարդ-գլուխ մեկ հատ հասնի՛ չհասնի,— դժկամ նկատեց Լազարեթը:

— Անիրավը, Տեփան ամին, հազար աչքով կաշե բոստանին: Էն է՛ պտի վրա հասներ, ես՝ պո՛ւկ: Էսքանն եղավ: Հալալ էրեք: Գիլու բերնից կրնա՛ս միս փախցնել: Տղամարդ ես, է՛զուց գնա, բոյդ տեսնենք:

— Դե՛հ, լավ, հա՛ց քաշեք, հա՛ց քաշեք, անոթի մեռանք,—

հրամայեց Սումբատը, որը յուրաքանչյուր ժամի սկզբին ու վերջին մեռնելու չափ քաղցում էր և պայթելու չափ կուշտ կոխվում:

Արագ-արագ բացի՞նք մեր տավարջուղները (մախաղ) և յափուհեցու հարթ երեսի վրա շաղ տվե՞ինք հաց, պանիր, սոխ... Ուտում էինք ու գրուցում, ուտում էինք ու կատակում:

Ընկերս կողքս բռնե՞ց՝ աչքի ծայրով Սումբատին ցույց տալով: Սումբատը ահագին լավաշի մեջ սեղմել էր հավկիթ, սոխ, գետնախնձոր, իրեն բազկի թանձրությամբ բրդուհ էր շինել և գլուխը թափահարելով կտրում էր:

— Էնքան հաստ բրդուհ է, իսկը՝ տնփեսու վիզ,— ականջիս շշուշաց ընկերս: Ես հագիվ զսպեցի ծիծաղիս պայթումը, որովհետև չէինք սիրտ անում ծաղրել մեր մեծին: Այնպես վախենում էինք նրա զայրույթից:

Ունեինք միայն մի-երկու թեյի բաժակ: Հերթով խմում էինք պղտոր, ծուխ առած թեյը մի անկշռելի հեշտանքով:

Երբ կերանք-խմեցինք՝ թիկն տվինք մեր տեղերի վրա և սկսեցինք բաներ պատմել,— առակներ ու զվարթ դեպքեր, հրաշապատում անցքեր, դաշաղ Քյարիմի, գյուկչեցի Ղազարի ու գող Եղիկի քաջ արկածներից և նրանց վիպական սերերից: Ուռճանում-լցվում էին մեր սրտերը նրանց տիպարով: Եվ ամեն մեկս իրեն զգում էր մի սիրահարված կտրիճ դաշաղ-ասպես:

Մեզնից մեկը երգեց Քյորոլլիի երգերից, երգեց կրակված ձայնով:

— Ղազար ջան, շվի՞դ ածա,— թախանձեց Սումբատը,— շվիդ ածա, հոգուդ սատկիմ:

Ղազարը սկսեց նվագել եղեգնյա սրինգը: Կարծես հովերն էին շնկշնկում նրա պարզասիրտ սրնգի միջից, կարծես աղբյուրն էր կարկաչում կամ լուսնի շողերն էին կաթում սրնգի անուշ փողից: Վիշտ ու տվայտանք: Քաղցր, սրտաճմլիկ ու մեղամաղձիկ:

— Ա՛խ, Ծովինարս էստեղ էղներ, աշխարհարարատ մեկ գրոշի չէի առնի,— իրենից ելածի պես ձայնեց Սողոմոնը և գդակը նետեց վեր՝ մուտք տարածության մեջ, հետո ընկավ բերանքսիվայր և ճակատը թաղեց յափուհեցու մեջ:

— Գլադեն խելոավ,— ասաց Սումբատը,— տո՛, քու տունն ակոլի, Գալոյեցն Մոսե՛սը պտի էղնիս: Վերջդ էդ է:

Մոսեսի պատմությունը տարիներ առաջ պատահած մի սրտառուչ դեպք էր: Մոսեսը սիրահարված էր մի աղջկա վրա: Զինվորագրության վիճակն ելավ, Ռուսաստան սուլթաթ գնաց: Գյուղից մեկնելիս՝ հավատարմության խոստում է առնում սիրած աղջկանից: Երկու տարուց հետո գյուղ վերադառնալիս լսում է, որ աղջիկը ամուսնացել է ուրիշ մեկի հետ: Մոսեսը վայրկենապես թոցնում է խելքը, առնում է գերանդին և սկսում է կատաղաբար հնձել հանդի կանաչ, տակավին իսկ արտերը: Եվ մինչև վերջն էլ նա խելագար մնաց, հաճախակի կրկնելով սիրած աղջկա անունը...

— Քոո Սողոմի սեր քցածն էլ մեկ բանի նման էղնի, էլի՛ բան է— կարճ ու հաստ՝ պանրի տիկ,— շշուշաց Պարսամը:

Լավ էր, որ Սողոմոնը չլսեց, թե ո՞չ՝ պիտի գազազեր, կոխվ սարքեր: Նա այլևս մեզ հետ չէր, երազանքի մեջ էր՝ Ծովինարի հետ:

Լուսինն ելավ լեռան կողմից, և լեռան ստվերը փովեց մեր վրա:

— Ղազար ջան, մատներդ ուտեմ, ընչի՞ կտրեցիր, ածա՛, է՛, ածա՛:

Սումբատն էր ասողը: Ղազարը նորից նվագեց: Բոլորս լուած ու մտատարված լսում էինք նվագին: Յուրաքանչյուրս սուզվել էր իր հոգու ներսը և դեգերում էր իր երազների մեջ, իր սիրածի հետ: Նվագից բացի, լսվում էր հովի մեղմ շշուշուք և հոտի անուշ մնչյունը:

— Ածա՛, Ղազար ջան, ածա: Կարելի է, էն հիմի էստեղ է, մեր քովը:

— Ո՛վ, ո՛վ, ո՛վ,— ինքնասուզումից զարթնած հարց տվինք Սումբատին:

— Է՛ն, էլի՛, խաղի ու երգի սիրահարվածը...

— Էդ ո՛վ է, անունը ի՞նչ է:

— Անունը ես էլ չեմ իմանում, բայց էդոր պատմությունը գիտեմ, հիմի ասեմ՝ լսեք:

Մենք սթափվեցինք, թափ տվինք անրջային մշուշը մեր վրայից և սրեցինք ականջներս:

— Ժամանակով մի տղա է եղել, ջահել, սիրուն մի տղա,—
ակսեց Սումբատը:— Էս երիտասարդ տղեն շա՛տ է սիրում
եղել խաղ ու երգ, աշուղ ու սազանդար, սազ ու թառ, շվի
ու բլուլ:

Բան ու գործ թողած, հաց ու ջուր մոռացած՝ միալար լսել
է խաղ ասողներին, աշղներին ու սազանդարներին: Ուրտեղ
որ իմացել է կա մեկ երևելի խաղ կանչող ու ածող, փող է
փչել, բերել է քովը ու, օր ու գիշեր, աչքերը փակել, ո՛չ հացի
է ձեռք զարկել, ո՛չ էլ բանի, լսել է էնոնց, լսել է միալար ու
չի կշտացել:

Էսպես անցել է՝ ես կասեմ երեք տարի, դուք ասեք օխտը
տարի, մեկ էլ աչքը բացել, տեսել է, որ հարստությունը
պրծել է, բան չի մնացել: Ծախել է, ինչ ունի-չունի, տավար
ու արտ, փող է շինել, հետև բռնել է մեկ ձեռք երևելի սազան-
դարու խաղ կանչողներ, հանել է սարի գլուխը, թագավորի
վայել սեղան է բաց արել ու ասել է էնոնց. «Կերե՛ք, խմեք ու
ածեք, ինչքան որ փողս հերիք կանի: Ահա քսակս ձեզի:
Սծեք էն ամենե՛ն անուշ ու լավ երգերը, էն ամենե՛ն սիրտ
տրորող խաղերն ու երգերը, որ սար ու քար, հավք ու անա-
սուն, ծառ ու ջուր լսեն. իմանան՝ թե ի՛նչ անուշ բան է երգ
ու խաղը, թե ինչպե՛ս կյանքն ու աշխարհը կանուշանան
ու կթանկանան տաղերով ու երգերով: Թո՛ղ լսեն ու զուրկ
չմնան աշխարհի լավ բաներից, զուրկ ու խեղճ, անբան անա-
սունի պես չերթան էս աշխարհից...»:

Էդպես, կերգեն ու կածեն, մինչի սեղանը կպրծնի, փողը
կպարպի: Հետև սազանդարները կցրվեն, ինքն էլ գլուխը
կառնի ու մեկ կողմով կկորի:

Կասեմ, որ էն մինչի էսօր ողջ է, չի մեռել, կպտտվի աշ-
խարհի մեջ. մեկ օր էստեղ, մեկ օր ուրիշ տեղ: Բայց ուր-որ
մեկ տաղ կկանչեն, մեկ շվի կփչեն, մեկ սազ կածեն՝ էն ձե-
ռաց կուգա, դռան հետևը կամ մեկ պատի տակ պահ մտած
կլսե: կլսե մինչի վերջանալը: Անտես կուգա, անտես կերթա:
Էդոր պատճառով կըսեի թե՛ կարելի է՝ էն հիմի մեր քովն է.
ա՛յ, կարելի է էն մեծ քարի հետևը:

Եվ՝ Սումբատը աչքերը լարեց դեպի մեր թիկունքում կանգ-
նած ժայռը: Աենք ամենքս էլ, մի մարդու պես, դարձանք և

սրտատրոփ նայեցինք ժայռին ու նրա շրջակողմին: Այնպես
բորբոքված էր մեր երևակայությունը:

— Ղազա՛ր ջան, ածա, հիմի մե՛նակ է՛ն տղի համար ածա՛,
է՛ն տղի սիրուն:

Նորից թախանձեց Սումբատը և մի հաստ գլանակ վառելով՝
լափունջին քաշեց գլխին ու լռեց:

Ղազարը դեռ նվագում էր սրինգը:

Երգի սիրահարի պատմությունը խորապես ազդել էր բո-
լորիս հոգու վրա: Իրապես զգում էի, թե նա հիմա մեզ հետ
է, անտեսանելի, մեր կողքին նստած:

Չգիտեմ ինչո՞ւ, ես նրան պատկերում էի խորունկ ու
տխուր աչքերով, տակավին երիտասարդ մի տղա:

Ղազարը դադարեց նվագելուց: Եվ մենք փաթաթվելով մեր
լափունջիների ու թաղիքների մեջ՝ գլուխներս «կակուղ» քա-
րերին դրած՝ միամիտ սրտով քուն մտանք հովի շշմջունների
և հոտի անուշ մնչյունի ներդաշնակության տակ:

1929, Երևան

Պանդխտությանս տարիներում, մեծության մեջ շատ անգամ եմ սիրով հիշել իմ հեռավոր ընկերներից և բարեկամներից:

Շատ անգամ եմ մտքիս մեջ պատկերացրել նրանց և վերհիշել նրանց ինքնահատուկ խոսքերն ու բնորոշ դեպքերը նրանց կյանքից:

Եվ հաճախ ստույգ մխիթարություն եմ գտել այդ վերհիշումների մեջ:

Շատ մտերիմ դեմքերի միջից ստեպ կանգնել է ներքին հայացքիս առաջ իր գինվորական կեցվածքով երվանդ Միրաբյանը:

Հագուստը միշտ լավ մաքրած ու հարթուկած, կարծես, ասելի տակից նոր դուրս հանած՝ քայլում էր նա մորուքը ցցուն, բարձրավիզ, աչքերը փոքրացած ու արհամարհանքով դեպի շրջաշխարհը, ինչպես իշխաններն են քայլում, ինքնաբավական և ինքնասիրահար:

Այդ իշխանական ինքնագգացումը միշտ ունենում էր նա, երբ կուշտ կերած ու խմած էր լինում:

Երբ կուշտ կերած ու խմած էր լինում՝ աշխարհի իրերը իրենց տեղումն էին լինում:

Եվ ինքն էլ հաճախ ասում էր.

«Երբ կուշտ եմ լինում, երկրագունդը իր առանցքի շուրջը դառնում է կանոնավոր կերպով, իսկ երբ քաղցած եմ լինում, երկրագունդը դառնում է անկանոն կերպով»:

Երվանդը իր Տասնաբանյան ուներ, որ գրել էր մի ճերմակ խավաքարտի վրա և փակցրել էր իր անկողնու սնարին:

«Աշխատել ուրիշի տունը հյուր չգնալ, որովհետև անմարսելի է տանտիկնոջ հայացքը, որ համրում է վերցրածդ պատառները»:

Հյուրասիրությունն ընդունել ռեստորանում, ուր ինչքան ուռես, այնքան սիրելի կլինես խազեհին:

Ուրիշ մարդ այնքան ինձ համար արժեք ունի, ինչքան որ նա պետք կգա իմ կյանքիս և առողջությանս համար:

Թեև գլուխը փորի վրա է, բայց փորը գլխից վեր է:

Այն մարդուն հաց տուր, երբ հաստատ գիտես, թե առնվազըն փոխարենը պիտի ետ ստանաս:

Ամենաբաց և ամենախելոք մարդը փորը կուշտ պահողն է:

Կինը՝ կշտացնողինն է և ո՛չ թե նրան երկրպագողինը:

Ով որ հացիս եղ քսեց, նա իմ սիրելի և հարգված մեծ եղբայրն է:

Մի թշնամին հազար բարեկամից շատ է, մի պատառ հացը՝ հազար խրատից ու խորհրդից:

Ի սկզբանե էր նյութն, և նյութն հաց եղավ, և մտավ հացն ի փորի իմում և ապա եղև ի գլխո իմում խոսք, միտք և կամք...»:

Եվ Երվանդը՝ ամեն առավոտ, ուսուցչական իր պաշտոնին գնալուց առաջ, ուշադիր կարդում էր Տասնաբանյան, որսխազի ցերեկվա կյանքի ընթացքում անշեղ հետևե նրա պատվիրաններից:

Եվ գիշերը, քնելուց առաջ, նորից ուշադիր կարդում էր և հաշվի առնում օրվա մեջ իր արած քայլերը, թե արդյոք անսայթաք ընթացել է համաձայն Տասնաբանյայի տրամադրություններից:

Երբ մի անգամ, ընկերական շրջանում, խոսում էինք բարձրագույն կուլտուրայի և մարդու բարձր արժանիքների մասին և մարդկության վսեմ իդեալներից, նա դանակի պես կտրեց մեր խոսքը.

— Իզուր ջուր եք ծեծում,— ասաց նա,— ի՞նչ եք հասարակ բաներին մեծ-մեծ անուններ տալիս: Կուլտուրա՛... Ի՞նչ է կուլտուրան—հավելյալ կշտացում: Եվ մարդն էլ—խոսող անասուն: Ուրիշ ոչինչ: Ի՞նչ իդեալներ, ի՞նչ արժանիքներ, ի՞նչ բան...

Եվ ծոցի թղթապանակից հանեց լրագրի մի կտոր, ուր գրված էր, թե՛ Փարիզում կանայք հարցացուցակ են բացել, թե ինչպիսի՞ վարմունք պիտի ունենալ, որպեսզի ամուսիններն իրենց կանանց սիրեն:

Եղել են շատ գեղեցիկ, բանաստեղծական պատասխաններ, բայց մրցանակը շահել է մի կին, որը հայտնել է.

«Եթե ուզում ես՝ մարդդ քեզ սիրի, լավ կերակրիր այդ անասունին»:

— Ասողը կին է,— ավելացրեց նա,— այս աշխարհի ամենից գործնական, ամենից դրական բնակիչը և ոչ թե ձեզ նման ամսաքաղաքացի:

Այսպիսի դեպքերում մենք՝ առանց նրան հակաճառելու՝ զվարթ ծիծաղում էինք, իսկ ինքը ոգևորված ավելի տարածում էր իր «փորոլոգիայի» կամ «փորաբանության» մտքերի սահմանը:

Այս վայրկյանիս արձանանում է նա իմ առաջ:

Նստած ճաշում է, լիսպես իր տարերքի մեջ: Վերցնում է հացը սեղանի վրայից և հարձակվում է վրան, ասելով— «Հպատակվիր, ո՛վ հաց», և պատահոտում է այն սուր ատամներով: Այս կերպ և մսի, և կանաչի հետ: Եվ ճաշում է կերակրի ամեն հյուլեն զատ-զատ ծամելով, զգացումով և գիտակցաբար ըմբռնվելով:

Ճաշում է բոլոր բջիջների ու նյարդերի մասնակցությամբ, բոլոր կենտրոնացած, լիքը խորին ապրումներով մի սրբազան, խորհրդավոր ծես ու հանդես կատարելով:

Ահա նա վերջապես կշտացավ կամ թվաց, թե կշտացավ: Հիմա էլ նստել է սրճարանում, բազմության մեջ, «մարդկանց հետ միասին, բայց առանձին», ինչպես ինքն է բնորոշում իրեն: Ներամփոփ, բոլոր կապերը կտրած արտաշխարհի հետ, ինքն իրեն ապրելով, վայելելով իրեն:

Թեյ է խմում, թեյ է խմում և թեյ է խմում նախանձելի ակնորժակով և իր բոլոր եուլությամբ, և քթի տակ երգում է:

Ու չի սիրում: որ մարդիկ իրեն նայեն, խոսեն հետը, խանգարեն երանական իր կենսազգացումը:

«Ա՛խ, կուզենայի,— հաճախ տենչ էր հայտնում նա,— սրճարանում տախտակով մի խցիկ շինեին ինձ համար, նստեի մեջը, թեյս խմեի անվրդով, առանց որ ուրիշները ինձ նայեին և խմած բաժակներս համրեին»:

Ինչպիսի՞ զվարթ դեպքեր ու մանրամասներ էին պատմում Երվանդի շատակերության մասին: Պատմում էին, որ նա ամենափարթամ սեղանը մի կարճ ժամանակի մեջ խոռում էր, բառացի կերպով՝ ջնջում, և ասեսները հաճախ կատվի պես լիզում: Բան չէր ազատվում նրա բերանից: Խոշոր սուպովնիկով պիտի բերեին նրա համար սուպը, և առհասարակ ամեն կերակուր անպատճառ պիտի կրկներ: Իսկ ահագին սամովարը կես էր զգում:

Մի անգամ նա երկու ամիս մի մարդու մոտ պանսիոն էր մտել: Պանսիոնի տերը ստիպված եղավ Երվանդին մի կերպ հեռացնել:

«Երևակայեցե՛ք, նա ինձ սնանկացման հասցրեց: Յոթը գյուղացու չափ է ուտում: Եթե մի տարի մնար մոտս, այլևս երբեք ոտքի չէի կանգնի»:

Այսպես էր արդարացնում իր անքաղաքավարի վարմունքը պանսիոն պահողը և ավելացնում էր ժպտալով.— «Անիրավը աշխարհի ամենից ամբարտավան, ամենից անճոռնի շալվարն էր հագնում ճաշի ժամանակ, կապերն էլ ազատ արձակելով, որ շատ լցնի ներս: Խոհարարի և սեղանի աղախինի հետ էլ բարեկամացել էր. նրանք էլ լավ կտորները ընտրում, նրան էին տալիս»:

Սա արդեն Երվանդի փորձված գործելակերպն էր— մտերմություն մշակել խոհարարների և սեղանի սպասավորների հետ:

Մի անգամ Երվանդը ընկերներով ճաշում է: Այդ լինում է Բաբու քաղաքում, ոռոսական առաջին հեղափոխության շրջանում, 1905 թվին:

Ճաշի կիսին հանկարծ դրսից ոռումբի պայթյուն է լսվում: Բոլոր ընկերները թողնում են սեղանը և այլայլված փողոց վազում՝ իմանալու, թե ինչ է կատարվում:

Երվանդը տեղից չի շարժվում և, ամենայն հանգստությամբ, շարունակում է իրեն միշտ անդամաճան գալլի ակնորժակով վայելել սեղանը: Երբ ընկերները ետ են դառնում, տեսնում են՝ Երվանդը իրենց բաժիններն էլ կերել-սրբել է, և բազմոցում, թիկն տված՝ անուշ թմբիրի մեջ, աչքերը կիսախուփ, դանդաղորեն իր պապիրոսն է քաշում:

Երվանդը սովորություն ուներ դպրոցական ամառային արձակուրդներին իրենց գլուղը գնալու, հոր տունը, այնտեղ իր պարապությունը լիաճաշ վայելելու համար:

Սկզբում մեծ հոգատարություն էր հանդես բերում տնտեսության մեջ—բանջարանոցը ջրել, փեթակներին հսկել, սագիկներին, վառեկներին կերակրել ու խնամել, մինչև որ լավ հասնեին նրանք: Եվ հետո մեղր ու կարագ, վարունգ ու բանջար, սագ ու վառեկ, բոլորին քաշում էր որկորը, մաքրում փառավորապես և գնում:

— Տո՛, գելխո (շատակեր),—ասում էր մայրը ուրախ գայրույթով,— էլ հավ չթողիր՝ կերար, ամեն անգամ 15 հավկիթով ձվածեղ էիր ուտում: Տո՛ մարդակույ դև, էլ ի՞նչ թողիր մեզի:

— Մեր ջան, ճամփա պիտի երթամ. բա ի՞նչ անեի, չէ՞ որ ձին մտրակով չեն քշի, գարով կքշեն:

Հիշում եմ, մի օր ի՞նչ պատահեց ինձ: Թիֆլիսից գնում էի Լեհինական: Նույն վագոնում հանդիպեցի Երվանդ Միրաբյանին: Մենք մի սին պատճառով, թյուրիմացությամբ, խոսված էինք և իրար հետ չէինք խոսում: Վագոնում կային նույնպես լեհինականցի որմնադիր վարպետներ:

Գնացքը հենց որ շարժվեց՝ վարպետները բացին իրենց խուրջիցների բերանը և ամեն բարիք հանեցին մեջտեղ— հավի միս, գառի միս, ձկներ, միրգ, օղի, գինի, հաց, պանիր, կանաչի:

Ինձ ևս հրավիրեցին այս ճոխ սեղանին մասնակցելու: Ուտում էինք ու խմում: Ես աչքիս ծայրով նայում էի Երվանդին: Նա հեռու անկյունում նստած՝ ծխում էր և թավ ծխի միջից գաղտուկ, անցմաբեկի դիտում էր մեզ: Ես նրա հոգին լավ էի ճանաչում: Գիտեի, որ նա հիմա երևակայության մեջ մեր պատանները իրեն բերանն է տանում, մեր գավաթները պարպում, մեր ձեռքի թթու վարունգը կլանում և այսպիսով

իրեն քիմքը զովացնում, սակայն իրոք նա պապիրոսի թուլունով դառնացած թուքն էր կուլ տալիս:

Ես գիտեի, որ նա հիմա շատ է տանջվում, չարաչար տանջվում:

Խնդրեցի վարպետներին, որ Երվանդին էլ հրավիրեն, որովհետև վարժապետը իմ ընկերն է: շյուրասեր վարպետները միաբերան դիմեցին նրան:

— Վարժապետ ջան, դու մեր Ա-ի ընկերն ես եղել. կխընդրենք մեր ու քու ընկերոջդ խոսքը չկոտրես. համեցե՛ք՝ հաց անուշ արեք:— Երվանդը մեկը երկուս չարավ. ուրիշ ի՞նչ էր ուզում: Իսկույն, դեմքը երջանիկ ժպիտով պայծառացած և աչքերով ինձ խորունկ շնորհակալություն հայտնելով միացավ մեզ. բարևեց բոլորիս, և գլուխը կախեց ու սկսեց բանել երկու ձեռքով և բոլոր ատամներով:

Չանցավ մի քիչ ժամանակ, նա հասավ մեզ և մի քիչ էլ հետո գլխեց-անցավ մեզնից:

Երբ կերանք-պրծանք, վարպետները բերանները սրբեցին և, յափունջիների մեջ փաթաթվելով՝ պառկեցին քնելու:

Ես և Երվանդը ելանք կանգնեցինք վագոնի լուսամտի ստաջ, հաշտ ու բարեկամ, ամեն մի թշնամանք հարթած. լուռ ծխում էինք և բնության խուսափուկ պատկերներին հետևում:

— Կեցցե՛ս, սիրելի՛ս,— լուրջունը խզեց Երվանդը,— հին բարեկամը երբեք թշնամի չի դառնա, ասել է մեր գյուղացին: Դու, որ հավի ազդրը բերանդ էիր կոխում, սոխն ու բողկն էլ հետևից քշում ներս, գինին էլ վրան քաշում— ես ուտում էի ինքս ինձ ու ինձ հայհոյում.— Ա՛յ հիմար, ի՞նչ գործ ունեիր Ես մարդու հետ վատ լինելու: Հետը որ բարեկամ մնացած լինեիր, հիմա կողքին կլինեիր և հավի ազդրը ձեռքիդ: Ապրե՛ս, հիշաչար չեղար: Էդ լավությանդ փոխարեն հիմի քեզ մի խոսք կտակեմ, տեղը դուրս գա,— ոչ մի մարդու հետ վատ չլինես, մի օր պետք կգա:

Երբ հայրենիք վերադարձա, հարցրի Երվանդ Միրաբյանի մասին: Իմացա, որ բացակա է իմ գտնված քաղաքից և շուտով գալու է:

Ընկերներս շատ նոր բաներ պատմեցին նրա մասին: Շատ պատմություններից մեկն էմ ուզում հիշատակել, որ ինձ ամենազվարճալից երևաց:

Ամառները, սովորաբար, Երվանդի մայրը սարն է լինում. յայլեն, կթան տավարի հետ:

Մի անգամ, մի ոչխար հիվանդանում է. տեսնում են, որ սատկելու վրա է, մայրն ասում է. «Մորթեցեք, ուղարկե՞ք գեղը, գելխոն ուտե՛ք»:

Միսը մորթու մեջ լցրած ուղարկում են գյուղը: Երվանդն անասնական հրճվանքի մեջ է: Հայրն ու մեծ եղբայրը բացակա են լինում, տանն են լինում փոքր եղբայրը, քույրը և հարսը:

Երվանդը կարգադրում է մեծ թոնիրը և ակութը (փոքր թոնիրը) վառել:

Մինչև մեծ թոնրի կրակը կիջներ և բոգբաշն ու փլավը կեփվեր, նա ձեռաց փայծաղից, թոքերից խորոված է շինում ակութի վրա:

Երբ բոգբաշը պատրաստ է լինում, Երվանդը տանեցիներին դուրս է անում և թոնրատան դուռը փակում, որ ինքը մեն-մենակ վայելե, մանավանդ այն իրավունքով, որ մայրը հատկապես իրեն համար է ուղարկել ոչխարը:

Տանեցիները գիտենալով, որ սատակի միս է, դյուրավ հրաժարվում են: Չհրաժարվեին էլ՝ Երվանդը նրանց բան տվողը չէր: Երվանդը սկսում է ուտել մենակ ու անվողով: Ուտում է, ուտում է, այնքան է ուտում, այնքան, որ հափրացած, բթնկոխ եղած, գորտի պես ընկնում է մեջքի վրա, աչքերը չռած, ձեռները թափահարելով գոռում է.— Մեռնում եմ, մեռնում եմ:

Սակայն դուռը փակ է, ինքն էլ անկարող է եղել դուռը բանալու: Եղբորը՝ ստիպված՝ երդիկից վար են կախում: Երվանդի ոտներից ու ձեռներից բռնած հանում են դուրս, դնում են ծառի հովին, գլուխը սառը ջրով լվանում են: Ճար չի լինում: Մի բերան գոռում է.— Մեռնում եմ, մեռնում եմ:

Մի պառավ գեղջկուհու խորհրդով նրան դնում են սալի վրա, և գյուղի հարս ու աղջիկների ու երեխաների ծաղրի ու

ծիծաղի տակ եղբայրը քշում է սայլը, քարքարոտ ճանապարհներով, դարուփոս հանդերով, որպեսզի սալի ցնցումներից, վերովալրումներից շարժման մեջ ընկնի Երվանդի մարմինը և դյուրացնե մարտողությունը:

Չորից իջնելիս՝ սայլը շուտ է գալիս, լուծը կոտրվում, Երվանդն ընկնում է գետին:

Եղբայրը եզները տանում է տուն, ասելով.— «Դեհ, դու էստեղ կաց. թե չմեռար՝ էն է ոտքովդ տուն կգաս. թե մեռար, էն է քո ուզածը կկատարվի. չէ՞ որ միշտ ասում էիր՝ իմ նպատակն է կուշտ մեռնել. երբ կուշտ մեռնեմ, գերեզմանիս վրա գրեցեք՝ կուշտ մեռավ»:

Երեկոյան Երվանդը իր ոտքով հանգիստ դառնում է տուն, և բավական ախորժակով ընթրիքի նստում:

Լսեցի, որ վերադարձել է: Գնացի իր մշտական հաճախած սրճարանը: Իսկույն ճանաչեցի նրան: Դեռ ինքս ինձ ներկայացնելուց առաջ, հեռվից դիտեցի նրան:

Տարիները մեծ ավեր չէին գործել նրա վրա, միայն բավական պարարտացել էր և մի փոքր ձերմակել, բայց ընդհանուր տպավորությունը նույնն էր՝ երիտասարդ օրերի Երվանդ Միրաբյանը:

Նստել էր մեկուսի. իրենով երջանիկ և թեյ էր խմում խորին ախորժով և փիլիսոփայի անդորրությամբ, առաջվա պես անհաղորդ շրջապատի անցուդարձին, ներանձնացած, և օրվա լրագիրը առջևը տարածուն:

Մոտեցա: Սրտագին բարևներ փոխանակեցինք, իրար առողջությունն և տրամադրություն հարցրինք:

Մի քանի անգամ տեսակցելուց հետո, մի օր հարցրի.

— Երվանդ, տղերքը շատ բաներ են պատմում մասիդ: Ճի՞շտ են արդյոք:

— Ո՞րը, օրինակի համար:

— Թե մի ողջ ոչխար ես կերել:

Եվ համառոտակի վերապատմեցի դեպքը:

— Ճշմարտությունը չափազանցրած է, ոչխար չի եղել, գառ է եղել: Արդեն շատ պիտի զարմանայի, եթե աշխարհում ճիշտ բան պատմվեր:

— Երևի շա՛տ վատ օրեր տեսար վերջին տարիները—սով, փախուստ,— հարցրի ես:

— Այո՛, այո՛, թշնամիս չտեսներ:

— Լսեցի, որ թուրքերի արշավանքի ժամանակ գյուղումն ես եղել. ինչպե՛ս սիրտ արիր՝ մնացիր:

— Եղավ: Պատմեմ՝ լսիր:

Եվ մի բաժակ թեյ պարպելուց հետո՝ սկսեց.

— 1920 թվի աշնանն էր, ուշ աշուն: Թուրքերի արշավանքի ծանր օրերն էին: Շիրակից, Կարսից հայերը լցվել էին Փամբակ՝ իրենց տավարով: Ամեն տան պես մեր տունն էլ լիքն էր գաղթականներով: Ամեն օր մի եզ էին մորթում:

Մի օր էլ մի եզ մորթած, թոնիրները վառած, ամեն մարդ մի շամփուր բռնած միս էր խորովում: Հանկարծ լուր տարածվեց, թե ասկյարները մոտենում են: Շամփուրները իսկույն վար ձգեցին, և մի ժամ չանցած, բոլոր գաղթականները, մեր գյուղն էլ, մեր տանեցիք էլ հետները փախուստի ճանապարհը բռնեցին՝ հնար եղածի չափ պաշար ու տավար հետներն առած: Ես էլ հետևեցի նրանց:

Դեռ կես օր չկար: Մեր գյուղի գերեզմանոցի բարձունքից նայեցի խելակորույս բազմությանը: Իրար բոթելով փախչում էին նրանք: Ճանապարհ, կածան ու ձոր լցված էին հազար ու մի ձայներով. ամեն տեսակի ձայն կար—սայլերի ճոխնչ, ոչխարի մայոց, կովերի բառաչ, երեխաների ճիչ, կանանց լաց ու կոծ: Եվ այս բոլորի վրա աշնան բարակ անձրևը, անվերջ անձրևը:

Ես ականջներս խփեցի երկու ձեռքով և դարձա գյուղ: Դարձա գյուղ այն մտքով, թե միևնույն է, եթե ասկյարները չհասնեն ու ճանապարհին չսպանեն, ուրիշի դուները անոթի պիտի մեռնեն: Իսկ մեր տանը պաշար շատ կար. այնպես որ՝ եթե պիտի սպանեն, թող տանը սպանեն, գոնե կուշտ կմեռնեմ՝ հավատարիմ իմ սկզբունքին, թե՛ ավելի լավ է կուշտ մեռնել, քան քաղցած ապրել:

Մտա տուն, սկսեցի շամփուրները հավաքել. կամաց-կամաց խորովեցի և նստա ուտելու: Անվրդով ուտում էի և ինձ ու ինձ առում.— «Կե՛ր, կո՛ւշտ կեր, լա՛վ կեր. կուշտ մարդը բթանում է, խիստ չի հակազդում մահին, խիստ չի զգում մահի ցավն

ու սարսափը. օրինակի համար, ինչպես կուշտ կերած բուօծը այնքան է թմրում, որ վրան հարձակվում են, տեղից չի շարժվում»:

Եռանդով ուտում էի՝ հանգրստ սրտով սպասելով թուրքերին և իմ ճակատագրին: Երեկոյան դեմ ասկյարները եկան. տեսան ինձ միամիտ սրտով նստած եմ ահագին տանը, մեծ-մեծակ, թիկն տված բարձերին: Իսկապես այնքան կուշտ ու թմրած էի, որ հագիվ շարժվեցի, բայց չկարողացա ոտքի կանգնել: Չգիտեմ, գուցե նրանք ինձ խեցնթի տեղ դրին, սակայն բարևեցին ու եկան նստան կողքիս և սկսեցին ուտել: Բացի ինձնից, գյուղում մնացել էին ծեր ու հիվանդ մարդիկ, ոչ ոքի ձեռք չտվին, ինձ հետ էլ բավական բարեկամացան: Սակայն քաղցած էինք, և նրանք մեզ գրեթե ոչինչ չէին տալիս մեր տներում մնացած ահագին պաշարից ու ալյուրից: Նրանք գրավեցին այդ ամենը, նույնպես գոմերի անկյուններում ու հանդերում ցրված մեր տավարը: Իհարկե, ծերերից ու հիվանդներից շատերը մեռան: Գալով ինձ՝ ես մի կերպ ապրում էի՝ ասկյարների սեղանի փշրանքներով, արտերից ցորենի ու գարու թափած հասկերը, հատիկները հավաքելով, բույսերի արմատներով: Ու քառասուն գալլի ախորժակով ուտում էի ձեռքս ընկածը, քարից կակուղը—ամեն ինչ, որ կարելի էր ծամել:

Երբեմն այնպես անոթի էի լինում, այնպես անաստված անոթի, որ ձեռքս ինչ տեսակ կեռորանի արարած ընկներ՝ կպատառոտեի ու կլափեի հում-հում: Այստեղ հասկացա, որ կուշտ մարդն է մարդ. անոթի մարդը գազան է:

Սովից ոսկոր ու կաշի էի դառել. այնքան էի թուլացել, որ ծնկներս տակս ծալվում էին. մի տասը քալը չէի կարող անել առանց կանգ առնելու: Ճիշտ որ՝ մարդու հոգին բկից է ներս մտնում և մարդը հացի շենք է:

Հաճախ նստում էի մեր թափուր տանը, կիսավառ օջախի առաջ, դատարկ փորով, և երազում էի.— աչքերիս առաջ փոփում էին անցյալ բախտավոր օրերի ճոխ սեղանները, Բաքվի կլուբի բուֆետը բազմատեսակ զակուսկիներով—խափար, լոբի, սունկ, ձկն ու հավի կտորներ և այլն. և պատառաքաղը

ձեռքիս՝ ուտում էի սեղանի մի ծայրից սկսելով մինչև մյուս ծայրը, ընդհատելով Սմիրնովի օղու գավաթներով...

Երվանդը այստեղ կանգ առավ մի նոր բաժակ թեյ ըմպելու համար:

— Գարնան գլխին ասկյարները քաշվեցին,— շարունակեց Երվանդը,— գյուղացիք սկսեցին մեկ-մեկ վերադառնալ. մերոնք էլ եկան: Բայց սովը դեռ կար: Քսան տան միջից հագիվ մեկի երդիկից ծուխ էր ելնում: Ի՞նչ ունեին խեղճերը եփելու, որ թոնիր վառեին:

Անոթությունից թափվել էին հանդերը և տավարի հետ արածում էին: Կանաչ ուտելով փորները ուռել էին, աչք ու երես դեղին դառել: Ինչքա՞ն սովամահներ եղան...

Մեր գյուղին մոտիկ բլուրի կատարն էի ելնում՝ այնտեղից նայելու, թե՞ ո՞ր գյուղից ծուխ է ելնում, և քայլերս ուղղում էի այնտեղ: Պատիվս պահում էի, իբրև վարժապետի և գարուց ու թեփից եփած հաց էին տալիս, բոքոն, որ ուտում էի ամենահամեղ գաթայից ավելի ախորժակով:

Մի օր էլ, հարևան գյուղում կշտացրել էին ինձ ու մի գարի բոքոն էլ նվեր տվել: Ծոցս դրի և բերի տուն. խնամքով, գաղտնի թաքցրի իմ սնդուկում և կողպեցի, որպեսզի գիշերը, մերոնցից ծածուկ, մի-մի կտոր ուտեմ:

Գիտե՞ս, էն ժամանակ մի գարի հացը մի գլուխ արժեր: Հենց այդ օրը գյուղի տղերքը ուրախ, վազեվազ եկան հայտնեցին, թե մի ոռու է գյուղն եկել: Ծտապեցի մտքը: Կարմիրբանակային զինվոր էր: Առաջին ոռու մարդը, որ երեկվաց իբրև գարնան նշան—ծիծեռնակ: Սիրտս լցվեց մեծ ուրախությամբ. աչքերս՝ արցունքով. գրկեցի սուղատին և, համարյա համբուրելով, ասացի.

— Եղբա՛յր, ընկե՛ր, բարով, բարո՛վ եկաք. երկու տարի է ձեր կարոտով մնացինք. մենք ձերն ենք, դուք՝ մերը: Ի՞նչ կկամենայիք:

Սուղատը քաղցած էր:

Իսկույն վազեցի տուն, բոքոնը բերի և ամբողջ բոքոնը, հասկանո՞ւմ ես, ամբողջ բոքո՞նը սիրով և խնդրանքով տվի նրան՝ կարմիրբանակայինին:

Հիմա պիտի մտածես. ի՞նչն էր դրդիչը այս զոհաբերու-

թյան. որ կյանքիս մեջ թերևս առաջին անգամն էր կատարվում: Ես՝ Երվանդ վարժապետս, որ անձնասեր եմ, որ այն վայրենի սովի օրերում գազազված էի ու ավելի անասնացած, քան որ մարդն է կուշտ ժամանակը սովորաբար,—ես բերանիս պատառը, որ նույնիսկ մորս և եղբորս երեխային չէի տալիս, բոլոր սրտով տվի ոռուին, օտարին, տվի, որովհետև այն հաստատ համոզումն ունեի, որ կոմունիստ ոռուսի հետևից գալու է հաց, խաղաղություն և ապահովություն:

Երվանդը ավարտեց իր պատմությունը և ձեռքն առավ թեյի վեցերորդ բաժակը:

1929

Նոտր-Դամի տաճարի մոտերը, Սենա գետի ձախ ափը:

Հին Փարիզի այս մասը անձուկ և անկարգ փողոցների մի լքավիղ է: Այստեղ լիքն են փոքրիկ, էժանագին սրճարաններով և ճաշարաններով, որոնք ապաստարան են աղքատ, անօթևան մարդկանց:

Լուսաթաթախ և կենսաթրթիռ այս մեծափարթամ մայրաքաղաքում ցրտից և անձրևից, քաղցից և հոգնածությունից սպառված ընչազուրկները միայն այստեղ են գտնում լույս ու ջերմություն, ընկերություն և հանգիստ:

Մի քանի «սու»-ով ընդունում են սուրճը հիշեցնող մի սև, «տաք ջուր և նորից մի տասնյակ «սու»-ով ստամոքսի զարհուրելի գազանը խաբող մի արգանակ, մսի երևույթ ունեցող բաներով:

Այստեղ են վիճաբանում ու ճառում աղքատ հոետորներն ու փիլիսոփաները, խորհում ու սրախոսում, լուծում պետական, միջազգային և ընկերային հարցերը: Եվ վերջապես, այստեղ, «նորից մի քանի «սու»-ի գնով գիշերում են նրանք՝ չոր հատակների վրա կամ նստած տեղերում քնում են՝ անտեր գլուխները դրած սեղանների չոր տախտակներից: Իբրև հատուցում իրականության մեջ կրած զրկանքների՝ թերևս այս կարծր փայտերի վրա հանգչող գլուխների մեջ ավելի շքեղ երազներ են ծաղկում, քան մետաքսի բարձերին հանգչող գլուխների ներսը:

Կեսգիշերից անց էր, երբ «Լուի Քաթորգ» սրճարանից փողոց ելավ մի սովեր, անութի տակ մի դատարի պարկ և մինչև աչքերը քաշած, բնական ձևը վաղուց խաթարված մի

գլխարկ: Փողոցի լապտերի լույսը մատնեց նրա արգահատելի վիճակը—օրերով չսափրված սև դեմքը՝ ցցուն այտուկներով, ջարդված ուսերին մի հնամաշ վերարկու:

Սրճարանի խառնիճաղանջ ժխորը գրգռել էր նրա ջղերը. չէր կարողացել նիրհել կամ անըջել, ներամփոփվել իր խոհեղի և հուշերի մեջ:

Հասարակ սիգարեթների կծու և խիստ ծխով տապակված մթնոլորտը սրտախառնուք էր պատճառել նրան:

Կանգնեց գետի քարափին, հին գրքեր վաճառողների մոտ և լիաթոք շնչեց: Չմեռվա պաղ օդի մատներով շոյեց նրա քունքերն ու ձակատը: Անցավ սրտախառնուքը: Քայլեց...

Քայլում էր՝ աչքերը Սենայի ջրերին ձգած,—խավար հունի միջով անձայն, խորհրդավոր սողոսկում էր մի սև, մթին թանձրություն, որի վրա դողում էին լույսեր, լույսի կարմիր, դեղին, ճերմակ բեկբեկուն սյուներ:

Մի ավտո շաշեց և սլացավ նրա կողքով, վայրկենապես «տեսավ լուսավոր կառքի մեջ մուշտակով պարուրված մի կին՝ աչքերը գոց, գլուխը հենած մի երիտասարդի ուսին...

Արշակն իր բոլոր անտարբերությամբ նայեց և դեմքը շուտ ավեց դեպի գետը,— ինչքան նման էր ինքը՝ իր հոգին, իր կյանքն այս գետի մթին, անշշուկ մի ալիքին, որ սևամած գնում է, սողոսկում է...

Դեպի իրեն քսքսալով երերում էր ու դանդաղ հառաջանում մեկը: Ծուռ ոտներով, առանց վերարկուի: «Ինչքան խեղճ է սա մարդը,— մտածեց Արշակը.— ո՛ր կերթա, ո՛վ կսպասե գինքը: Ինձմեն ավելի թշվառ կերևա... ասել է՝ ինձմեն ավելի թշվառներ կան սա քաղաքին մեջ»:

Արշակի երեսին խստագին նայելով անցավ հասարակությունից տրորված այս խեղճ էակը, սակայն, ո՛վ կհետաքրքրվի, ո՛վ կուզե իմանալ՝ թե ինչ ահավոր վիշտ ու ցավ կա նրա կրծքի տակ... Ինչպիսի՞ գալարումներ այս փոշիների մեջ:

Ամեն օր առավոտյան ժամը 3—4-ին Արշակը գնում էր կենտրոնական կենսամթերքների մեծ շուկան, մի պատահական աշխատանք անելու՝ օրվա ապրուստը ճարելու համար: Այսօր իր ժամանակից վաղ դուրս եկավ սրճարանից՝ հեղձուկ օդի պատճառով: Թեև կեսգիշերից սկսում է մթերքների հե-

տըզհետե տեղափոխումը դեպի շուկան, բայց ետուն աշխատանքը տեղի է ունենում ժամը 3—4-ին:

Հսկա քաղաքը խորին մրափում էր այս պահին: Մի պաղլ լուռություն կար բոլոր փողոցներում: Այս լուռությունը թեպետ հանելի էր Արշակին, հանգստացնում էր նրա գրգռված շղերը, սակայն փչում էր ցրտաշունչ մի քամի՝ վայրկյանե-վայրկյան գորեղանալով: Կարելի էր հավատալ, որ քամին գալիս էր ուղղակի հյուսիսային բևեռից: Սղոցի պես կտրում էր, կիսում էր Արշակին: Դողում էր նա, ատամներն իրար զարկելով:

Իջավ մետրոյի աստիճաններով ցած, քամուց պատսպարված գուրը: Մետրոյի բերանից փչում էր մի տաք շունչ: Վանդակավոր գոց դռների առաջ կուչ եկած կալին՝ իրար վրա, մարդկային սև զանգվածներ՝ թե՛ այրեր, թե՛ կանայք: Արշակը բռնեց մի ազատ տեղ, մեջքը դեմ տվեց ներսից բխող տաք շնչին: Պարկից հանեց լրագրի թերթեր, նրանցով փաթաթեց ոտներն ու ծունկերը, ձեռներն անցրեց թեզանիքների մեջ և կծկվեց:

— Օրհնյալ ըլլա սա մետրոն, աղքատներու «կենտրոնական ջեռուցումը»:

Արշակն ուր ամսից ի վեր գործագուրկ էր. միջազգային տնտեսական տագնապը նրան փողոց շարտեց: Գործ չկար: Եվ բացի այդ՝ աշխատելու իրավունք չուներ. առաջ, նորից աշխատանքի թուղթ չուներնալով հանդերձ, ծառայում էր մի հայի գարաժում: Ավտոներն ընդունում էր, ցուցակագրում, պահում, մաքրել տալիս և վճարները գանձում: Գոհ էր՝ ժամանակ ուներ թերթեր, գրքեր կարդալու: Իշխանությունն աչքը գոցում էր, բայց հետզհետե խստանալով տագնապը, հետապընդումներն ավելի սաստկացան. հայը վախենալով օրինազանցության տուգանքից՝ արձակեց Արշակին:

Նրանից առաջ մի բարի ֆրանսիացու մոտ էր, որը մի՞ ծիանի սալ ուներ... դրսից՝ դաշտերից սև հող էին բերում հարուստների պարտեզների համար: Նորից գոհ էր. բայց իր բախտից ֆրանսիացին հիվանդացավ. կինը սալը վաճառեց:

Արշակը շատ աշխատեց թուղթ ձեռք բերել՝ չկարողացավ. վերջին տարիները դժվարացել էր աշխատանքի արտոնու-

թյուն ստանալը: Փող պետք էր մեջտեղ խաղացնել. բայց փող որտեղի՞ց: Չեղավ ու չեղավ:

Գործազրկության առաջին շրջանում ծախեց ժամացույցը, գգեստներից: Ընկերներից պարտքեր արավ, քաշքշվեց մի կերպ: Այնուհետև սպասվեցին բոլոր միջոցները: Ամենուրեք մերժում. ամեն դուռ՝ գոց, ամեն ճանապարհ՝ փակուղի: Ինչպե՛ս եղավ, ինչպե՛ս ընկավ, ինքն էլ չհասկացավ:

Արշակի ներքին աչքերի առաջ ներկայացան ու կենդանացան իր անցյալ կյանքի օրերը: Պատերազմից առաջ իրենց սիրուն ավանը՝ դալար պարտեզների մեջ, կարկաչուն առուներով օրորուն... Հայրը, մայրը՝ այն սուրբ կինը, եղբայրը, քույրը, ընկերները...

Վերքեր, վերքեր, հիմ ու նոր վերքեր... հորը թուրքերն ապանեցին, մայրը տեղահանվեց դեպի Միջագետք և... կորսվեց, քրոջը, լույսի պես՝ քրոջը, թուրքերը տարան, ինքը պատերազմի հայտարարումից քիչ առաջ արդեն թուրք բանակի մեջ զինվոր էր, ականատես չեղավ իր հարազատների կորուստին, սակայն պատերազմից հետո փոքր եղբորը գտավ որբանոցում, թոքախտի վերջին շրջանում և քիչ ժամանակ անց, խեղճը մեռավ իր գրկի մեջ. բայց ի՞նչ եղան ընկերները՝ ա՛խ, Պետրոսը, Արտաշեսը, Է՛լ գիդի Տիգրանը... ի՞նչ եղան... Ինչպես էին դպրոց գնում, ինչ ճիչով, աղմուկով, չանթաները գրքերով, տետրակներով, ուտելիքներով լեցուն. չանթաներն իրար կոնակի զարկելով՝ դպրոց էին գնում... «Մեղրագետը» ծայրեծայր կարդաց. «Գյուղիս ճամփան», ա՛խ, գյուղիս ճամփան, ի՞նչ գեղեցիկ քերթված է, գոց գիտեր, ընդհանուր ազգաց պատմություն, հայոց պատմություն հանույթով էր սովորում. թվաբանություն բնավ չէր ախորժում. քերականություն՝ «ես կերթամ, դուն կերթաս, ան կերթաս». «ես կուտեմ, դուն կուտես, ան կուտես». ճշմարիտ է, առաջ ամենքս կուտեինք, հիմա՝ ես չեմ ուտեր, սա իրողություն է, դուն չես ուտեր՝ թերևս այդ ալ իրողություն է. ան չուտեր. ոչ, հարկավ մեկը կա, որ կուտե կամ դուն կուտես, կամ այն կուտե. «ես չեմ ուտեր». և մտքի մեջ անվերջ խոնարհեց—ես չեմ ուտեր: Մտածումը ցրվեց, անորոշացավ: Սակայն հոգու մեջ մեքենայաբար դառնում էր՝ «ես չեմ ուտեր, ես չեմ ուտեր...»:

Կողքին քնածն ուժով խոնվում էր, Արշակը դարձավ իրական աշխարհին, մտքերը որոշ գույն ու ընթացք առան նորից...

«Սա անիծված պատերազմը... թուրք բանակի զինվոր էր Միջագետքում, Բաղդադի ճակատին, անգլիացի և հնդիկ զինվորների դեմ... իրեն վաշտի ճակատից ճակատ փոխադրվելու ընթացքին, ճանապարհին տեսավ կողոպտված, ավերված հայ գյուղեր, տեսավ տեղահանված հայերի խմբակներ՝ կանայք, ծերեր, երեխաներ. ոչ մի երիտասարդ չկար մեռները. ցնցոտիներ հագած կմախքներ, ոտով գնում էին թուրք ձիավոր ոստիկանների հրացանների տակ... լացով գնում էին նրանք. գերմանացի սպաները լուսանկարում էին այդ թշվառներին... Իրենց վաշտից գատում էին հայ զինվորների և տանում անհայտ ուղղությամբ. անվերադարձ... ինքը հրաշքով ազատվեց. վիրավորվել էր աջ ոտից, թեև բուժվեց, բայց մինչև օրս էլ, երբ ցուրտ է լինում կամ շատ հոգնած, ոտը ծանրանում է, կարծես, ծանր երկաթ լինի կախված ոտից... Հիվանդանոցում նրան խնամեց մի արաբ զինվորական բժիշկ և մոտը պահեց իբրև սպասավոր մինչև պատերազմի վերջը... Թուրքերը պարտվեցին. զինադադար... Ինչ խանդավառությամբ շտապեց Կ. Պոլիս: Դաշնակիցները գրավել էին Պոլիսը. տրամվայի վրա տոմսեր վաճառող եղավ. լավ էր, ուրախ էր. գիշերները լուսացնում էր ընթերցանությամբ. այնքան նոր գրքեր կային, սակայն Հյուզդյի «Թշվառները» նորից կարդաց... Աչքերի առաջ նազով ու գեղով մի պահ կանգնեց Սիրարփին... Բայց լքեց Արշակին, անսիրտ կերպով լքեց, գնաց ուրիշի հետ: Թերևս լավ եղավ: Ինչքան ավելի դառն վիճակ պիտի լիներ, եթե նա հիմա հետը լիներ,—անհաց, անօթեվան...

Այնուհետև փախուստ. Բուլղարիա, Ռումինիա. երբեմն զբաղմունք, կուշտ օրեր, բայց հաճախ—անգործ, անոթի թափառումներ, հետո՝ Մարսել, Փարիզ, բայց նորից լավ էր, սակայն հիմա, հիմա, բայց հիմա...

Հանդիպակաց մի մեծ շենքի աշտարակից խավարն ու ցուրտը ճեղքելով հատ-հատ զարկեց ժամացույցը—զրնկ, զրնկ, զրնկ, զրնկ: Ժամը չորսն է: Բոլոր փողոցներից, լայն ու նեղ,

վազում էին դեպի կենտրոնական մթերաշուկան անհամար ծանրաբեռնված կառքեր, ձիով կառքեր. երկաթուղի, ամեն տեսակի կամիոններ: Դեպի Փարիզի փորը՝ սուկավիթխար փորը:

Շուտով պիտի զարթնի, ահա շուտով կզարթնի հսկայամարմին քաղաքը չորս միլիոն որկորանի Լևիաթանը: Պիտի զարթնի և գիշերվա հանգստից ուժովցած ստամոքսով սեղան պիտի նստի և պիտի լափե ու խժոճե, պիտի կլանե ու խմե այն անհուն, անհամար, անբավելի բարիքներն ու չարիքները, որ բազմամիլիոն աշխատավոր ու չարչարված ձեռքեր՝ երկրագրնդի տարբեր կետերում որսացել են, հանել են, բռնել են, ցանել են, հնձել են, մաղել են, մաքրել են, պատրաստել են ու բերել այդ ճիվաղային որկորի համար, այդ հրեշային գազանի համար—Կանադայից ու Կալիֆոռնիայից, Ալժիրից ու Սիբիրից, Իսպանիայից և Իտալիայից, Եգիպտոսից և Հըսդկաստանից, փոթորկահույզ ծովերից և մթին անտառներից, անծայրածիր դաշտերից, երկնքի կապույտ ոլորտներից...

Արշակը դժկամորեն ելավ երազային մտորումներից, ոտի կանգնեց, ցնցեց մարմինը, ձեռները վեր-վար, ետ-առաջ թափահարեց, թերթերը հավաքեց պարկի մեջ և ուղի ընկավ:

Աղջամուղջը սև լոռությամբ շաղափել էր քաղաքի հսկա շենքերն իրար հետ: Տների պատուհանները խավար էին, փողոցի լապտերները՝ նոսրացած:

Դեպ իրեն գրոհ էր տալիս ձիավորների մի ուրվաբանակ: Իրականություն, թե՛ բանդագուշանք: Սակայն հաղթակազմ ձիերը փնջալով հառաջանում էին՝ երկաթե սմբակներով ծեծելով սալահատակները: Ահագին աղմուկն ու դղրդոցը ցնցում էին քաղաքը, վախ ու սարսափ ձգելով սրտերի և տարածությունների մեջ: Արշակի զարհուրած հոգին ապրեց պատերազմի ահեղ տեսիլները նորից: Թաքնվեց դառն մի խորշում: Լապտերի լույսի տակ տեսավ զինավառ ձիավորները՝ շրջապատած վարում էին մի բազմություն այդ մարդկանց՝ ձեռները շղթայակապ. երիտասարդ, տարեց, ընկճված և խիստ դեմքեր, գլուխները՝ կոր և գլուխները՝ ցից:

Լուռ, լուռ, լուռ:

Անցան գնացին:

Արշակը ելավ թաքստոցից, շունչ առավ, շնչեց, սրտի զարկը խաղաղվեց: Ովքե՞ր էին, ո՞ւր էին տանում. բա՛նտ, աքսո՞ր, տեղահանություն... Բացատրություն չուներ:

Արշակը մտավ ընդարձակ շուկայի սահմանը: Մի ամբողջ աշխարհ: Լույս: Լույս ամեն կողմ: Իրարանցում, եռուզեռ: Կառքեր, կամփոցներ, մարդիկ, ձիեր, կանայք, կամփոցներ, նորից կառքեր, նորից ձիեր, մարդիկ՝ ցրտահար, արևակեզ, կարմրած, սևացած: Ճիչ, աղմուկ, ժխոր, բոռոց, խրխիճ՝ ծիծաղ, գայրույթ, կատակ, գոռոց, հայհոյանք...

Իջեցնում էին կառքերից, կամփոցներից արկղներ մեծ ու փոքր, սակառներ, զամբյուղներ, տակառներ, հազարավոր, հազարավոր: Արշակը առաջ էլ, թեև աշխատանքի պաշտոնական թույլտվություն չուներ, բայց միշտ աշխատանք գտնում էր, որովհետև գործ շատ կար, ձեռքեր՝ քիչ: Կանչում էին նրան՝ պետք ունեին: Ծալակում էր բեռները, գլորում էր տակառները և տանում շուկայի զանազան բաժանմունքները:

Երբ տագնապը չկար, ֆրանսացիներ ավելի ազնիվ, ավելի շահավետ գործի էր ձեռ զարկում, իսկ հիմա—«ներողություն, ես իմ տանն եմ, իմ հացը ուրիշի չեմ տա: Գնացեք ձեր երկիրը...»:

Սակայն նորից, երբեմն, բախտը ժպտում էր Արշակին. մեկը ձայնում էր. «Շո՛ւտ, այս բեռը տար, ա՛յ տես, այնտեղ...»:

Ծանր էր բեռը, բայց փող էր տալիս մարդը, երեք ֆրանկ, չորս, հինգ ֆրանկ մինչև իսկ:

Արշակը մխրճվեց կառքերի մեջ, կանգնեց կամփոցների առաջ՝ պատրաստակամ աշխատելու... Ահա մի բեռնակիր դիմեց նրան երկու մեծ զամբյուղ միասին տանելու: Տարան:

Բեռնակիրը զննեց նրան և պեղելով գրպանը, երկու ֆրանկ տվեց: Արշակը նորից դեպերեց, բայց ոչ մի ապսպրանք, միայն մի ծեր կին խնդրեց ձեռքի ծանրոցը մինչև մոտիկ տրամվայը: Տվեց մի ֆրանկ: Արշակը գոհ եղավ:

Հետո անցավ ծովածավալ շուկայի ուղիներով՝ ծածկված

և բացթթյա: Օհ. ինչքան բարիք կա վաճառքի հանած: Ահա փողոցները մտերով լիքը՝ կեսերից կախված եզներ, ամբողջական հորթեր, խոզեր, վարազներ, եղնիկներ, նապաստակներ, ճագարներ... Ահա թռչունների փողոցաշարքը—հավեր, սագեր, հնդկահավեր, փասիաններ, բադեր, կաքավներ... Մյուս փողոցները—հացեր, յուղեր, պանիրներ: Բազմատեսակ ընդեղեններ, բանջարեղեններ, կաղամբ, սոխ, գետնախնձոր, ճակընդեղ, միրգ, պտուղներ՝ չոր ու թաց խնձոր, տանձ, նարինջ, բանան, նույնիսկ թարմ խաղող, դեղձ: Հազար անուններով ու ձևերով: Ահա ձկնեղենների շարքերը: Գետերից, ծովերից, օվկիանոսներից: Ինչ արտառոց տեսակի ջրային կենդանիներ, բույսերի պես բաներ, ժժմունքներ, ոստրեներ, կրիաներ, խեցգետիններ, գորտեր...

Գլխապտույտ բերող առատություն, անչափություն... և ի՞նչ սիրտ խառնող հոտեր...

Մի՞թե այս բոլորը պիտի ուտվեն, պիտի ուտեն, և վաղը նորից նույնը և մյուս օրը նորից նույնը, և մի տարի հետո նույնը... և միշտ, միշտ:

Իսկ ի՞նքը—իրեն բաժին չկա, գրեթե չկա, այո՛, իհարկե:

Ինչ որ շուկա են բերված հեռու վայրերից և անհամար տեղերից, հիմա պիտի ցրվեն մայրաքաղաքի մեջ: Վաճառված իրերն արդեն հետզհետե ելնում են շուկայից դուրս: Ձեռքի կառքերը, ձիերի կառքերը, ավտոները, կամփոցները կրում էին իրերը նեղ ու լայն փողոցներով, ցրվում էին, ծավալվում էին քաղաքի հազար-հազար կետերում: Այդ անհուն բարիքները պիտի մատակարարվեն միլիոնավոր քաղաքացիներին. ամենքին իրենց վճարման կարողության համաձայն բաժին պիտի հասնե, իսկ իրեն՝ Արշակի նմանների՝ գրեթե ոչինչ, այո՛, իհարկե, ոչի՛նչ, ոչի՛նչ... Ահա վաճառում են: Վաճառողները համոզված դեմքով և համոզիչ խոսքերով գովում են իրենց ապրանքները, գնորդները կասկածոտ հարցով ու հայացքով, վեճով ու դժկամորեն գնում են ապրանքները: Ազնիվ աշխատանքով, խարդախությամբ, ստորությամբ, ոճիրով ձեռք բերած փողերն աղմուկով, պայթարով անցնում են ձեռքից ձեռք, կարծես ամեն ոք ուզում է խլել մյուսի փողը, միսը, միրգը... կոփվ, հայհոյանք, բռունցք իրար հանդեպ:

Ոստիկաններն անցնում էին խոժոռ, հանգիստ, երկյուղ սփռելով:

«Քուրժուական աշխարհը կոիվ է՝ ապրելու համար, կոիվ՝ մեկը մյուսի դեմ. ապրողը հաղթողն է. հարուստները հաղթողներն են»—մտքի մեջ ասաց Արշակը Շարլ Բրեյի խոսքերը: Բրեյը Լուի Քաթոլիկ սրճարանի հիմնական հաճախորդն էր, ուր և լինում էր Արշակը: Արդեն տարեց մարդ էր, ժողովրդական թերթերի նախկին աշխատակից, հիմա կլոշար դառած: Ամիսներից ի վեր ինչքան բան էր սովորել Արշակը նրանից: Խորապես հարգում էր նրան, որպես իր պատկառելի ուսուցչին, որի խոսքերն անհերքելի ճշմարտություններ էին, սրբազան պատգամներ: Ինչե՞ր Արշակին չէր ասել նա, ինչքան բան էր ամիսների ընթացքում սովորել նրանից, լուսաբանել հասարակական-քաղաքական, բարոյական երևույթների մասին: Նրա խոսքերը միշտ կրկնում էր նա՝ անվերջ խորհում դրանց մասին:

Արշակը մի պահ դեգերեց անող-ծախողների շուրջը, բայց ոչ մի ապսպրանք չստանալով՝ գնաց շուկայի աղբյուսները, ուր թափված ծղոնների և թղթերի մեջ լինում են արկղներից և տակառներից գլորված-ընկած խնձորներ, նարինջներ, ընկույզներ, բանջարեղեններ, երբեմն կոնսերվի չբացված տուփեր և այլն, և այլն:

Որ նման քաղցածների բազմությունն արդեն ձեռնարկել էր աշխատանքի պրպտանքի, ընտրության: Ինքն էլ սկսեց պրպտել: Պարկի մեջ նետեց մի քանի գետնախնձոր, երկու նարինջ, երկու բանան, տոմատ, մի քանի գլուխ սոխ: Պարկի մեջ նետեց մի քանի կտոր տախտակի բեկորներ: Բավական էր, պարկը ծանրացավ: Կապեց պարկի բերանը, ձգեց ուր և մի սիգարետ վառելով շրջում էր աղբյուսից-աղբյուս և դիտում ընչազուրկների:

Շուկայի պարունակի մեջ խանութների յուրաքանչյուր դուռն առաջ աղբյուսներ կան, ուր նետում են ծառայողների ճաշերից մնացած ավելցուկները—երշիկի, մսի կտորներ, հացի, պանրի կտորներ, միրգ, պտուղ... Եվ բոլոր աղբյուսների մեջ լաթի կտորներ, սանր, դանակ, թելեր, առասաններ, գամեր... Այս ավելցուկների դեգերը,— մինչև քաղաքապետության

բեռնակիր կամիոնների գալը, որոնք հավաքում-տանում են աղբերը քաղաքից դուրս,— ընչազուրկների ձրի շուկաները են:

Ահա աղքատ մարդկանց սովոր խմբեր աղբյուսների վրա, աղբյուսների մեջ ընկղմած՝ պրպտում են, քրքրում են մըրջյունների պես, վիրավոր մատներով, կիսաբոբիկ ոտներով, սպանված, հիվանդ աչքերով:

Հավաքում են, ինչ որ մարդիկ այլևս չեն կերել, հավաքում են, ինչ որ ոչ միայն մարդիկ, խոզերն էլ չեն ուտում, բայց ինչ որ մարդիկ ուտում են:

Ահա մի ծերուկ երկու անթոցների վրա՝ գտավ մի կտոր միս և ձգեց անատամ բերանը:

Ահա մի պառավ՝ կքած, կարծես, աշխարհի ծանրությունների փխրուն ուսերի վրա կրելով՝ պեղեց, հանեց մի շերտ հաց և երշիկի կտոր, հացը կրծեց, իսկ երշիկը դրեց պարկի մեջ, երևի թողան համար:

Մի ուրիշ պառավ՝ մաշված, քաշված երեսով, դողդոջուն՝ ձեռով գտավ մի լաթի կտոր, տնտղեց և դրեց պարկը:

Ընտանիքներ՝ հայր, մայր, աղջիկ՝ հյուծված, ուրվային, աղբյուսների վրա:— Այսպես սերունդներ՝ անդուռ կարիքի մեջ: Խեղդված, այսպես, մարդիկ՝ բռնված ապրելու անգիտակ, անպարտելի մղումով քշված գնում են բնության հզոր մականի տակ: Ակամա դատապարտվածներ ապրելու: Մարդիկ, որոնք մանկության օրերից այլևս գլուխներն աղբյուսներից վեր չեն բարձրացրել, աստղերը չեն տեսել, մարդիկ, որոնք դարերի ձեռքով, ճիգով ու հանճարով կերտած այս չքմաղ ուստանից ոչինչ չեն ստացել: Ոչինչ չեն շահել գիտության և տեխնիկայի նվաճումներից, որոնց հոգիները չեն բաբախել երբեք գեղարվեստի հրաշալիքներից:

Ռադիոյի, սավառնակի, էլեկտրականության բանաստեղծությունը նրանց համար չէ:

Եվ կուշտ մարդկության միտքը խաղցող չորրորդ տարածության և վեցերորդ զգայության առեղծվածները նրանց համար վաղուց լուծված են, որովհետև նրանք ապրել են միշտ բոլոր ըմբռնելի տարածությունների և զգայություններից դուրս:

Ահա նրանք ուսերն առան լիքը պարկերը և դանդաղ, դե-
տևկոտ քայլերով հեռանում են շուկայից, դառնում են... տուն:

Սողում են չքնադակերտ քաղաքի պողոտաներով, ուր վա-
րարուն հոսում է կյանքը: Գնում են սողալով ճարտարապե-
տության հրաշքների տակով, ապարանքների մարմարիոնների
առջևից:

Անսիրտ հարստությունը, զայրացուցիչ լիությունը, անըմ-
բըռնելի պերճանքը հորդում է դուրս հոյակապ տներից, վա-
ճառատուններից, բանկերից, պայթում է, պոռթկում է, ծփում
է, բայց մարդիկ աղեգալար սողոսկում են:

Գնում են տուն, աղքատության արվարձանները, ուր ան-
մարդկային չքավորության ճախճախուտի մեջ վխտում են
անթիվ այրեր, կանաչք, երեխաներ՝ խոցոտ մորթերով, վի-
րավոր աչքերով: Ուր ընտանիքներ քնում են խոտե-քուրջե-
թղթե մի անկողնու մեջ, միասին՝ մկների, որդերի, մանրեների
հետ: Ուր արև բնավ չի այցելում, միայն խոնավ մթություն, միայն
հիվանդություններ, մահվան հարևանություն, գարշա-
հոտություն, թշվառություն, թշվառություն...

«Այս քաղաքը աշխարհի աչքն է, բայց կույր է այդ աչքը
և բնավ չի տեսնում իր գոռոզ քթի տակ նեխվող թշվառու-
թյունը: Մթին, անլեզու, բայց աղաղակող, ոռնացող կարի-
քը...»:

Արշակը հիշեց նորից Շարլ Բրեյի խոսքերը:

Արշակն ինքն էլ շուկայի պարունակից դուրս ելավ:

Սենայի երկու ընդարձակ, հոյակապ թևերի վրա փոկած
աշխարհաքաղաքը սկսել էր զարթնել միլիոնավոր մարդկանց
մի գիշերում տեսած երազներից, մղձավանջներից, ապրած
հեշտանքներից և տառապանքներից:

Զարթնել էր մեծակառույց մրջնանոցը և սկսել էր առօր-
յան: Բանվորների խմբերը գնում էին դեպի գործարանները,
աշակերտները՝ դեպի դպրոցները, առևտրականները՝ դեպի
խանութները, պաշտոնյաները՝ դեպի գրասենյակները:

Արշակը հոգնած էր և քաղցած. մտավ մի էժանագին սըր-
ճարան, ուզեց մի սուրճ, երկու հացիկ, ախորժակով ճաշա-
կեց. տնտղեց իր հավաքածուն, մի խնձոր և մի բանան ինքը

կերավ: Պարկն ուռը ձգած գնում էր Արշակը: Աչքերը գետնից՝
չէր կտրում մի բան գտնելու հույսով. այդ արդեն՝ իր խեղճ-
կացության պատճառով՝ ունակություն էր դարձել: Այսօրվա
գտածներն էլ սովորականի պես չնչին բաներ էին: Ուրիշ-
ները դրամ են գտել, իսկ ինքը այդ բախտը չուներ: Առհա-
սարակ, ե՞րբ է նա բախտ ունեցել:

Անցնում էր հարուստ խանութների, վաճառատների առա-
ջով, կողմնակի ակնարկ նետելով հսկա ապակիների հետև-
ցուցադրված ապրանքների վրա:

Ահա անուշահոտությունների մի խանութ: Արդուզարդի:
Շլացուցիչ գոհարեղենների: Կանանց հագուստների: Հայացքը
բևեռեց ուտելեղենի մի ճոխ կրպակի վրա—համադամ ուտեստ-
ներ, գինիներ, տեսակ-տեսակ ըմպելիքներ, գայթակղեցնող,
աղանդերներ: Մի պահ կանգնեց, ապա շեշտակի անցավ:

Կանգ առավ ճերմակեղենի մի խանութի առաջ: «Ի՞նձե՛
ինչ»—լսելի ձայնով ասաց իրեն Արշակը: Ամսից ի վեր նա չի
փոխել ճերմակեղենը: Երկու ձեռք փոխնորդ ուներ, մեկը տվեց:
Էր երկու թաշկինակի, երեսուրբիչի և գուլպաների հետ մաք-
րելու, սակայն ավելորդ դրամ չուներ լվացարարուհուն վճա-
րելու և ետ ստանալու համար: Աշնանը, երբ ապրում էր կա-
մուրջների տակ, ինքն էր անում, գետի մեջ, իր լվացքը: Հիմա
ցուրտ է, կարելի չէ: Փոխնորդի տեղ մարմնի վրա թուղթ է
փաթաթում հիմա, ոտները նույնպես: Թուղթը և՛ տաք է պա-
հում, և՛ մաքուր է:

Հանկարծ, մի մեծ խանութի դրսի պատի վրա, հայելու մեջ
տեսավ իրեն,—կանգնեց և դիտում էր իր պատկերը: Ինչի՞
նման է նա հիմա, մի՞թե սա ինքն է—մազերը երկար, անկարգ,
դեմքը չսափրված, այտերը դեղնած, շրթունքները անարյուն,
հագուստները բոլոր նախկին ձևերը կորցրած, երեք գույն
փոխած, կոշիկները ծոմոած, ձախ ոտքի բթամատը կոշիկի
քթից դուրս ցցված:

Պոլիս գտնվող իր ծանոթները հիմա, հարկավ, նախանձով
կասեն՝ «Երանի Արշակին, Փարիզ կապրի...»—և ձեռքը հեզ-
նորեն թափահարեց:

Օ՛, եթե գիտենային, թե ինչպես դժբախտ է նա այս փա-
ռահեղ Փարիզում. օ՛, ինչքան է ատում նա այս նզովված քա-

դաքը, որ հմայում, խաբում, բերում է մարդկանց մաշելու, խոշտանգելու, սպանելու համար:

Մի՞թե ինքը սպանված չէ, ոտքի վրա չորանում, մեռնում է: Ոչ ուժ մնաց վրան. ոչ եռանդ, ոչ սիրտ: Տրամադրություն անգամ չունի երեսը լվանալու...

Ա՛խ, ինչպես կուզեր հեռանալ, փախչել այս մարդակեր քաղաքից. հովիվ լիներ դաշտերի մեջ, արտերի, ագարակների մշակ: Ի՞նչ է պետք իրեն—մշտական մի աշխատանք, մի վառ օջախ, մի կուշտ փորով հաց և բավական է:

Այս մտքերի մեջ սուզված, սողոսկում էր մայթերի եզերքով՝ չվստահանալով դիպչել անցուդարձող լավ հագնված մարդկանց: Վախենում էր նույնիսկ դիպչել: Վախով, ոչնչանալով անցնում էր խստադեմ ոստիկանների մոտով: Աննկատ, աննշմարելի, աչքերի մեջ որբություն, հայացքի մեջ անվստահություն...

Քառուղու առաջ կանգնած էր մարդկանց մի հոծ բազմություն՝ աչքերը հառած ոստիկանի ձեռքի ճերմակ փայտին, սպասելով անցնելու թույլտվության: Մի փողոցով անցնում էր օթոնների քարավանը, մյուս փողոցով քիթ-քթի կանգնել էին օթոններն ու տրամվայները: Մի թանկարժեք օթոյի մեջ մի տարեց կին էր ընկողմանել, կողքին թավիշի վրա մի շնիկ, կոնակին գեղեցկահյուս մի ծածկոց:

Արշակը նախանձով դիտում էր շանը, մինչև որ շարժվեց օթոն (ավտոն):

Նորից ճոխ, փարթամ խանութների տողանցք: Ի՞նչ հակոտնյա, հասարակական իրերի խանութներ—կահ-կարասիների վաճառատուն, սափրիչի, երեխաների խաղալիքների, մըրգավաճառի խանութ, կողքը՝ հողարկավորության պարագաների մի շքեղ ցուցահանդես, արվեստական և բնական ծաղիկներով պսակներ, ժապավեններ, մարմարյա մահարձաններ: Արշակն աչքի ծայրով նայեց ներս—մի տարիքով մարդ, անկյունում նստած, թիթեղյա ծաղիկներից պսակ էր հյուսում:

«Ապահովաբար ոչ ինձ համար: Ավելի հավանական է իրեն համար: Ատկե զատ՝ ասոնք բնավ ինձ չեն վերաբերիր: Ողջ ատենս մարդիկ չեն խորհիր վրաս, մեռնելես հետո թող հար-

կադրված ըլլան խորհիլ՝ դիակս մեջտեղեն վերցնելու: Շատ հոգս»:

Այս մտածումով, կարծես վրեժ էր հանում մարդկային հասարակությունից:

Արագ քայլերով անցավ մեռելատան խանութից, սակայն մի հարց, մի միտք հետևից վազելազ հասավ և բռնեց նրան: Ինչո՞ւ չմեռնել: Ի՞նչ իմաստ ունի այս ողորմելի գոյությունը: Ի՞նչ եղավ իր կյանքն այս երկրի երեսին— միայն քաշքշվի: Երբեք օր չտեսավ: Ինչո՞ւ է հիմա ուզում ապրել, երբ կյանքը կրում է իբրև անտանելի մի բեռ՝ ուսերը ճարճատող: Երբ բավական է մի ուսույուն Սենայի մեջ, և լուծված կլինի վայրկենապես ամեն հարց: Անցյալ աշնանը չէ՞ր, որ կամուրջի տակ ապրող իր ընկերներից մեկը բարձրացավ կամուրջի վրա, կոճկեց ժակետը և գլխիվայր նետվեց գետի մեջ: Ինքը սարսափեց այս դեպքից և փախավ այն չարաբաստիկ վայրից և տեղափոխվեց հեռավոր մի կամուրջի տակ:

Ինքը միշտ վախեցել է մահից: Պատերազմի ընթացքին էլ նույնպես մտածում էր մեռնելու մասին... Բայց չկարողացավ իրականացնել: Խստադեմ հարցը դաժանորեն բռնել էր Արշակի օձիքից, պատասխան էր պահանջում իր համար և անտեղիտալի առաջադրումներից:—«Ի՞նչ կա ապրելու, որ կվախիս մեռնել, որո՞ւ համար կապրիս, ի՞նչ բանի համար կապրիս, ո՞վ կսպասե քեզ և կամ ի՞նչ կսպասիս կյանքեն»:

Ո՛չինչ, ո՛չինչ, հարկավ ոչինչ...

«Եթե մեռնելու վախը չըլլար, սա սոսկալի վախը... շան պես կվախենամ մեռնելեն... ոչ թե կյանքը կսիրեմ, այլ մահեն կսարսափիմ... ահա թե ինչու կապրիմ...»:

Մեռնելը դյուրին բան չէ, մեռնելը բնավ դյուրին բան չէ: Անպարտելի է իր էության մեջ նստած ապրելու այս հզոր, անհասկանալի այս տենչը: Բայց ինքը մեռնակ չէ այսպես զգացողներից: Ամեն մարդ ուզում է ապրել, ամեն արարած, մեծ կամ փոքր, ուժով կամ թույլ, բախտավոր կամ դժբախտ: Թռչուններն օդի մեջ, ձկները ջրի մեջ, որդերը տիղմի մեջ, ամենքը, ամենքն ուզում են ապրել: Մեռնել ուզողները բացառություն են:

Եվ ներսից, ընդերքից ու տարերքից բարձրացավ մի տաք.

ապրեցնող զգացում և ջերմությամբ ողողեց նրա հոգին ու մարմինը:

Թող ինքն էլ ապրի բոլորի պես, բոլորի հետ: Թերևս ապրելն ավելի արհուրություն է: Եվ վերջապես աշխարհ է, ամեն բան կպատահի, բախտը մի օր էլ կարող է դեպի իրեն դառնալ:

Մահը, երբ լինի, կա ու կա:

Եվ ձեռքի մի ուժեղ շարժումով վերջ տվեց ներքին այս հարց ու պատասխանին:

Արշակը կապված էր մի աղքատիկ ճաշարանի հետ: Ինչ որ հավաքում էր կենտրոնական շուկայից, ինչ որ գտնում էր փողոցներում, բերում տալիս էր ճաշարանի տերերին՝ պարոն և տիկին Գաստոններին: Տիկինն ամեն բան ընդունում էր— կոճակներ, առասաններ, գամեր, կոնսերվի դատարկ տուփեր, սրվակներ, շշեր, նաև թերթեր-թղթեր, փայտի կտորներ տիկնոջ վառարանի համար — այս բոլորի փոխարեն նա ստանում էր քնելու մի անկյուն, առավոտները սուրճ՝ մի կտոր հացի հետ, կեսօրին մի պնակ արգանակ, միս և հաց: Երեկոները սովորաբար անցկացնում էր ճաշարանից ոչ շատ հեռու, Լուի Բաթորգի սրճարանում, իր բախտակից ընկերների, մանավանդ շատ սիրելի Շարլ Բրեյի մոտ: Այնտեղ էր իր սուրճը խմում, մի-երկու հացիկ ուտում:

Ճաշից հետո Արշակը փողոց ելավ:

Նա իրեն լլկող հոգսերից, մտածումներից ազատվելու համար սիրում էր թափառել փողոցները և դիտել հոսող կյանքը, այսպիսով զբաղեցնել ուշքն իրենից դուրս իրերով և մոռանալ իրեն. այդ նրա միակ սփոփանքն էր:

Այսօր որոշել էր նա տեսնել, վերստին տեսնել պատերազմի իրեն ընկերների՝ Արամին և Սեդրակին, որոնք հիմա Փարիզ են գտնվում. վերստին խնդրել անպայման մի գործ գտնել իրեն համար, ինչ գործ ուզում է լինի՝ գավառներում, գյուղերում: Եթե ուզեճան, կգտնեն, նրանք շրջանակ ունեն: Սա-

կայն դեռ կանուխ էր նրանց մոտ գնալը: Արամը երեկոյան դեմ էր լինում իր սովորական սրճարանում, ուր թուղթ էր խաղում, իսկ Սեդրակին, որ դերձակ էր մի արհեստանոցում, կարելի էր միայն ժամը 7-ին տեսնել աշխատանքի ավարտումից հետո:

Արշակն անցավ փողոց-փողոց, և մեծ պտույտ գործելով, եկավ կանգ առավ Նոտր-Դամի տաճարի առաջ:

Վեհաշուք տաճարի վերևից, առեղծվածային, խուլական քիմեոները օրվա բոլոր ժամերին նայում են իրենց ոտների ներքո ընդարձակ հրապարակին և հեռուները, հսկա քաղաքի մարդկային եռուզեռին, հոսող կյանքին, և Արշակն ամեն անգամ ուշադիր դիտում էր նրանց՝ քիմեոների դեմքերի արտահայտությունները:

Հրապարակի կողքի փողոցով անցնում են արագագոտ կառքեր, ավտոներ, անդուլ, անվերջ ժխոր, աղմուկ: Ահա անցան հեծելազորներ՝ երկաթե սմբակները սուլահատակը ծեծելով: Հրապարակով անցնում են աշակերտներ, կրոնավորներ, աղքատներ, կարիքի մեջ կծկված, գուճատ, ուժասպառ կանայք՝ ոտները քարշ տալով, անցնում են շքեղ հագնված պարոններ, կանայք ոսկեհյուս զգեստներ հագած: Անցնում են ոմանք արագ, արմունկներով ճեղքելով բազմությունը, կարծես վազում են փախչող որսի հետևից: Ահա մի սև, մեռելատար կառք, սև վարագույրներով, ճակատին փոքրիկ սև դրոշակ, մարդիկ վախով ու ակնածանքով ճանապարհ են բանում:

Մի հոյակապ շենքի պատի տակ, մայթին, նստել է մի հաշմանդամ, քաջության մեղալները կրծքին, երգում է, դրամ է խնդրում... Ծփում է մարդկային ծովը, անցնում են իրար խառնված հարուստ և աղքատ, հիվանդ և առողջ—մեռել և կենդանի:

Քիմեոները նայում են... ահա այս քիմեոնը զարմացած, ապշած է այսքան շոայություն և աղքատություն տեսնելով,— ասում է իրեն Արշակը: Ահա այս մյուսը, ականջները զոցել է, հարկավ չլսելու համար ամեն կողմից խուժող այս ահագին ժխորը, իսկ այն մյուսը՝ արհամարհիչ անտարբերություն ունի դեմքի վրա, գրեթե չի էլ նայում, իսկ սա խորին լռությամբ նայում է և մտածում, իրավունք ունի: Բայց մյուսը զզվանք

ունի, կողքիճը՝ ատելություն: Հապա ինչպե՛ս—այսքան առապելական պերճանք և այսքան ցնցոտիություն. իսկ այն մյուսի դեմքին հեզմանք կա, նայելով այս հիմար եռուզեռին, ծաղրում է բոլորին, ծիծաղում է բոլորի վրա.— մա՛հ, ունայնություն, անցավորություն. իսկ սրան նայիր, սրան, ինչ սարսափած դեմք ունի, նայում է սարսափած այս աշխարհաքաղաքից, մարդկանցից, թոհուբոհից... մի վայրկյան վախն անցավ իրեն՝ Արշակի սրտին, ետ-ետ գնաց: Քիմեռներն երբեք այսքան պերճախոս չէին եղել. երբեք այսքան բան չէին ասել Արշակին... բայց սա, այս քիմեռը, ինչ հուսահատ տեսք ունի, տխուր է շատ, լաց է լինում, լաց է լինում քաղաքի վրա, այսքան թշվառների, զրկվածների, տառապողների վրա...

Բոլոր քիմեռներն իրավունք ունեն և՛ զարմանալու, և՛ զայրանալու, և՛ զզվելու, և՛ ծաղրելու, բայց նամանավանդ լալո՛ւ, ողբալո՛ւ: Եվ Արշակն իր սրտին տիրող զգացմունքը բոլորից ավելի լացող քիմեռի մեջ տեսավ մարմնացած: Տըխրությամբ ու սրտաբեկ, թողեց տաճարն ու քիմեռները, դանդաղ քայլերով հեռացավ և, զնալով, մեքենաբար կանգ առավ այն կամուրջի վրա, որով ամեն օր անցնում էր տուն գնալիս:

Սենայի քարակերտ ափի պատին հենվեց և մտամոլոր ծխում էր՝ խորհելով, թե ո՛ւր գնա, ի՞նչ անի հիմա մինչև ընկերների մոտ գնալու ժամը, և ակամա նայում էր անցորդների: Անցնում էին մարդիկ առանց իրար նայելու, իրարով հետաքրքրվելու, անցնում էին անտարբեր, մտազբաղ: Հավանաբար այս մարդկանցից շատերին ամեն օր տեսնում էր Արշակը, և ամեն օր նրանք նոր էին երևում իրեն: Սակայն ոչ մի ծանոթ դեմք, բոլորն անծանոթ մարդիկ, ճակատների հետև դեռ ավելի անծանոթ աշխարհներով: Ի՞նչ իմանաս—ինչպիսի՞ խոհեր, տեսչանքներ, ցավեր, հաշիվներ, կրքեր, չարություններ...

Զարմանալի է, ոչ մի ծանոթ դեմք ամենօրյա տեսած մարդկային հոսանքի մեջ, գոնե երկրորդ անգամ տեսած դեմք— ո՛չ մի հատ: Եվ մի ահավոր, խոր մեծակություն զգաց հազարավոր այդ մարդկանց մեջ. ահռելի քաղաքը կարծես առավ նրան իր ծանր թաթերի մեջ, ճմլեց, տրորեց, ճզմեց... և ներքին մի մղումով շտապեց գնալ այնտեղ, ուր հավաքվում

են կլոշարները. գետի ափին, ներքև: Նրանք հարազատ են իրեն, մոտիկ են, համազգում են իրար, ինչպես վտանգի ժամանակ կենդանիներն ու թռչուններն իրար մոտ են հավաքվում:

Սկսեց սանդուղքից իջնել գետափը:

Ներքևը, Սենայի քարափի արևելահայաց պատի տակ, պառկել կամ նստել էին իրեն պես անտուն, անտերներ: Նրանցից մեկը հավաքած թղթերն էր խնամքով շտկում ու ծալում. մի ուրիշը ժողոված մանր իրերն էր գետեղում պարկի մեջ. մի ուրիշ տեղ—կեղտոտ կարտերով թուղթ էին խաղում: Դեպի Սենան իջնող այդ սանդուղքների գլխին հավաքվել էր զբոսնողների մի խումբ—այրեր, կանայք, պատանիներ, որոնք հետաքրքիր դիտում էին աղքատներին: Ոմանք ծիծաղում էին նրանց վրա և գոհ դեմք ունեին՝ պայծառացած ներքին այն հրճվանքից, որ իրենք չեն նրանց տեղը:

Արշակը թշնամանքով նայեց ծաղրող բախտավորներին և աստիճաններից վայր իջավ, խոսելով իրեն հետ.— «Արևելքի մեջ թշվառներուն կմեղքանան, այստեղ կխնդան»: Թուրքիա եղած ժամանակ, հայ թերթերում և հայերից լսել է, թե՛ Եվրոպան երկրագնդի փառքն ու պարծանքն է. լուսավորության, կրթության, մշակույթի կենտրոնը: Եվրոպայի մարդը՝ ազնիվ, քաղաքակիրթ, մարդասեր... բայց ի՞նչ հիասթափություն, ի՞նչ ստություն: Եվրոպացին մարդ լինելուց դեռ շատ հեռու է:

Այսպես էր մտածում Արշակի սիրտը:

Ինքն էլ նստեց պատի տակ, միայնակ. ծունկերը ձեռների մեջ առնելով: Յիրուցան նստել էին քուրջերի մեջ պարուրված՝ մարդկային եղկելի արարածներ: Չէ՞ որ սրանց էլ մայրեր են երկնել ու աշխարհ բերել, կաթ տվել ու գուրգուրել,— խորհում էր Արշակը.— ապա ո՞վ է հիմա սրանց շարտել սալահատակների վրա, այսպես քաղցած, աղտոտ ու այլանդակ:

Ծառերին ճանաչում էր ինքը, գիտեր նրանց կյանքի պատմությունը, կային գործազուրկներ՝ իրեն նման միշտ անհաջող, անպաշտպան, վշտից ընկճվածներ, կարիքից հարբեցողներ, որոնք հարբում են ինչ գնով ուզում է լինի, ինչ ընկնում է ձեռները խմում են, որպեսզի մոռանան իրենց դառը վիճակը, մի պահ երջանիկ զգան. կային բանտերը մտած-

ելածներ, նախկին ունևոր մարդիկ՝ կորցրած ամեն ինչ, հիմա անընտանիք, հասարակության մեջ այլևս տեղ չունեցողներ:

Ոմանք իրար գլխի հավաքված խոսում էին բարձրագոռ, վիճում էին տաքացած, ամենքը զազազված, դիվացած ոխով վառված իրար դեմ, աշխարհի դեմ: Նրանց մեջ հարբածներ կային, կատաղի հայհոյում էին հարուստներին, ոստիկաններին, պետությանը, բուռնք էին ցցում, վրեժ փնջում...

Ինչքա՛ն կիրք, ցասում, բողոք, չարություն...

Արշակը հայացքը մի պահ ձգեց ծանր ու հանգիստ հոսող Սենային:

«Սրա անունը Սենա չէ: Սա Սենա գետը չէ, սա Լետան է՝ մոռացության գետը»—այսպես էր ասում միշտ Շարլ Բրեյը Սենայի մասին:

Ինչե՛ր չէին կատարվել ժամանակների մեջ Փարիզում: Ի՛նչ ոճիրներ, կոտորածներ, ինչքա՛ն արյուններ են հոսել նրա փողոցներով, բայց Սենան բոլորը հավաքել, թափել է մոռացության անդունդը:

Ո՞վ գիտե, երեկ ինչքան զրկանքներ, եղեռներ է կատարել մարդը մարդու դեմ. բայց Սենան գիշերը սրբել, մաքրել է այդ բոլոր չարիքները և տարել թափել մոռացության անդունդը: Եվ այսպես ամեն օր:

Սակայն ամեն առավոտ ամմեղ կերպով նորից հոսում է Սենան, կարծես թե՛ երեկ կամ առաջ ոչինչ չի պատահել. ոչ մի չարիք Ֆրանսիայի սրտի մեջ, այս չքնաղ մայրաքաղաքում՝ բողբոջած Լետայի ափերին:

Արշակի մտածումը կանգ առավ:

Մի դալուկ արև, մեղմ ջերմություն էր մաղում:

Արշակը մի սիգարետ վառեց և հանձնվեց աշնան հաճելի արևի ջերմությանը:

Կլոշարներից մի քանիսը, աչքերը գոցած, նայում էին իրենց ներսը, որն անշուշտ շքեղ կահավորված էր, լավ տաքացրած և լուսավորված իրենց երազներով, տենչերով՝ աղքատների, այս անսպառ գանձերով և անկապտելի հարըստություններով:

Արշակը լավ էր ճանաչում այս հոգեվիճակը: Ինքն ամեն

օր հանձնվում էր երազանքի մխիթարությամբ: Իրական դժբախտ կյանքից փախչում, փոխադրվում, այսպես ասած՝ ապաստան գտնում անըջային աշխարհի մեջ: Մի ներքին հզոր պահանջումով էր կատարվում այդ փոխադրությունը:

Ինչպես բոլոր մարդկանց, այնպես էլ Արշակի հոգին լցված է անճնշելի, անպարտելի փափագներով, որոնք անպատճառ իրականացում են պահանջում, երազների մեջ, թե առարկայական աշխարհում—այդ գրեթե համարժեք է:

Առանց երագի ինչպե՛ս կարող էին տանել այդ թշվառներն իրենց գոյության ծանր շղթաները: Երագի մեջ նրանք կուշտ էին, լավ հագնված, ծնողների մոտ, յուրայինների հետ, զվարթ, բախտավոր...

Պառկած չոր տախտակին, կամ սալահատակին, Արշակն ապրում էր անուրջների երջանիկ աշխարհում, ուր թուրք չկար, ուր հագուրդ էր տվել իր կարոտներին, ուր իրականացնում էր իր անկատար տենչերը, կորուստները ետ էր դարձնում, կործանված ընտանիքը վերակենդանացնում: Սրտի ուզածի պես դասավորում միջավայրը և աշխարհի բաները:

Արշակը կիսախուփ աչքերով դիտում էր սիգարետի ծուխը—ծուխը տարածվեց, տարածվեց և կամաց-կամաց ուրվականացրեց այդ դաժան քաղաքը և տարավ նրան երազային, բարի, կատարյալ և իրական քաղաքը: Սենայի վրայով անցնող շոգեճանվակի շշակի ձայնից Արշակը վերադարձավ ցավագին իրականությանը: Բախտակից անտեղուցները սկսել էին գնալ: Արևը կուլ էր գնացել գորշ ամպերի մեջ: Երկինքն իջել էր քաղաքի վրա, այնպես ցած, գրեթե տանիքներին քսվելով:

Սանդուղքներից բարձրանալիս, Արշակը անզգուշորեն կոշիկից դուրս ցցված բթամատն ամուր զարկեց քարին, և մատը սաստիկ ցավեց: Խիստ ցավից աչքերն արտասուքով լցվեցին. կաղալով գնում էր և արցունքների միջից էր նայում շրջապատին, մարդկանց: Չէր հասկանում ինչու, բայց ուզում էր, որ իրեն կարելկցեին, գեթ մի հոգի բաժաներ նրա ցավը: Սակայն մարդիկ անցնում էին միանգամայն անտարբեր՝ առանց իսկ նկատելու նրան: Ե՛րբ է նկատել կյանքից շփացածի

աչքը ցնցոտիների տակ թաքցված մարդուն, նրա հոգին: Թեր-
ևս հարուստները կարծում են, թե աղքատները ցավ չեն զգում:

Խաչաձևվող փողոցներից ցուրտ քամի էր փչում. ցուրտը
շեշտում էր նրա աղքատությունը, ցուրտը ավելի սաստկաց-
նում էր նրա լքվածությունը. զգում էր իրեն ավելի մեռնակ,
քան երբևէ եղել է:

Մի պահ հետո, հակառակի պես, դեմ առավ կոշիկի մի
լուսազարդ խանութի: Ինչքան կոշիկներ, ինչքան բազմատե-
սակ, ինչքան շատ և անկարելի գներով: Ցասումով բռնկվեց
արյունը, վայրկենական կամք զարթնեց հոգու մեջ. արյունը
խուժեց դեպի բազուկները, բռունցք շինեց, ուզեց զարկել
խանութի ապակիներին, փշրել ապակիները... Թո՛ղ, թո՛ղ տա-
նեն բանտ: Բանտը երանություն է, տաք տեղ, կուշտ հաց...
Շատերն այդպես են անում, որ գոնե բանտում ձմեռեն: Հան-
կարծ, միտքն ընկավ, որ, բանտ տանելուց առաջ, ոստիկաննե-
րը խիստ ծեծի են քաշում, հանցավորի քիթն ու բերանը ջար-
դում: Ընկերներն այդպես էին պատմել իրեն:

Եվ մանավանդ ավելի խստորեն, անգթորեն են ծեծում
օտարականներից, անցագիր չունեցողներից: Շատ է մաշվել
ու հյուծվել ինքը, ցավ չի կարող տանել... Ո՛չ, այդ իր բանը
չէ, ուրիշ բան, եթե անմիջապես բանտ տանեին:

Սակայն մեծ քաղաքի ճաշի պահն էր սկսվում. մարդկա-
լին ստվար բազմություններ, ամեն ուղղությամբ աճապարում
էին սեղան նստել: Մի հոյակապ ճաշարանի հսկա լուսամու-
տից նայեց Արշակը ներս, արդեն վառվել էին ջահերը,—
բազմաթիվ սեղանների վրա, բյուրեղի և ոսկե անոթների մեջ
անծանոթ խորտիկներ. սեղանների շուրջը այդ մարդիկ և կա-
նայք՝ հագուստների մեջ մերկ: Բազուկները, ուսերը, մեջքնե-
րը, կրծքերը՝ հոլանի: Կարծես սուտ կանայք լինեին, այդպես
էր թվում Արշակին: Մազերի գույնը՝ սուտ, հոնքերը՝ սուտ,
թարթիչները՝ սուտ, շրթների գույնը՝ սուտ, շարժումները,
կեցվածքները՝ սուտ, բայց ինչպես իրականորեն և ճշմարտա-

պես ուտում էին բոլորն էլ պնակ-պնակի հետևից, բաժակ-
բաժակի հետևից պարպելով:

Արշակի մոտ կանգնել էր մի գունատ պատանի, ախորժա-
կով կրծում էր ձեռքի չոր հացը, շոպլության սեղանին, որ-
պես վայելող հարուստների կողքին ճաշի բազմած:

Մի մարմնեղ ոստիկան, մեծ-մեծ քայլերով մոտեցավ և
զայրույթով վանեց երկուսին էլ ճաշարանի լուսամուտների
առաջից: Արշակը հեռացավ: Պանթեոնի մոտ, Սեն-Միշելի
բուլվարում, Արշակը գնաց Արամի հաճախած սրճարանը,
դռնից նայեց ներս. Արամը չկար, իհարկե, դեռ չափտի լիներ,
այդ լավ գիտեր ինքը սակայն այնպես, նայեց:

Բուլվարի մայթի վրա ետ ու առաջ էր գնում, սպասելով
Արամին և խորհելով իր ասելիքի մասին: Փարիզի երկինքը
պղնձագույն էր դարձել միլիոնավոր լույսերով. պողոտայով
սլանում էին ավտոները: Տեղ-տեղ ցցվել էին հաղթանդամ,
ահարկու ոստիկաններ: Անցնում էին ուսանողներ՝ տղա-աղջիկ
խմբերով, զույգ-զույգ, թևանցուկ, փայլուն դեմքերով, բարձրա-
ձայն զվարթ ծիծաղելով աղմուկով: Նրանց միջով անցնում
էին տարեց մարդիկ՝ գլխահակ, մտազբաղ, կանայք՝ տխուր,
մաշված իրենց հոգիների մեջ պտտեցնելով մի ամբողջ աշ-
խարհ, ո՛վ գիտե ինչ ցավերի և խոհերի: Սակայն Արշակը
բոլորին իրենից երջանիկ էր համարում, անհամեմատ երջա-
նիկ:

Երեք երիտասարդ կանգնել խոսում էին: Արշակի ական-
ջին դիպան հայերեն բառեր: Ուշը լարեց. այդ, հայերեն էին
խոսում:

«Դիմեն ասոնց, թերևս բախտը ժպտի, ինձի համար գործ
մը ճարեն»...

Մոտեցավ, հեռացավ մոտեցավ նորից, գլխարկը հանեց և
շփոթված մրմնջաց.

— Ներեցեք, կաղաչեմ, գործ մը չե՞ք կրնար ինձի տալ,
գտնալ, կուզեմ ըսել: Հայ եմ...

— Ինչպե՞ս, ինչպե՞ս:

Արշակը կրկնեց իր խնդիրն այս անգամ ավելի հստակ և
որոշ:

— Կըցավիճք, բան մը չենք կրնար ընել: Ան կրիզը ամենուն հարվածեր է:

Արշակը տեղից չշարժվեց, պարզապես չըմբռնեց պատասխանը: Երիտասարդներից մեկը ձեռքը տարավ գրպանը և ապա մեկնեց դեպի Արշակը: Արշակը շփոթվեց:

— Կխնդրեմ,— ասաց երիտասարդը,— բան մը չէ եղածը: Ես ալ հայ եմ քեզի պես:

Արշակը դողդոջուն ծայնով կմկմաց:

— Բայց ես դրամ չէի խնդրել, այլ գործ մը:

Երիտասարդն ուժով դրամը դրեց Արշակի ափի մեջ և հեռացավ, խոսակիցներին հետը տանելով: Արշակը գամված մընաց կանգնած տեղում: Ուզում էր վազել նրա հետևից, դրամը ետ դարձնել... Նա երբեք չէր մուրացել, ձեռք չէր մեկնել երբեք, միշտ մի բան տվել էր՝ մի բան առնելու համար... Հուզմունքից դողում էին ձեռները, սակայն ափը այրվում էր: Դրամն այրում էր ափը: Երեքուն ծնկներով մի քանի քայլ արավ և կանգնեց, մի միտք կասեցրեց նրա քայլը... Ինչո՞ւ վիրավորել երիտասարդին, ի՞նչ արեց, պարզապես կարեկցեց իրեն և մի՞թե ինքը խղճալի չէր և՛ տեսքով, և՛ խոսքով, իսկ թշվառության մարմնացում... Բացեց ափը — մի հինգ ֆրանկանոց:— Աչքերից ծորող արցունքը կուլ տվեց:

Բայց և այնպես այս դեպքն ավելի դառնացրեց իր դառնալից հոգեվիճակը: Ո՛չ, թշնամանք չէր տածում դեպի անծանոթ հայ երիտասարդը, այլ իրեն դեմ գայրացած էր, իր խեղճության, իր ճակատագրի դեմ դառնացած:

Մեքենաբար, անգիտակցորեն մխրճվեց հոսող բազմության մեջ և հոսանքի հետ քշվեց: Քայլել էր ուզում, անվերջ քայլել: Ջղերը գերագրգռված էին ամեն դեմք խոցում էր ուղեղը, ամեն ձայն ու ծիծաղ ծակում էին ուղեղը, և՛ տրամվայները, և՛ ավտոներն ուղղակի սղոցում էին, ճեղքում անցնում նրա ուղեղի միջով:

Մարդկանց մի խումբ կանգ էր առել, ինքն էլ կանգնեց: Ոտքը կտրած թշվառի մեկը նստել էր, ջութակ էր նվագում... Հիշեց ընկերներից մեկին, որ պատերազմում կորցրեց իր ոտքը, հիշեց ուրիշ մի ընկերին, որ Փարիզի մի գործարանում թողեց աջ ոտքը... Ուզեց հինգ ֆրանկն ամբողջապես տալ

թշվառ ջութակահարին, մի վայրկենական վարանումից հետո հիսուն սանտիմ ձգեց պնակի մեջ:

Մեծ-մեծ քայլերով ետ դարձավ, սպասեց սրճարանի առաջը: Ահավասիկ և նա: Կտրեց Արամի առաջը: Արամը վերից վար մի ակնարկով ընդգրկեց Արշակի սրտաշարժ դրությունը:

— Վա՛յ Արշա՛կ, դո՛ւն ես: Ծո, ի՞նչ կընես: Ո՛ւր ես, ինչ-պե՞ս ես:

— Ալ մի հարցներ:

Լուռությո՜ւն. նայեցին երկարորեն իրար աչքերի մեջ: Նորից լուռությո՜ւն:

— Նորեն նույն վիճակին մեջ եմ, հալլեն հավաքած բաներու փոխարեն ուտելու բան մը, կերակուրի ստվեր, հարկավ: Ուրիշ հավաքած բաներու փոխարեն ալ գրեթե քնելու իրավունք մը... Եթե Ծարլ Բրեյլը չըլլար, գիտես, անոր մասին պատմեր եմ քեզի, հուսահատությունը զիս վաղուց խեղճած էր...

Արամը ներքևի շուրթը կրծում էր:

— Արամ, ճանրս, բան մը, գործ մը գտիր ինձի համար, աշխատանքեն փախչող չեմ, այնքան որ հացս հանեմ...

— Սիրելիս, ի՞նչ կրնամ ընել: Այս սոսկալի կրիզին ամեն մարդ գազան է կտրեր, ամեն մարդ...— ուզում էր ասել՝ քո վիճակին եմ, բայց չափազանց սուտ կլիներ այդ և հարեց:— Ի՞նչ գործ, աշխատանքի իրավունք չունիս, արհեստ չունիս, լեզուն ալ լավ չգիտես...

— Ի՞նչ ընեմ,— կտրեց Արամի խոսքը,— ուրեմն երթամ Սենը նետվիմ: Վրաս զգեստ չկա, կոշիկս ծակ, ճերմակեղենս քար-աղտ է կապեր վրաս. մազերս կտրելու ստակ չունիմ անգամ. ամիսներով բաղնիքի երես չեմ տեսած: Այնքան հայ ծանոթներ ունիս,— ճաշարանի մը մեջ աշխատիմ, ափսեներ լվանամ, գետնախնձոր մաքրեմ... ի՞նչ գիտնամ...

— Արշակ, հոգիս, Սենի մտքեմ վազն անցիր: Քեզի կրսեմ մի ընկճվիր, տոկա: Դուն պատերազմ տեսած մանչ ես ու քաջ ալ կովող. ասիկա ինչ է որ՝ կանցնի,— քաջալերող շեշտով ասաց Արամը.— գիտցիր, որ ամեն ատեն աչքիս տակն ունիմ քեզի, վրադ միշտ կխորհիմ. հիմակ ու հիմակ անկարելի է, եթե չըսես, բայց շատ դժվար է: Ես ալ, գիտես, գործ

չունիմ. ըշտե թուղթ խաղալով սանկ-ճանկ գլուխ կպահեմք: Բրոջս մանչը թոքախտավոր է, անոր հոգը ես կքաշիմ...

— Հասա ի՞նչ պիտի ըլլա իմ վիճակս, նորեն հալը, նորեն աղբանոցները, — ցավագին ձայնով ասաց Արշակը:

— Թուրքի լուծեն ազատվելու համար Անգլիայի, Ֆրանսիայի կողքին կովեցանք թուրքին դեմ. թուրքերը մեզ կոտորեցին, կողոպտեցին, վտարեցին մեր հայրենիքեն: Հիմա անոնք թուրքերուն բարեկամ են, մեզ կարհամարհեն: Խաբեցին մեզ այդ սրիկաները: Անոնք թուրքին պես ո՛չ խիղճ ունին, ո՛չ ամոթ, ո՛չ մարդկություն...

Արամի միտքը գնացել էր հայկական կոտորածներին: Արշակի մարմնով սարսուռ անցավ: Արամի խոսքերը ճգմել էին նրան. Արամը նկատեց ընկերոջ ընկճվածությունը, առույգ շեշտով ասաց.

— Աշխարհը միշտ այսպես չի մնա, մենք մեր վրեժը կհանենք, անկասկած, միայն պիտի դիմանանք մինչև այդ օրը, ես իմ մասին վրեժի համար կսպրեմ, այլայես կյանքն արժեք չունի ինձ համար... Ինչ քաղցր բան է վրեժը լուծել...

Արամը ներքևի շուրթը ջղայնորեն կրծում էր, ապա Արշակին առանց նայելու ասաց. — Վաղը եկուր քովս, կեսօրին միասին կճաշենք, խորհենք միասին: Թերևս... չի վիրավորվիս, սիրելիս, բան մը ըսեմ, հին զգեստ ունիմ, գեշ չէ՛, կոշիկ ալ ունիմ, ձեռք մը ճերմակեղեն նույնպես, ընկերներ եմք, բան մը չէ: Այս տասը ֆրանկն ալ առ բաղնիք գնա, մագերդ կըտրե, սա հինգ ֆրանկն ալ առ, ուրեմն վաղը կսպասիմ. հիմա մնաս բարով, ճանս, խաղընկերներս կսպասեն, անոնց խերը պիտի անիծեմ. ունևոր արաբ տղաներ են, եգիպտոսեն... կյանքը պայքար է:

Ամուր սեղմեց Արշակի ձեռքը և ձեռքն ափի մեջ պահելով, հարեց.

— Ասոր Փարիզ կըսեն, դրամ չունենաս նե, մարդ երեսդ չի նայի: Ասանկ է Լոնդոնն ալ, Բեռլինն ալ: Նյու-Յորքն ավելի գեշ: Դրամ, կհասկանա՞ս, ի՞նչ է դրամ: Մենք որ մեր երկիրն էինք, պատերազմեն առաջ, չէինք գիտեր ի՞նչ է դրամը, կարհամարհեինք, ճանըմ, կարհամարհեինք: Իդեալ, պատիվ, ազնվություն... Ատոնք աստեղ փարա չըներ: Դրամը — առ է

մարդու հոգին, ո՛չ աստված է ան: Ատ բանը քաղաքը, սա քաղաքներն ինձի սովորեցուցին: Դրամ, դրամ, խերն անիծեմ սա եգիպտացիներուն...

Արշակի ձեռքը նորից սեղմելով, մտավ սրճարան:

— Եթե ձեռքեն գա, բան մը կընե, լավ մանչ է Արամը, — նրա հետևից ասաց իրեն Արշակը:

«Quatrième édition Paris-Soir», մի տղա բռնալով վագեց Արշակի կողքից: Արշակը մի թերթ գնեց, ծովեց, մտավ մի նեղ փողոց: Նրա մտքի մեջ անընդհատ դառնում էր — «դրամ, դրամ, սա քաղաքները, քաղաքը, դրամ, դրամ» և ներս մտավ մի փոքր սրճարան: Ժամանակ կար տակավին մինչև Սեդրակի մոտ գնալը: Նստեց մեկուսի, անկյունում, պատվիրեց մի բաժակ տաք կաթ և հացիկ: Բացեց թերթը, բայց չկարողացավ կարդալ: Իր ծանր վիճակը միշտ ներկա էր, միշտ հարցատու՝ հանգստացուցիչ լուծում պահանջող:

«Այսօր վճռական օր է, անշուշտ Սեդրակն ալ ձեռքեն եկածը պիտի ընե: Ուզածս մեծ բան մը չէ... Կաթով և հացիկով կազդուրված, սկսեց թերթի ընթերցումը: Մեծ հողվածների վրայից անցավ, նայեց լուրերին: Թերթի մի սյունակը լցված էր աշխարհի զանազան կողմերում վերջին օրերում տեղի ունեցած ոճիրներով, աղետներով:

— Բեռլին: Մի սնանկացած բանկիր սպանեց կնոջը, փոքրիկ զավակին և իրեն:

— Վիեննա: Մի անգործ իրեն նետեց երկաթուղու տակ: Չախջախվեց:

— Լոնդոն: Ամխահանքի փլուզման հետևանքով քսան և մեկ բանվոր ողջ-ողջ թաղվեցին հազար մետր խորությամբ տակ:

— Լոնդոն: Մի կին, իր երկու երեխաներով մեռած գտան: Խոհանոցի գազով խեղդամահ եղած: Քաղցածությունից և հուսահատությունից:

— Լոնդոն: Բոմբեյի շրջանում սաստիկ սով է: Քաղցած ժողովուրդը հարձակվեց պետական պահեստների վրա: Ու-

տիկանները ցրեցին սովածներին: Կան սպանվածներ, նույնիսկ կանայք, երեխաներ:

— Փարիզ: Մի ուս նախկին սպա մեռած գտան իր սեղանակի մեջ: Կախել էր իրեն:

— Փարիզ: Անհայտ չարագործները, երեկ գիշեր, մի ծեր մարդու սպանեցին, կողոպտելու համար:

— Նյու-Յորք: Առավոտյան գտան չորս գործազուրկ՝ սառած քաղաքապետության պատի տակ: Խիստ սառնամանիք է քաղաքում: Անտուններին հավաքում է քաղաքը, բայց անպատան մարդկանց բազմության պատճառով՝ ցրտամահության դեպքերը հաճախակի են:

— Չիկագո: Գանգստերներն առևանգեցին մի ֆաբրիկանտի որդու: Եթե փրկանք չտան, պետք է սպանվի երեխան:

«Սարսափելի է աշխարհը» — մտնող Արշակը, թերթն իրենից հեռու նետելով: Արմունկները հենեց սեղանին, գլուխն առավ փեղի մեջ, աչքերը գոցեց. սիրտը սաստիկ ճմլվում էր, բորբոքված ուղեղի մեջ անվերջ դառնում էր. — սարսափելի է աշխարհը, Փարիզ, Լոնդոն, Նյու-Յորք: Սարսափելի են: — «Մեծ քաղաքները ջունգլաներ են՝ իրար հոշոտող գազաններով լցված», — հիշեց Շարլ Բրեյլի խոսքը... Ճշմարիտ, ճշմարիտ, ճշմարիտ:

Ինչ որ կարդացել էր Արշակը, ինչ որ լսել էր բողոքող գազազած ընչազուրկների հասարակության, օրենքների, պետության մասին քննադատություններ և հայհույանքներ՝ բոլորը խառնվել էին ուղեղի մեջ, աղմկում էին բարձրագոյ: Եվ շուրջը ծանր ու թանձր աղմուկով որոտում էր Փարիզը. իրեն թվում էր, թե Բեռլինը, Լոնդոնը, Նյու-Յորքը խոնավել են Փարիզի մեջ և աղմկում են արեւելիորեն:

Որոտում էր հսկայամարմին քաղաքը, հեռում, փնջում: Կառքերի, մեքենաների աղաղակը, խոսքերի ժխորը, մանուկների զվարթ կանչերը, ծերունիների հոգոցները զանգել են, շաղախել են այս վիթխարի խոռոված որոտը: Բախտավորների բրբիջները, հուսահատների ողբերը, նորածինների առաջին ճիչերը, մեռողների վերջին հոնդյունները զանգել են այս ամեհի որոտը, քաղաքի հրեշային ձայնը...

Արշակը աչքերը բացեց. ցնցեց իրեն, շփեց ճակատը, մի

սիգարեթ վառեց, կարծես սիգարեթը անդորրություն բերեց մտքին, գլխի աղմուկը լռեց, սակայն վերստին որոտում էր քաղաքը, դավերի և բանկերի ոստայնը, արյունոտ դաշտը հակամարտ շահերի:

Որոտում է թոհ ու բոհը մթին, տարերային տենչերի, սև եղեռնի, անսփոփ ցավերի, սեռային մղձավանջի քաղաքը, ինքնասպանության, ընդվզող շոսյություն և խելահեղ զրկանքների, ստրկացման և հեղափոխության քաղաքը:

Որոտում էր ստեղծագործության և խելագարության, հրաշքների և մտքի թոխչքների և անկումների քաղաքը:

Արշակը նստած մեկուսի՝ լսում էր քաղաքի որոտին: Քաղաքը մեծերայի գազանի պես ոռնում էր, գոռում ամեն կողմից, ամեն փողոցից, ամեն վայրկյան, առանց հանգստանալու, սպառնալով կուլ տալ թույլերին, խեղճերին:

Մի անբացատրելի, խորհրդավոր վախ էր գգում նա քաղաքի ձայնից, երկյուղը տրորում էր սիրտը, մահվան չափ երկյուղը:

«Սասափելի է քաղաքը: Ա՛խ, եթե գտնեի գյուղիս ճամփան, ա՛խ, եթե գտնեի... Չկա՛, կորել է գյուղիս ճամփան, հավիտյան կորել...»:

Եվ հուսահատ սուզվեց իր պատահողված ցնցոտիների մեջ... Չկա՛, ամեն ինչ կորել է, ամեն ինչ կորել է...

Ժամը 7-ին արդեն Արշակը մտամուրթ և շվարուն կանգնել էր դերձակատան առաջ: Աշխատանքից հետզհետե դուրս էին գալիս արհեստավորները:

Արշակն ու Սեդրակը ողջունեցին իրար: Արշակը պարզեց նրան իր փափագը:

— Տեսնեմ, սիրելիս, հարցուփորձ ընեմ... բայց նորեն հայերու քով պիտի կյանքդ շահիս, զորօրինակ, սենյակ մաքրիս, ես ի՞նչ գիտնամ, ոտաց վրա երթաս-գաս, տանիս-բերիս...

— Ատ բոլորն ուրախությամբ, ուրախությամբ, միայն թե ըլլա:

Սեդրակը մտածելով.

— Արշակ, սիրելիս... բայց կըսեմ, որ լավ կնային ազիլներու մեջ. «փրկության բանակի» տուններուն մեջ: Չե՛ս փորձած: Անտեղերն ավելի լավ չե՛ն ատ քաշածդ կյանքեն:

— Կըրնար շատ լավ ըլլալ, չեմ փորձած: Փորձեմ ալ, տեղ չկա: Անանկ պոչ կա դուռներուն առաջ — պատալներ, փոքրիկներ, կաղեր, հաշմեր... Կերջապես մեղք է՝ ատոնց տեղը բռնել: Մնաց, որ անոնցմե շատ-շատերը տեղ չըլլալուն պատճառով նորեմ կերթան փողոցներուն պատերուն տակ պառկելու... — Ապա համոզմունքի շեշտով հարեց: — Ես կուզեմ գործ մը, որ կտոր մը հացը իրավունքովս ուտեմ:

Լուսթյուն:

— Արշակ, հոգիս, գնա նորեմ հայկական աշխատանքի գրասենյակը, պահանջե, որ անպայման գործ մը գտնան:

— Գնացեր եմ քանի-քանի անգամ, միշտ կըսեմ՝ գործ չկա. եթե ըլլա, քեզի կհայտնենք. հասցեդ ձգե հոս: — Կամ դուռ գործ գտիր, մենք կմիջնորդենք: Օրմ ալ հարուստ հայ մարդու մը վրա երկտող մը տվին, հարստին դուռը զարկի, բացին. երկտողը մեկնեցի անոր, չառավ. հարցուց՝ ի՞նչ կուզես: Քեզի պես հարյուրներ կան, ըսավ, որուն հասնիմ: Գործ չկա: — Ու զայրացած դուռը գոցել ուզեց. բռնեցի դուռը, չթողի գոցել. հրամայեց ծառային ինձ վճարիլ. ծառան թե՛ բերանիդ համով դուրս ելիր, թե չէ գեշ կըլլա... Ի՞նչ ընեի. անպես կատաղած էի — երբեք այդչափ կատաղած չէի եղած — կըրնայի աշխարհ քանդել:

Սեդրակը մեղմ ժպտաց:

Հետո պատմեց Արամի հետ ունեցած տեսակցությունը:

— Արամը, — ասաց Սդրակը, — միջավայր ունի: Ես ամբողջ օրը ծուկկա ծալած կկարիմ, մարդու երես չեմ տեսներ: Անոր փեշը լավ մը բռնե: Ինչո՞ւ չես երևար քովս, շատ իրիկուններ տանն եմ, կար կկարեմ: Եկուր, կխոսենք, ես ալ զգեստներ բաներ մը ունիմ, կուտամ: Ըսիր երեսսրբիչ չունիս: Կուտամ: Ընկերներ եմք, մարդ եմք, աշխարհ է, ամեն բան կպատահի, պետք չէ լքիլ. տոկալ, դիմանալ պետք է... այս տասը ֆրանկն ալ ընդունիր, երբ կուներես, կդարձնես: Կըսպասեմ, անպատճառ գաս...

Արշակը թեթևացած սրտով ուղղվեց դեպի «Լուի Քաթորգի» սրճարանը: Հարկավ տոկալու է: Արամն ալ նույնն ըսավ. հարկավ աս աշխարհի մեջ ամեն բան վերջ ունի, լավն ալ,

գեշն ալ. վաղը հալը չեմ երթար, հանգչիմ վաղը, աս գիշեր ոտներս պարզած քնանամ. առավոտ բաղնիք առնիմ, մազերս կտրիմ, կօգտե դրամս... Իրեն հետ զրուցելով մտավ մի խանութ, մի տուփ սիգարետք գնեց, մի ամբողջ տուփ... «Օրհնվի ծուխի արմատը. եթե սա ալ չըլլար, մարդն ավելի թշվառ պիտի ըլլար»:

Սեմ-Միշելի բուլվարով իջնում էր դեպի Սեմայի փող: Ծքեղ սրճարանների առջևից անցնելիս, նայեց ներս — բյուրեղյա ջահերից հորդում էր լույսը թավշյա բազմոցների մեջ նստել էին մարդիկ, ծխում էին ու զրուցում: Արշակին բնավ չհրապուրեց լույսն ու թավիշը. նա շտապում էր թույլ առաջ լինել Ծարլ Բրեյի մոտ. կարոտել էր նրան: Բացի այդ, սրտով որոշել էր իր ունեցած դրամից տասը ֆրանկ ծախսել Ծարլ Բրեյին հյուրասիրելու համար, իր անզուգական, սիրելի Ծարլ Բրեյին, իսկ մնացածը պահել վաղվա նախատեսված ծախսերի համար՝ բաղնիքի, սափրվելու:

Երկնքում երևում էր էյֆելյան աշտարակը՝ ամբողջապես էլեկտրական լույսի վերածված: Մի հայացքը ձգեց նրան, նայեց լուսավառ ժամացույցին. ժամն արդեն 8-ն էր և ծովեց դեպի աջ՝ իր սրճարանի կողմը:

Սրճարանի հարևան փողոցում լսեց կոպիտ, զզվելի հայհոյանքներ, կանացի խոսքեր ձայներ, որ խուլ ու խավար փողոցների մթության հետ շաղախվում էին: Երկու պառավ աղջիկներ վիճում էին մի տղամարդու համար, որին իրար ձեռքից խլելու հետևանքով փախցրել էին: Արշակի երևումով լռեցին իսկույն, և իրար հրելով ու արմնկելով, արտորում էին նրան մոտենալ, քաղցր, ավելի քաղցր և սիրազեղ խոսքերով թանձրագին ներկած շրթների վրա: Նրանցից հազիվ զլուխ թափած՝ փողոցի անկյունից դեպի իրեն շեշտակի հառաջանում էր մեկը անթոցափայտը սալահատակին չխկչխկացնելով: Եկողը մի երիտասարդ աղջիկ էր. վնասված սրտով: Նորից սիրո զեղում... Արշակը զարհուրած՝ մի ֆրանկ դրեց թշվառի փի մեջ և վազ տալով, փախավ... «Ասոր Փարիզ կըսեն դժոխք է, անունը մնա...»:

Երբ սրճարանի դուռը բացվեց, տեսավ՝ իր ընկերները նըստել են գինու աղտոտ բաժակների առաջ, ծուխի մեջ թաթախ-

ված լույսերի տակ, Շարլ Բրեյլին մեջներն առած: Մյուս Բրեյլը իր մշտական դերումն էր. ոգևորված, բորբոքված ճառում էր՝ ձեռքը խոսքերի իմաստի համաձայն վարելով: Արշակը, չճանաչարելու համար, լռությամբ նստեց դռան մոտ:

— ...Բնությունը, այո, վստահ հանձնվիր բնությանը, Մյուզան, սիրելի քույրիկս, և մի՛ մտածիր մահի մասին: Մեռնելուդ մասին որ մտածես, կորած ես. ավելի շուտ կմեռնիս: Գնալով մյուս աշխարհին. երկու տեսակ է՝ դրախտ և դժոխք: Դրախտը լավ է, համեղ պտուղներ, զով ջրեր, բարեխառն օդ. բայց հասարակությունը ձանձրալի է — հիմարացած ճգնավորներ, արգանդները չորացած կույսեր և ամեն վայրկյան այս ու այն կերպով հավիտյան օրհնության և գովաբանության երգեր մի փառասեր աստծու գահին ուղղված: Հավիտենական ձանձրույթ:

— Բավական է, բավական է, էլ չեմ ուզում լսել, — վըրդովված, վիրավորված իր ջերմեռանդության մեջ գոչեց մահամ Սյուզանը՝ չափազանց պարարտ մի կին, սրճարանի տիրուհին:

— Շատ լավ: Ես խոսքս կուղղեմ իմ բարեկամներին, դու չկաս... Դժոխքը հետաքրքրաշարժ է. այնտեղ է երկրագնդիս բարձր հասարակությունը. փարավոններից բռնիր մինչև Հռոմի կայսրները, Ռուսիո ցարերը, թուրք սուլթանները, Եվրոպայի թագավորները իրենց արքայական պոռնիկներով, մինիստրներով, գորապետներով, բանկիրներով... Հապա կլեռպատրա՞ն, Ասպազիան, մադամ Պոմպադուր, հապա սուրբ պապե՛րը... բայց մյուս աշխարհը գնալուց առաջ, մենք այս աշխարհում դեռ հաշիվ ունենք մաքրելու...

Եվ շրթները թաթախեց գինու մեջ, մի պահ լռելով:

— Արի մոտս, — դարձավ Արշակին, — այստեղ, մոտս, այ դու աղքատ դես, թուրք բանակի հերոս գինվորս, — և կողքին տեղ տվեց Արշակին: — Ո՛ւր էիր, — հարցրեց, մեջքին թեթևակի խփելով:

— Հայրենակիցներիս մոտ էի:

— Ի՞նչ եղավ:

— Խոստացան գործ գտնել:

— Դու էլ հավատա, գոնե այս գիշեր հարուստ կքնիս: Էլ ուրի՛շ:

Արշակն ասաց, որ մի քիչ փող տվին և վաղն էլ հագուստ են տալու:

— Կեցցե՛ն հայրենակիցներդ, — գոչեց Բրեյլը, — արևելքից բերած մարդկությունը դեռ վրաներն է: Վաղը մեր քաղաքակրթությունը նրանց էլ կփչացնի: Նրանք էլ մերոնց պես գազան կդառնան, ոսկիներն իրենց հոգու և սրտի հետ հողի տակ կթաղեն: Եվրոպացի կդառնան:

Ժանը թոքերը կտոր-կտոր անող հազի միջից մոմոաց.

— Քաղաքակրթություն: Ի՞նչ ծա՛ղր:

Արշակը սեղանի վրա դրեց տասը ֆրանկանոցը:

— Պիտի խմենք այս գիշեր, — ասաց կես-ձայնով՝ հայացքը Շարլին ուղղելով:

Շարլը վեթ առավ դրամը երկու մատով, ինչպես մի աղտոտ իր վեր կառնեն, և դողդոջուն ձեռքով դրամը ճոճելով օդի մեջ.

— Նայեցեք սրան, — ասաց Բոլորն աչքերը սևեռեցին տասը ֆրանկանոցի վրա, — լավ նայեցեք այս պստիկ, կապույտ պոռնիկին, — մի օր, մի կորած տեղում, անանուն աշխատավորների քրտինքով ծնվելուց հետո, քանի-քանի հազար սրիկաների ձեռքից ձեռք անցնելով, քանի-քանի ստոր և դառն արարմունքներ կրելով իր բարակ մարմնի վրա, վերջը եկել, ընկել է այս խեղճ օտարականի ձեռքը... հիմա էլ կանցնի Լուի Քաթորզի ձեռքը: Աո, Լուի, և մեզ գինի տուր:

— Գինի բեր՝ խմենք այս անճաման պոռնիկի կենացը, — մոմոաց կլոշարներից մեկը:

— Սպասեցեք, սրա պատվին բաժակաճառ ասեմ, խմենք, — ոտքի ելավ Շարլը՝ բաժակը ձեռքին:

— Silence... — Ակնարկը բոլոր ներկաների վրա սահեցնելով սկսեց Շարլը: — Մեր նախահայր Կայենն անիծված ձեռքով շինեց քաղաքը, և այն օրվանից անեծքը ծանրացավ քաղաքների վրա: Նրա թոռները՝ Թոբել-կայենները երկաթն ու ոսկին ընկճեցին. երկաթից շինեցին սուրը, ոսկուց՝ փողը: Երկաթը շինեց բերդ, ոսկին շինեց շուկա: Մեկի կողմն անցավ գինվորականը, մյուսի կողմը՝ վաճառականը: Եվ ամեն տեղ

զինվորականն ու վաճառականը ստրուկ դարձրին մարդկանց, բայց երկուսի նպատակը նույնն էր—ասլիքով ուրիշի վաստակով:

Վերջը դարերի ընթացքին փողի ուժը գերազանցեց սուրին: Եվ սուրը դարձավ փողի հլու գործիքը:

Փողը նվաճեց բոլորին:

Փողը, ի՞նչ է փողը:

Ամեն բան այս երկրի վրա արվում է փողի համար: Ամեն բան շուկա էլավ:

Ամեն բան առնում են փողով—սեր, առողջություն, տաղանդ, ազատություն, կին, պատիվ:

Ամեն բան ծախում են փողով—սեր, առողջություն, տաղանդ, ազատություն, կին, պատիվ:

Փողն է եղեռնի մղում: Փողն է լցնում բանտերը: Փողի ձայնը ամեն տեղ—բորսաներում, բանկերում, նախարարությունների մեջ, եկեղեցիների մեջ, պալատներում, բոլոր տղերներում: Փողի համար է աշխարհի ամեն կետի վրա պատերազմ պայթած, ամեն մարդ կոպում է փողի համար, ամեն մարդ կոպում է ամեն մարդու դեմ՝ փողի համար...

Կորչի՞ փողը, թող կորչի հավիտյան:

— Կորչի՞ փողը, կորչի՞ փողը,— ուժով ձայնեցին կլոշարները:

— Բայց ես խմում եմ նրա կենացը, թող նա անպակաս լինի մեր գրպաններից,— ասաց կլոշարներից մեկը՝ Պոլը:

— Այ, ուղտ, ինչքան ուզում ես խմիր, նա քեզ մոտ չի գա երբեք,— ասաց կողքին նստած ժանը:

— Իսկ ես խմում եմ ձեր կենացը. կեցցեք դուք, ընչազուրկներ, այսինքն՝ իրավազուրկներ, իմ ազնիվ կլոշար ընկերներ,— տաքացած ասաց Շարլը, բաժակը բարձրացնելով: Կլոշարներից մեկը խանձված ձայնով երգեց կլոշարների, անտունների հին երգը, մյուսները գլխի, աչքերի շարժումներով և մոմալով ձայնակցում էին նրան:

Աշխարհն եղավ ինձ խոստմնազանց.

Խաբեց փորձված մի բողի պես:

Երազեցի բախտավոր կյանք,—

Վաղը պիտի գլխատեն ինձ:

Սատանային ընկեր դարձա,

Նա էլ խաբեց հին բողի պես,

Փողոց նետեց ինձ անոթի,

Չմոռա քաղցած գայլերի պես:

Աղտոտ դեմքս, որ հայելի

Հագիվ տեսավ մի օր միայն,

Վաղը պիտի սափրեն կարգին՝

Գլխատելու համար սակայն:

Չունեցա ես մի կտոր հող,

Մերկությունս ծածկող մի լաթ,

Գլուխ դնելու և ոչ մի տեղ

Այս լայն ու մեծ աշխարհի մեջ:

Վաղը մի թիզ դաշտ կտան ինձ

Պատժվածների գերեզմանոցում,

Մերկությունս կծածկեն հողով՝

Կտրած գլուխս ոտներիս մեջ:

Սրճարանատեր Լուին, ազդված կլոշարի երգից, հևալով, փնջալով երկու շիշ գինի դրեց Շարլի և ընկերների առաջը.

— Շարլ, խնդրեմ, էս էլ իմ կողմից:

— Կեցցե Legion d'honneur-ի ասպետ Միշել Բեռնարը,— գոչեց Շարլը կլոշարների ձայնակցությամբ:

Լուի-Միշել Բեռնարը, մեկ աչքը ծիծաղի մեջ կույ գնացած, ուսերը վեր նետեց և զվարթ անցավ վաճառասեղանի հետևը:

— Լուի, ես քեզ հազար անգամ ասել եմ, որ դիմում աճես Legion d'honneur-ի ասպետ դառնալու: Այս անգամ լսիր ինձ՝ քո հին, անկեղծ ընկերին...

Բոլորը բեղերը սրբելով հավանության նշան արին:

Շարլը կատակի համար միշտ ասում էր Միշելին, թե դու երեսուն տարի է սրճարան պահող ես, հայրենիքին ահագին ծառայություն ես մատուցել, ազգային հարստության զարգացմանը նպաստել ես, հետևապես, իրավունք ունես պատվակիր մարդկանց ցանկի մեջ մտնելու: Մի քիչ փող շարժեցրու, մի սենատորի կերցրու, առ փառավոր նշանը լամպակիդ անցրու, հովանոցն ամեն եղանակին թևիցդ կախիր, մադամդ մյուս թևդ առ և հպարտորեն ցույց տուր քեզ Փարիզի փողոցներում: Ուրիշները քեզանից ինչո՞վ են առավել:

Եվ ամեն անգամ բարի խորհուրդը գոցվում էր զվարթ ծիծաղով:

Շարլ Բրեյլը հիսուսն տարեկան կլիներ. նրբակազմ-ջղուտ, մոխրագույն աչքերով: Սուր դեմք, սուր կզակ, բարակ շըրթներով, ալկոհոլից ուռած, փուր ատած այտերով: Երիտասարդ տարիքին աշխատակցել էր դեմոկրատական երկրորդ կարգի թերթերին: Քաջ պայքարող ժուռնալիստի համբավ ուներ: Քըն-նադատող սուր հոդվածներ ունի գրած քաղաքապետության դեմ, որ երեսի վրա է թողել աղքատ թաղերը, առողջապահական ոչ մի միջոցառում: Գարշահոտության մեջ խեղդվում են մարդիկ: Աղքատների երեխաներն անխնամ, կիսամերկ թափված են մայրերի վրա, քաղաքի տերերի կողմից ոչ մի հոգատար վերաբերմունք: Բոցաշունչ հողվածներով նկարագրում էր ընչազուրկների, աղքատների ծանր վիճակը, հասարակությունից, պետությունից պահանջում էր նրանց դրության բարելավում: Գազազում էր, հուսահատվում, չտեսնելով ոչ մի դրական արդյունք իրենց մղած պայքարից: Անիշխանական ոգով բուռն ճառեր էր խոսում, պախարակում պետությանը, տիրող օրենքները: Պատերազմն ավելի հուսալքեց նրան, հասցրեց այն հոռետեսական մտքին, թե աշխարհն օրեցօր ավելի վատթարանում է՝ կապիտալիզմի օրեցօր աճող տիրապետության պատճառով:

Միշտ ախորժել էր նա ոգելից խմիչքները. բայց հիմա արդեն խմելու մեջ սփոփանք էր որոնում. սկսեց ավելի ստեպ հաճախել գինետունները. կամաց-կամաց խմելու ախորժակը ախտի վերածվեց, դարձավ անբուժելի հարբեցող, կամքը բեկվեց և ընկավ միճչև մարդկային ընկերության հատակը, խառնըվեց հասարակության, այսպես կոչված, տականքի հետ: Սակայն իր զարգացման և հարաբերաբար ավելի դրամ ունեցողի հանգամանքով, մնաց ընչազուրկների մեջ միակ ազնվականը՝ «կլոշար արիստոկրատը». նրան ակնածանքով լսում էին կլոշար ընկերները, որոնց սրտերի մեջ խոսում էր նա: Ապրում էր քրոջ հետ: Տարիներ առաջ, դիրք ունեցած ժամանակը, քրոջը տեղավորել էր գրքերի մի մեծ հրատարակչական տան մեջ: Երախտագետ քույրը կերակրում էր և հագցընում դժբախտ եղբորը: Շարլն այլևս չէր կարող գրել, ձեռները դողում էին, և բացի այդ, մտածումները, մի բան իրականացնելու համար, անկասպ և անհարիր էին դարձել:

Այլևս թերթերի միջոցով չէր կարող խոսել հասարակության հետ, սակայն հրապարակավ արտահայտվելու տենչանքը չէր հանգել նրա հոգում. բուռն պահանջ էր զգում խոսելու օրվա չարիքի և առհասարակ կյանքի այրող հարցերի մասին և ունկնդիրներ էր որոնում, որպիսին ներկայացան սրճարանի կլոշարները: Շարլը գտավ իր հասարակությունը, ուր կրակված խոսում էր այն ամենի մասին, ինչ որ թեթերի բեմից կուզեր ասել. ճառում էր առանց հոգնելու, հոգ չէ, թե կլոշարները իրեն կարո՞ղ էին հասկանալ, թե՞ ոչ: Հյուրասիրում էր իր ունկնդիրներին սուրճով, սիգարետով, և այսպես, նրանց առաջ գեղելով իր զայրույթի և բողոքի թույնը, բավարարված էր զգում իրեն և սիրտը հանգստացած դառնում էր տուն:

Խմիչքի և այլ պետքերի գոհացման համար զգաստ պահերին բուկիմիստներից հին գրքեր էր առնում և վաճառում նախկին բարեկամներին և միջնորդչեք ստանում: Ծահած դրամը իր ընչազուրկ ընկերների հետ էր ծախսում: Վերջին սանտիմը չէր խնայում ընկերներից: Արշակն առանձնապես նրա խնամքի ենթակյան էր. Արշակին կարեկցում էր իբրև անօգնականի, իբրև բուռության և վայրագության զոհի: Այս խավարի և լքման մեջ նա Արշակի միակ բարոյական հեռարանն էր:

Սրճարան բանեցնող Միշելը նրա մանկության ընկերն էր, միևնույն թաղից: Ըրար հետ հյուսված էին հազար ու մի կապերով և հուշերով, անդավաճան սիրում էին իրար: Միշելին վերակոչել էր՝ «Լուի Քաթորգ» անունով, որովհետև Միշելը «Արև-Արքայի» նման մեծ, կարմիր երես ուներ և նրա նման շատակեր ու մարմնեղ էր. կլոշարները, «Լուի Քաթորգ» անունով էին ճանաչում Միշելի սրճարանը:

Շարլը այդ թաղի բոլոր փոքր, հասարակ սրճարանների սիրելին էր, բայց Միշելի անշուք սրճարանը նրա համար Փարիզի ամենից հաճելի անկյունն էր, ուր միշտ ընդունվում էր սրտաբաց: Նա թերևս և մյուս սրճարաններում էլ ուներ իր ճառերին ունկնդիրներ, բայց ամենից շատ այստեղ էր, այս ընտանեկան, հարազատ միջավայրում, իր զգացմունքներն արտահայտելու հոգեկան պահանջին լիուլի հագեցում գտնում: Շարլի ընկերներից էր ժանը՝ խորշումների տակ թաքնված

արյունոտ աչքերով մոայլ մի տիպ, Ֆրանսիայի հարավից էր, խոսում էր իտալական առողջանությանը: Ասում են, որ մի մեծ նավի վրա աշխատող է եղել՝ բեռներ տեղափոխող: Հեռավոր աշխարհներ է տեսել: Ինչ-որ հանցանքի համար բանտ է նստել, փախել է բանտից: Իսկական անունը ոչ ոք չգիտեր, փորձված, եփված մարդ էր, մտածկոտ բայց ջղային և կրոնավար, թուղթ էր խաղում կամուրջների տակ, սրճարաններում, հաճախ հարբած էր լինում: Չեռքն ընկած լրագիրը կարդում էր և գայրացած ճմլում, պատառում... Ալֆրեդը՝ աշխույժ, շարժուն դիմագծերով, Պոլ Մարսելը—սևահեր, դյուրաբորբոք և ամենից երիտասարդը. մոտ երեսուն տարեկան Անատոլը՝ բանտից նոր դուրս եկած, տխուր, սև աչքերով: Բոլորը ցնցոտիների մեջ, աներդիկ, անապաստան: Այսօր դեռ չկշտացած, վաղվան մասին մտահոգված, թշվառներ՝ մի-մի շյուղ ընկած գոյության կովի փոթորիկի մեջ: Կլոշարներ, ընչազուրկներ, Ֆրանսիայի լայնքին ու երկայնքին—բոլոր ճանապարհներով անցած ու դարձած, ծանոթ երկրի բանտերը հաճախակի մտած-ելած: Քնած անթիվ կամուրջների տակ, դաշտերում, անտառներում, նավահանգիստներում:

Չսպիրված երեսներով, ուռած աչքերով, որոնք տեսել են իրենց շուրջը ծովածավալ փոփած փարթամությունն ու շքեղությունը հրապույրի այս քաղաքում, ուր թափվում է աշխարհի ոսկին ու կիրքը՝ վայելք և հաճույք գտնելու համար, և սակայն իրենք մնացին միշտ անհաղորդ, միշտ անմասն: Ընչազուրկներ, որոնց բաժին եղավ ցուրտը, քաղցը, անքուն, անօթևան գիշերները, աղտն ու միջատները և արհամարհանքն ու ծաղրը մարդկային ընկերության կողմից:

Դառնացած, դիվականացած, դժոխքացած հոգիներ, որոնց մշտավառ կիրքն էր ջարդել, կոտրել, հրդեհել, ավերել ներկա հասարակարգը, ունևորներին, իշխանավորներին...

— Ծարլ, խոսքդ կիսատ մնաց, էն որ ասում էիր, թե՛ հաշիվ ունենք մաքրելու,— հիշեցրեց ժանը:

— Գինի լից, ասեմ, չեմ ասի, եթե չլցնես. ա՛յ, էդպես լիքը. ապրես, ապրես... Այո՛, հաշիվը մաքրել կապիտալիստների, բուրժուազների հետ, կնշանակե քանդել այս փտած հա-

սարակությունը, ամբողջովին, այնպես, ինչպես ոռուները մաքրեցին:

— Ապրես, Ծարլ— հարեց ժանը:— Օրինակ առենք ոռուներից:

Ծարլը շտկվեց նստած տեղում, գլուխը վեր բռնեց, դողդոջուն բազուկը տարածեց, լոեց մի պահ, նայեց շուրջը, որպես թե մարդկային հսկա բազմության առջև պիտի խոսի, ձայնին հանդիսավոր գույն տալով, ասաց.

— Այս հասարակությունը, այո, փտած է, նեխված: Պետք է թաղել նրան աղբանոցի մեջ ընտանիքի, եկեղեցու հետ միասին...

Մադամ Սյուզանը, որ ակամայից լսում էր Ծարլի խոսքերը, աղտոտ սրբիչով աղտոտ բաժակները մաքրելով՝ մի կողմ շարտեց սրբիչը և բոլոր գայրույթով ընդհատեց նրա ճառը.

— Բավական է, բավական է, ծերուկ, խենթ. քանդել ընտանիք, եկեղեցի... Աստված իմ, սրբապղծություն, ներիր նրան, աստված իմ, աստված իմ...

— Եկեղեցի, հա, հա, հա... Եկեղեցիները վարդապետների, եպիսկոպոսների մուրներն են,— քրքջալով ասաց Պոլը:

— Աստված իմ, աստված իմ,— կրկնում էր մադամ Սյուզանը:

— Աստված չկա՛,— գոռաց ժանը, բռունցքը սեղանին գարկելով:

— Աստված: Ո՛ր է նա, բարի աստվածը,— քթից-բերանից ծուխ արձակելով հարեց Մարսելը:

Իսկ Լուին արմունկը վաճառասեղանին հենած՝ կզակը ափի մեջ, հևում էր ու աչքով-ունքով քաջալերում էր Ծարլին:

— Խոսիր, Բրեյ,— գոչեց ժանը:

Իսկույն ոտքի ելավ Ծարլը արձակեց շապիկի կոճակը, որ ճնշում էր կոկորդը, և կրակված աչքերը դարձրեց Սյուզանին:

— Այդ դեռ ոչինչ, այդ դեռ ոչինչ, պետք է կոտորել բոլոր բուրժուազներին, կապիտալիստներին, բոլո՛ր, բոլո՛ր հառուստներին:

— Այո՛, այո՛, բոլորի՛ն, բոլորի՛ն,— գրգռված գոչեցին ըն-

կերները բացի Անատոլից և Արշակից, որ լուռ և զուսպ լսում էին:

— Բայց չէ՞ որ դուք քրիստոնյա եք: Այս ի՞նչ բարբարոս բաներ եք ուզում, և չէ՞ որ հարուստները մեր եղբայրներն են,— սարսափած ասաց Սյուզանը:

— Նրանք մեր եղբայրները չեն:

— Եղբայրը եղբոր բերնից հացը չի խլի:

— Այո, հարուստները մեր եղբայրներն են, մադամ Սյուզան, բայց նրանք մեր Կայեն եղբայրներն են: Այդ մեկը լավ իմացիր,— մոռալ հանդարտությամբ ասաց Ժանը:

Շարլն առաջ անցավ.

— Շատ գեղեցիկ, ասացեք խնդրեմ, բայց ո՞վ է խեղճ աշխատավորի արյունը ծծում: Ո՞վ է մեր աղջիկներին պոռնիկ դարձնում ու սփռում մայրերի վրա:

Ո՞վ է մեր երեխաներին թոքախտ տալիս և վաղահաս գերեզման իջեցնում:

— Մեր հարուստ եղբայրները, միշտ նրանք:

Ո՞վ սարքեց այս զարհուրելի պատերազմը, ուր միլիոնավոր երիտասարդներ կտոր-կտոր եղան ումբերի տակ: Եվ դեռ այդ գազանը չի հագեցել, նոր, ավելի զարհուրելի պատերազմներ է թխսում:

Ո՞վ միլիարդների հարստությունը ծուխ դարձրեց կովի դաշտում, մինչդեռ այդ միլիարդներն ինչքան թշվառների կբախտավորեցնեին: Մեր հարուստ եղբայրները. միշտ այդ հարուստները:

— Ճշմարիտ է ասում Շարլը, ճշմարիտ է ասում,— ձայնեցին կլոշարները:

— Բայց, վերջապես, ի՞նչ մեղավոր են հարուստներն այդ բանում: Պետությունն է պատերազմ անողը, հարուստների ձեռքն ի՞նչ կա որ: Թագավորները, նախագահները՝ սրանք և այն էլ հայրենիքի համար,—պատասխանեց Սյուզանը Շարլին չնայելով:

— Ի՞նչ հայրենիք, սուտ բան է. աղքատը հայրենիք չունի, հարուստները խլել են հայրենիքը նրա ձեռքից...— հագի մեջ խեղդվեց Պոլի ձայնը:

— Հիմա, սիրելի Սյուզան լսիր ինձ, խենթ ծերուկ Շար-

լին, ասում ես՝ հարուստները մեղավոր չեն, հա՛: Խելքդ չի հասնում, չվիրավորվես, իմ քույրն էլ՝ Մաթիլդը, քեզ պես է մտածում: Պետությունը, գիտե՛ս, ի՞նչ է պետությունը: Հարուստներն են պետությունը: Կայսրը, թագավոր, նախագահ, բանակ, նրանց ծառաներն են, նրանց կամակատարները, նրանց վարձակալները:

Պետությունն օրենքներ, գիլիոտին է շինել հարուստների գանձը պաշտպանելու համար միայն:

Իսկ գիտե՛ս արդյոք, ինչու համար են պատերազմ անում քո անմեղ հարուստ եղբայրները—իրենց շահի համար: Հայրենիքի մասին են խոսում: Բանկերի, ֆաբրիկանտի-կապիտալիստի համար հայրենիքն իր գրպանն է: Պատերազմին, քո հայրենասեր բուրժուա անգլիացիները, Ֆրանսիայի դաշնակիցները, զենք չէի՞ն ծախում իրենց թշնամի Գերմանիայի վրա: Մի՞թե չգիտեին, որ գերմանացին զենքով պիտի սպանի անգլիացի և ֆրանսիացի զինվորին: Ի՞նչ կասես սրան: Կապիտալիստի համար միայն շուկա է պետք, ո՛չ հայրենիք, ո՛չ բարոյականություն, ո՛չ սեր, ո՛չ, մարդկություն:

Շարլի խոսքերին ժանն անմիջապես կցեց իր խոսքը:

— Իսկ մենք ինչո՞ւ պիտի կովենք այդ ոճրագործ շուկայիկների համար: Ո՞ւմ են հարկավոր ժողովուրդների կոտորածները. ծերերի և մանուկների ջարդը: Դրանք մեզ հարկավոր չեն. դրանք ազահ, անկուշտ բուրժուաներին են պետք: Դրանցից նա միլիոնների շահ է հնձում, որպեսզի լափի ու լակի ոսկե պալատների մեջ: Վերջապես այդ բուրժուաները չեն՞, Ամերիկայի մեր հարուստ եղբայրները, որ կաթի ու ցորենի գինը բարձր պահելու համար՝ այդ կաթն ու ցորենը ծովն են թափում, փոխանակ աղքատներին ձրի կամ էժան տալու: Այդ սրիկաներին, այդ հրեշներին անխնա, մինչև վերջին սրիկան կոտորել ջնջել բոլորին:

Շարլը նորից խոսեց.

— Բոլոր ընչազուրկներն ի՞նչ են նրանց համար—բոլոր մեր որդիներով, ամեն մարդ, իրենցից բացի, միայն «անծանոթ զինվոր», մեռած կամ թե ողջ, և ուրիշ ոչինչ:

Այ, դրանց բոլորին հավաքել եկեղեցիների մեջ, քահանաների և սրբերի հետ միասին՝ այրե՛լ, այրե՛լ...

Քաջալերական մի երկու խուլ մոմոց լսվեց, սակայն մյուսները գլուխները տխրությամբ կախեցին: Ծարլը հաղթականորեն նստեց, սիգարեթը դրեց շրթունքին, Արշակը վառեց լուցկին, իսկ Պոլը լցրեց բաժակը:

Ծանրացավ մի լուռություն:

Յոթը բերանից լուռ բարձրանում էր սիգարեթների թանձր ծուխը և շերմացած մթնոլորտը դարձնում էր կծու, աչք ծակող և ծանրագին:

Բանտից նոր դուրս ելած Անատոլը սև բթամատով ճգմեց-հանգցրեց վառվող սիգարեթի վերջին մնացորդը և հանգիստ, խեղճ ձայնով դիմեց Ծարլին.

— Ծարլ, հազար ներողություն, ես էլ մի խոսք ասեմ: Ծարլ, մենք ի՞նչ ենք, որ կարողանանք աշխարհը փրկել կամ քանդել ու մեր հաշիվը մաքրել հզոր բուրժուազիայի հետ: Մենք ի՞նչ ենք, որ մենք՝ կոշարներս, սանքյուլոտներս, մենք մարդու հաշիվ չենք, մենք՝ լումպեցներս, խոսքս քո մասին չէ, Ծարլ:

— Եթե մենք ոչինչ ենք, ապա ո՞վ է բուրժուազիայի հետ հաշիվ մաքրողը...

Հարցը շատ ուղղակի էր դրված. Անատոլը մի պահ շփոթվեց, Բրեյի հեղինակությունը ճնշում էր նրան:

Բոլոր ընկերները լարված նայում էին մեկ Անատոլին, մեկ Ծարլին: Անցավ մի երկու վայրկյան:

— Պրոլետարիատը: Նա է ուժը: Լումպեց պրոլետարիատը գրո է,— հանգիստ և կտրուկ շեշտով պատասխանեց Անատոլը:

Նորից ընկերները լարված նայում էին այս անգամ առաջ Ծարլին, հետո՝ Անատոլին:

Ծարլ Բրեյը զսպված ձայնով ասաց.

— Էհե՛, այդ չեղավ, սիրելի Անատոլ, դու պրոլետարիատին շատ բարձր դասեցիր, մենք ուրեմն ոչի՞նչ ենք... ես արհամարհում եմ պրոլետարներին, այդ վարձու ստրուկներին: Ես, իհարկե, անցած մարդ եմ, բայց եթե կյանքս նորից սկսեի. երբեք չէի ուզեցա լինել՝ ուրիշին աշխատացնող, ոչ էլ պրոլետար՝ ուրիշի համար աշխատող: Ես սիրով կլինեի ազատ, անտուն կոշար...

Անատոլը նույն ձայնով շարունակեց.

— Ես էլ առաջ քեզ պես էի մտածում, բայց Սանտեի բանտում բանվորներ կային, սոցիալիստներ, ցույցերի մեջ, գաղտնի ժողովների մեջ բռնվածներ, նրանց հետ ծանոթացա, նրանք ինձ շատ բան սովորեցրին, շատ բան պարզվեց ինձ համար: Նրանք մոտները գրքույկներ ունեին, ծածուկ կարդում էին և ինձ՝ իմ նմաններին բացատրում. կարդացին Մարքսի Մանիֆեստը: Համոզվեցի, որ պրոլետարիատը միայն կարող է...

— Այո, գիտեմ,— ընդմիջեց Բրեյը,— երիտասարդ ժամանակս կարդացել եմ Կարլ Մարքսի «Կոմունիստական մանիֆեստը» և ուրիշ շատ բաներ: Ես ժորեսին անձամբ ճանաչում էի. շատ եմ լսել նրան:

— Դու, իհարկե, կարդացել ես, կասկած չունեմ, իսկ ես նրա անունն էի լսել: Ես հիմի գիտեմ...

— Ես գիտեմ, Անատոլ, դու ինչ պիտի ասես,— նորից Բրեյն ընդհատեց նրան,— որ բուրժուազիան է ծնել պրոլետարիատին, որ պրոլետարիատը նրա ժառանգն է, նրա գերեզմանափորը, որ պիտի վերջ տրվի մարդու միջոցով մարդուն շահագործելը, որ պիտի վերանա մասնավոր սեփականություն, որ պիտի լինի ընդհանուր սեփականություն: Այդ պիտի ասեիր, չէ՞:

— Այո, ես էլ էդ պիտի ասեի, բայց դու ավելի լավ ասացիր: Միայն...

— Դու դեռ միամիտ ես, սիրելի Անատոլ, դա շատ հին հեքիաթ է, ձանձրալի է դարձել վաղուց. բան գիտես, բան ասա:

— Դեհ, ես էլ էն եմ ուզում ասել, որ նրանց գործի հետ ծանոթանալով տեսա, որ մենք ոչինչ ենք, լումպեցներս. նրանք են ուժը—պրոլետարիատը: Նրանք կազմակերպված են ամբողջ աշխարհի մեջ, ընկերություններ ունեն, փող ու գանձ ունեն, ժողովներ, թերթեր, դեկավարներ, պառլամենտներում ներկայացուցիչներ. կովում են կապիտալիստների դեմ: Նրանք դրոշակ ունեն, ամեն տեղ միևնույն դրոշակը, սոցիալիզմի դրոշակը: Իսկ մենք դրոշակ չունենք, մենք ոչինչ ենք, բոլորովին ոչինչ: Նրանց դրոշակի տակ միլիոնավոր բան-

վորներ կան: Այազան նրանցն է, վերջնական հաղթությունը նրանցն է:

— Ինչպե՛ս ուռեցնում է,— խոստո ձայնով միջամտեց ժանը:— Քո այդ պրոլետարներն ինչացո՛ւ են, նրանք վախկոտ են, կոպող չեն, նրանք հաց ու տուն ունեն, կորցնելու բան ունեն: Իսկ մենք ի՞նչ ունենք կորցնելու. մենք վաղուց արդեն կորցրել ենք, մենք անոթի ենք, անտուն, մենք անվախ կկոպենք, ավելի վրեժխնդիր, ավելի գազազած: Մենք, որ պիտի քանդենք, ավերենք, հրդեհենք... մեր աստվածը դևն է, մեր ընկերը՝ սատանան:

— Ճշմարիտ ես ասում, ժան,— հանգիստ ձայնով հակառակեց Անատոլը,— մենք կատաղի կկոպենք, մենք դիվացած ենք, մենք կայրենք, կավերենք, կսպանենք, բայց ի՞նչը — տները, շենքերը, հարուստներին, բայց մենք չենք կարող քանդել հիմ կարգերը, հիմ օրենքները. դրանք նորից կմնան, իսկ ավերվածներն ավելի փառավոր կերպով նորից կշինվեն, որովհետև մենք չգիտենք, թե ինչ ենք ուզում, ինչ կարգեր ենք ուզում դնել: Բայց պրոլետարիատը գիտե, թե ինչ է ուզում, ինչու համար է կոպում, ինչ նոր կարգեր պիտի հաստատե: Մնաց որ մենք քանդող ուժ ենք՝ էն էլ թվով քիչ, իսկ պրոլետարիատը ստեղծող է ու թվով շատ մեծ:

— Պրոլետարիատը ի՞նչ է, որ աշխարհը փոխե,— արհամարհական ձայնով միջամտեց Բրեյը, — նոր աշխարհ, նոր օրենքներ, արդար հասարակություն ստեղծե: Ես վարձու ստրուկ է, և ժանի ասածի պես, նա վախկոտ է, կոպող չէ, իսկ բուրժուազիան պետություն ունի, բուրժուազիան բանակ ունի...

— Ներողություն, սիրելի Ծարլ, պրոլետարիատի բանակը շատ և շատ ավելի մեծ է և հզոր: Բոլոր երկրների պրոլետարները պիտի միանան: Էդ ժամանակի հարց է:

— Լա՛վ, լա՛վ, կարճ կտրե,— ժանն ընդհատեց Անատոլին:

— Թողե՛ք խոսքս վերջացնեմ,— գոռաց Անատոլը:

— Թողեք մարդը խոսքը վերջացնի,— ձայնեցին ուրիշները:

— Ա՛յ, իմ խոսքն ես է,— շարունակեց Անատոլը,— կովի

մեջ մենք պիտի պրոլետարիատի բանակի հետ լինենք, որովհետև նա է այն միակ ուժը, որը կարող է կապիտալիզմը վերացնել, հիմ կարգերի տեղ նոր կարգեր դնել, ուր բոլոր մարդկանց համար պիտի լինի հաց, ազատություն, երջանկություն: Իսկական «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» — որ ամեն տեղ կարդում ենք, նույնիսկ բանտի դռան անկատին, բայց ոչ մի տեղ չենք գտնում...

Այս խոսքի վրա ժանը բորբոքված ոտքի կանգնեց, բռունցքը թափով զարկեց սեղանին և մոնչաց...

— Ծնածս օրից լսել եմ «Ազատություն, հավասարություն, եղբայրություն»: Դրանք մեռած, սատկած խոսքեր են: Ի՞նչ է, մենք երեխաներ ե՞նք, մեզ վրա ծախու ապրա՞նք ունես: Երեխան դու ես:

Ես դրանց չեմ հավատում, ես հավատում եմ միայն դանակին:

— Հանգստացիր, ժան, ո՛չ դու ես երեխա, ո՛չ ես: Հակացիր բանը. մեծ կոիվ կա. բուրժուաների ձեռքից պիտի առնել կապիտալը, իշխանությունը. պետք է շինել է՛ն նոր աշխարհը, որին դու չես հավատում, որի դեմ եղպես կատաղած խոսում ես: Սանտեումն էլ քեզ պես ասում էին, որ ոռուներից օրինակ վերցնենք, քանդենք և շինենք: Սանտեում ուրիշ շատ ճշմարիտ բաներ էին ասում, որ պրոլետարիատն իրեն ազատելով բուրժուազիայի ձեռքից, ամբողջ աշխարհն էլ կազատվի նրա հետ միաժամանակ: Բոլոր ժողովուրդները կազատվեն աղքատությունից, թշվառությունից, պատերազմներից էլ հավիտյան կվերանան: Կարճ՝ վերջը, վերջը այս մեծ կովի մեջ պրոլետարիատն է հաղթելու, մի խոսքով՝ սոցիալիզմը:

Անատոլի համոզված սրտով ասված խոսքը ներգործեց Ալֆրեդի և Մարսելի վրա, նրանք աշխուժացան: Արշակը շատ էր լսել Ծարլ Բրեյի ճառերը, միշտ միևնույն իմաստով, բողոք և կիրք, զայրույթ և ցասում, որոնք ավելի դառնացնում և մթագնում էին նրա հոգին, իսկ լսելով Անատոլի խոսքերը, մոայլը հետզհետե պարզվում էր ու պայծառանում: Հիմա նա խանդավառ աչքերով դիտում էր Անատոլին:

— Ես հիմի մի փափագ ունեմ,— մի գործարանի մեջ

բանվոր լինելի, որ, երբ օրը գար, պրոլետարիատի հետ, նրանց դրոշակի տակ, կռվելի բուրժուազիայի դեմ, թե չէ՝ կրակոտ ճառերով, հայհոյանքներով բուրժուազիային չես վախեցնի... իսկ հիմի, ի՞նչ եմ որ ես, ի՞նչ, ի՞նչ...

Անատոլի ձայնը կամաց-կամաց իջնելով մարեց տաք և հեղձուկ լոռայան մեջ:

Շարլը գլուխը հակեց կրծքի վրա:

— Գլուխս ծանր է,— ասաց ձեռքը ճակատին տանելով,— Անատոլն իրավունք ունի. նա Սանտեի համալսարանն է ավարտել, Սորբոնը ոչինչ է, Սանտեի վկայականն է բանը, շատ լավ բաներ ասաց: Նա ուզում է մեզանից հեռանալ: Բարի ճանապարհ: Անկեղծորեն ցանկանում եմ նրան հաջողություն, նաև նրանց, ովքեր ուզում են նրա հետ գնալ: Եթե սոցիալիստները ուժ ունենան բուրժուազիային հաղթելու՝ իրենց խոսքը կլինի: Բայց ես կմնամ իմ ազնիվ ընկերների հետ՝ չենթարկվող ոչ մի օրենքի, ո՛չ պետության, ո՛չ հասարակության—բացարձակ ազատ...

— Միշել, տուն չեմ գնալու, ինձ էլ Արշակի հետ մյուս սենյակում տեղ տուր քնենք, այնպես որ այս աղտոտ օտարականը ոտները մեկնած քնի...

Ժանը ծանր քայլերով մոտեցավ Անատոլին, կանգնեց նրա առաջ, խստագին նայեց աչքերին.

— Մենք այլևս ընկերներ չենք, գնա, քո վարձու պրոլետարների մոտ. գարշելի են այդ ստրուկները... Մենք ոչինչ ենք հա՛, թող այդպես լինի, բայց ես չեմ ծառայի բուրժուաներին, թող անոթի մեռնեմ Սենայի կամուրջների տակ: Ես, ես ատում եմ բուրժուաներին, զզվանքով, թուլնով, հայհոյանքով, ատում եմ նրանց, իմ վերջին շունչը հայհոյանք պիտի լինի. գնա ծառայիր քո տերերին:

— Պոլ,— դիմեց նրան,— ել երթանք, թափառենք, միտքս պղտոր է, քունս չի տանում:

Երկուսով դուրս ելան սրճարանից:

Սրճարանի դուռը բացին, որ ծուխը քաշվի և թարմ օդ ներս գա: Ալֆրեդն ու Մարսելը մաքրած սեղանի առաջ տեղ բռնեցին քնելու պատրաստվելով: Անատոլը մի պարկ փոեց

հատակին, մի երկու լրագիր իբրև սավան պարզեց պարկի վրա և գլխի տակ դրեց տոպրակը:

Ամիսներից ի վեր առաջին անգամ լինելով՝ Արշակը հանվեց և ոտները ազատորեն տարածելով պառկեց թախտի վրա: Քունը չէր տանում. ուղեղը բորբոքված էր, մտքերը՝ լարված:

Անատոլի ասածները հեղափոխել, լուսավորել էին նրա հոգին: Եվ Անատոլի փափագը՝ բանվոր լինել, իրեն համար էլ տենչալի ու հմայիչ Ոսպտակ էր դարձել: Ջգում էր, որ գտել է իր ուղին այս խավար գուբից ելնելու:

Ջգում էր իրեն փոխված, կամքով կարծրացած: Աշխարհում իրեն առաջ իդեալ էր տեսնում և կյանքի մեջ՝ իմաստ: Մտնել գործարան, գինվոր լինել պրոլետարիատի բանակում, պայքարել թշվառության դեմ, թշվառությունն ստեղծող մարդկանց և կարգերի դեմ: Մեռնել, նույնիսկ մեռնել թշվառների ազատության, բախտավորության համար:

Ա՛յ, մեռնելը հիմա դյուրին է, այնպես հեշտ է հիմա մեռնելը և գեղեցիկ այս գաղափարի համար, այս կռվի մեջ...

Եվ Արշակը գիշերվա լոռայան մեջ մեկնում է երկու ձեռքը պրոլետարիատի ազատարար դրոշակին: Իր հոգով, իր մարմնով, իր արյունով բոլորովին պատրաստ:

ՀՈՐ ԵՐԱՆԵԼՈՒ ԾԱՌԸ
ԴԱՍԿԲԵԺ ԱԼԵՄԱՆԸ

Ծա՛տ տարիներ առաջ, հունվարի սկզբներին, մի բարեկամի հետ Կողզվանից գնում էինք Երևան: Բարեկամս փաստաբան էր և Երևանի դատարանում գործ ուներ պաշտպանելու:

Առաջին գիշերը իջևանեցինք Կողբ ավանում: Առավոտուն կուշտ նախաճաշեցինք, խմեցինք ամեն մեկս մի քանի բաժակ օղի, փաթաթվեցինք բաշլուղներով ու յափուցեցինք երկու անգամ լրջաբար:

Երկձիանի կառքը աշխույժ թռչում էր լավ խնամված խճուղիով, որը զուգահեռ գնում էր Արաքսի ընթացքի հետ:

Օղը պայծառ էր բյուրեղի պես կապույտ երկինքով: Արևը սահում էր Մասիսի լեռնապարի գագաթներին գրեթե քվելով:

Ենթադրում էի, որ շա՛տ ցուրտ պիտի լիներ, որովհետև Կողբից դուրս գալուց անմիջապես հետո մեր բեղերից և մորուքներից կախվեցին սառույցի փոքրիկ սյուներ և մեր յափուցեցիների և ձիերի մագերի վրա եղյամի խավ ցատեց:

Մինչդեռ մենք չէինք զգում ցուրտը: Օղին՝ այդ հրեղեն հեղուկը, մեր արյան մեջ կրակ էր վառել:

Իմ տրամադրությունը շա՛տ զվարթ էր, ինչպես և բարեկամինս: որ համով, կատակախոս մարդ էր:

Նա մեկը մյուսի հետևից շա՛տ զվարճալի բաներ էր պատմում, և մենք ծիծաղում էինք լիասիրտ:

— Տղամարդ ցուրտ է,— հանկարծ ասաց մեր կառապանը՝ բրդե թանձր թաթմանների մեջ պարուրած ձեռքերը իրար զարկելով:

— Ի՞նչ է, մրս՞ում ես,— հարցրի ես:

— Ինձի պես տղամարդու համար մրսելս ո՞րն է:

— Է՛հ, մենք ի՞նչ պակաս տղամարդ ենք,— վրա բերեց բարեկամս:

Եվ երեքով, միասին, բարձր ծիծաղեցինք:

Օ՛, երիտասարդության անառիթ ուրախություն, ո՛ր գնացիր...

Դաշտերը, ինչքան աչքդ կարող էր կտրել, ծածկված էին ձյունով. մինչև լեռների կատարները կայծկլտուն, մարմարյա ձյունով: Սակայն ժայռերի սև մուրթները խաթարում էին այս համասփյուռ սպիտակությունը:

Եվ մի անսահման խաղաղություն կար տարածված ամենուրեք. մի ցուրտ, ճերմակ լուրջություն դաշտերի և լեռների վրա: Միայն ձիերի առույգ փունգտոցն էր և անհիվների աղմուկը, որ կենդանացնում էին այս մեռելային բնանկարը:

Ճանապարհի երկու կողմը ո՛չ մի գյուղ չէր երևում— ընդարձակ անալություն էր:

Հանկարծ խճուղու ծայրին տեսանք ծուխի մի բարակ սյուն բարձրացած... Կյանքի ներկայության հաճելի խորհրդապատկեր:

Ղարա-Ղալայի փոստի կայանն էր: Այնտեղ պիտի մի պահ դադար առնեինք՝ ձիերը փոխելու համար:

Ինչքա՛ն խոստմնալից է այս վայրը մրսած, հոգնած ձիերի և ուղևորների համար. ինչքա՛ն ցանկալի կայանը, իջևանը գիշերվա պահերին, ամառվա շոգերին:

Ձիերը ինքնաբերաբար արագացրին իրենց քայլերը:

Կայանի պետը, 30 տարեկանի մոտ, համակրելի դեմքով մի երիտասարդ, մեզ առաջնորդեց մի սենյակ, ուր զվարթ ճարճատյունով ջերմություն էր բաշխում սև, թիթեղյա, բարի վառարանը:

Խնդրեցինք մեզ սամովար տալ, մինչ ձիերը կփոխեին, և հանելով բաշլուղ ու յափուցեցի, ցատեցինք վառարանի առաջ և մեծ հաճույքով վառեցինք մեր ծխախոտները:

Կայանի պետը ելումուտ էր անում:

Ես զննում էի սենյակը: Արևելյան կողմը մի լուսամուտ կար՝ բացված Արարատյան դաշտի վրա, ուր Արաքսը ճերմակ դաշտերի միջով վարում է դեղնականաչ իր ջրերը: Չախ

կողմը արծաթյա Արագածն է կանգնել երկնահուպ Մասիսի հանդեպ:

Սեւյակի մի անկյունում կար մի փայտե մահճակալ, պատին՝ մի գորգ. մյուս պատի տակ մի թախտ՝ վրան գորգ ու բարձեր: Անկյունում՝ մի մեծ պահարան:

Մահճակալին կից մի սեղան կար՝ վրան թղթեր, գրիչ, մելան և կարմիր շապիկով մի գիրք: Նայեցի—«Մուրճ» ամսագրի վերջին թիվը:

Ի՞նչ—այս ամսյի, հեռավոր վայրում գրական վերջին նորությունը,— չէի սպասում: Եվ ինչքան թանկարժեք երևաց ինձ այս պահին «Մուրճ»-ի այս համարը: Սիրով կմնայի այստեղ, մինչև որ ծայրեծայր կլանեի այն: Քաղաքում ո՞վ է լրիվ կարդում որ... այնքան գիրք կա՝ իրար խեղդող:

«Մուրճ»-ը թերթեցի: Այնտեղ կար իմ մի ոտանավորը: Ուրախացա: Յույց տվի բարեկամիս:

Ներս մտավ կայանի պետը:

— Այս «Մուրճ»-ը ձե՞րն է,— հարցրի ես:

Այո՛, իրանն է. բաժանորդ է. ուրիշ ի՞նչ կերպ ժամանակ անցներ այս մեկուսի, ճգնավորական վայրում, մանավանդ ձմռան երկար, մթին, անվերջ գիշերները... ուրիշ գրքեր էլ ունի:

— Երևի, կարդալ շա՛տ եք սիրում:

Այո՛, շա՛տ է սիրում կարդալ, միակ մխիթարությունն է: Վառում է վառարանը, սամովարը դնում է, նստում է մեռակ, ծխում է և կարդում է, քամին մոնչում է, ծեծում է դուռ ու պատուհան, բայց ինքը տարված է գրքով, և մանավանդ, երբ լավ գիրք է ձեռն ընկնում, մոռանում է ողջ աշխարհը... Ի՞նչ բախտավորություն: Օրինակ, վերջերս կարդում էր «Հո՛» երթաս»-ը. երկու անգամ, ծայրեծայր, կարդաց, այնքան հափըռտակված էր...

— Դուք ճանաչո՞ւմ եք հայ բանաստեղծներին,— հարց տվեց բարեկամս:

— Իհարկե: Քչից-շատից:

— Օրինակի համար, Հ. Թումանյանին, Ավ. Իսահակյանին:

— Այո՛, կարդացել եմ «Մուրճ»-ի մեջ:

Բարեկամս աչքի նշանով ցույց տվեց ինձ—«Իսահակյանը է»:

Երիտասարդը շփոթվեց. մեկ նայում էր ինձ, մեկ՝ բարեկամիս:

— Այո՛, հենց ինքն է. հաճաք չեմ անում:

Ես ժպտացի և խոստովանեցի:

Իսկույն երկու ափերի մեջ առավ ձեռքս: Աչքերի մեջ բոց էր փայլում:

— Ինչքան ուրախ եմ, բախտավոր եմ: Մտքովս չէր կարող անցնել, թե մի օր, այստեղ... Ես շատ էի ցանկացել ինձ մի անգամ Թիֆլիս ձգել, որ գոնե հեռվից տեսնեի մեր գրողներին,— և թվեց անուցներ:

— Տեսա՞ք,— կտրեց նրա կցկտուր խոսքը բարեկամս,— մատաղն իր ոտքովն է եկել:

— Ես մատաղ լինեմ Ձեզ,— դարձավ ինձ երիտասարդը,— ես շա՛տ կխնդրեմ: Ո՛չ, թույլ չեմ տա... Ես գիշեր իմ հյուրն եք. չէ, չեմ թողնի...

Բարեկամս հակառակեց—շտապ գործ ունի, պիտի գնա:

Կայանի պետը թախանձեց.

— Խնդրում եմ, անպատճառ մնաք, լավ ժամանակ կանցնենք, գոհ կմնաք: Ձեզ ցույց կտամ Ղարա-Ղալայի ավերակները, կտանեմ քրդերի մոտ, բեկը բարեկամս է, շա՛տ հետաքրքրական մարդ է. գիշերը քուրդ երգիչ կբերեմ, իրենց երգերն ու զրույցները կերգե...

Հրապուրիչ հեռանկար էր: Ես համոզեցի բարեկամիս. համաձայնեց:

Կայանի պետի բերկրանքին սահման չկար:

Արսեմը կողբեցի է. սովորել է ռուսական տարրական դրսրոցում. ծնողները գյուղումն են. հայրը տառիկ է (աղահանքում քար կտրող), մի քույր և փոքրիկ եղբայր ունի, հայրը շատ չի վաստակում, տան նեցուկը ինքն է. մինչև քույրը չամուսնանա, ինքը չպիտի ամուսնանա...

Բացի Արսեմից, կայանում մշտապես ապրում էր և ձիերի խնամող, ախոռը մաքրող մի ծառա: Երթևեկող կառապանները հաճախ գիշերում էին կայանում:

Իրենց փոքրիկ տնտեսությունն ունեին—մի կով և հավեր:

Ճացը՝ թխած՝ գալիս էր Կողբից: Արսենը հաճախ գնում էր Կողբ և պաշարով վերադառնում:

Շրթայի զարկած երկու հսկա շներ կային. այնքան բրդոտ էին նրանք, կարծես մուշտակ էին հագած: Գիշերը արձակում էին նրանց: Կայանի արթուն և կատաղի պահապաններն էին:

Ճոխ ճաշից հետո, ուր հավով փլավից բացի վայելեցինք նրաքսի համեղ ջանառ ձուկը, գնացինք Ղարա-Ղալան տեսնելու: Հեռու չէր կայանից: Իջանք մի ձոր, որ բրդերի դշլան էր, ձմեռանոցը:

Գարնան բացվելուն պես քրդերը իրենց կոներով (վրաններ) և հոտերով բարձրանում են լեռները, աշնանը ապաստանում են տաք ձորերում: Բազմաթիվ մեծ ու փոքր անձավներ ունի ձորը, մաղարաներ, ուր տեղավորվել են քուրդ ընտանիքներն իրենց ոչխարով և տավարով: Քարայրերը նրանց խոտանոցներն ու հարդի մարագներն են: Այրերի մեջ օջախներ կան շինած, թոնիրներ կան թաղած: Այրերի բերանները անտաշ քարերով պատեր ունեին և փայտե կամ եղեգնե կափարիչներով դռնակներ:

Հարուստները այրերին կից քարաշեն մի-երկու աչք բնակարաններ ունին, բայց ընտանիքի մեծ մասը և ծառաները այրերումն են ապրում: Ամեն մի այրից ծուխ է բխում: Ահագին գամփոներ պառկել էին դռների առաջ. քուրդ մանուկները՝ կիսամերկ, խաղում էին անզոր արևի ջերմության տակ. նրանց մարմինները սևացած էին իրենց ոչխարների թուխ գեղմների պես:

Տեղ-տեղ ոչխարների խումբեր՝ գլուխները միմյանց դմակների տակ թաղած՝ կանգնել էին, գրեթե անշարժ: Դուրս էին հանել տաք անձավներից՝ մաքուր օդ առնելու համար:

Քանի դեռ արև կար, բարձրացանք ավերակ քաղաքը. վեքաղարձին պիտի այցելեինք բեկին:

Ղարա-Ղալան երեք կողմից պատած է ձորով: Հյուսիսում ժայռոտ անդունդի հատակով հոսում է Արաքսը: Ալիքները անդադրում ծեծկվում են հունի խորքից բուսած կամ հունի մեջ ընկած վիթխարի ապառաժների հետ, կոտորում են շարունակ իրան ընկճելու ձգտող սառույցը և հավերժական անդրվ աղմուկով և շառաչով լցնում են անդունդը:

Հենց անդունդի եզերքից բարձրանում են սև-երկաթաքարով դարբնած աշտարակներ ու պարիսպներ, ուր մերթ պատերի հետ հյուսված կան մեծանիշ խաչեր՝ կարմրավուն քարից: Քաղաքը ամեն կողմից պարսպապատ է: Քաղաքի մեջ կան ավերակների կույտեր, քանդակված վեմեր, փլատակ շենքերի մնացորդներ, կարկառներ, կարկառներ...

Թափառում ենք հիմնավորց գեղեցիկ բեկորների մեջ, մի կարկառից մյուսը: Ի՞նչ է այս քաղաքի անունը: Անհայտ է: Ե՞րբ է հիմնվել, ո՞վ է հիմնել, ե՞րբ է կործանվել—անհայտ է:

Ի՞նչ պատմություն ունի. ինչե՞ր են անցել նրա գլխովը. ի՞նչ դեպքեր են տեղի ունեցել այս պարիսպների մեջ—ո՞չ ոք գիտե: Պատմական ո՞չ մի հիշատակություն, պատմական ո՞չ մի անցքի հիշատակում:

Եվ պարիսպների, և շենքերի վրա ո՞չ մի տեղ արձանագրություն: Գերեզմանաքարեր կան միայն խաչանշաններով և առանց տապանագրերի:

Այս ի՞նչ կախարդական քաղաք է—մտածում եմ ցավով և զարմանքով: Սերունդներն են ապրել այստեղ, ամրակուռ պարիսպներով պատել են իրենց քաղաքը, կովել են, սիրել են, առել են, տառապել են, սերունդներ ու սերունդներ, և գերեզման են իջել՝ առանց մի խոսք կտակած լինելու հետնորդներին իրենց դարևոր գոյության մասին:

Ինչքան այրեր են եղել, կանայք, աղջիկներ, երեխաներ. գոնե մի անուն, մի ապրողի անուն...

Հավիտյան կորած են թվում ինձ այս հին քաղաքի դարեր կենդանացնող այն հազարավոր ու բյուրավոր մարդիկը:

Ինչքան ունայն է մարդկային կյանքը. ինչքան ոչինչ է երկրի վրա մարդու հետքը, ինչպես ծովի վրա սահող տաշեղի հետքն է...

Սակայն ուզում եմ անպատճառ մի բան գիտենալ: Իսկողող է, ճնշիչ է այս անգիտությունը: Միտք լկող է այս գաղտնիքը:

Մի՞թե առասպելներ չկան ժողովրդի մեջ այս անանուն քաղաքի մասին: Ժողովրդի հիշողությունը երկար է, և նրա առասպելները, առհասարակ, պատմության փաստերից ավելի ստույգ են լինում...

— Պարո՞ն Արսեն, շրջակա գյուղերում, Կողբում, ո՞չ մի

պատմությունը չկա՞, միթե, այս քաղաքի մասին, գրույց, հե-
քիաթ:

Արսենը լսում է մտածկոտ, ապա մեղավորի պես նայում է
աչքերիս և, վարանելով.

— Այս քաղաքի մասին բան չկա, բայց մի առասպել կա
այս տեղերի մասին, որուն չի վերաբերում. և շա՛տ պառա-
վական, անխելք բան է...

— Ի՞նչ է,— հետաքրքրվում եմ ես:

— Մի ծառ կա այս կողմերում, հիմ, ծերացած, ճղակո-
տոր ծառ, կեսը չորացած, փչակ դառած: Ասում են, որ Հոբ
Երանելու ծառն է, նրա տակին է նստել Հոբը իր վերքերով,
իբր ցավերով: Այդտեղ են եկել նրա բարեկամները՝ թշվառին
մխիթարելու համար...

— Ո՞ւր է, ո՞ւր է,— հարցնում եմ ես անհամբեր, և դիտակա
տանում եմ աչքերիս:

— Այստեղից դժվար թե երևա, բավականին հեռու է. մի
ժամ, ավելի: Ա՛յ, այնտեղերն է,— և մեկնում է ձեռքը:

Ես լարված նայում եմ—միայն և միայն ձյունոտ դաշտեր,
ձյուն ու դաշտ, և ծառի ո՛չ մի նշույլ...

— Բան չի երևում, չի՞ կարելի արդյոք գնալ տեսնել:

— Հիմա շա՛տ դժվար է, ճանապարհը լցված է ձյունով...
Քնկ եթե ամառը շնորհ բերես գաս, կերթանք միասին:

— Ուրիշ ի՞նչ են պատմում այդ ծառի մասին:

— Ուրիշ բան չկա: Սուրբ ծառ է. ուխտատեղի է. հայ և
քուրդ գալիս են, մատաղ են անում: Տերևները բուժիչ են:
Տերև չի մնում վրան՝ քանի որ բոլորը տանում են: Առանց էդ
է՞լ կիսամեռ ծառ է. գրեթե տերևագուրկ:

Հերու մայրս գնացել էր ուխտի. մի քանի հատ բերել էր.
մեկն ինձ տվեց թե՛ պահիր—չարոցքի դեմ է: Ես էլ գրքի
մեջ-դրի: Ուրախությամբ կտամ Ձեզ:

Ես նորից նայում եմ մատնանշած վայրին և խորհում եմ—
ինչո՞ւ է հայ ժողովուրդը Աստվածաշնչի Հոբին Եդովմական
հողերից տեղափոխել իր հողերի վրա: Անշուշտ, խորունկ
Ձայնություն է տեսել Հոբի և իր ճակատագրի միջև:

Ընչո՞ւ մի այլ ժողովուրդ՝ վրացին, ոուսը, ֆրանսացին չեն

տեղափոխել Հոբին իրենց տունը... Իհարկե, անիմաստ կլի-
ներ:

Չէ՞ որ ինքը՝ հայ ժողովուրդն էլ Հոբի պես մրրկահար և
կայծակնահար է—իր գույքն ու ինչքը ավազակներից և հե-
լուզակներից կողոպտված, որդիներն ու աղջիկները վայրագ
թշնամիներից սրակոտոր ու թոփամահ, և Հոբի պես, դառ-
նակսկիծ վերքերով նստել է, դարերով, իր տան մոխիրների
վրա, իր հոյակապ ավերակների մեջ և հառաչում է ու մորմո-
քում:

Հորը վերստացավ իր ինչքն ու գույքը կրկնապատկված,
վերստին ունեցավ որդիներ և աղջիկներ, ավելի գեղեցիկ,
քան առաջինները:

Հայ ժողովուրդն էլ, Հոբի պես, հավատում է իր պայծառ
ապագային: Անպարտելի հույս ունի և դարեր վառ է ու կեմ-
դանի նրա հավատը. գիտե, որ վերստին պիտի ստանա իր
արդարավաստակ գույքն ու ինչքը. վերստին պիտի ունենա
բազմաբյուր որդիներ և աղջիկներ, ավելի կորովի և ավելի
գեղեցիկ, քան առաջինները:

Այլապես, առանց այս հզորագույն հավատի, ինչպե՞ս կա-
րող էր նա, ցավերով և խոցերով լի, ապրել դարեր և դարեր,
նստած հայրենիքի մոխիրների վրա, իր շքեղ ավերակների
մեջ...

* * *

Իջանք քրդերի ձմեռանոցը: Արսենը մեզ առաջնորդեց
Յուսուֆ բեկի մոտ, որ Ջալալի ցեղի պետերից մեկն էր:

Բեկի բարակերտ բնակարանի դռան առաջ մեզ ընդունեց
նրա ծառան և ներս հրավիրեց:

Բեկը 50 տարեկան մի առողջ տղամարդ էր, խրոխտ գե-
ղեցկությանը, շեկ մորուքով և կապույտ աչքերով:

Նստել էր օջախի կողքին և ծխում էր, երբեմն-երբեմն ու-
նելիով խառնելով մեղմ վառվող աթարը, որից նուրբ մի ծուլս
էր ոլորվում բուխարիկի մեջ:

Թախտերի վրա փոփած էին թաղիքներ և քրդական ճախ-
շուն գորգեր:

Բեկը հանգիստ և հանդիսավոր ձևով պատասխանեց մեր
քարևին և տեղ հրամայեց:

— Բարով եք եկել, հազար բարով, իմ գլխիս, իմ աչքերիս
վրա,— քրդական շեշտով, հայերեն բառերով ասաց բեկը
(Հայաստանի քրդերը բավական վարժ հայերեն են խոսում՝
շրջապատի բարբառով):

Արսենը ներկայացրեց մեզ: Փաստաբան: Եվրոպայից եկած
գրող-կարողացող: Անուճով մարդիկ են:

Բեկը զննեց մեզ՝ ոտքից մինչև գլուխ.— լավ էինք հագ-
նըված, ժամացույցով, ոսկի շղթայով. հեռադիտակը վզիցս
կախ:

— Ավրոպա՛, Ֆոանկստա՛ն, Ինկիլի՛զ, Լամսա՛...— և գլու-
խը թափահարեց:— Քանի՞ լեզու գիտես,— դիմեց ինձ:

— Մա՛ջջալլա, մա՛ջալլա ... Ի՛նչ դարդ ունիս սրտիդ մեջ,
որ թողել ես էդ լավ աշխարհները, եկել ես մեր քամբաղը:

— Հայրենիք է, վաթան,— ասացի ես,— իսկ հայրենիքը
ամեն տեղից անուշ է:

— Դրուստ է, դրուստ է... Հավքը օսկե վանդակի մեջ դը-
նես; էլի՛ իրան չոլի՛ ծառը կնուզե... Էնտեղ կուզե խաղ կան-
չել...

Հարցրեց Եվրոպայի կենցաղի մասին, հետո.— Ինկիլի՛զն
է ուժով, թե՛ Լամսան, թե՛ Ռուսը:— Ապա գիտցածովս՝ Ինկի-
լիզը, Ֆոանկը, Լամսան հնճարք, խելք, մաշինա շատ ունին,
քան ոռուքը, բայց ոռուսի հողը շատ է, ոռուք ամենե՛ն ուժովն է:

Ես հարցրի քրդերի մասին: Ինչպե՛ս են ապրում, գո՞հ են:

— Մեր կյանքը է՛ս է,— բազուկը երկարացրեց. ափը
լայն բանալով.— գարունը սար ենք ելնում, ոչխար արածաց-
նում, ձմեռը նստում ենք օջախի առաջը, ուտում ենք գարնան
աշխատածը, չիբուխ ենք քաշում ու դնդնում աշխարքի բանը:

Հենց է՛ն գլխից, մեր պապերից բոճած, էսպես եկել է.
էսպես էլ կերթա. ճոր բան չկա...

Բարեկամս վրա բերեց.

— Նոր բանը չէ գլխավորը: Բանը բախտավոր լինելու
մեջն է:

— Իրավունք ունիս. բայց դուք կրճա՞ք ձեր քաղաքի տները
թողնել, գալ մեզ պես ապրել՝ սարում, ձորում...

— Ուրախությամբ,— պատասխանեցի ես:

Բեկը մի պահ կասկած արտահայտող ժպիտով նայեց աչ-
քերիս մեջ, ապա.

— Դրուստ է, մարդուս սիրտը մեկ բանի վրա չի թառի
մնա: *

Յուսուֆ-բեկը մեզ հյուրասիրեց թելով և մատի թանձրու-
թյամբ չոր-սերով:

Խորին շնորհակալություններ հայտնելով, թողինք բեկին
իր օջախի առաջ, իր չիբուխի և իր մտորմունքների հետ:

* * *

Երբ հասանք կայանը՝ արդեն մութը կոխել էր:

Արսենը վառեց լամպարը: Եվ մի գոթի միջից հանեց մի
չորացած, դեղին տերև... Հոր Երանելու ծառից և զգուշաբար,
դրեց հուշատետրիս մեջ:

Նայում էի մեռած տերևին և սիրտս խոսում էր այդ խոր-
հըրդավոր մշանի հետ...

Բարեկամս պառկեց թախտի վրա հանգստանալու և իս-
կույն քնեց:

Դուրսը մութն ավելի խտացավ, և շողշողուն աստղերի մի
բուլլ ճառագայթեց պատուհանից ներս:

Ես էլ տարածվեցի բարեկամիս կողքին, ականջս տված
Արաքսի խուլ շառաչին և մտքերիս հետ գնում էի...

Եկավ Սլեմանը՝ թաղիքե արան հագած, գլուխը՝ քոլոզ, մի
երիտասարդ հովիվ, արևառ, ցրտահար դեմքով, ուր փայլիը-
լում էին երկու կրակ-աչքեր:

Սլեմանը դժլայի ամենից գովական դանկբեժն էր (երգ
ասող) և բլուլ (սրինգ) նվագողը:

Բարևեցինք իրար, «քեֆ ու հալ» հարցրինք իրար, ծխե-
ցինք իրար հետ և բարեկամացանք:

Ախոռի դռները գոցեցին, գամփոններից արձակեցին, որոնք սկսեցին հաշելով կայանի շուրջը անցուդարձ անել:

Արսենի հետ սենյակ մտան մեզ բերող կառապանը և ձիապանը:

Ընթրիքի սեղան հարդարեցին և շարեցին օղիի և գինու շշերը:

Սլեմանին մեջներս առած՝ բոլորվեցինք միասին սեղանի շուրջը:

Սլեմանը ուտում էր ու խմում, և, փոխնիփոխ, նվագում էր թլուլը և երգում նվագածը:

Կառաված, կրակված նվագեց ու երգեց քրդական վիպերգեր, մեկը մյուսից գեղեցիկ:

Երգերից մեկը—մի մեղեդի, սիրո հառաչանք, այնքան վճիտ, այնքան հուզիչ, որ բոլոր սեղանակիցներս սրտագին ա՛խ քաշեցինք և լի բաժակներով խմեցինք Սլեմանի կենացը:

...Տղան ասում է աղջկան.

— Ո՛վ է ասել քեզ,
Ա՛յ քաղու խըճե,
Թե սեր ունիմ ես,
Սեր ունիմ վրադ:

Ո՛վ է ասել քեզ,
Ա՛յ քաղու խըճե,
Թե օր ու գիշեր
Սիրտս մխում է՝
Քո տեսքի՞ն կարոտ:

Սերդդ աչքերս մուժով չի պատել,
Սար ու դարերը չի պատել մուժով:
Ունեցածդ ի՞նչ է,
Ա՛յ քաղու խըճե,
Որ շուքիդ գերի՝
Հավիմ ու մաշվիմ...
Ծիտակ է, որ դու քառսուն ծամ ունիս,
Որ մեջքիդ բոլոր փաթույթ են գալիս,
Բայց քո ծամերդ մուշկի հոտ չունից,
Ու արեշումի փայլվիլանք չունից:

Ծիտակ է, որ դու աչքեր ունիս սև,
Երկու սև օձեր խոռ-խոռ ծվարած.
Բայց աչքերիդ մեջ կրակներ չկան,
Մեռած են, մարած քո սրտի պես սև:

Ծիտակ է, որ քո հասակդ բանձր է,
Հասակդ բանձր է, մեջքըդ բարակ է,
Բայց հասակըդ չի ծփում բարդու պես,
Ու Խան-Արազի եղեգների պես
Մեջքըդ ճըկում չէ:

Հագել ես, կապել առլաս, դանավուզ.
Ու դեմքիդ վրա երկու մոռ խալ կա.
Բայց քո թշերը վարդի թերթեր չեն,
Կարմիր ու վառման, վարդի պես անուշ:
Սերդ աչքերս մուժով չի պատել,
Մուժով չի պատել աշխարհը աչքիս:

Լա՛վ իմացիր դու, առանց ափսոսի
Կեոթամ, կհեռանամ ես քեզնից հիմի,
Առանց ա՛խ քաշել կընկնեմ սար ու ձոր,
Կոիվ կըմտնեմ ով դեմքս ելնի:
Դուման դաշտի մեջ կընկնիմ վիրավոր,
Կը մեռնիմ առանց անունըդ տալու,
Ու չեմ փափագի, որ վերջին անգամ,
Մեռնելուս շեմին, թեկուզ երագով,
Քո ձայնըդ լսեմ, աչքերըդ տեսնեմ...

Էսպես ասավ տղան.
Աղջիկը բերանը չբացեց.
Կոնից դուրս ելավ տղան,
Նիզակն հանեց գետնից,
Բոնեց ձիու բաշից,
Բոնեց որ հեծնի,

Մեկ էլ... դառավ ետ,
Ու կոնի դուռը
Ընկավ ծնկների վրա.
— Ո՛վ մալաք, ո՛վ հյուրի-փերի,
Սրտիս սիրական Գյուլիզար,
Աստված գիտե, դու էլ գիտես,
Որ սո՛ւտ եմ ասում, սո՛ւտ:
Ա՛խ, մեռնում եմ քեզ համար.

Հոգիս բերանս է եկել, յա՛ր:
Աշխարքի մեջ ծովերի վրա
Չկա քեզ նման, չկա քեզ նման,
Սիրուն, գովական, Գլուխդար.
Դու սիրո՛ւն, սիրո՛ւն, սիրո՛ւն
Հազար անգամ հազար...

* * *

Սլեմանի բլուլը լեռների ծաղկաբույր զեփյուտով և աղ-բլուրների անուշ կարկաշունով թաթախել էր մեր ժամերը, որոնք, աննշմարելի, վաղուց կիսել էին գիշերը: Եվ հանկարծ, աքաղաղի երրորդ կանչը հնչեց զարթուցիչ ժամացույցի պես: Յնդեց երազը, և գեղեցկի ոլորտներից իջանք գործերի և հարկադրանքի աշխարհը:

Պետք է կանուխ վեր կենալ, ոչխարը ջրել, ձիերին կեր տալ և Երևանի դատին ներկայանալ...

Նախապես Արսենն ասել էր մեզ, որ Սլեմանին դրամ չըտանք, կվիրավորվի: Եվ իբրև հիշատակ այս անմոռանալի գիշերվան՝ ես նվիրեցի նրան զմեխս, իսկ բարեկամս՝ մի փոքրիկ հայելի և սանր: Սլեմանը չափազանց ուրախացավ:

Առավոտ, երբ զարթեցինք, Սլեմանը արդեն մեկնած էր: Մենք էլ պատրաստվեցինք ուղի ընկնելու:

Այս մի օրվա մեջ այնպես մտերմացել էինք Արսենի հետ, որ կարծես տարիների բարեկամներ լինեինք: Առանց տըխրության չբաժանվեցինք իրարուց:

Երբ կառքը Արաքսի կամուրջն անցավ դեպի Սարդարապատի դաշտերը, ես ետ նայեցի, — Արսենը առափնյա մի բարձր դիրքի վրա կանգնած ճոճում էր թաշկինակը:

1934

Վաղուց անցած-գնացած օրերից է այս վերհիշումը:

Ինձ բարեկամ մի ընտանիք Սիմոն անունով մի սպասավոր ունեք: Սիմոնը տարիներից ի վեր ծառայում էր նրանց մոտ. գոհ էին նրա աշխատանքից և թվում էր, որ ինքն էլ գոհ էր նրանցից:

Մի օր Սիմոնը ներկայանում է տանտիրուհուն և ասում.

— Խանում, ներող եղեք, ես ուզում եմ տուն գնամ, մեր գեղը: Ծատ շնորհակալ եմ ձեզնից, բայց էլ չեմ ուզում ծառայել:

— Ինչո՞ւ, Սիմոն ջան, — զարմացած հարցնում է տիկինը, — չէ՞ որ մենք քեզ միշտ լավ ենք նայել, տարիներ շարունակ մեր տանն ես եղել, սովորել ենք իրար: Հիմա ի՞նչ պատահեց, ասա սրտաբաց: Թե ոռճիկդ քիչ ես գտնում՝ ավելացնենք: Էնպես լինի, որ գոհ լինես մեզնից և մեր տանը մնաս:

— Չէ՛, խանում ջան, գիտեմ, որ ինձ հետ լավ եք վարվել, և ոռճիկիս մասին էլ գանգատ չունեմ. միայն թե ուզում եմ գեղ գնամ, ժամանակավոր. կարելի է մի քանի ամիս անց էլի ետ գամ:

— Բայց ինչո՞ւ ես մնում այդքան երկար ժամանակ. գեղում ի՞նչ կա որ... — Սիմոնը լռում է:

— Մեկ էլ որ՝ չասացիր գնալուդ պատճառը:

— Խանում ջան, ճշմարիտը որ կուզես իմանալ՝ ասեմ, — վճռողական շեշտով պատասխանում է Սիմոնը, — ուզում եմ գնալ, որ էլ իմ անունը չլսեմ: Չլսեմ անունս՝ ականջս հանգրստանա: Թե չէ, էս ինչ կյանք է, ես կիսելուեմ: Ծարունակ, ամեն օր — Սիմո՛ն, սամովարը քցե, շո՛ւտ, շո՛ւտ արա: Սամովարը քցում եմ, կրակը փչում եմ, մեկ էլ — Սիմո՛ն, աղայի կոշիկները արի տար, շուտ սրբիր՝ բեր:

Վազում եմ, կոշիկները տանում, սրբում եմ շտապով, հանկարծ՝ Սիմո՛ն, վազե ֆայտոն բեր, օրհորդը տեղ է գնում,

շո՛ւտ, շո՛ւտ: Վագում եմ ֆայտոն բերելու՝ սամովարը թողնելով իր բախտին, կոշիկները սրբելը կիսատ, ֆայտոնը բերում եմ: Սամովարը եփել, ջուրը թափվել է. նորից ջուր եմ լցնում, նորից ածուխ եմ գցում: Մեկ՝ սամովարն եմ փչում, մեկ՝ կոշիկները սրբում:

Նորից անունս.

— Տո՛ տղա Սիմոն, չայն ո՛ւր մնաց. բերաններս չորացավ: Դեհ, գնա մի լիմոն էլ բեր, միայն շո՛ւտ արա:

Մյուս կողմից աղայիս ձայնը.

— Տո՛, Սիմոն, կոշիկ սրբե՛լ էր, թե սենյակ սրբել: Մի ժամ եղավ: Ծտապում եմ, շո՛ւտ արա:

Ձեռքս կոշիկի միջից չհանած՝ դռան զանգը տալիս եմ:

— Սիմո՛ն, վազի՛ր, դուռը բաց,— էդ միջոցին, մեկ էլ պատիկ տղան.— Սիմոն, թո՛ի մի տուփ պապիրոս բեր: Դե՛հ, քեզ տեսնեմ... Դեհ, խանում ջան, բա ես ո՛նց անեմ, որ չխելը՝ ոեմ: Օրը հազար անգամ անունս լսում եմ.

— Սիմո՛ն, արի,
Սիմո՛ն, գնա,
Սիմո՛ն, տար,
Սիմո՛ն, բեր,
Սիմո՛ն, վազե,
Սիմո՛ն, թո՛իր,
Սիմո՛ն, Սիմո՛ն,
էլի
Սիմո՛ն, Սիմո՛ն...

Էդ՝ ականջս խարտոցող Սիմոն անունը երազիս մեջ էլ եմ լսում, քունս հարամ է անում:

Տունը մարդ չեղած ժամանակ էլ պատերը ձեն են տալիս—Սիմո՛ն, Սիմո՛ն:

Անունս ինձ թշնամի է դառել, աչքիս գրողն է դառել. կատաղեցնում է ինձ, գժվեցնում է ինձ: Կուզեմ փախչեմ աշխարհի ծայրը, որ զգվելի անունս էլ չլսեմ:

Չե՛, խանում ջան, էլ ուժ չունեմ. հիմի շատ եմ խնդրում իրավունք տաս, երթամ մեր գեղը, մի քանի ամիս ականջս հանգստանա, հետո նորից կգամ: Խոսք եմ տալիս, միամիտ եղեք...

Քանի՞ տարեկան կլինեք Վարոս ամին: Այն ժամանակ շատ տարեց էր թվում նա ինձ, որովհետև ես, համեմատաբար, դեռ շատ երիտասարդ էի: Իսկ հիմա, երբ Վարոս ամուն կենդանացնում եմ երևակայությանս մեջ, կարող եմ հազիվ վաթսուն: Երբեք տարեկան տալ նրան, գլխի մազերը կես առ կես սև ու ճերմակ էին, աչքերը կայծով էին, ձայնը՝ ուժով, ողնաշարը՝ շիտակ:

Լուրջ, խոհուն, պատկառելի մարդ էր: Իմաստուն առածներով համեմված ամեն մի խոսքը: Գյուղի ազդեցիկ մարդկանց առաջին շարքումն էր: Թեև երկու աղջիկ ուներ, սակայն իրեն շատ դժբախտ էր զգում արու գավակ, «ժառանգ» չունենալու պատճառով: Եվ կինն էլ վաղուց արդեն դադարել էր «պտուղ» տալուց:

Ժառանգի կարոտը անսփոփ վշտի պես կրծում էր Վարոս ամու սիրտը: Միշտ մոայլ էր, և մանավանդ խեղճ կնոջ հանդեպ չարությամբ, հանդիմանությամբ լցված: Առանց պատճառաբանելու, միայն կնոջն էր մեղավոր բռնում ժառանգ չունենալու դժբախտության մեջ: Իսկ խեղճ կինը լուռ կրում էր ամուսնու անարդար հանդիմանությունը, ինքն իր հերթին պատճառը վերագրելով «աստվածային անհասանելի կամքին»:

Եղավ, որ կինը մեռավ: Վարոս ամին կքեց այս հարվածի տակ: Նրա տունը բոլորովին ամայացավ:

Աղջիկները թեև այդ սուգի օրերը հոր տունն էին եկել, բայց կարճ ժամանակից հետո պիտի վերադառնային իրենց տները: Նրանք ուրիշ գյուղեր էին հարս գնացած: Նրանց մեկնելուց հետո Վարոս ամին պիտի մնար մենակ, այս ծեր օրերում բոլորովին մենակ և անմխիթար:

Այս վիճակը սարսափեցնում էր նրան:

Իսկ եթե տեղափոխվեր աղջիկներից մեկնումեկի մոտ, այդ վնջանակներ՝ իր տան դուռը հավիտյան գոցել, իր օջախի ծուխը հավիտյան մարել: Այս վիճակը և՛ս ավելի սարսափեցնում էր նրան: Եվ ժամերով նստում էր իր թափուր տան պատի տակ, աչքերը առանց մտածումի՝ անորոշ կետի հառած:

Վարոս ամուն Ես մոտիկ էի,— նա մեր ընտանիքի հիմ բարեկամն էր և լավ դրացին:

— Վարո՛ս ամի, ինչո՞ւ ես քեզ այդպես զուր տանջում,— փորձեցի նրան մխիթարել,— ամենքիս ճամփեն էլ վաղ թե ուշ էդ է: Եկողը պիտի երթա:

— Գիտեմ, տղա, գիտեմ, գիտեմ,— ասաց նա՝ մատով հողը փորելով,— բայց մարդու սիրտը խոսք չի հասկանում...

Լռություն: Ապա խոր հառաչեց:

— Ա՛խ, օ՛Ֆ... ողորմած հոգիք պիտի մեռներ ու ինձի էսպես թողներ պատերի տակ, փեսաներիս հուլիսին: Մեղա՛ քեզ, աստվա՛ծ, մեղա՛, թող ծանր չլինի քեզ, թե որ ասեմ. քու Շողակաթ աղախնուն թե որ պիտի տաների քովդ, ինչի՞ ա՛վելի կանուխ չտարար, քանի ես դեռ...— հաջորդ բառերը կուլ տալով.— ժառանգի համար է խոսքս: Ուրիշ բան չմտքես:

— Վարո՛ս ամի, արժի՞ միթե ժառանգի համար այդքան ցավել և այդպիսի դառն խոսքեր ասել,— կես-հանդիմանիչ, կես-կարեկից եղանակով ասացի ես:

Թերևս սրտի դառնությունից ակամա ժայթքեց նրա այս տմարդի բաղձանքը, որից սակայն ես շատ վատ ազդվեցի, և նա նկատելով այս, կարծես իրեն արդարացնելու համար, ավելացրեց.

— Խղճմտանքս տանջում է ինձ... մարդ է՛լ իրեն կնոջ մահն ուզենա... Բայց ի՛նչ ասեմ, չգիտեմ: Ի՞նքը մեռավ՝ գնաց. էզուց էլ ես կմեռնեմ. կերթամ՝ մեր անունը աշխարհիս երեսից կջնջվի, հիշող չի լինի, ասել է՝ որ ոչ եղել եմք, ոչ էլ բան... ժառանգն է մարդուս կյանքը. ժառանգ ունես՝ ասել է դու կաս, կապրես, քեզ մահ չկա, ծուխդ կա աշխարհի վրա, նորեն քեզի համար աշխարհը կա...

Դու էս բաները չես հասկանա, դու դեռ երիտասարդ ես:

Անցավ ավանդական «քառասունքը», երբ ննջեցյալի մահից քառասուն օր հետո ընտանիքի անդամները պաշտոնա-

պես «սգահան» էին լինում, դառնում էին կյանքի ընդհատված առօրյալից, գոնե արտաքնասպես, և հաճախ վիշտը իրենց հոգում անթեղելով:

Վարոս ամին քառասունքից հետո էլ տևական և լիակատար սուգի մեջ էր՝ միշտ մոայլ, միշտ մտամփոփ: Դեմքը այլևս անելի չտեսավ, մորուքը երկարեց, և ձերմակ մագերթ օրեցօր հաղթեցին սևին:

Աղջիկների գնալուց հետո Վարոս ամին մնաց մեռակ, մի ծառայի հետ, այս դատարկված տան տխուր լուռության մեջ:

Նրա հացը հարևաններն էին թխում, կովերն ու ոչխարները հարևաններն էին կթում:

Իր հորեղբոր այրին, մի պառավ կին, օրը մի անգամ գալիս էր՝ տունը իբրև թե կարգի բերելու: Ի՛նչ կարող էր անել խեղճ, տկար պառավը: Մի բան վերցնում էր՝ մի ուրիշ տեղ դնում, մի երկու ավել զարկում թոնրի շուրջը և քթի տակ անընդհատ խոսում Շողակաթի հետ:

— Աղջի Շողո՛, հա՛րս ջան, վա՛խ լուսս թափվեր... ձեռքովդ շարած կարասներդ, ծալք... Ես ի՛նչ անաստված բան արիր, ո՛ւմ թողիր ձագուկներիդ, խեղճ, ջրատար Վարոսին... Ո՛ր գնացիր, հա՛րս ջան...

Բարեկամները խորհուրդ էին տալիս Վարոս ամուն—արտերը վարձու տալ, տունը ծախել, տանմեջը, տավարը առնել գնալ աղջիկներից մեկի մոտ տեղավորվել, այնտեղ պատըսպարվել:

Վարոս ամին գլխի ժխտական շարժումով, առանց խոսքի, մերժում էր նրանց խորհուրդը:

Հասակակիցները խորհուրդ էին տալիս Վարոս ամուն— մի տարեց այրի կին բերել՝ տունը դարձնելու համար, իհարկե ամուսնանալ հետը, որ ծեր, անօգնական օրերին իրեն շահե, խնամես:

Վարոս ամին լուռ լսում էր նրանց՝ աչքերը հեռավոր մի բանի հառած...

Հունձի ժամանակը հասավ: Վարոս ամին մշակների հետ արտերը հնձեց, կալը կալսեց, հարող մարագը լցրեց, ցորենի մի մասը հորեց, մյուս մասը տարավ ջաղաց, ալյուրը բերեց, ամբարեց: Աշնան բերքեռոմ տու՛նը լցրեց, ձնոսն պատրաս-

տուրությունը, նախկին տարիների պես, լրիվ կատարեց:

Եվ երբ ամեն բան ավարտած տեսավ, մի օր էլ խնամքով «սափրվեց, հագավ «դրոնավուր» (տոնական) լավ զգեստները, տան պահպանությունը հանձնեց ծառային, ձին նստավ, և իր մտադրության մասին առանց ուրիշ մեկին մի բան ասելու, գյուղից գնաց:

Երկու շաբաթ անց, վերադարձավ՝ մի երիտասարդ կին ձիու գավակին առած: Ջարմացած դուռ ու դրկիցներին և բարեկամներին անվերապահ հայտնեց, թե սա իր կինն է՝ եկեղեցիով օրինավոր պսակված:

Համեմատաբար երիտասարդ և գեղեցիկ մի այրի կին էր նա. չքավոր ընտանիքից: Գյուղերից մեկում գտել էր նրան, այնտեղ էլ պսակվել:

Սկսեցին գյուղում Վարոս ամուսն ծաղրել և քննադատել:

— Լիկած, փտած Վարոս ամին ո՞ւմ համար է բերել էս քահել հարսը:— Կանայք ասում էին.

— Էս անպատիվ Վարոս չեղածդ ի՞նչ ասավ, էս քածը բերեց լուսահոգի Ծողոյի տեղը: Տղամարդ ասածդ շուն է, շո՛ւն, ո՛չ ամոթ ունեն, ո՛չ աստծուց վախ:

Ծերունիներն ասում էին.

— Յնդել է Վարոսը, ցնդել: Խելոք մարդ գիտեինք իրան, էս ինչ գեշ օրինակ տվեց աշխարհին:

Սակայն Վարոս ամին, երիտասարդացած, անցնում էր գյուղի փողոցներով, գլուխը հպարտ բռնած, առանց ուշ դարձնելու ականջին հասած չարամիտ կամ ծաղրական խոսքերին: Եվ կրկնակի եռանդով, ուրախ-զվարթ, աշխատում էր տանն ու դռանը, հոգատար ձեռքը տավարի և ոչխարների վրա:

Ամուսնությունից յոթն ամիս հետո, Վարոս ամուսինը մի արու գավակ աշխարհ բերեց:

Վարոս ամուսնու հպարտ ուրախությամբ չափ ու սահման չկար: Թևերը առած թռչում էր: Հիմա ժառանգ ուներ և ամբողջ աշխարհը իրեն էին վերադարձրել:

Վարոս ամին երեխան մկրտեց, անունը դրեց Մնացական: Սակայն գյուղում սկսեց ծայր առնել բամբասանքն ու խժբժանքը Վարոս ամուսինը մասին:

Բամբասանքները ճամփա էին կտրել և հասել նրա ական-

ջին: Շատ ազդվել էր նա, շատ տխրել և մանավանդ խիստ զայրացել, որ իր կնոջ անարատ պատիվն այնպես անարդար կերպով անարգում էին չարաթույն լեզուները՝ անտեղի, լիրբ գրպարտանքներով:

Մի առավոտ Վարոս ամին եկավ ինձ մոտ:

— Դու գիտնակ մարդ ես, — դիմեց ինձ, — գրքերդ մեկ բաց՝ տեսնենք, թե՛ իմ տարիքի տեր մարդուց ծնած օխթեման սեկան երեխան կարո՞ղ է ապրել:

— Իհարկե, կարող է ապրել: Ոչ մի կասկած, — հանգըստացրի նրան:

— Նորից ասում եմ, իմ տարիքի տեր մարդուց, կուզեմ ասել, ինձնից ծնած երեխան, — և շեշտեց «ինձնից» բառը:

Աչքերիս մեջ կարդալով իմ զարմանքը, Վարոս ամին հուզված ասաց.

— Դու չե՛ս լսել, որ գեղը վրաս հաչում է, թե տղան ինձնից չէ, թե՛ հետը բերովի է:

Ես չգիտեմ ձևացրի:

— Հա, գեղը որ կա՛ անաստված, անխիղճ, անամոթ բան է... — Եվ քիչ հետո հարեց. — բայց ամենագետ աստծուն հայտնի է, որ երեխան իմս է: Կնիկս անարատ է, կնիկս անմեղ է թե՛ աստծու, թե՛ իմ առաջ:

— Դատարկ խոսքերին ուշք մի՛ դարձրու, Վարոս ամի, — ասացի ես. — միայն երեխային լա՛վ պահիր, լա՛վ կերակրիր: Յոթնամսականներին ավելի լավ պիտի խնամել:

— Պահել... հոգիս չեմ խնայի, աչքիս լույսը կթափեմ, լավ կպահեմ, ձեռքիցս եկածն ու չեկածը կանեմ:

Եվ տեղից վեր կենալով, ինքնավստահ կեցվածք առավ, խոսեց, կարծես խոսքը իրեն ուղղելով.

— Հիմա ես է՛լ մահից վախ չունեմ: Աշխարք ոտք ելնի իմ դեմ, է՛լ ինձ չի կարող հաղթել: Հիմի թող գեղը հաչե, ինչքան կուզե:

Եվ Վարոս ամին արհամարհոտ աչքերը գյուղացիների վրա հածելով՝ անցնում էր գյուղի փողոցներով՝ գլուխը բարձր բռնած:

Երջանիկ և անդորր սրտով, երեխան գիրկն առած, նըս-

տում էր դուանը, մի աչքը թանկագին ժառանգի վրա, մյուս աչքը տուն ու տեղի, տավարի և ոչխարի վրա:

Անցան շատ տարիներ:

Արտասահմանից վերադարձա հայրենիք: Գնացի Շիրակ, մեր գյուղը այցի:

Իմպերիալիստական պատերազմից առաջ մեռել էր Վարոս ամին: Թո՛ւրք բանակը արշավել էր Շիրակը, ավերել էր գյուղը, կոտորել էր բազմություններ և ավար առել ինչքերը:

Վարոս ամու կինն ու տղան փախել էին լեռները: Ասքյարները կողոպտել և ավերել էին նրա տունը նույնպես:

Հրի և սրի միջից, արցունքի և արյունի միջից մարմին էր առել Սովետական Հայաստանը: Սկսվել էր խաղաղության և վերակառուցման աննախընթաց շրջան: Ժողովրդի ողջ մնացած մասը վերադարձել էր իր ավերակ բույները՝ նորից վերանորոգելու և նորից վառելու պապեճական օջախները:

Խնդրանքիս վրա կանչեցին իմ հին բարեկամ Վարոս ամու որդուն: Քսանկյոթ տարեկան մի պարթև երիտասարդ, հոր քթից թռած, հոր պես բարձրահասակ, կայծուն աչքերով՝ կանգնեց առաջս:

Մնացականը նորից շինել էր հոր տունը, հին հիմքերի վրա, բայց ճաշակով, հարմարագույն, մեծ լուսամուտներով և բարձր առաստաղով:

Ամուսնացել էր, ուներ երկու զավակ—մի տղա և մի աղջիկ:

Տղայի անունը դրել էր Վարոս, աղջկա անունը՝ Շողակաթ:

Նորից կանաչել էին գյուղի արտն ու արոտները, նորից քաղցր բառաչունով տավարը գալիս էր հանդից և լիզում էր գոմերի առջև տարածուն հին սալաքարերը:

Եվ փոքրիկ Վարոսը զվարթ խաղում էր գառների հետ մեծ մոր սիրագորով աչքերի ներքո, և նորից Վարոս ամու շեն տնից ծուխ էր ելնում և փոփում էր համայնական դաշտերի վրա և Վարոս ամու գերեզմանի վրա՝ իր օջախի անուշ ծուխը...

1940

Շաբաթ օր էր: Արևը դեռ մայր չմտած՝ դարբնոցներում իրար հետևից դադարեցին մուրճի հարվածները:

Դարբին Համբարը վարպետի փոքր մուրճով ավանդական երեք հարվածը տվեց սալին և «բանթող» հայտարարեց: Աշխատանքը ավարտված էր:

Դարբնի բանվորները քուրայի կրակը հանգցրին, հավաքեցին գործիքները—մուրճերն ու աքցանները, դասավորեցին իրենց մշտական հատուկ տեղերում, ավլեցին, մաքրեցին դարբնոցը, հանեցին իրենց կաշե գոգնոցները, լվացվեցին և կանգնեցին վարպետի առաջ: Վարպետ Համբարը վճարեց նրանց շաբաթականները և ճանապարհ դրեց: Այս դարբնոցի դուռը փակեց, բանալին դրեց գրպանը և իր օգնական վարպետ Գևորգի հետ մեկնեցին: Երկուշաբթի օրվա անելիքների մասին խոսելով հասան դարբնոցների փողոցի անկյունը և իրար «գիշեր բարի» մաղթելով բաժանվեցին:

* * *

Վարպետ Գևորգը մտավ իր հին ընկեր Սեթոյի վարսավիճանոցը, ուր ամեն շաբաթ երեկո գալիս է սափրվելու և գլխի մազերը կարգի բերելու համար: Սեթոյին բարևելով, նստեց հայելու առաջ. վարսավիրն սկսեց իր գործը:

Վարպետ Գևորգը առողջ, ուժեղ մարդ էր, իր լավ տարիքի մեջ: Ուներ մի պառավ մայր՝ ծանր հողացավով անկողին ընկած, կին և չորս զավակներ՝ երկու աղջիկ, երկու տղա: Վաղ էր ամուսնացել: Լավ աշխատողի և լավ վարպետի համբավ ուներ: Սակայն շատ դժվար էր ապրում. ընտանիքը մեծ էր,

կարիքը՝ շատ. ինչպես ասում են գյուճերեցիները՝ «քաշքշե-
լով» մի կերպ ապրում էին: Ինքը մեղավոր չէր, իր խղճի
առաջ արդար էր. առանց իրեն խնայելու չարաչար աշխատում.
էր, բայց վարձատրությունը այնքան նվազ էր, որ ընտանիքի
անհրաժեշտ պետքերը նույնիսկ չէր կարող բավարարել: Վար-
պետ Համբարը բարի սիրտ չունեց, պարզապես շահագործում
էր Գևորգին, օգտվելով նրա խելոճ դրությունից և երբեք մըտ-
քով չէր անցկացնում վարձն՝ արժանիքի և աշխատանքի հա-
մաձայն ավելացնելու:

Շատ ծանր էր նրա վիճակը. միայն ինքն էր տան աշխա-
տողը, ամբողջ ընտանիքը նրա ձեռքին էր նայում: Հասած
աղջիկ ուներ, հագնվել-կապվել էր ուզում, հապա մյուս երե-
խաները, ուսումնարանի ծախսե՞րը...

Գևորգը ընկճված էր այդ ծանրության տակ: Նա շատ էր
խորհում այս վիճակից ելնելու մասին. օրինակի համար՝ ուրիշ
վարպետի մոտ գնար աշխատելու, որ զրկող չլիներ, կամ ըն-
կերովի աշխատեր մեկի հետ. իսկ եթե իր դարբնոցը ունե-
նար, ինչքան հաճախորդներ կունենար, լավ կվաստակեր և
ընտանիքը լավ կպահեր. ինչո՞ւ չէ, քանի որ ինքը փորձված
վարպետ էր, ձեռքից ամեն բան գալիս էր, ինչե՞ր չէր շի-
նում—կացին, բահ, ուրագ... ավելի մեծ բաներ՝ խոփ, գութանի
շղթա... բայց ո՞վ էր տվել նրան այդ բախտը:

— Անուշ եղավ, Գևորգ, — ասաց վարսավիր Սեթոն,
գործը վերջացնելով:

* * *

Դանդաղ քայլերով գնում էր Գևորգը՝ գլուխը կախ գցած:
Շուկայից անցնելով, խորովածի և խաշլամայի միս գնեց,
դրեց նախշուն մեծ թաշկինակի մեջ, ինչպես և կանաչեղեն.
«Խելոճ երեխաներս շաբաթը գոնե մեկ անգամ միս ուտեն»,
ասաց ինքն իրեն:

Շաբաթ երեկոները տուն գնալուց առաջ Գևորգը մի պահ
այցելում էր դարբինների սրճարանը, մի-երկու ֆինջան սուրճ
խմելու, ընկեր, ծանոթ տեսնելու, մի-երկու խոսք փոխանա-

նելու հետ, նաև քաղաքի և դրսի նորությունները լսելու հա-
մար: Մեկ էլ հույս ուներ այստեղ հանդիպելու իր հին, սիրելի
ընկեր Եղիշին: Նա մի շաբաթ առաջ խնդրել էր,
որ Եղիշը իր դարբին քեռու մոտ տեղավորեր նրան: Եղիշի
քեռին՝ վարպետ Ղևոնդը, որ ազնիվ մարդ էր, շատ հաճա-
խորդներ ուներ, այնպես որ լավ աշխատող օգնականի պետք
կունենար: Եղիշը, որ գիտեր ընկերոջ վիճակը, սրտանց
խոստացավ միջնորդել քեռու մոտ: Թերևս այսօր մի բարի
չուր ստանար:

Սրճարանի դռան առաջ Եղիշը ուրախացած գրկեց նրան:

— Գևորգ, հոգուդ մեռնեմ, ո՞ւր էիր, գնացի դարբնոց՝
փակ էր, շատ ման եկա, չգտա, մտածեցի, որ էստեղ կլինես,
եկա քեզի բռնեմ:

Գևորգը շատ ուրախացավ ընկերոջ այս ջե՛րմ հանդիպման
համար:

— Եղիշ ջան, քեֆդ լավ կերևա, միշտ եղպես լավ եղիր,—
ասաց Գևորգը:

— Ընչի՞ չպիտի լինիմ... քեզի աչքալուսանք ունիմ, ել եր-
թանք Հարթենի դրախտիրը, քեզի լավ բաներ պտի ասեմ,
ուզածիցդ ավելին եղավ, էդոր համար էլ պիտի խմենք:

Հարթենի գինետունը ճոխ լուսավորված էր, բոլոր սեղան-
ները գրավված էին հաճախորդներով, խոսակցության ձայնե-
րով, ծիծաղով, քրքիջով լցված էր ընդարձակ սրահը:

Նրանց համար պատի տակ փոքր սեղան տեղավորեցին:
Եղիշի պատվերով օղի բերին, աղանդեր, հետը գինի և խո-
րոված:

— Գևորգ, — ասաց Եղիշը՝ Գևորգի աչքերի մեջ նայե-
լով, — մենք հին, անգին տղերք ենք, ես քեզ շատ կսիրեմ,
էս դու լավ գիտես: Ախպերս որ դուն ես, էսօրվանից հետո էլ
նեղություն չես քաշի, հաստա՛տ: Քեռիս ծերացել է հիմա,
ծերացել է, տղերքը հասել են. մեկը բուխալտեր է, մեկելը՝
ֆելդշեր. լավ փող կաշխատեն, քեռիս էլ դարբնություն չպի-
տի անե, տղերքը չեն թողնի: Քեռիս ուզում է դարբնոցը ուրի-
շի՝ մեկ արժեքավոր մարդու հանձնել: Քեռիս էլ իմ խորհրդով
ու խնդրանքով դարբնոցը իր ամեն բաներով տեղափոխեց
քեզի պիտի հանձնե:

եղիշը մի շնչով ասաց այս ամենը և կանգ առավ:

Գևորգը չէր հավատում ականջներին: Իջավ մի պահ լուռ-թյուն:

— Մտքիս թելը կորցրի, լից խնձե՛ք, Գևո ջան:

Մի-մի բաժակ գինի խմեցին:

— Հա՛, էն էի ուզում ասել, էգուց կերթանք քեռուս քովը, ձեռքը կպահես, քեզի հոր տեղ է, ամեն բան դրած վերցրած է, գործը եփված է, երկուշաբթի օրվանից դարբնոցի տերը դուն ես: Գիտես չէ՞, ի՛նչ բանուկ տեղ է: Ի՛նչ ընտիր գործիքներ ունի:

Գևորգը աչքերը լայն բացած լսում էր:

— Գևո ջան, քեռուս կենացը, լավ մարդ է: Ես ոսկերիչ եմ, չէ՞,— քեռուս եմ պարտական, ինձի Ախըլցխա դրկեց ամենից երևելի վարպետի մոտ, սորվա, եկա:

Ապա եղիշը խոսեց պայմանների մասին, այն, որ Գևորգը պիտի վճարե դարբնոցի վարձը այնքան, ինչքան քեռին վճարում էր շենքի տիրոջը, իսկ իրեն՝ քեռուն՝ գործիքները բանեցնելու և սարք ու կարգի համար մի ընդունելի հատուցում, ուրիշ ոչինչ: Հետո վրա բերեց.

— Թե որ բան է, ժամանակի մեջ մի քիչ փող հավաքես, քեռուս գործիքները, սարքն ու կարգը բոլոր քուկդ կլինի ու քուկդ, հասկացա՛ր: Բայց էդոր մասին հետո:

Գևորգի աչքերը ջերմացան, արցունքոտ ձայնով ասաց.

— Եղիշ ջան, ի՛նչ ասեմ, երեխոցս կյանքը փրկեցիր...— և փաթաթվեց ընկերոջ պարանոցով:

Երկու իրար սիրող ընկերները խմում էին իրենց ընտանիքների կենացը. խոսում էին մանկության քաղցր օրերից, կատակում, նորից խմում և խանդավառված համբուրում իրար:

* * *

Երբ իրարից, գլուխներեցոց ասածի պես, պոկվեցին, Գևորգն ուզում էր վայրկյան առաջ տուն հասնել, վայրկյան առաջ ընտանիքին ուրախացնել: Վազում էր, ուղղակի թռչում էր: Արագ վազքից շունչը կտրվեց, մի պահ կանգնեց՝ աչքն առավ երկըն-

քին.— «Վա՛հ, ինչքա՛ն աստղեր կան...»,— զարմացած ասաց ինքն իրեն:

Ամառ գիշերվա վճիտ երկնքում փայլում էին, շողշողում էին աստղերը, անթիվ պայծառ աստղերը: Ինչքա՛ն փայլուն էին, ինչքա՛ն գեղեցիկ էին: Շատ վաղուց կլինէր, որ Գևորգը երկնքին չէր նայել, նա միշտ գլուխը կախ, մտազբաղ անցել էր տան ճանապարհը: Ընտանիքը սպասում էր Գևորգին. նա երբեք այսքան չէր ուշացել: Կինը համբերանքը կորցրած դուրս ու ներս էր անում:

Գևորգը լի օրերը դարբնոցից ուղղակի տուն էր գալիս, շաբաթ երեկոները մի քիչ ուշանում էր սափրվելու և սրճարան այցելելու հետևանքով: Իսկ այսօր ի՛նչ էր պատահել, ինչո՛ւ այսքան ուշացավ, մի վատ բան պատահած չլինե՞ր:

Շաբաթ երեկոները նա միշտ տանն էր, նստում էր հիվանդ մոր մոտ, զրույց էր անում, նրա հետ էր թեյը խմում:

Կինը մի պահ դռանը կանգնած՝ ամուսնու ճանապարհին էր նայում, երբ ուրախ-ուրախ երևաց Գևորգը. կինը մոտեցավ, ձեռքից առավ թաշկինակի կապոցը, մեծ աղջիկը լամպը ձեռքին ընդառաջեց հորը: Լամպի լույսի տակ հայրը նայեց աղջկան, ավելի ուշադիր նայեց:

— Յա՛, Վարդուշ ջան, ինչքա՛ն սիրուն ես եղեր...

Մի վայրկյան հայր ու աղջիկ լուռ կանգնեցին իրար դեմ: Հոր ձայնը կերկերաց, խզվեց.

— Վարդուշ ջան, անուշ ջան, ներող եղիր, լավ չէի տեսել...— թրջվեցին աչքերը և գորովով, ջերմագին համբուրեց աղջկան:

Աղջիկը սիրտը լցված փախավ:

— Բա՛ մարդ, նո՛ր տեսար...— վախեցած, զարմացած և հետո կշտամբանքով հարցրեց կինը:

— Աղքատի օրոցքը կոտրի, սիրտ ունի՞, որ աշխարքին աչե՛, ամեն բան սև է աչքին,— հառաչելով ասաց պատավ մայրը:

Մի սրտաբեկ տխրություն համակեց բոլորին: Յուրաքանչյուրը մտածում էր իր սրտում:

Երկաթագործի ծանր աշխատանքից ջարդված՝ Գևորգը գալիս էր տուն՝ մոայլ, քիթը կախ, մի փոքրիկ լամպի աղոտ

լույսի տակ հազիվ նշմարում էր տնեցիներին, մոր ձեռքը համբուրում, երբեմն շոյում փոքրիկների գլուխը և կնոջ հետ մի-երկու խոսք փոխանակելուց ու մի աղքատիկ ընթրիք անելուց հետո՝ հոգնած մտնում էր անկողին ու առավոտը վաղ, լուսամտութիւն, անտեսանելի գնում գործին:

— Գործերս լավ են, շատ լավ են,— առույգ ծայնով ասաց Գևորգը և արագ ու համառոտակի պատմեց Եղիշի հաղորդածի մասին:

— Աննա, Վարդուշ, մեկէլ լամպն էլ վառեք:

Լամպը վառեցին, սենյակը լցվեց պայծառությամբ, ուրախությամբ:

Գևորգը համբուրեց քնած երեխային, համբուրեց մոր ձեռքը, մայրն էլ համբուրեց որդու ճակատը, օրհնեց Եղիշին, նրա քեռուն, և դիմելով հարսին, ասաց.

— Հարս ջան, չայ տուր, բերանս չորացավ:

— Հիմի, մայրիկ ջան, հիմի,— ասաց հարսը՝ աչքերը սրբելով և անցավ թեյի պատրաստությանը:

Կեսգիշերն անց էր, դեռ բոլորը արթուն էին: Գևորգը ոգևորված խոսում էր, զվարթ բաներ էր պատմում, ծիծաղում էր ու ծիծաղեցնում:

Եվ վերջապես պետք էր քնել. քթի տակ մի եղանակ մըտմըտալով անկողին մտավ: Շատ տարիներից ի վեր այսպիսի ուրախ սրտով և հանգիստ մտքով նա գլուխը բարձին չէր դրել:

1951

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծի արձակը ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ 31

ԱՐՁԱԿ ՊՈԵՄՆԵՐ

Եղնիկը	13
Սիրահար քամին	16
Երջանկության իմաստը	19
Մանկությունը	21
Սգավոր արագիւր	23
Մի սոխակի մահը	26
Ողբում եմ	28
Հավերժություն	31
Սասողի վերջին գարունը	41
Լի-թայի-Պո	46
Չինական մեծ պարսպի երգը	56

ԼԵԳԵՆԴՆԵՐ ԵՎ ԶՐՈՒՅՑՆԵՐ

Արծվամանուկ	63
Հին ամրոցը	73
Լեռների հսկան	78
Շողհարը	82
Ծի—Հոանգ—Տի Բողդիխանը	86
Չինգիզ-խանը	91
Երկու արվեստագետ	98
Բուդդհան	101
Անանդան և մահը	108
«Ձեր խնդրածը իմ ոտների տակն է»	120
Անհաղթ խալիֆան	124
Օմար Խայամի վեճը աստծու հետ	126

Աստղղան	128
Լիլիթ	131
Ռաբբի Հիլելը	155
Բուզղիան թուշուն	158
Ուշինարա	161
Ով է ասրում	164
Չինական մի հին գրույց	169
«Այդ ոչինչը ես եմ»	173

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Շաքրո Վալիշվիլի	177
Գարիբալդիականը	182
Քուրդ Ամոն	189
• Հորս գութանը	195
Ազգային երգը	197
Ֆաթիհ Սուլթան Մեհմեդ	201
Անպարտելի ոգին	206
• Գերեզմանի վրա	209
Հակոբ վարդապետի գաղտնիքը	229
• Հոր անեծքը	247
Բայրամ Ալին	255
Հին հուշատետրից	261
Իրեն գնած թուկով	265
Փողի «համը»	271
«Համբերանքի չիբուխը»	275
Հովվերգություն	288
Ամբողջ բոբոնը սվեց	296
Նրանք դրոշակ ունից	308
Հոբ Երանելու ծառը. դանկբեժ Սլեմանը	354
• Ծառա Սիմոնը	367
Օջախի ծուխը	369
Դարբին Գևորգը	375

Իսահակյան Ավետիք

Արձակ

Խմբագիր՝ Մ. Ս. Թերլյան
 Նկարիչ՝ Կ. Թ. Տիրատուրյան
 Գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գասպարյան
 Տեխ. խմբագիր՝ Ի. Գ. Ավետիսյան
 Վերստուգող սրբագրիչ՝ Վ. Դ. Ազատյան

9/5

Հանձնված է շարվածքի 11 9. 72 թ.:

Ստորագրված է տպագրության 11/V 1973 թ.

Թուղթ № 1, $84 \times 108^{1/32}$, տպագ. 12,0 մամ, = 20,16 պայմ. տպ. մամ.,
հրատ. 16,0 մամ. + 1 ներդիր:

Պատվեր 403, տպաքանակ 20000: Գինը՝ 73 կոպ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան-9, Տերյան-91:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների,
պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի
№ 6 տպարան, Երևան, Թումանյան փողոց № 23/1:

